



ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՀՏԴ 821.19-3 Անանյան
ԳՄԴ 84(5Ը)-4
Ա 573

Խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան

Վախթանգ Անանյան

Ա 573 Պատմվածքներ- Եր.: Էդիթ Պրինտ, 2015.- 208 էջ.- (Իմ գրադարան):

«Իմ գրադարանը» մատենաշարի հերկյալ գիրքը ներկայացնում է Վախթանգ Անանյանի պատմվածքները, որտեղ անմագորդ սիրով ներկայացված է հայրենի բնաշխարհը: Գիրքը նախաբեական է հանրակրթական դպրոցի աշակերպների և ընթերցող լայն շրջանի համար:

ՀՏԴ 821.19-3 Անանյան
ԳՄԴ 84(5Ը)-4

ISBN 978-9939-52-956-1

© Էդիթ Պրինտ, 2015

Մարդ-բնություն փոխհարաբերության խնդիրը Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքներում

Վ. Անանյանը գրական ասպարեզ իջավ 1920-ական թվականներին վերջին՝ բերելով բնության զարմանալի զգացողություն, ինքնասրիպ պատկերներ՝ հարուստ ու բազմերանգ գոյներով, ճանաչողական նշանակություն ունեցող, գեղարվեստական սքանչելի նկարագրություններով հարուստ կենդանագրության յուրօրինակ էջեր: Վ. Անանյանը ներկայացրեց կենդանական աշխարհը՝ իբրև յուրահայտ օրենքներով աստիճանաբար ամբողջություն, նոր երանգ հաղորդեց սոցիալական հիմնահարցերին, գեղեցիկի ընկալմանը, մարդու և բնության ազգակցական կապին («Սևանի ափին», «Հովազաձորի գերիները», «Որսորդական պատմվածքներ» և այլն):

Վախթանգ Անանյանի գրական ժառանգության զգալի մասը կազմում են փոքր արձակի ժանրերը՝ պատմվածքը, ակնարկը, խոհը, մանրասպարումը, որտեղ բազմակողմանիորեն բացահայտվում են հեղինակի ընկալումները, նախասիրություններն ու իրականությունն արտացոլելու յուրահայտ արձանանկարչությունները: Վ. Անանյանի բնասիրական պատումները, որոնք հայրենի բնության ու բնաշխարհի մարդկանց հիասքանչ պատկերներ են, ընդգրկում են մարդ-բնություն փոխհարաբերության հիմնահիմքերը, որոնք արծարծված են նրա գրեթե բոլոր սրբաբանություններում: Անանյանական «մարդ-բնություն» թեմատիկայում արժևորվում և կողք-կողքի հանդես են գալիս մարդն ու բնությունը: Գրողի՝ բնության կերպավորման արձանանկարչություններից է անթրոպոմորֆիզմը՝ բնության շնչավորումը, բուսական ու կենդանական աշխարհի «հոգեբանության» բացահայտումը: Այդպիսի հոգեբանության վառ արտահայտություններ են «Եղնիկի ձագը», «Մայրեր», «Փոքրիկ մայրեր», «Մայր այծյամը», «Մայր արջը» պատմվածքները, որտեղ

Վ. Անանյանը ներկայացնում է մայրական անձնագրոհության, նվիրումի, ցավի, հավատարմության բազմաթիվ դրսևորումներ: «Մայր արջը» պայրմվածքում գրողը հիշում է րարիներ առաջ կարարված հոգեցունց մի դեպք, երբ մայր արջը, կորցնելով իր քոթոթին, ցանկանում է վրեժ լուծել մարդկանցից. «Վերև հառած նրա աչքերի մեջ վրեժի կրակ էր վառվում, և նրա ցավոյր հայացքից մենք փշարաղվեցինք: Ճանաչե՞լ էր նա արդոք մեզ՝ իր ձագը սպանողներու, թե՞ զավակը կորցնելուց հետո բոլոր մարդիկ էլ արելի էին նրան: Մի բան պարզ էր, որ չի մոռացել իր ձագի մահը և որոշել է վրեժ հանել մարդ արարածից»¹:

Մայրական զգացմունքի մի հրաշալի դրսևորում է «Փոքրիկ մայրեր» պայրմվածքը, որտեղ փորձառու բնասերը շփոթված ներկայացնում է փոքրիկ կաքավի րարօրինակ արարքը՝ իր ձագերին պաշտպանելը. «Բնչն է մղում այդ էակին դեպի մահվան բերանը: Ա՛... սհա թե ինչը... նրա երևից, փոքրիկ կրոցներն առաջ մեկնած, խոտերի միջով զալիս էին ձագերը, սհա թե ինչն է ուժ րալիս նրան»²:

Բնությունով լցված, բնությունով ապրող Վ.Անանյանը բնությունը դիտում է իր ողջ բազմազանության մեջ, վերարրադրում բնության գիրակ մարդու հմրությանը, րադանդավոր նկարչի վարպետությանը: Բնությունը սկիզբն է գեղեցիկի, կյանքի, զարգացման: Մակայն բնությանն ու կենդանիներին «շնչափորելով, հոգի րալով» Վ. Անանյանը ոչ միայն չի մոռանում, այլև կարևորում ու գնահատում է մարդուն՝ որպես բնության ամենաքարձր և կարարյալ րբեդազործության, բնության անքակրելի ու անրաժանելի մասնիկի, ընդգծում մարդու և բնության սերտ կապը, ներդաշնակությունը, փոխադարձաքար միմյանց վրա ազդելու հավերժական ընթացքը: Վ. Անանյանը ստում է, որ բնությունը րալիս է ոչ միայն նյութական բարիքներ, այլև վերափոխում է մարդուն հոգեպես, համակում է նրան իր իմաս-

1 Վախթանգ Անանյան, Երկեր, հտ. 1, Երևան, 1984, էջ 27:

2 Նույն տեղում, էջ 101:

տրանս խաղաղությամբ: Բնության անդորրի մեջ, նրա մեղմ շնչի ազդեցությամբ մարդու մեջ աճում է լավը, բարին, և մեղմանում ու վեհանում է մարդու հոգին՝ նրա վեհ բարձունքներից աշխարհը դիպելիս:

Ողջ կյանքը բնության ու բնաշխարհի մարդկանց կողքին ապրելով՝ բնության հարազատ որդին հայրենի լեռների բարձրությամբ փորձում է չափել այդ լեռներում ապրող մարդու տառապանքի ու հույսի մեծությունը և ուղի հարթում դեպի մարդկային հոգին: Նրանք բարի ու սրբեղծագործ մարդիկ են՝ բնության շինարար որդիներ, փորձառու որսորդներ, բնության գիտականեր:

Աշխատավոր մարդու ներաշխարհի բացահայտումը դառնում է Վ.Անանյանի սրբեղծագործական հիմնասինդիորներից երկրորդը: Բնության ու մարդու միաձուլումը, բնության հավերժությունն ու մարդու՝ նրա մի հյուլեն լինելը արծարծվում է Վ. Անանյանի գրեթե բոլոր սրբեղծագործություններում: Վ. Անանյանի պատմվածաշարերից շարերի հենքը բնության գրկում ապրող մշակների կյանքի պարկերումն է, գյուղացու բնական կեցությունն ու զգացողությունը: Հայրենի բնության մեծարումը արտացոլում է գրողի անսասնան սերը հայրենիքի, աստվածատուր բնության, նրանում արարող ժողովրդի նկատմամբ:

1934 թ. գրողը հրատարակում է «Որս» պատմվածքների ժողովածուն: Հերագայում այն ընդաձակելով՝ սրբեղծում է «Որսորդական պատմվածքների» հատորաշարը: Պատմվածքի այս տեսակը խորհրդահայ գրականության մեջ Անանյանն առաջինն է մշակում: Ու թեև սրբեղծագործական երկար տարիների ընթացքում անդրադառնում է նաև ուրիշ թեմաների, բայց երբեք չի հրաժարվում որսորդական կյանքի նկարագրությունից: Այս թեմայով Անանյանը բազմաթիվ պատմվածքներ ու ակնարկներ է գրում, ու, բնականաբար, հարկավոր էր հնույր բնագետ լինել, բնությունը յուրօրինակ ձևով ընկալել, որպեսզի, ինքն իրեն հաճախ չկրկնելով, ներկայանար ունկնդրին: «Արջի ճանկերում», «Պահրատրս», «Տիգրիսի ձորում» և այլ պատմվածքները մեզ

առաջնորդում են լեռնագագաթների և հսկա քարաժայռերի թագավորությունը, վայրի այծերի թաքստոցները՝ հրաշագեղ շեկ քարափներում, իրենց երգերով որսորդներին հմայող թռչունների ապաստարանները, բարձր լեռնային ձմեռանոցները, որպեղ մարդիկ հաճախ սրիպված են կենդանիներին պաշտպանել գազաններից:

Վ. Անանյանի հերոսների համար որսորդությունը բնության և կյանքի իմացության, մարդկային հոգեբանության ճանաչման դրսևորումներ են, որոնք հնչում են «Տիգրիսի ձորում» պարմվածքում որսորդ Դավոթի շորթերով. «...Որսորդն էլ սիրտ ունի, հոգի ունի, թեկուզ միշտ արին է թափում, և թող մարդիկ իմանան, որ անլեզու անասունն էլ սիրտ ունի, հոգի ունի...»:

«Ես որսկան էի Արտոս սարում: Էդ սարի դիմաց Սիփան սարն է, իսկ մեջքեղը Վանա սիրուն ծովը... Ու երբ արևը կախվել է սարերի վրա, ուշքի եմ եկել իմ ցնորքներից, չախմախավոր հրացանս ձեռքիս քարափները մտել՝ արջ որսալու»¹:

Բնությանն ու բնաշխարհի մարդկանց անմնացորդ սիրահարված Վ. Անանյանն ուներ բնությունը յուրօրինակ ձևով ընկալելու կարողություն, հրատապ թեմաների խորը գիրակցություն, բնության գրկում ապրած փարիների փորձ, պարմելու, գրելու և ներկայացնելու բնատուր փառանդ, և, որ ամենից գլխավորն է, մարդու հոգեկան ներաշխարհի գաղտնաբանները թափանցելու հզոր ուժ:

Վ. Անանյանի պարկերած հայ գյուղացիները բարի ու սրելծագործ մարդիկ են: Հողի մշակները, առաջին հերթին, բնախոյզ-որսորդներ ու հովիվներ են՝ քաղաքակրթության փեսակերից վերին աստիճանի նախնական, բայց նրանց մեջ է այն կուրակումը, հսկայական հոգեկան կորովը, սրելծագործական թափը և մարդկային հոգու այն գանձարանը, որ գալիս է բնության հեղ ունեցած խորունկ կապերից: Անանյանի սրելծագործություններում մարդն է հողի փերը, բնությունը նրա համար

1 Վախթանգ Անանյան, Երկեր, հտ. 1, Երևան, 1984, էջ 60:

ոչ միայն ֆիզիկապես սպրելու, գոյարևելու, այլև հոգեպես կայանալու հրաշալի միջոց է: Հայ գյուղացին ինքը ներկայանում է իբրև բնություն և ձուլվելով նրա հետ՝ սրեղծում ամբողջական մի աշխարհագացում: Դարեր շարունակ հայի համար բնությունը վիճակ է, սպրելակերպ, ճակատագիր, հայրենիք, հող ու ջուր, երկինք, որից դուրս նա չի կարող կայանալ: Անանյանը անսխալ որսում է մարդու մեծությունը: Նա ինքնապիպ է ու կրթուր մարդու հոգսերի, ցավերի ու ողբերգությունների նկատմամբ: Ահա այսպիսի մի հրաշալի ամբողջություն է «Որսի հետքերով» պատմվածաշարը՝ իր խորիմասս ու հեղաքրքիր պատմվածքներով: Վ. Անանյանը արժանապատիվ մարդկանց մի բույլ է ներկայացնում, որոնց խորիմասս խոսքերն ու անձնական փորձը դառնում են ուղեցույցներ ոչ միայն գրողի, այլև ընթերցողի համար՝ Մելոնց Ամին, որսկան Շաքարը, Ղազարանց Սամսոնը, Ասատուրանց Քոքորը, Մելոնց Արշակը և այլք:

Վ. Անանյանը լավ գիրքի իր բանական հերոսին՝ մարդուն, սպրում է նրա հույզերով ու երազանքներով, ճանաչում է անհարի հոգու թռիչքներն ու անկումները, այդ պատճառով որսորդական պատմվածքներում արկածային դիպվածները նկարագրելիս երբեք չի մոռանում հիմնական նպատակը՝ մարդու՝ որպես բնության փրոջ, միակ բանական էակի հոգեկան հասկացությունների նորր ու գեղեցիկ արտացոլումը:

«Ճերմակ առաջնորդը» պատմվածքում Վ. Անանյանը գիրականորեն բացահայտում է առաջին հայացքից բնության առեղծված թվացող յուրաքանչյուր իրողություն՝ իր խոսքը համեմելով որսորդական կյանքի հրապուրիչ դիպվածներով, իրենց զբաղմունքին սիրահարված որսորդների հեղաքրքիր զրույցներով. «Այդ սպիտակ թաքա կոչվածը մի խոշոր այծ էր... Մենք անակնկալի էինք եկել, որովհետև բնության մեջ ճերմակ այծ մեզ առաջին անգամն էր հանդիպում»:

Որսորդական պատմվածքներում Վ. Անանյանի հերոսները

1 Վախթանգ Անանյան, Երկեր, հտ. 1, Երևան, 1984, էջ 74:

կանգնում են դեմ-հանդիման բնության երևույթների առջև, ու նրանց հայացքները բնության երևույթների նկարմամբ արտացոլվում են գրողի գրվածքներում: Գեղարվեստական նորը մի հնարանք է սա՝ հայտնի փաղանդավոր գրողին, և հենց սա է պայմանավորում նրա բազմաթիվ որսորդական պատմվածքների հմայքը:

«Որսորդին հաղթողը» պատմվածքում Անանյանը գրում է. «Այնուամենայնիվ կա մի ուժ, որ «գերագույն հաճույքի» պահը կարող է իլել քեզանից: Կա մի ուժ, որ քեզ կարող է սրիպել չկրակել առաջդ կանգնած որսի վրա»¹:

Մարդու և բնության համագործակցությունը Անանյանը կյանքի հիմքն է համարում: Որսը և որսորդությունը ծառայել են «աշխարհը փենսելու արվեստին», բնության գաղտնիքները ներկայացնելու արվեստին, որը և նպաստել է մարդու և բնության միասնականության գաղափարի զարգացմանը: Գրողի այս սկզբունքը առավել քան ժամանակակից է ու հրատապ հոմանիփոսը (մարդասիրական) արժեքների կորստյան, բնության ավերման, էկոլոգիական վթարների պայմաններում: Ճանաչողական այս հմտությունը, գիրելիքը, փենսել ցանկանալը անմիջականորեն առնչվում է «մարդ-բնություն» թեմային, անհատի և նրան շրջապատող միջավայրի հարաբերությանը:

Անանյան գրողը բնության առաքյալն է, նրա կենսապատումի՝ որպես փիեզերական կեցության փարրի դիրարկող-արվեստագետը, նրա անսահման գեղեցկությունն ու ներդաշնակությունը սեփական փելապատկերով ներկայացնողը, բնության կենսարար շունչը: Տրոփում է արվեստագետի գրական զարկերակը, կհարարևի նաև «բնության պատումի» անանյանական աաքը:

Նոնե Մկրտչյան

«Գրականագիտական հանդես», 2012, ԺԳ

1 Վ.Անանյան, «Որսորդական պատմվածքներ», պրակ Ե, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 76:

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՄ ՍԻՐՈՒՄ
ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ
ՈՐՍՈՐԴ ԳԱՐՁԱ**

Էյ հին ծանոթներ, էյ կանաչ սարեր...
Հովհ. Թումանյան

*...Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուր ծմակի լռին խորքերից,
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից...*
Հովհ. Թումանյան

Այն բնությունը, չքնաղ այն լեռներն, ուր կարկաչել է իմ մանկությունը լեռնային վճիտ ամվակի նման, փարթամ է, որսառատ:

Ուր վերջանում է սաղարթախիտ դարավոր անտառն ու սկսվում է ալպիական մուգ կանաչագույն պանորաման, ուր ձգվում են թավշյա սարահարթերը, դուք այժմ էլ կհանդիպեք մեր լեռների չքնաղ թագուհուն՝ եղջերվին: Ամառը նրա մորթը շեկ-կարմրագույն է և փայլվիում է արևի տակ՝ ոսկեգօծ բեհեզի նման: Երբ քոչը սար է գնում, և երբ լեռնային օդը հազենում է գառների մայունով, նա սարահարթերից իջնում է մթին ծմակները: Ուշ աշնանը նա բարձունքներում է, ձյունապատ լեռներում, արածում է քամու սրբած լանջերում և անձկությամբ նայում ցած՝ տաք ու փարթամ բնության առատությանը:

Այժմ էլ Արփավուտի մթին անտառներում, ուր հողը հավիտենապես գրկված է արեգակի կենարար ճառագայթներից, ուր աճում ու փտում է դարավոր կաղնին, արջն իր քրթորթներով ետ է տալիս թափված տերևի հաստ շերտը և ազահությամբ խժռում է տանձը, կաղինն ու հաճարը: Իսկ դեկտեմբերի վերջին, երբ վեր է կենում ցրտաշունչ քամին, նա, հևալով իր հավաքած

ճարպի շերտի տակ, մագլցում է վեր ու ձմեռային քուն մտնում մթին քարանձավներում:

Այժմ էլ մեր լեռների ամենագողտրիկ, սքանչելի բնակիչները՝ քարայծյամն ու եղնիկը, ոստոստում են թփուտներում, լեռան այն լանջերին, ուր փարթամ թավուտները հյուսվել են ժայռերին, փարթաթվելով իրար, բարձրացել վեր և ապառաժները թաղել խիտ կանաչի մեջ:

Այժմ էլ լուսադեմին, եթե զգուշությամբ բարձրանաք մեր գյուղի վերին բլուրները, ուր ամռան լուսնկա գիշերներին եզները մեղմ որոճացել են, և ուր խլուրդը գետնուղիներ է կառուցել, դուք կպատահեք մեր հանդերի ամենախորամանկ կենդանուն՝ աղվեսին՝ մուկ որսալիս:

Իսկ գայլը քայլ առ քայլ ժայռերի ու թփերի ետևից այսօր էլ հետևում է հոտին:

Ես մեծացել եմ այդ կենդանիների մեջ, չնաշխարհիկ թավուտների մեջ, եղնիկների հետ, եղնիկի պես...

Քանի՛-քանի՛ անգամ հանդիպել եմ նրանց, հիացել եմ, երբ եղնիկը թեթև սուրացել է լեռն ի վեր, երբ քարայծյամը թռչկոտել է բարձրաբերձ ժայռերի ճակատին: Եվ քանի՛-քանի՛ անգամ հևհև կախվել եմ ժայռերից, փորսող եմ տվել թփերի տակ, և սուլել է իմ գնդակն անողորմ ու դաժան:

Լեռը, անտառը, խոխոջուն առուն, ծաղիկների բույրը՝ ակա իմ մայրը, որի գրկում մեծացել եմ հարազատ մորից զրկվելուց հետո: Թարմ ու հոտավետ կանաչը՝ ակա իմ անկողինը, ուր ննջել եմ ես զեփյուռի մեղմ շոյանքի տակ՝ աչքերս հառած աստղալից երկնքին:

Եվ երբ լեռան կատարից դիտել եմ արևածագը, երբ ձյունը փայլփլել է հակինթի շեղջի նման, երբ իմ գնդակը սուլել է փախչող այծյամների ետևից, ճչացել եմ ես մանկան բերկրանքով:

Երբ հոգնած նստել եմ գուլալ ջրերի մոտ, ուսիցս ցած առել որսորդական պայուսակը, ինձ թվացել է, թե չկա ավելի ավտորժելի բան, քան ցամաք հացը՝ լեռնային գետակի ափին:

Երբ խարույկը ճարձատել է թանձր խավարի մեջ և երբ ստվերները երկարել են մթին բլուրներում, երբ մենք շամփուրներ ենք պատրաստել մասրենու թարմ ուտերից և լսել որսկան Շաքարի արկածները, մեզ գերել են բնության անդորրն ու իմաստուն խաղաղությունը:

Վտանգը հետևել է մեզ քայլ առ քայլ: Սողացել ենք ձյան հյուսքերի հետ, ապառաժից իջնելիս պոկ է եկել մեր հենարանը, մահասարսուռ դող ենք զգացել մթին որջի առաջ, երբ կրակոցից զարթնած արջը դուրս է եկել քարանձավից կատաղի մոնչյունով:

Այնուամենայնիվ, սառնամանիքը, քաղցը, ծարավը և որսորդության հետ կապված մյուս դժվարությունները չեն կոտրել իմ հոգու կորովը: Դրանք ինձ կոփել են և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես:

Եվ այժմ, երբ ես ապրում եմ այլ վայրերում, այլ կյանքով, երբ դարձել եմ գրչի մարդ, ես ավելի անզուսպ եմ ձգտում դեպի լեռները:

Հիմա էլ իմ հավատարիմ ընկերը՝ իմ հինավուրց բարեկամ հրացանը, կախված է մահձակալիս վերև՝ այծյամի եղջյուրներից: Երբ վերջանում է վեցերորդ օրվա աշխատանքային վերջին ժամը և քաղաքը պատրաստվում է հանգստի օրվան, ցած է իջնում իմ հրացանը պատից և փամփուշտակալը նորից է ծանրանում:

Երբ պետական թատրոնի դռներից դուրս է հոսում խայտաբղետ հասարակությունը, այդ նույն ժամին մեր խարույկը պայծառ ճաճանչներով վառվում է Չաթին-Դաղի բարձունքներում, և մենք ազահությանը ներս ենք ծծում լեռնային անապական օդը, ու մեր թոքերն ուռչում են և հովի շնկշնկոցից, և այն բերկրանքից, որ մենք զգում ենք վաղվա որսի համար:

Այդ իրոք որ հետաքրքիր և գեղեցիկ մի կյանք է, մարդու մեջ կենարար ուժերը վերարտադրող մի կյանք, որին կուզեմ, որ ծանոթ լինի մեր պատանեկությունը:

Ոչ միայն ծանոթ լինի, այլև ապրի այդ կյանքով, սիրի շրջագայությունը լեռներում, սիրի զենքն ու որսորդությունը, սիրի մեր բնության հրաշալիքները: Այո մեր բնության: Չէ՞ որ առաջ այդ

բնությունը մերը չէր: Կարիքի տակ կորացած՝ մենք չէինք տեսնում արևի պայծառությունը և չէինք լսում զեփյուռի մեղեդին: Մեր նոր սերունդը, որ չի տեսել մահ և ավեր, որ ունի լազուր երկնքի նման ջինջ առօրյա, չի կարող սրտանց չսիրել լեռների վսեմությունը, ծաղկի բուրմունքը և սվսվացող անտառը՝ լուսնկա գիշերին: Չէ՞ որ այժմ մերն են և՛ արևը, և՛ ծառը, և՛ կարկաչուն ամպակը, և մենք պետք է օգտվենք բնության անսպառ գեղեցկությունից՝ մեր մեջ նույնչափ գեղեցկություն ամբարելու համար, մեր ավյունն ու եռանդը բազմապատկելու համար:

Այդ կյանքի հրապույրը ես ընդունում եմ նեկտարի նման, այդ կյանքը ես ազահությամբ կլանում եմ բնության գրկում և արժե գրել այդ կյանքի մասին:

Սկսում եմ մանկությունից, երբ իմ մեջ առաջին անգամ սեր առաջացավ դեպի զենքը:

Սկսում եմ այն ժամանակներից, երբ առաջին անգամ պայթեց վառոդն իմ ձեռքով, և ես ճչացի անհուն բերկրանքից:

Սկսում եմ այն ժամանակներից, երբ ճնշումն ու զրկանքը մեր մեջ վառեցին վրեժ ու ատելություն, երբ մենք պատանի հասակից հարկադրված զենքի տակ մտանք ու նրա որոտով արտահայտեցինք մեր արդար ցասումը բռնակալ կարգերի դեմ...:

ԱՌԱՋԻՆ ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանկությունից ամեն բանից շատ սիրել եմ գենքը և բնությունը:

Երբ երեխա էի, մորս փեշից բռնած հարսանիք էի գնում ոչ այնքան փլավ ուտելու, որքան հրաձգության ներկա լինելու համար:

Երբ եկեղեցու դռնից ներս մտնելիս քավորն իր սուրը շո-ղացնում էր արևի տակ ու խփում եկեղեցու դռան կամարին, ես միայն մի բան էի մտածում, որ մեծանամ, բոլոր ամուսնացողների քավոր եմ կանգնելու, որ սուր կապեմ:

Զատկին հետևող «կանաչ-կարմիր» կիրակիներին, ծաղկոտ բլուրներում շրջան էին կազմում բազմերանգ հարս ու աղջկերք, չերքեզկա հագած տղամարդիկ և ցնցոտիապատ մի բազմություն: Գառներ էին մորթում, և կաթասները դնում էին խարույկներին, իսկ ներկած ձվերը դնում կոճղերին: «Բերդանկաները» դղրդում էին, իմ սիրտը թունդ էր առնում, և կարծես հոգիս թռչում էր գնդակի հետ:

– Նանի, որ մեծանամ, ինձ համար թվանք կառնեմ... հարցնում էի թախանձանքով:

– Թվանքի միջին արին կա, բալա ջան, ասում էր նա:– Համ էլ մեր բանը չի, բալա ջան, մենք անջաղ ենք ծերը ծերին հասցնում, թվանքը մի լուծ եզն արժի:

Այնուամենայնիվ, ծրագիր էի մտմտում, որ երբ մեծանամ, տասը տարի տավարած կդառնամ, փող կաշխատեմ, հրացան կառնեմ և գաղտնի կպահեմ:

Երբ մի փոքր մեծացա, իմ երազը սկսեց իրականանալ:

Այդ ինձ համար այն երանելի ժամանակն էր, երբ հին ամբարի տակից հայրս հանեց իր հոր չախնախավոր հրացանը:

Մի օր, երբ մայրս տանը չէր, ես հրացանը տարա մեր սրահի տակ, ժանգը քերեցի և չրթեցի մի քանի անգամ: Այդ

հրացանը կրակելու համար «պիստոնի» փոխարեն կայծքար էին գործածում:

Մեր հարևան Հանեսն ինձ սովորեցրեց դրա գործածության եղանակը: Իսկ Սաքո բիձեն ասաց.

– Դա շատ խաթալու թվանք ա, շատ վախտ չախմախաքարը վեր ա ընկնում կամ կրակ չի տալիս:

Ու հետևյալ դեպքը պատմեց:

Մարդոնց Սիմոնը Բակատեղերում մի մեծ քարի գլխի պատահում է արջին, հրացանը դեմ է անում ճակատին ու չրթացնում՝ կայծքարը կրակ չի տալիս: Արջը վրա է հասնում, մարդ ու արջ գրկում են իրար և կյանքի ու մահվան կռիվ է սկսվում նոր թափված խաշամի մեջ: Սիմոնը չուխայով փաթաթված ձեռքը կոխում է արջի բերանն ու լեզվից բռնում: Գազազած արջը նրան շպրտում է քարափից ցած: Բարեբախտաբար Սիմոնն ընկնում է ժայռի տակ կուտակված փափուկ խաշամի՝ վրա: Մինչև այժմ էլ այդ ժայռը կոչվում է «Սիմոնի քար»:

– Բան, խաթալու ա էդ թվանքը... Շատ վախտ էլ քացի ա տալիս,– խրատեց Սաքո բիձեն:

Այդ պատմությունն ինձ չսարսափեցրեց:

Ես ու իմ ընկեր Գրիգորը Հանեսի արկղից վառող թոցրինք, լցրինք հրացանի փողը, թղթով ամրացրինք և կայծքարը դրինք իր տեղը: Հետո մեկս բռնեցինք հրացանի կոթից, իսկ մյուսս՝ փողից ու գնացինք մեր կալը, ուր դեզի տակ լեզուն հանած ծույլ-ծույլ պառկել էր մեր հարևանի պառավ շունը, որը մի տարի առաջ կծել էր իմ ոտքը: Սայլի ետևից գաղտնի փողը մոտեցրի շան փորին, «չախմախը» ետ քաշեցի ու ձգանը քաշեցի:

Լսվեց ահեղ որոտ, հետն էլ՝ աղիողորմ կլանչոց, և ծուխը պատեց մեզ: Տանեցիք դուրս թափվեցին, հրացանը վայր գցեցինք ու փախանք:

1 Խաշամ - չորացած տերևներ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՅԱՆՔԸ ՄԵՁ ՍՏԻՊԵՑ ՋԵՆՔԻ ՏԱԿ ՄՏՆԵԼ

Մի մառախլապատ մայիս իջավ Դիլիջանի վրա, և սևակնեցին մեր, առանց այն էլ, մթին անտառները: Դաշնակ մաուզերիստներն սկսեցին հնձել մեր կանաչ արտերը, ու ամեն կերպ նեղել մեզ:

Նրանք իմ առջևից ուժով տարան մեր Ջեյրանի հորթը, եղնիկի նման այդ երինջը, որին ես կապված էի իմ փոքրիկ սրտով: Ձմռանը դա մի նիհար մոզի էր: Նիհար էր, որովհետև զինվորները թալանեցին մեր դեզերը, խոտի մի մասն ստիպված թողեցինք լեռներում, խոտհարքներում: Ձմեռը ճղում էինք ծնկահար ձյունը, բքի էինք բռնվում լեռներում և խոտը շալակով տանում էինք ձմեռանոց: Այդպես մի կերպ գարուն հասցրինք մեր անասուններին:

Աշնանամուտին հանդում, երբ մուրթն իջնում էր բլուրների վրա, անասունները քաղցր մշմշում էին խարույկի մոտ, ես գրկում էի Կխտարին¹, գլուխս դնում էի նրա կրծքին և ննջում: Իսկ նա մեղմ որոճում էր և լիզում գլուխս:

Եվ երբ նրան տարան, ես երկար ժամանակ ողբում էի նրա կորուստը: Նրա գլուխը գտան Արթենանց Ալեքսանի գոմում...

Եվ երբ ինձ պես շատ պատանիներ լաց եղան, երբ ավելի պարզ երևաց, որ այդ ավերի ու թալանի օրերին մեզպեսները զոհ են գնում, իսկ հարուստները եզան հատը գնում են երկու փութ գարով և հողի դեսյատինը մի փութ թեփով, այն ժամանակ մեզ համար սկսեց պարզվել, որ իսկական թշնամին մեր մեջն է:

Եվ մեր հոգում վրեժն սկսեց ելք որոնել:

Մենք զինվեցինք: Մեր գյուղն ապստամբեց երեք անգամ, հարևան գյուղերն՝ ավելի շատ: Դազախի լեռների մթին անձավներում բույն դրին կարմիր պարտիզանները՝ մեր գյուղի քաջարի զավակները:

¹ Կխտար - այդ երինջի անուն էր. կխտար նշանակում է եղնիկ, այծյամ:

Եվ զենք ձեռք բերինք:

Ֆրանսիական «լեբել» հրացանը, որը հայրս գնել էր ինձ համար, համբուրեցի կոթից մինչև ծայրը և վերմակիս տակ հետը գրույց արի մինչև լույս:

Մյուս օրն Ավելուկ-Ուրթում Ակոնց Գրիգորն ինձ սովորեցրեց նշան խփելը:

Դա 1918 թվի գարնանն էր:

Այն ժամանակ ես տասներեք տարեկան էլ չկայի, ուրեմն այնքան փոքր, որ ձեռքս չէր հասնում շնիկին, որ կրակեմ: Ստիպված եղան հրացանի կոթը սողցել կարճացնել:

Երկորդ օրն արդեն կրակում էի կարգին:

Երրորդ օրը Բաղալենց յալերումն էինք: Օրը պայծառ էր և ցողն արագությանը վեր էր կենում կանաչի վրայից: Տղերքը տավարը թողած՝ լախտի էին խաղում:

– Ակնփ, քառասուն լոք¹ չափիր,– հրամայեցի ես իմ տավարած ընկերոջը, այն ժամանակ ես մեր թաղի տավարածների «պետն» էի և ինձ լսում էին առանց առարկելու:

Չափեց:

– Փափախդ վեր դիր,– կարգադրեցի ես:

Հնազանդությանը կատարեց: Ահագին սև փափախը կանաչ ֆոնի վրա ինձ շատ դուր եկավ: Հրացանը մեկնեցի, որ կրակեմ:

– Ախր կձղվի է՛,– մղկտաց Ակոփը:

Հրացանս ցած իջեցրի և ասացի.

– Որ ուզում ես չձղվի՝ միջին քար դիր, որ պինդ ըլի: Ակոփն ուրախացավ, որ փափախը փրկելու հնարը գտնվեց: Մի մեծ քար դրեց մեջը և հարմարեցրեց: Կրակեցի: Քարը գնդակի հարվածից կտոր-կտոր եղավ և գլխարկի ծվենները երկինք թռան:

Ընդհանուր քրքիջ բարձրացավ, Ակոփն սկսեց տոգալ, իսկ տղերքը ծաղրում էին:

– Ծակում չի, Ակոփ, գյուլլեն քար կծակի՞ որ...

Այդ օրը ես տղերքի աչքում բարձրացա: Առաջ ինձանից

¹ Քայլ:

քաշվում էին այն բանի համար, որ հանդում հաստափոր գրքեր էի կարդում և, ինչպես իրենք էին ասում, «աշխարհքի էս ծերից տալիս էի, էն ծերից դուրս գալիս»: Այժմ զենք ունեն և լավ էլ կրակում եմ:

Տղերքն ուրախության ձիչերով շրջապատեցին ինձ և բլրի գագաթից սկսեցին բղավել «ներքի թաղի» տավարածների վրա.

– Էհէյ, խլնքոտ Պեպլի, Ճիպրո Մացանկ, Գաջաջ Սանթրո՛, թե տղա եք, մեյդան եկեք, մեյդան...

Ներքին թաղի տավարածները մեր հակառակորդներն էին և նրանց դեմ մղվող «ճակատամարտը» ես էի ղեկավարում:

Լաջորդ օրը մառախուղ էր և անձրև էր տեղում անընդհատ: Քյամանդի քարայրում մի թեժ կրակ էինք արել:

Ջանս «քոս էր ընկել», ուզում էի անպայման կրակել: Այս անգամ ուզում էի փորձել փոքր նշանի վրա: Իմ ընկեր Գրիգորը այրի միջից դեպի դուրս 12 քայլ չափեց և դատարկ փամփուշտը դրեց քարի վրա:

– Թե որ սրան էլ տվիր, ներքին թաղեցոնց թոզը երկինք ենք հանելու,– ասաց նա և զինվորական պահածոյի տուփի տակը կլոր կտրեց և մի «շքանշան» պատրաստեց ինձ համար:

Լրացանը դրի նրա ուսին, շունչս պահեցի և երբ հատիկը փամփուշտի հետ միասին եկավ կպավ նշանացույցի անցքին՝ շնիկը քաշեցի: Այրը դղրդաց, իսկ փամփուշտը վզզաց օդում: Գտան-բերին: Գնդակն անցել էր ուղիղ մեջտեղից:

Տղերքը համակրանքի այնպիսի ցույց կազմակերպեցին, այնպիսի մի դղրդոց բարձրացրին, որ ականջներս տժժաց: Անմիջապես «շքանշանը» կախ արին վզիցս և մի պատվիրակ ընտրեցին, փամփուշտը ձեռը տվին, ուղարկեցին ներքի թաղեցոնց մոտ.

– Թող տեսնեն, թուքները ցամաքի:

– Ասա՛ էս մեր պետի հունարն ա, ձերն էլ ուղարկեցեք մի նայենք:

Այսպես, ես էլ, ընկերներս էլ դեռ վաղ պատանեկությունից

սկսեցինք վարժվել զենքի գործածությանը:

Իմ ամենամոտ և քաջարի ընկերը՝ Գրիգորը, նույնպես հրացան ձեռք բերեց:

Հրացանները գաղտնի էինք պահում: Վարդանի յալի ետևը, մթին անտառում, մի փուչ կաղնի կար: Այդ կաղնու փչակն էր մեր զինանոցը:

Եվ երբ հունիսյան մի տոթ օր մեր գյուղացիք ապստամբեցին դաշնակցական կարգերի դեմ, երբ մաուզերիստները ձիերն ու գլխարկները թողած, մեր դիմացի լեռան լանջով դեպի Դիլիջան էին ձղում, մենք փչակից դուրս բերինք մեր հրացանները, թաքնվեցինք հաստաբուն հաճարենու ետևը և միասին համազարկ տվինք անկարգ փախչող խմբի ետևից: Ու հրձվանքով տեսանք նրանց ետև բարձրացած փոշու երկու ամպիկը:

- Ձեռներս հալալեցինք,- ասաց Գրիգորը գուրգուրանքով նայելով հրացանին:

Երկու տարի անց, երբ Սեմյոնովկայի լեռների մյուս երեսից լսվում էր թնդանոթների խուլ դղրդյունը, երբ կոմունիստական ջոկատները գրոհում էին դաշնակցական հրոսակախմբերի դեմ՝ մաքառելով քաղցի, ձյան ու սառնամանիքի դեմ, մենք մագլցում էինք մեր լեռները, կուզեկուզ էինք անում թփերի տակ, հետախուզում բանդիտների շարժումը:

Այն ժամանակ մենք արդեն տասնհինգ տարեկան կոմերիտականներ էինք և տիրապետում էինք զենքին:

Այսպես, այս պայմաններում ես վաղ պատանեկությանից սիրեցի զենքը, ընկերացա նրան, և նրա որոտով արտահայտեցի իմ վրեժն ու ուրախությունը, իմ ցասումն ու իմ բերկրանքը...:

Այժմ անցնենք իմ որսորդական կյանքի դեպքերին:

1934

ԱՐՁԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Լույսը դեռ չէր բացվել, երբ ես ու մեր հարևան Վաղոն տաք հագնված, գլուխներս բաշլղներով փաթաթած, որսկան Շաքարի հետ դուրս եկանք գյուղից: Մի քիչ առաջ գնալուց հետո շեղվեցինք ճանապարհից ու մտանք անտառը:

Ցուրտը նեղում էր, բայց մոռթե տաք փափախն ու երկու գույգ քուքի գուլպաները ականջներս ու ոտներս պաշտպանում էին ցրտից:

Ձյան միջի չոր ձյուղերը ճարձատելով փշրվում էին մեր ոտների տակ: Որևէ թփի տակից կամ փոսի միջից երբեմն դուրս էր ցատկում մի վախկոտ նապաստակ, և այդ ժամանակ սիրտս վեր էր թռչում ու ձեռս տանում էի պատրաստ պահած հրացանիս ձգանին:

– Ա՛յ տղա, ջահելություն մի անի,– խրատում էր Շաքար ամին:– Լպոստրակն ի՛նչ է, որ նրա վրա գյուլլա փչացնես: Այ, հիմա կհասնենք արջերի բույնը, է՛ն ժամանակ ինչքան շնորհք ունես, ցույց տուր:

Կտրեցինք, անցանք սար ու ձոր, քար ու քարափ ու դեմ առանք մեր որսատեղին՝ Արփավուտի անտառին:

Քիչ անց արևը դուրս եկավ: Մի ջինջ ու պայծառ առավոտ էր: Ձյան հատիկները հազարավոր ավաստների ու գոհարների նման պսպղում, փայլվում էին արևի ճառագայթների տակ:

Չարթն ու մոշահավը կղկղալով թփից թուփ, ծառից ծառ էին թռչում:

Վերելքը դժվարացավ:

Շաքար ամին, չնայած իր ծեր հասակին, արջի նման փշրելով հանդիպած թփերն ու ցախ–ցուխը, առաջ էր գնում ու ճանապարհի բաց անում ինձ ու Վաղինակի համար ու հետոն էլ պատմում էր իր կյանքից հետաքրքիր դեպքեր:

– Հրեն, է՛ն քարափը տեսնում եք. նրա տակին է՛ն տարին մալականի եզան չափ մի պախրա սպանեցի՝ պոզերը ոնց որ ծառի

ձղներ: Բունտի տարին¹ էլ, հլե դուզ էս վախտը կլիներ, էս ձորում մի արջ սպանեցի, երեք լուծ գոճով անջաղ տուն հասցրինք:

Քառասունհինգ տարվա որսկան Շաքարի գլխով ամեն ինչ անցել էր: Չկար մի քար, մի թուփ, մի ձոր, որ ներկված չլիներ նրա գնդակին գոհ գնացած կենդանիների արյունով: Դրա համար էլ, այդ արջերի ու գայլերի աշխարհում, իմ պատանի սիրտն անահ էր ու լի կորովով:

Ընկնելով ու վեր կենալով, երբեմն էլ զառիվայրերից կոճղի նման գլորվելով, վերջապես Շաքար ամին մեզ կանգնեցրեց մի աղբյուրի մոտ:

Նստեցինք, տուպրակներից հանեցինք հաց ու պանիր և սկսեցինք ախորժակով ուտել:

– Կեր, հանդի հացը համով է լինում,– ասում էր Վաղոն և լավ պատառներն ինձ տալիս:

– Հա, բւմ, համով ա,– հաստատեց Շաքար ամին անուշադիր, ցրված ու մատով ցույց տվեց դիմացի ձորի մյուս կողմն ընկած քարափները:– Մեր քեռի արջն է՛ստեղ ա: Ինչպես երևում ա, քիչ առաջ բնիցը դուրս ա եկել, քանի որ հեռվից քուլաչարթի² չրթջրթոց ա գալիս, իմացեք, որ չարթերն արջ տեսնելիս էդպես դալմադալ են բարձրացնում:

Ծեր որսորդը փորձից գիտեր, թե ո՞ր գազանի երևալն ի՛նչ տրամադրություն է ստեղծում անտառի բնակիչների մեջ:

Չոքեցինք, ջուր խմեցինք ու առաջ գնացինք:

Երբ մտանք ձորը, Շաքար ամին ձեռքի շարժումով կանգնեցրեց մեզ: Լուռ հնազանդվեցինք: Հենց մեր ոտների տակ, առվի մոտ, ձյան վրա ինչ–որ մեծ չանչերի հետքեր կային: Կարծես ձյան վրա բոբիկ մարդ էր ման եկել:

– Արջի իզն³ ա,– շնջաց Շաքար ամին և ուսից ցած բերեց հրացանը:

1 1905 թվականի հեղափոխության մասին:

2 Քուլաչարթ – ճայ, անձեղ. կաչաղակի ցեխի թռչուն է:

3 Իզ – հետք:

Սիրոս սկսեց թարտալ՝ վանդակն ընկած թռչունի նման:

– Հիմա նա չլեն՝ ա մտել: Չլեն էլ էս վերին քարափների մեջն ա: Իզը վեր կալեք ու կամաց բարձրացեք վերև: Ա՛յ պուճուր,– դարձավ ինձ,– դու հլա ջահել ես, հեռու, մի քարի տակ կմտնես ու սուս կանես: Իսկ դու, Վաղինակ, կբարձրանաս բնի մեջ կկրակես ու ետ կփախչես՝ տապ կանես:

– Բա ո՞վ է արջին սպանելու,– միամտաբար հարցրի ես:

– Տնաշենի տղա, հո դո՞ւ չես սպանելու: Դուք արջին բնից հանեցեք, մնացածը Շաքարի գործն ա...

Այսպես կարգադրեց ծեր որսորդը և աշխուժությամբ քարից քար, փոսից փոս թռչելով, անձայն ու անշշուկ անհետացավ խիտ ծմակում:

Իսկ մենք գազանի հետքերով սկսեցինք մագլցել լեռն ի վեր:

Տեղ–տեղ արջը կանգ էր առել, ձյունը ետ տվել ու չորացած տերևների տակից վայրի պտուղներ հավաքել:

Այդ կուսական վայրերը որքան վեհ ու գեղեցիկ, այնքան էլ ահարկու էին: Եվ որքան արջի բնին մոտենում էինք, այնքան երկյուղը պատում էր մեզ:

Վերջապես երևաց Շաքար ամին. նա արծվի նման թառել էր ժայռի կատարի մի քարե ցցունքին ու «Մոսին» հրացանը ձեռքին պատրաստ՝ շեշտակի նայում էր ապառաժի լանջին բացված մութ երախին, որը, ըստ երևույթին, որջն էր:

Նկատեց մեզ, ձեռքով նշան արավ: Ես ետ ընկա ու թաքնվեցի մի մեծ քարի հետև:

Վաղինակը առաջ անցավ ու հետքն ստուգեց: Համոզվելով, որ արջը բարձրացել, որջն է մտել, նա մագլցեց ժայռը, հասավ անձավին, նրա մեջ կրակեց ու ետ փախավ: Ժայռը թնդաց որոտից ու դրան հաջորդող արջի մոնչյունից: Քնահարամ եղած գազանը բնից դուրս եկավ ու դժգոհ մոթմոթալով առաջ շարժվեց: Այդ ժամանակ ես թաքստոցից տեսա նրա բրդոտ գլուխը: Որոտներ լսվեցին, և Շաքար ամու հրացանից թռած գնդակները մեխվեցին

1 Չլա- որջ:

գազանի մեջքին: Արջը կարծելով, թե իրեն վիրավորողը Վաղոն է, գազազած նետվեց նրա կողմը: Վաղոն վայրկենապես շուռ եկավ ու սկսեց արագ-արագ, բայց աննպատակ կրակել: Այսպիսով, վերջացան նրա հրացանի պահեստատուփում եղած փամփուշտները: Ետ-ետ գնաց, թիկունքով դեմ առավ մի հաստ կաղնու ջուխտակ բնին ու մինչև շուռ կգար որ փախչի, գազանը վրա հասավ, կանգնեց հետևի ոտների վրա, գրկեց Վաղոյին ու ձյան մեջ սկսեց «քոլոլել» նրան:

- Վայ, մեռա՛... Շաքար ամի, հասի՛ր...- բղավում էր տղան արջի տակից:

Դողալով կարաքինս պատրաստեցի ու մի կրակոցով ջարդեցի արջի հետևի ձախ ոտքը: Նա ցավից մոնչաց ու կատաղի փնչոցով շարունակեց ջարդել իր զոհին, երևի կարծում էր, թե նա խփեց: Շաքար ամին շատ հեռու էր: Նա իր բարձր թառից սաստեց ինձ ու նշան բռնելով, կրակեց արջի ու Վաղինակի վրա:

Երկուսն էլ արյունաշաղախ գլորվեցին դեպի ձորը...

- Վայ, Շաքար ամի, Վաղինակին սպանեցիր,- գոռացի ես ու սայթաքելով ցած վազեցի:

- Այ լակոտ, լաց ու կոծ մի անիլ, որսկան Շաքարը գիտի իր գյուլի ճամփեն,- ձայն տվեց ծերունին և հանգիստ իջավ ժայռից:

Մենք արյան հետքերով հասանք ձորը և ի՛նչ տեսնենք, որ լավ լինի. Վաղինակը զգզզված ու ճնակոլոլ կանգնել է սատկած արջի կողքին և հրացանի կոթով հարվածում ու հայիոյում է նրան.

- Ը՛ր, ես քո ռեխն անիծեմ... ո՛ւմ էիր ուզում ուտել, հը՛... դե հիմի կեր...

Ես արցունքի միջից ծիծաղեցի:

- Դե՛, օրը մթնեց, շուտ արեք,- հրահանգեց Շաքար ամին: Նրանք արջի ոտքերը կապկպեցին, հրացաններից մեկը լուծ դարձրին՝ լծվեցին ու սկսեցին ձյան վրայով քարշ տալ դեպի ցած՝ ձորում կուչ եկած ձմեռանոցի ուղղությամբ:

Իսկ ես առոք-փառոք բազմել էի արջի բրդոտ փորին,

հրացանս ճոճում էի օդում և իմ ուրախության ճիչերով թնդացնում անտառը:

– Խաբարդա՛ն...

Հասանք ձմեռանոց: Տավարածներն իսկույն թեժացրին բուխարին:

Տղերքի մի մասն արջն էր քերթում ու զարմանում հաստ ճարպի վրա, մյուս մասն անտառ գնաց ծառի ճյուղերից շամփուրներ պատրաստելու:

Քիչ անց Շաքար ամին որսորդավարի մի լավ խորոված պատրաստեց: Վրա թափվեցինք ու ավտրժակով կերանք, մի կողմից էլ կատակում էինք Վաղինակի «փահլևանության» վրա:

Շաքար ամին պատմում էր, թե ինչպես Վաղոն «ասլանի նման կոխ էր բռնել արջի հետ ու քիչ էր մնում նրան սաղ-սաղ ուտի»:

Այնուհետև թեժ բուխարու առաջ նստած՝ ամբողջ գիշեր լսում էինք ծեր որսորդի պատմությունները:

Դրսից քամու հետ մեր ականջին էր հասնում գայլերի ոռնոցն ու շների պատասխան հաչոցը...

1927

ՄԱՅՐ ԱՐՁԸ

1

Աշունը եկավ, և մեր անտառները նորից նախշուն շորեր հագան:

Քոչը սարից իջավ, ձմեռանոցները նորից կենդանացան կովերի բառաչից ու ոչխարների մայունից:

Գոմեշներն անտառ մտան և փնչոցով սկսեցին խժռել տանձ, կաղին ու վայրի այլ սրգեր:

Մեզ համար սկսվեց հետաքրքիր մի շրջան՝ թեժ խարույկների շրջանը: Կրակը բորբոքում էինք անտառում, շուրջը նստոտած հեքիաթ լսում ու կեծացած սոխի մեջ կարտոֆիլ խորովում:

Այն ժամանակ ես մի նիհար պատանի էի՝ ոչխարի մորթուց մեծ փափախը գլխիս, տրեխները հագիս, կեռ չոմբախը ուսիս: Շորերս կարված էին տանը գործված կոշտ շալից, արմունկներս ու ծնկներս միշտ կարկատած: Նրանից էր, որ ծառ շատ էի բարձրանում պտուղ քաղելու, թե՛ նրանից, որ ամեն օր կոխ էի բռնում ընկերներիս հետ՝ հագուստ չէր դիմանում ինձ:

Ծնողներս գյուղում էին ապրում, իսկ ես, իմ ընկերների հետ, տավար էի պահում ձմեռանոցում, որ գյուղից հինգ-վեց կիլոմետր հեռու, մի անտառոտ ձորում, Խալ-խալլու սարից եկող գետակի ափին:

Դա մի արևոտ ու մեղմ ձոր էր, քամիներից պաշտպանված: Ամառը, սարերում հնձած մեր խոտը փոխանակ գյուղ տանելու, ծառի ճյուղերի վրա դարսում էինք, եզները լծում ու քարշ տալիս դեպի այդ ձորը, դիզում էինք ցանկապատի մեջ և ձմռանը բուք օրերին մեր անասունները կերակրում նրանով:

Քանի որ էլի եմ պատմություններ անելու ձմեռանոցի տավարածների կյանքից, ուզում եմ երկու խոսքով տալ մեր ձմեռանոցի պատկերը:

Այնտեղ ամեն տնտեսություն ուներ իր խոտի դեզը՝ աղքատներինը փոքր, արագիլի գզգզված բնի նման, իսկ հարուստներինը՝ վիթխարի, հսկայական: Անծանոթ մարդը հենց հեռվից՝ դեզերի տեսքից որոշում էր, թե մեր գյուղացիներից ո՞վ ինչ ապրուստի տեր է:

Ամեն տնտեսություն ուներ մի գոմ, ուր կապված էին լինում ընտանի կենդանիները, և նրան կից գետնափոր մի խրճիթ, որի մեջ ապրում էր անասուններ պահողը: Հարուստ մարդու գոմը մեծ էր լինում, բայց տունը դարձյալ խրճիթ էր մերի նման, որովհետև նրա մեջ իր «նոքարներն» էին բնակվում, իսկ տերը ապրում էր գյուղում:

Ամեն խրճիթում, պատի մեջ, լայն բուխարին էր, որ վառվում էր գիշեր-ցերեկ (դե, փայտն առանտ, տնից դուրս ես գալիս՝ անտառն է), պատի մեջ **թարերն** էր, ուր կավե ամաններն էինք շարում, շեմքում պատին դեմ արած էր լինում ջրով լիքը կավե կուժը, իսկ նավթի ճրագը դրված էր լինում մրոտ սյունի **ճրագաթաթին**:

Մեր ձմեռանոցը բաղկացած էր այդպիսի 35-40 խրճիթից: Հարևան ձորում ևս մի այդպիսի ձմեռանոց կար: Նրանից դենը՝ մեկ ուրիշը: Այդպես, այդ լեռների մեջ, անտառոտ ձորերում, գետակների ափերին ցրված էին մեր և հարևան գյուղերի ձմեռանոցները:

Այդտեղ մենք ապրում էինք մինչև գարուն, մինչև որ սարերը կանաչում էին և մեր անասունների հետ սար էինք բարձրանում, իսկ աշնան սկզբին նորից իջնում էինք ձմեռանոց. այնպես որ մեր անասուններն իրենց կյանքում գյուղ չէին տեսնում:

Ձմեռանոցում մենք հացի նեղություն էինք քաշում, բայց կաթ և կարտոֆիլ ամեն տնտեսություն ուներ: Լուցկի, նավթ, շաքար այդ տարիներին չկար, իսկ ամենից դժվարը հագուստի հարցն էր: Մեր հագուստներն այնքան էին կարկատել, որ երբեմն չէր հասկացվում, թե ինչ կտորից և ինչ գույնի են եղել դրանք:

- Այ կապդ կտրած, ախր քեզ շոր չի դիմանում,- նախատում

էր մայրս շորերս կարկատելիս:

Դե ո՞նց դիմանար. գնում ես անտառ փայտ բերելու, փշերը բռնում են փեշերիցդ ու քաշում: Փայտը շալակում ես՝ բլուզիդ մեջքն է մաշում: Գայլն ընկնում է հոտի մեջ, «հայ-հարայ» կանչելով, սայթաքելով, ընկնելով, վեր կենալով վազում ես հետևից, և երբ ուշքի ես գալիս, տեսնում ես շավարիդ ծունկը պատռվել է: Բարձրանում ես ծառը հաճար թափ տալու քեզ համար, անասունների համար, իջնում ես սողալով ու նայում շավարիդ՝ փողքերը քրքրվել են: Իսկ դիմացդ դեղին տերևների միջից վայրի սալորներն են կարմրին տալիս, դե եկ դիմացիդ ու մի բարձրանա սալորենին...

Ժայռերն ես բարձրանում, քայլում ես կածաններով, խոտ ես կրում շալակով, գոմաղբն ես կողովներով դուրս տանում գոմից, ամեն մեկն իր բաժինն է քաշում հագուստիցդ, այդ բոլորին շո՞ր կդիմանա...

2

Ձմեռանցում ես մի ընկեր ունեի՝ Սիմոն անունով: Ինձնից վեց-յոթ տարով մեծ էր: Մի լուռ ու հեզ տղա էր Սիմոնը, միշտ լուրջ, աշխատասեր ու տխուր. մանուկ հասակից զրկվել էր ծնողներից և աշխատում էր հարուստ Աթոյի տանը: Նա էլ ինձ նման կարկատած շալե շորեր էր հագնում ու գլխին դնում Աթոյի հնամաշ փափախը: Սրտակից ընկերներ էինք մենք և այն նեղ տարիներին վերջին կտոր հացը կիսում էինք իրար հետ:

Սիմոնի հետ ցերեկները անասուններն արածացնում էինք հանդում, երեկոները մաքրում գոմը, խոտ լցնում մսուրները ու քնում գետնին փռած թաղիքի վրա, բուխարու առաջ:

Սիմոնի վարձը տարեկան մի մոզի էր ու մի ձեռք շոր: Տավարած ժամանակս ինձ հետ շատ բաներ են պատահել, բայց այդ աշնանը մի զարմանալի, մի հրաշք բան պատահեց, որ մինչև և մահս չեմ մոռանա:

Պատմեմ:

Մեր ձմեռանոցի մոտի անտառապատ բլրի մյուս երեսին, մի մոռյալ ձորում, ահա հազար տարի է, որ երկու կիսավեր վանքեր են կանգնած: Այդ ձորը Զուխտ վանքերի ձոր է կոչվում: Ես և Սիմոնը մեր անասուններն արածացնելու համար այդ ձորն էինք տանում: Կիսավեր վանքերի շրջակայքում հին գյուղի ավերակներ կան, վայրենացած պտղատու այգի, որը շողշողում էր ամեն գույնի սալորների, տանձի, խնձորի տեսքից, իսկ վարելահողերում դեռ կարտոֆիլ կար: Տավարածին էլ դա է հարկավոր, քանի աշուն է՝ խժոիր բնության տված ձրի բարիքները, հենց ձմեռը չոքեց դռանդ՝ վայ քո օրին, սրթսրթա ու վնգստա...

Մի օր էլ Զուխտ վանքերից ոչ հեռու կարտոֆիլը թաղեցի կեծացած սոխրի մեջ ու նստեցի ժայռի գլխին: Դիմացս ամբողջովին ծիրանի հագած անտառն է, որ ձորի երկու կողմերից բարձրանում է մինչև ծեր Խալ-խալվի «գոտկատեղը»:

Նայում եմ ձորին, նայում եմ նախշուն անտառին, նայում եմ քչքչացող առվին ու մի տեսակ սիրոս լցվում է: Միտք եմ անում, թե՛ յարաբ էս ինչ ձեռք է ստեղծել էս սիրուն-շարմաղ բնությունը, էս շահմար օձի գույները: Մեկ էլ միտք եմ անում, թե մեզ պես մարդիկ ինչի են պետք, ինչի ենք ապրում աղքատ ու անուսում: Մի խոսքով, գլուխներդ ինչ ցավացնեն, մարդ եմ, էլի՛, ինձ ու ինձ խոսում եմ. քարի հետ, ծառի հետ, տերևի հետ, և հազար ու մի բան է անց կենում մտքովս, ու ամենից շատ սիրոս լցվում է այն բանից, որ դպրոցական պարապմունքները նորից սկսվել են, Աթոյի երեխաները կոկիկ հագնված նորից դպրոց են հաճախում, իսկ ես, ուսման կարոտը սրտիս մեջ, դեռ տավարած եմ և հույս էլ չունեմ, թե բախտ կունենամ կյանքումս երբևէ դպրոց մտնելու...

Այդ մտքերով տարված-մոլորված՝ պղտոր հայացքով ցած նայեցի, ու հայացքս կանգ առավ մի թուխ բանի վրա: Մտքերս ցրվեցին: Մի լավ մտիկ անեմ, տեսնեմ ժայռի տակ մի արջի քոթոթ պորտն արևին է արել ու քնել: Սիմոնին ձեռքով նշան արի, որ

շուտ գա: Նա առաջ եկավ, կիսախորով կարտոֆիլը բերանում, աչքերից արցունք թափելով ու մոխրոտ ձեռներով: Նշան արի, որ չխոսի ու մատս մեկնեցի ցած: Տեսավ որսն ու ազահությունից աչքերը պսպղացին: Մի քար վերցրեց, ուզում է խփի: Տատանվեց, քարը մի կողմ դրեց և ուղղությունը ձշտելու համար ոչխարի կտիտ ցած գցեց: Քոթոթն ականջը շարժեց, թաթով խփեց իր երեսին, կարծելով, թե ճանձերն են անհանգստացնում, և էլի քուն մտավ:

Միտնը վերցրեց քարը և զգուշությամբ ցած թողեց կտիտի ուղղությամբ...

Կակուղ թրխկոց լավեց, և քոթոթն սկսեց ոտքերը ջղածգորեն ցնցել օդում: Մենք, չնայած մեր կատարած սարսափելի անխղճությանը, ուրախության ճիչ ու աղաղակով վազեցինք, որ քարափի մյուս ծայրով իջնենք ցած:

Հանկարծ անտառից մոնչյուն լավեց: Թավուտի միջից, տանձը բերանին խժռելով, դուրս եկավ վիթխարի մի արջ: Նա, փնչացնելով ու թափված ճյուղերը ջարդելով, վեր բարձրացավ և իր ձագին արյունաթաթախ տեսնելով, այնպես աղիողորմ գոռոց բարձրացրեց, որ անտառը թնդաց: Ցավագար հայացքով նայեց մեզ, հասկացավ ու ծառս եղավ ժայռն ի վեր:

Կարտոֆիլն ու անասունները թողած, մինչև ձմեռանոց մի շնչում փախանք...

3

Այդ երեկո ձմեռանոցի բնակիչները հավաքվել էին որսկան Մուկուչի տանը: Միտնի հետ միասին, նրան հավասար, Աթոյի ծանր դագանակի համն առնելուց հետո, ուռած աչքերով մտա ծեր որսորդի խրճիթը: Ամբողջ ձմեռանոցի ջահելներն այստեղ էին: Ասատուրանց Ներսեսը մի ծակ դույլ թմբուկ էր դարձրել, իսկ Ակոյենց Գրիգորը թութակ էր նվագում: Դա մի կատակերգ էր, որ նրանք հնարել էին սարում այդ ամառ «ձիլ» պանիր գողացած մի մարդու վրա: Երգի մի տունն այսպես էր.

*Հոռոմսիմ մոքիր, վեր կալ ուռը,
Կոպրի էդ անամոթի կոռը,
Որ չբացեր ձեր դագի՛ դուռը:
Վայ, Կարել են թել-թել ձիւր,
Ջան, Կարել են թել-թել ձիւր...*

Ամեն վերջին երկու տողն ասելիս, Վասոյենց Ենոքը թները վեր էր բարձրացնում, չուխի ծայրերը գոտին խրում ու պար գալիս:

Այսպես զվարճանում էին մեր ձմեռանոցի հովիվներն ու տավարածները, երբ ես ներս մտա ու նոթերս կախած կանգնեցի շենքում: Բուխարու մեջ մի քոթուկ այրվեց, փուլ եկավ, կրակը թեժացավ և լույսն ընկավ իմ երեսին: Նվագ ու պար դադարեց. երևի աչքերս ուռած էին:

– Էդ անաստվածը քեզ էլ է թակել,- հարցրեց իմ ընկեր Գրիգորը:

Ես լռեցի, ապա արտասուքս հագիվ զսպելով, ասացի, որ այս անգամ Միմոնի տերը մեղավոր չի, քանի որ անասունները թողել ենք հանդում, փախել:

– Ինչի՞ եք փախել, այ տղա,- հարցրեց ծեր որսորդը:

– Արջն էնպես գոռաց, որ լեղաճաք եղանք,- ասացի ես ու պատմեցի մեր գլխի եկածը:

Մեծ հետաքրքրություն առաջ բերեց իմ պատմությունը:

– Համա, տղերք, զգույշ կացեք, քոթոթի արիւնը քթներիցդ հանելու է,- անկյունից խոսեց տավարածներից մեկը:

– Չէ, չէ, պոզեր: Մարդ հո չի, անասուն է, էլի, իրեն որսովը կընկնի-կմոռանա,- կարծիք հայտնեց Ենոքը:

– Տո՛, շա՛ղ ձիպրո, է՛ն հավը, որ հավ է, հենց որ ճուտի կողքով անց ես կենում, արծիվ է դառնում, ուզում է երեսդ ծվատի: Բա մերն իրեն ճուտի արիւնը կմոռանա՞,- վրա բերեց Գրիգորը:

Այսպես, մայրական զգացմունքի մասին թեր ու դեմ խոսում

1 Դագի - վրան:

էին մեր ձմեռանոցի տավարածները, իսկ որսկան Մուկուչը լուռ ծխում էր՝ խորամանկ ժպիտը աչքերի մեջ: Լռեց, լռեց, վերջում չիբուխից մի թանձր ծուխ արձակեց և դանդաղ ու հեղինակավոր ասաց իր կարծիքը.

– Ամեն կենդանի էլ ջիգյար ունի, անջիգյար շնչավոր չկա աշխարհքում: Չասես թե անլեզու է, բան չի հասկանում: Անլեզու է, բայց մայր ասածդ էն տեսակ փափուկ սիրտ ունի, որ դարդից իրեն քարափից վեր կգցի: Մոր սիրտը մեկ է, կուզե մարդ լինի, կուզե կենդանի: Մոր աչքը հանիր, ճակատին կրակիր, միայն թե նրա ջիգյարին ձեռք մի տալ, նրա ճուտին ձեռք մի տալ... Ես որսկան Մուկուչը չլինեմ, թե արջը թողնի, որ մարսեք ձեր անխիղճ արարմունքը...

4

Ահր սրտներումս՝ անտառի խորքում ընկած գերաններից տաշտ ու թիակներ էինք շինում:

Այդ ձմեռ Սիմոնի հովվության ժամկետը լրանում էր: Ուզում էր նոքարությունից դուրս գար ու իր համար մի փոքրիկ օջախ հիմներ... Մենք էլ համ տավար էինք պահում, համ տաշտ ու թիակ շինում, որ տանենք Սևանի ծառագուրկ շրջաններում հացի հետ փոխենք ու դրանով մի փոքրիկ տնտեսություն կազմենք իմ ընկեր Սիմոնի համար:

Այնպիսի արևոտ աշուն էր, խաշամս՝ այնպես էր խշխշում մեր ոտքերի տակ, գլեռն ու սալոթն այնպես էին քաղցր մտիկ անում ծառերի վրայից, որ մարդու խելք էր գնում: Դե, մեր Դիլիջանի աշունն էլ հո գիտեք: Անտառը հո անտառ չի, հեքիաթներում ասած «գյուլի բաղ» է:

Ասում էի.

– Սիմոն, սա հո աշունք չի, աղքատի ամառ է սկսվել: Երկինքը սկսել է աղքատ մարդկանց վրա քաղցր աչքով մտիկ անել:

1 Խաշամ - չորացած, թափված տերևներ:

Բանի եղանակը լավ է, ջալդ անենք, մի սել տաշտ ու թի շինենք, տանենք կռոյի՛ երկիրը:

Ասում էր.

– Շինենք, բա բաններս ինչ է, որ չշինենք...

Եվ Սիմոնը տաշում էր ամբողջ օրը առանց հանգստանալու, քրտինքի մեջ կորած՝ քթի տակ մի քաղցր բայաթի երգելով:

Այդ տաշտերի հետ ո՛չ միայն կապված էր նրա ապրուստը, այլև սերը, աչք ուներ Մադոննի Թունիի աղջկա վրա:

– Կարկատան ենք, հո մարդ չենք,– ասում էր նա դառնացած, նայելով իր հնամաշ արխալուղին:– Քե՛զ եմ ասում, բա մեզ աղջիկ կառնի... Հիմի էլ ես եմ աղջիկը, Աթոյի տղին թողած, նրա ջլթոտ նոքարին կառնեմ...

Եվ տնքում էր հոգեկան ցավից իմ ընկեր Սիմոնը, ավելի արագ էր խփում գերանին, տաշեղները թոցնում չորս կողմ ու իրեն–իրեն գանգատվում.

– Մեջքդ կոտրի, բախտ փայ անող... Մեջքդ կոտրի, քյասիքի աստո՛ճ...

Ես սիրտ էի տալիս, թե՛ լավ կլինի, աշխարհքը կփոխվի: Եվ նա սիրտ էր առնում, մանավանդ, երբ տեսնում էր, որ բարձրանում է կոկիկ տաշտերի ու թիակների կույտը: Սիմոնը նրանց մեջ տեսնում էր և՛ ձմեռվա հացը, և՛ իր նշանի սիրուն արխալուղը, և՛ իր նշանածի նախշուն շորերը...

Արևը մայր էր մտել, երբ թեղի փայտից մի մեծ տաշտ վերջացրի և Սիմոնին հանձնելով, ասացի.

– Իմ կողմից քեզ նվեր... Թունիի աղջիկը միջին լվացք կանի...

Կարմրեց և, ինչպես երևում էր, ուրախացավ:

Տաշտերն ու թիերը ծածկեցինք խաշամով, նախիրը հավաքեցինք և ուրախ շվշվոցով գնացինք ձմեռանոց:

1 Կռո - մենք Սևանի ավազանի բնակիչներին էինք անվանում:

Թունիի աղջիկ Անահիտը աղջիկ հո չէր, շինճատ մարալի պես մի արարած էր, նրա պես սիրուն, նրա պես խրտնած ու վախկոտ: Վարդավառի տոնին, երբ նա մեր սարը հյուր եկավ, իմ ընկեր Սիմոնին թվաց, թե մերկ քարափներն էլ ալ ու ալվան ծաղիկներով զարդարվեցին: Խեղճը մինչև ականջները սիրահարված էր այդ աղջկան, մղկտում-վառվում էր նրա համար, բայց հույս չունեի, քանի որ ուներ այն ժամանակվա աշխարհում ամենամեծ պակասությունը՝ չքավոր էր...

Ամեն իրիկուն արխաջի¹ մոտ նստում էր Սիմոնն ու իր սրինգով լացացնում սարվոր կանանց: Ես մանուկ հասակից նրա ընկերն էի ու նրա սերն իմ վիշտն էր դարձել, մաշում էր: Շատ համոզեցի, որ ետ կանգնի իր խելագար սիրուց: Ասացի. «Սիմոն, դա գլուխ գալու բան չի, ձեռք աշխիր»: Աչքերը լցվեցին, սիրտը կտրված պատասխանեց.

– Ես էլ գիտեմ, որ կորած եմ, բայց դե չի լինում, սրտիցս դուրս չի գալիս... Ա՛ռ, խանչալի ծերով հանիր, ուրիշ կերպ դուրս չի գա...

Ասաց ու դաշույնը մեկնեց ինձ:

Մեղքս եկավ, բայց սիրտ չէի տալիս, օր-օրի աշխատում էի առեցնել իր սիրուց: Գիտեի, որ Թունին որոշել է իր աղջկան անտառապահ Արտեմի տղին տալ, քանի որ այն ժամանակ անտառապահն առաջին մարդն էր համարվում մեր կողմերում:

Մի օր սարում, երբ Անահիտը իջավ ձորը ծաղիկ քաղելու, առաջը կտրեցի:

Խրտնեց, ուզում էր փախչի, ասացի.

– Անահիտ, ես քեզ իմ քույրն եմ հաշվում, ինձնից չվախենա... Ա՛յ աղջի, ասացի, քեզ շատ եմ սիրում, բայց իմ ընկեր Սիմոնին քեզնից էլ, աշխարհքից էլ ավելի եմ սիրում... Ինչի՞ ես մղկտացնում էն տղին, այ աղջի, մեղք չի՞ էն եթիմը...

¹ Արխաջ - այն տեղը, ուր մակաղում է հոտը:

Վախն անցավ, գույնը տեղն եկավ:

– Նրան ղվ է ասում, որ մղկտա... Իսկի էլ թող չմղկտա ուրիշի համար,– ասում է ու ծիծաղում:

– Ախր ղնց չմղկտա, դու դև ես, հո աղջիկ չես, քեզ տեսնողը քա քուն ու դադար կունենամ...

– Դե, դե, շաշ–շաշ խոսալ մի,– չարացավ նա:

Ծիծաղեցի: Ասի.

– Ես հո Սիմոնի տեղակ եմ ասում, նրա սրտիցն եմ խոսում... Անահիտ ջան, արի կլինի խիղճ ունեցիր, Սիմոնին խոսք տուր... Ըիշտ է, աղքատ է, համա ոսկի սիրտ ունի, մեր կողմերում նրա պես տղա քիչ կա, դու նրա աղքատությանը մտիկ մի անի:

Անահիտը լրջացավ, շփոթվեց ու լռեց:

– Ես գիտեմ,– ասաց նա կամաց, աչքերը խոնարհած,– գիտեմ նրա սիրտը... Թող մի քիչ իրեն կարգի բերի, տուն–տեղ դառնա, որ իմ հերը...

Այդ խոսքի վրա խիստ կարմրեց, շփոթվեց ու կխտարի նման վազեց–փախավ դեպի վրանները:

Սիրտս թնդաց ուրախությունից՝ կարծես այդ հուրի–փերի աղջիկն ինձ խոսք տվեց: Վազեցի բարձրացա դիմացի սարի գլուխն ու ձորերը դմբդմբացրի.

– Սիմոն, հեյ... Սիմոն... Ոչխարը դեսը թեքիր՝ քեզ համար լավ լուր եմ բերում... Գառը մորթի՝ ուրախ լուր եմ բերում, հեյ...

Գառան մասին ասածս կատակ էր, բայց մինչև տեղ հասա, Սիմոնն արդեն գառը մորթել էր ու չոքած կրակ էր անում: Երևի սիրտը վկայել էր, թե ինչ մեծ աչքալուսանք եմ բերում իրեն:

– Այ տղա, ինչի՞ մորթեցիր,– հարցնում եմ նեղացած: Ժպտում է:

– Բա իմ ախպեր տղի սիրտը գառան միս ուզի, ու ես չմորթեմ...

Նստեցինք կանաչի վրա, խորոված կերանք ու հետն էլ զրույց ենք անում:

– Էն ինչ աչքալուսանք էր... Ինչ էր պատահել,– զգուշությամբ հարցրեց Սիմոնը:

– Անահիտից խոսք եմ առել... Երևում է, որ նա էլ քեզ է հավանում...

Այնպես ավելորդվեց այդ խոսքից, աչքերն այնպես լցվեցին, որ խղճալուց քիչ մնաց լացս գար:

Պատմեցի իմ գրույցն Անահիտի հետ, շատ ուրախացավ: Բայց իր մեջ ցույց չէր տալիս:

Եվ երբ աշնանամտին իջանք ձմեռանոցն ու սկսեցինք տաշտերը շինել, Անահիտի մորաքույր Աշխենը գաղտնի լուր ուղարկեց Սիմոնին, թե՛ «Ղոչաղ աշխատիր, կարգին շորեր առ քեզ համար, հագիր ու արի ինձ մոտ՝ բան ունեմ ասելու...»:

Ահա թե ինչպիսի բախտավորություն պիտի բերեին Սիմոնին մեր շինած տաշտերը:

6

Անտառապահ Արտեմի տղա Ռուբենը ձմեռանոց եկավ սև ձին հեծած, «այնպիսի» հրացանը վիզը գցած, արծաթապատ դաշույնը արծաթե գոտուց կախած: Ձին քշեց ուղիղ անտառի խորքը, գտավ մեզ և բարևեց:

Աշխատանքը դադարեցրինք, բարևին պատասխանեցինք: Երեսը քոսա, քիթը փոքր, աչքերը մանր, շորերը սիրուն, մի հպարտ տղա էր Ռուբենը:

Մորակը խաղացնելով ու ցանցառ բեղերի տակ ծաղրական ժպիտով, ձիու վրայից հարցրեց.

– Լսել եմ հարստանալու պատրաստություն ես տեսնում, Սիմոն, խեղ լինի, ի՞նչ ես իմացել...

Սիմոնը հասկացավ, դաղվեց:

– Թե որ հարստանա էլ՝ կաշառքով չի հարստանալու,– խայթեցի ես՝ անտառապահ հոր կաշառակերությունը հիշեցնելով: Ռուբենը քնծիծաղ տվեց:

– Թույլտվություն ունե՞ք, որ տաշտ եք շինում,– հարցրեց նա, լուրջ, պաշտոնյայի տոնով:

Սիմոնը արխալուղի գրպանից հանեց Անտառապետությունից գնված տոմսը և մեկնեց.

– Հանմ...– մոլտաց Ռուբենը՝ կծու ժպտալով,– էդ թուղթը որ կա՝ անպայման կհարստանաք...

Ու ձիու գլուխը շուռ տվեց–գնաց:

Մյուս օրը եկանք և ինչ տեսանք՝ մեր շինած տաշտերն ու թիերը ջարդած–թափած, ցրիվ տված: Տասն օրվա մեր աշխատանքը ջուրն էր ընկել: Կարգին ապրելու մեր հույսերը փուլ եկան:

Սիմոնն այնպես լացակումեց, այնպես կուչ եկավ վշտից, որ կարծես իր հարսանիքի հագուստներն էին պատառոտված–ցրիվ տված անտառով մեկ:

– Աղքատի անտոծ, ես քո էն էն, էն էն էն...– մոնչում էր Սիմոնը:– Ադա սո՛ւտ է, սո՛ւտ: Արդարություն էլ չկա, աստոծ էլ: Աստոծը նրանց համար է, աստոծը միշտ եղը դմակին է քսում: Գելն եկավ՝ վայ մեկի տիրոջը, ցավն ու չոռը եկավ՝ վայ մեկի տիրոջը, կարկուտն եկավ՝ վայ մի կտոր արտի տիրոջը... սուտ է, սո՛ւտ...

Սիմոնին մի կերպ հանգստացրի:

– Տարի աշունք է, այ տնաշեն, մեր կոներում էլ ուժ կա, էլի՛ կշինենք, ինչ ես մտածում:

Կոտրված սրտով նորից գործի կպանք:

Այդ օրը երկու տաշտ և վեց թի շինեցինք:

Մյուս օրը եկանք, տեսանք բոլորը ջարդած, թափած: «Նահիլաթ քեզ, չար սատանա: Այ տղա, էս ո՞վ է մեզ թշնամություն անում...»:

Մտածում ենք, մտածում ու չենք գտնում:

Տեղներս փոխեցինք: Ծմակի մյուս երեսին, մի խուլ ձորում նորից տաշտեր շինեցինք և թաքցրինք թափված տերևի շեղջի տակ:

Մյուս օրը եկանք՝ անվնաս են մնացել: Ազատ շունչ քաշեցինք:

Անցավ հինգ օր: Տաշտերն ու թիակները կոկիկ–կոկիկ նորից դարսվեցին իրար վրա:

Վեցերորդ օրը Սիմոնը թե՛

- Ա՛յ տղա, էլի մի փորձանք կգա, սելին բարձենք գյուղ տանենք:

Համաձայնեցի: Արևը դեռ դուրս չէր եկել, երբ սայլը կանգ առավ անտառի խորքի մեր «արիեստանոցի» մոտ: Սարսափով տեսանք, որ տաշտերը ջարդոտված, ցրիվ են տրված անտառով մեկ: Սայլը թողեցինք այդտեղ, եզներն արձակեցինք ու սևակնած սրտով վերադարձանք ձմեռանոց:

Այդ դեպքերը ձմեռանոցում ասելիք էին դարձել:

- Կա-չկա, դա Արտեմի տղի արածն է. իրիկունը ձին նստած գնում էր էդ կողմերի վրա,- ասաց Ենոքը:

Սիմոնը գույնը գցեց, զայրույթից շրթունքները կապտել-դողդողում էին:

Ենոքի այդ խոսքը գնդակի նման ծակեց սիրտս, ուրեմն անտառապահի տղան թշնամությո՞ւն է անում: Լավ, որ այդպես է, տեսնենք ո՞ւմ մերը լաց կլինի... Էլ ո՞ւր եմ ապրում, որ իմ ազիզ ախպերը պետք է մղկտա, այդ հարուստի երես առած լակոտի ձեռից:

Ու մտքովս ի՛նչ մեղավոր բան ասես, որ չի անցնում... Բայց այդ իրիկուն որսկան Մուկուչը համոզված ասաց, որ արջն է ջարդում տաշտերը:

- Բամ, որ ասում էի չեք մարսի՞... Հիմի հավատացի՞ք,- հարցրեց նա խորհրդավոր և տխուր «ախ» քաշեց: Բանն է՛ն էր, որ անտառապահ Արտեմը նրա հրացանը խլել էր և սպասում էր «փեշքեշի», որ վերադարձնի: Ծեր որսկանն էլ կողի էր ընկել, թթել էր աշխարհի կեղտոտ օրենքներին ու ձեռք վերցրել հրացանից էլ, որսից էլ:

«Կմեռնեմ, նամարդ մարդու դուռը չեմ գնա», - ասում էր նա:

- Այ ջահելներ, դուք գնացեք մի քանի տաշտ էլ շինեցեք, գանք տեսնենք, էդ ով է ձեզ թշնամություն անողը,- պատվիրեց նա: Մուկուչ պապը չգիտեր Սիմոնի սիրո պատմությունը, չգիտեր, որ գաղտնի կռիվ է գնում Սիմոնի ու անտառապահի տղա Ռուբենի միջև՝ Թունիի աղջկա համար: Չգիտեր, այդ էր

պատճառը, որ միամիտ ենթադրություններ էր անում, թե իբր տաշտերը ջարդողը մայր արջն է:

Ծեր որսկանի պատվերի համաձայն այդ օրը մի քանի տաշտ ու թիակ շինեցինք և կողքին էլ թեժ կրակ արինք:

Երեկոյան դեմ որսկանն եկավ կացինն ուսին, դաշույնը գոտուց կախ:

– Ծառը բարձրացեք ու ձեն-ձուն չհանեք,– կարգադրեց նա:

– Քեռի Մուկուչ, մենք մեր դուշմանը գիտենք, սա արջի արած բանը չի,– առարկեցի ես:

Ծեր որսկանը թավ հոնքերի տակից խեթ-խեթ նայեց ինձ ու բեղերի տակ փնթփնթաց.

– Փիե, էս փսլնքոտի խելքին մտիկ... Ուրեմն ես խոտ եմ ուտում...

Հնազանդվեցինք. դե էն ժամանակ ղվ կարող էր մեծի առաջ խոսել...

Խարույկից քիչ հեռու տերևները դեռևս չթափած մի փոմփոխ կաղնու ծառ կար: Բարձրացանք ու թաքնվեցինք այնպես, որ ներքևից բոլորովին չէինք երևում:

...Մթնեց: Անտառի խորքում մի թռչուն սկսեց տխուր կանչել: Ներքևից վշվշացող առվի ձայնն էր լսվում, մեկ էլ կրակն էր ճարձատում ու իր շողքերը խաղացնում մթին անտառում:

Այնքան մնացինք, որ խարույկն իջավ, արդեն կեսգիշեր էր: Մեկ էլ վերևից խշխշոց լսեցինք: Ծառերի տակ թափթփված չոր ձյուղերը ինչ-որ ծանր բանից ճարձատելով փշրվում էին: Եկողն անասուն է, հետաքրքիր է՝ ամրջ է, թե Արտեմի տղեն է՝ ձին տակին: Երևի հենց նա լինի: «Նամանրդ, նամարդ սրիկա...»: Արյունս եռում է, բարկությունից արյունս քունքերիս է խփում, քիչ է մնում ինձ ներքև շարտեմ ու կտոր-կտոր անեմ իմ ընկերոջ դուշմանին: Իսկ նա մեզանից անտեղյակ գալիս է առանց կանգ առնելու:

Եկավ, մոտեցավ՝ մայր արջն է, արջ մի ասի՝ մի դեզ ասա: Եկավ կանգնեց, խոժոռ հայացքով նայեց կրակին ու խոլ

բվվացրեց, կարծես ձայնը յոթ սարի հետևից էր գալիս: Շուրջը նայեց, թաթերով շոշափեց կուտակված խաշամը, գտավ տաշտերն ու վրդովված փնչացրեց, իրար խփեց, ջարդեց: Առաջի թաթերով վերցնում էր թիակները և հետևի ոտքերին կանգնած՝ խփում էր ծառի բնին՝ փշրում: Վերջում մի տաշտ վերցրեց ու ինչքան ուժ ուներ շարտեց ձորը: Հետն էլ տնքում էր, վրչում, կարծես դաղված սիրտը հովացնում էր: Մի թիակ էլ վերցրեց, կոթից բռնեց ու սկսեց խփել սայլի ակներին:

Բոլորը ջարդելուց-ցրելուց հետո էլի սիրտը չհովացավ: Մոթմոթալով առաջ գնաց, բռնեց սայլի գլխից և ետ-ետ հրելով կանգնեցրեց կրակի վրա:

Մինչ այդ շունչներս պահած նայում էինք, բայց հենց որ տեսանք սայլն սկսում է վառվել, ծառի վրայից աղմուկ բարձրացրինք:

– Հեյ, հեյ, անտեր, ինչ ես անում...

Մեր ձայնից նա պետք է որ փախչեր-հեռանար. միայն վիրավոր արջն է, որ հարձակվում է իրեն հարվածողի վրա: Բայց այս արջը փախչելու փորձ չարավ: Մեր ձայնը լսելուն պես գոռաց, առաջ եկավ ու գրկեց այն ծառը, որի վրա թաքնված էինք մենք: Նրա այդ արարքից մենք մնացինք ապշած, մոռացել էինք, որ նա էլ էր վիրավոր, էն էլ՝ սրտից...

Վերև հառած նրա աչքերի մեջ վրեժի կրակ էր վառվում, և նրա ցավոտ հայացքից մենք փշաքաղվեցինք:

Ճանաչել էր նա արդյոք մեզ՝ իր ձագը սպանողներին, թե՞ զավակը կորցնելուց հետո բոլոր մարդիկ էլ ատելի էին նրան, դժվար էր հասկանալ: Մի բան պարզ էր, որ չի մոռացել իր ձագի մահը և որոշել է վրեժ հանել մարդ արարածից:

«Ո՛նց թե էս անտերը մեր բուրդը քամուն է տալո՞ւ», – ձղների մեջ թաքնված մտածում էի ես ու զընգր-զընգր դողացնում:

Արջը թափահարեց ծառը, ուսը դեմ արավ, որ շուռ տա՝ ուժը չպատեց: Ապա չորս ոտը պատ տվեց ու սկսեց մագլցել վեր:

– Մուկուչ քեռի, մեզ կուտի, ինչ անենք, – հարցրեց Սիմոնը ահով:

–Ղալմաղալ միք անի,– սաստեց որսկանը դաշույնը հանելով:–
Կացիները պատրաստ պահեցեք:

Գազանը փնչացնելով, բերանից փրփուր թափելով, վեր բարձրացավ ու հասավ մեզ: Ծեր որսորդը կացինը վրա բերեց ու կտրեց նրա թաթը: Արջն այնպես գռռաց, որ ծառը դողաց, բայց ցած չիջավ, ինչպես երևում էր, որոշել էր կամ մեռնել, կամ իր քոթոթի վրեժն առնել:

Եվ մենք հանգցրի՞նք այդ կենդանուն այրող կրակը, կացիններով սպանեցի՞նք նրան ու ծառից ցած գլորեցի՞նք...

Այդպես, այդ անլեզու մայրը զոհ գնաց՝ իր քոթոթի կարտուն ու վրեժը փոթորկվող սրտում...

Ծանր ազդեց այդ դեպքն ինձ վրա: Ու դրանից հետո թեև որսորդությամբ եմ պարապում, բայց ինչքան արջի, այծյամի կամ այլ կենդանու ճուտի եմ պատահել, ոչ մեկի մագին էլ չեմ կպել:

Հիմի ընթերցողը կհարցնի. «Վերջը Սիմոնի հարսանիքը գլուխ եկավ, թե ոչ...»:

–Չէ՛, գլուխ չեկավ: Խեղճ Սիմոնը այդ տարի էլ մնաց կարկատած արխալուղով ու չկարողացավ գնալ Անահիտի մորաքրոջ մոտ: Բնչ երեսով գնար, էլի հովիվ էր մնացել Աթոյի տանը...

Մահակն ուսին, հնամաշ շորերը հագին, զգզված փափախը գլխին, սիրտը կրակով լիքը, հանդերն ընկած տխուր երգեր էր ասում իմ ընկեր Սիմոնը ու մղկտում իր կորած սիրո համար:

Ուշ աշնանը լուր եկավ, որ Անահիտին տալիս են անտառապահ Արտեմի տղին:

Հարսանիքի օրը Սիմոնը կորավ: Շատ ման եկա, իրիկունը գտա Ջուխտ վանքերի ձորում: Բերանի վրա պառկել էր, երեսը թաղել խաշամի մեջ ու լաց էր լինում, այնպես էր լաց լինում, որ կարծես սիրտը կտոր–կտոր էր լինում...

Այդպիսի տխուր վախճան ունեցավ իմ ընկեր Սիմոնի սերը:

Մեկ–մեկ մտածում էի, թե՛ որ Սիմոնը արջի ճուտին չսպաներ, գուցե նրա կյանքն ուրիշ ընթացք ունենար: Մեկ էլ ասում

էի՝ միևնույն է, անտառապահի տղա Ռուբենն իր ուժով ու հարստությանը կլալեր նրանից իր սիրածը, աշխարհքը նրա կողմն էր, աշխարհքի կեղտոտ օրենքները նրա օգտին էին գրված...

Հարուստներից դաղված, սիրտը դառնություններով լիքը, Միմոնը սար բարձրացավ և միացավ պարտիզաններին: Գնաց Ղազախի ապստամբ գյուղացիների հետ պատուպարվեց լեռների ծերպերում, մթին քարանձավներում ու այնտեղից կռիվ մղեց բռնակալ կարգերի դեմ...

Այդ օրերից շատ տարիներ են անց կացել: Անահիտը հիմի թոռներ ունի, բայց նրա մորաքույր Աշխենն ասում է՝ չի մոռանում իր առաջին սերը:

Միմոնն էլ է ապրում. նա հիմա անվանի մարդ է մեր գյուղում, բոլորն էլ հարգում են նրան: Իր ամբողջ կյանքում նա հավատարիմ մնաց իր անդրանիկ սիրուն և չամուսնացավ:

Ասում են այժմ էլ, ամեն աշնան տերևաթափի Միմոնը գնում է Զուխտ վանքերի ձորը, երեսը թաղում է թափված տերևների կույտի մեջ ու լաց լինում, արցունք թափում իր փշուր-փշուր եղած սիրո համար...

1934-40

ԾԱՆՐ ՁՄԵՌ

1

Ձմեռանոցը, ուր պահում էինք մեր անասունները, թաղվել էր ձյան հաստ շերտի տակ: Ծառերի ճյուղերը խոնարհվել էին ձյան ծանրությունից, իսկ լեռնային գետակը հազիվ լսելի ձայնով խշշում էր սառույցի տակ:

Տարբեր կենցաղով ապրած մարդկանց վրա ձմեռը տարբեր ազդեցություն է ունենում: Ես այժմ ամեն աշնան ակնաստես եմ լինում երեխաների բերկրանքին, երբ տեղում է առաջին ձյունը: Քաղաքում ապրող մարդը հիացմունքով է նայում ձյան անթիվ-անհամար փաթիլներին, որոնք էլեկտրական լույսով ողողված օդում պտույտներ են գործում ճերմակ թիթեռների պես, իջնում մայրերին, էլեկտրաքարշի վագոնների վրա, ամենուր:

Սակայն մեզ՝ տավարածներիս, ձմեռը բերկրանք չէր բերում: Կարիքի տակ կուչ եկած՝ մենք չէինք զգում ձմռան հնայքը: Մեր փարթամ անտառները, մեր ծաղկոտ մարգագետիններն ու քթքան վտակները թաղվում էին սառը վերմակի տակ, իսկ կարիքը չոքում էր դռանը: Լավ է ասել իր մանկությունը մեր լեռներում անցկացրած բանաստեղծը.

Ո՞ր կորան, ո՞ր...

Տերև ու խոտ,

Վարդը շաղոտ,

Սարվորն ուրախ,

Սրինգ ու խաղ,

Ո՞ր կորան, ո՞ր...

Ձնագնդին, լախտին, պթուրման, խարույկներն անտառում, սրինգն ու պարը բուխարիկի առաջ՝ ձմռան երեկոյին,- այս

բոլորը, որ մենք ապրում էինք շատ թե քիչ հաջող ձմեռները, այդ ձմռանը չքացել էին: Եղբայրասպան պատերազմները դեռ չէին վերջացել: Մեկի որդին էր սպանվել, մյուսի եղբայրն էր հաշմանդամ ընկած տանը: Զգվել էինք հողից էլ, ցանքից էլ: Եղածն էլ մատուցելուսներն էին տանում բռնությամբ: Հազար ու մի տանջանքով սարերից բերած մեր խոտը տրորում ու միջին տրտինգ էին տալիս խմբապետ Սեպուհի ձիերը:

Եվ մենք ահով ու թախիծով տեսնում էինք, թե ինչպես հետզհետե մարում էր փայլը մեր անասունների աչքերում, օր-օրի չքանում էր նրանց մարմնի կլորությունը, ոսկորները դուրս էին ցցվում, խամրում էին մազերը:

Ջահել երինջներն ու արջառները ջուրը տանելիս այլևս չէին խաղում, և ցուլն այլևս գետինը չէր քանդում ու չէր գոռում...

2

Մեր ձմեռանոցի ամենից փորձված տավարածը Մելոնց Ամին էր: Այդ ձմեռ նրա երեսին մենք ժպիտ չտեսանք:

Հաճախ, խրճիթում նստած ժամանակ, լսում էի նրա ձայնը.

– Էհէյ, Ստեփանի տղա:

– Ինչ է, ամի՛:

– Մի դեան արի:

Գնում էի ցած: Գոմաղբի կույտի վրա կանգնած՝ ճիպոտի ծայրով քրքրում էր: Գիտեի, թե ինչ է ասելու. այդ կույտը մերն էր: Ամեն առավոտ ես տաշտակը սղղացրել էի սառույցի վրայով և գոմաղբը տարել-թափել էի այնտեղ:

– Էս ի՞նչ է:

– Ինչը, ամի՛:

– Զահրումարը: Բա իսկի տարուն չես մտիկ անում:

Եվ ճիպոտի ծայրով ցույց էր տալիս խոտի շյուղերը:

– Հիմի ամեն մի ծեղը մի ոսկի է, ամեն մի ծեղը մի անասունի կյանք: Հլա գարունքն ո՛ր է...

Ես մեղապարտի նման գլուխս կախում էի: Իսկապես, ոչ մի «ծեղ» չէր կարելի կորցնել. չէ՞ որ դեռ հունվարն էր, իսկ մեր ցանկապատում մի բլրակ խոտ էր մնացել:

Փետրվարին մեր անասունների կերը բոլորովին վերջացավ: Վերջացավ նաև հորեղբորս տղայի՝ Հայկի խոտը: Այդ ձմեռ ես նրա հետ մի խրճիթում էի ապրում: Զորանոցում նա տիֆ էր ընկել և առողջանալուց հետո գրեթե կորցրել լսելու կարողությունը:

Ամեն առավոտ, երբ գոմի դուռը բաց էի անում ու տեսնում, թե ինչպես են ինձ ուղղված կենդանիների աղերսալի հայացքները, սիրտս մղկտում էր: Հայհոյում էի մեր խոտը տանող թալանչիներին և գոմից դուրս էի գալիս լցված աչքերով:

Հարկավոր էր միջոց գտնել անասունները փրկելու համար:

Մի երեկո Հայկի ականջին գռռացի.

– Էգուց գնանք բուրջ¹ անենք:

– Զինը խորն է, տավարին հալ չի մնացել, տեղ չեն հասնի, – առարկեց նա:

– Կտանենք Կաղնուտը, էնտեղ ձինը բարակ է:

Համաձայնեց: Մյուս օրը լեռան արևկող լանջի կաղնուտում անասունները ձյան մեջ կանգնած, դունչները վեր ցցած, նայում էին ծառերի ճյուղերին, որոնց վրա բողբոջներն արդեն սկսել էին ուռչել՝ ավետելով գարնան մոտիկությունը: Ամեն մեկս մի ծառի տակ մտած՝ թրքիսկ հա թրքիսկ կտրում էինք:

Հենց որ հսկա կաղնին ճոնչալով վայր էր ընկնում, և իր տակ ջարդում–խորտակում իրենից փոքր ծառերն ու թփերը, քաղցած կենդանիները վրա էին հասնում, ագահությամբ խժռում նրա դալար ոստերը:

Այդ օրվանից սկսած մեր ձմեռանոցի անասունները բողբոջով էին ապրում:

Խառը տարիներ էին, տեր չկար մեր բնությանը: Անխնա կտրվում էր անտառը, փչանում էր ժողովրդի այդ հարստությունը. բայց դարձյալ անասունները նիհարում ու կոտորվում էին. դե

¹ Բուրջ անել – ծառի բողբոջներով կերակրել անասուններին:

բողբոջը հո խոտին չէ՞ր փոխարինելու:

Գետի ձորը դարձել էր անասունների գերեզմանոց...

Մարտի սկզբներին մեր Մաշկա կովն էլ նստեց ու այլևս վեր չկացավ: Դա մեր անասունների մայրն էր, մեր բոլորի սիրելին, մեր ընտանիքի հույսը: Ցեղական, խոշոր, ձերմակ մազերով և գեղեցիկ եղջյուրներով մի կենդանի էր նա:

Ես շատ էի պարտական մեր Մաշկային: Այդ այն տարին էր, երբ մենք գարու հացը երազում էինք տեսնում: Եվ գարնանից մինչև օգոստոս, մինչև նոր հացի դուրս գալը, ես Մաշկայի կաթով էի ապրել, ու զարմանալի չէ, որ առանձին քնքշանք ունեի դեպի այդ կենդանին, որին պահել, խնամել էի՝ սկսած մանկությունից:

Այդ առավոտ ես ու Հայկը լինգ գցեցինք Մաշկայի տակ և մի կերպ վեր քաշեցինք նրան: Կեսօրին կովը նորից նստեց, և երբ գոմը մտա, թախծոտ ու շաղված հայացքով նայեց ինձ: Հասկացա, որ այլևս հույս չկա: Փրկությունը խոտի մեջ էր: Ի՞նչ անեի, խոտ որտեղի՞ց գտնեի:

Միայն մի հույս կար. մեր լեռնային խոտհարքում աշնանը ես մի բլրակ խոտ էի թողել ձյան տակ՝ այն մտադրությամբ, որ նրանով գարնանը վար անենք: Այդպես, իրենց խոտի մի մասը սարում էին թողել նաև Հայկն ու մեր մյուս հարևանները:

Բայց էլ սպասելու տեղը չէր:

– Թքած վարի վրա էլ, աշխարհքի վրա էլ, – վձռեցինք մենք ու որոշեցինք գարնանացանի համար պահած խոտը սարից բերել:

3

Հաջորդ օրը բուք էր, անհնարին էր սար բարձրանալ: Ես անասունները տարա անտառ՝ բողբոջ ուտեցնելու, իսկ Հայկը հրացանը վերցրեց և իջավ Զուխտակ վանքերի ձորը:

– Ցամաք կոտորվեցինք, ուրիշ բան որ չլինի, հո՞ նապաստակ կրերեմ, – ասաց նա ինքնավստահ:

Քիչ անց Վանքերի ձորից թնդյուն լսվեց: Երբ հրացանը երկրորդ անգամ որոտաց, ես անասունները թողեցի ու վազեցի այն կողմ: Դեպի վանքերը տանող լանջով սայթաքելով գնում էի, մեկ էլ տեսնեմ Հայկը գալիս է՝ մի ահագին գայլ ձյան վրա քարշ տալով: Եկավ, երջանիկ ժպտաց ու հարցրեց.

– Ո՞նց է, էս տղեն կարողանում է սպանել, թե՛ չէ: Գովեցի, իրոք հաջող որս էր:

– Ո՞նց պատահեց, ո՞նց խփեցիր,– հարցրի ես՝ հետաքրքրությունից եփվելով:

– Ո՞նց, տղի պէս...

Նստեց կռճղին, ծխախոտ փաթաթեց ու հետն էլ սկսեց պատմել:

– Հենց որ դուրս եկա վանքերի վրա՝ տեսնեմ դիմացիս դռշին երկու գել գնում են իրար հետևից: Մաղնանց չոբանը սուրուն էդ կողմի վրա էր տարել, երևի գնում էին նրա ոչխարներից անուշ անեն: Գելերին որ տեսա, նստեցի ձնի վրա ու շվացրի: Որ շվացրի, կանգնեցին: Ետ մտիկ անելու համար մեծ գելն ամբողջ մարմնով շուռ եկավ: Որ շուռ եկավ՝ կրակեցի: Որ կրակեցի, էդ անտերը գոռգոռոցը գցեց ու սկսեց քոլովվել ձնի հետ: Որ գոռգոռաց, էն մեկն իրեն գցեց վանքերի կողմը: Հենց փախչելիս՝ նրա հետևից էլ կրակեցի: Համա բեղերս կկտրեմ, թե որ նրան էլ դիպած չլինի...

Այդ երեկո ձմեռանոցի բնակիչները հավաքվեցին մեր խոճիթը, բուխարին թեժացրինք, ու սկսվեց աշխույժ, հետաքրքիր գրույց որսի մասին:

Հայկը գազանին կախել էր սյունից ու տիկ էր հանում: Երբ նա գայլի ամբողջ մարմինը բերանովը հանեց և աղ ու շիբ արավ, որ մորթին չփչանա, Մելոնց Ամին ասաց.

– Ձէ, երևում է, որ կարգին որսկան ես եղել:

Հայկը հասկացավ, որ խոսքն իր մասին է, ականջը դեմ արավ. Ամին նրա շատ թե քիչ լսող ականջում բարձր ձայնով կրկնեց իր գովասանքը: Հայկը շիկնեց, ասպա մռայլվեց ու խոր

հոգոց հանեց.

– Էս ի՞նչ որս է որ: Դեռ տասնվեց տարեկան էի, որ իմ գնդակից պախրեն էլ չէր պրծնում: Ի՛նչ թողեցին առաջվա Հայկից...

Եվ նրա խաժ աչքերում մենք արցունք նկատեցինք ու զգացվեցինք: Իմ հիշողության մեջ վերակենդանացավ մեր Հայկը: Գյուղի գեղեցիկ ու կտրիճ երիտասարդներից էր: Միշտ քաջ, միշտ ազնիվ ու շիտակ: Տնարդին այնպիսի լավություն կաներ, որ նա մինչև իր սրտի խորքը կզոջար իր անազնիվ արարքը:

Այդ երեկո այդ կարգի մի պատմություն արավ մեզ:

– Սրանից տասնհինգ տարի առաջ,- սկսեց նա,- որսկան Շաքարը, Ղազարանց Սամսոնը, մեկ էլ կարծեմ Ասատուրանց Քոքորը գնում էին որսի: Խնդրեցի, որ ինձ էլ հետները վերցնեն: Էն ժամանակ ես տասնվեց տարեկան էի, համա զենքի հետ էնպես էի մերվել, որ ծոցս դրած էի քնում:

– Ա՛յ պուճուր, քո բանը չի, զամբի՜ տակով կլինես,- ասաց Շաքար ամին, բայց էլի մեղքը եկա, ինձ վերցրեց հետը:

Էդպես չորսով բարձրացանք մեր Խալ-խալլու սարը: Մեր դիմաց Լոռին էր, իսկ հետևը՝ Դիլիջանի ձորը:

Սարում պախրաներ պատահեցին, սպանեցինք ու մոտեցանք Լոռու Ահնիզոր գյուղին: Ինձ ուղարկեցին գյուղը, էշեր բերելու, որ պախրաների միսը բարձենք, տուն տանենք: Գյուղամիջին ասացին, թե՛ Անդոնը կտա, էշեր նա՛ ունի: Անդոնը հայտնի մարդ էր Լոռու ձորում: Մոտեցա դրա դռանը, տեսնեմ՝ մի թեժ կրակ են արել, խոզ են խանձում: Համա հենց սովել եմ, որ ծնկներս ծավվում են: Կրակի վրա կարմրած խոզի տեսքից քիչ էր մնում ուշքս գնա: Մոտ գնացի, պատմեցի մեր որսի մասին, էշ խնդրեցի: Բանի տեղ չդրեց: Ասում է՝ ես էշ չեմ պահել, որ սրան-նրան տամ... Ասում է ու գլուխն էլ չի վեր քաշում, թե տեսնի ո՞վ է հետը խոսողը:

Իսկի չասեց էլ, թե՛ սարից ես եկել, նստիր, մի կտոր հաց կեր:

Աչքս խանձած-կարմրացրած խոզի վրա մնաց:

1 Զամբ - ձյան հյուս:

Էդ օրվանից տասը տարի անց կացավ: Համա սրտումս վրեժն անթեղած էր, ուզում էի էդ Անդոնին պատահեմ ու լավ պատահեմ: Միշտ հարցուփորձ էի անում, ասում էին՝ Անդոնը կա ու էլի Լոռու ձորերում մեծ պատիվ ունի: Համա դե իմ աչքին նա ինչ մարդ էր որ...

Հազար ու մի մեղավոր բաներ եմ մտածում: Միտք եմ անում՝ գնամ դրա ոչխարի հոտը քշեմ-բերեմ, որ սիրտս հովանա, մեկ էլ ասում եմ՝ դա ավազակություն կլինի, նրան ուրիշ պատիժ պիտի տալ:

Մի խոսքով, գլուխներդ ինչ ցավացնեմ, Անդոնի էդ մի խոսքը տասը տարի սրտիս մեջ ցցված սուր էր մնացել:

Մի ամառ գնացի սարը: Ոնց որ գիտեք, ահնիզորցիք էլ են ամառները մեր սարը գալիս: Էդ Անդոնն էլ, լսել եմ, որ Մելոնց Արշակին բարեկամ է: Արշակին աղաչանք արի, ասի՝ ախպեր, ծախսը ես կքաշեմ, լսել եմ, Անդոնը սարումն է, հյուր կանչիր, ծանոթանամ, ասում են՝ շատ իգիթ մարդ է:

Համա դե ոչ ոք չգիտի, թե ինչ մտքով եմ կանչում:

Անդոնին հրավիրեցին: Եկավ: Մեծ խմբով եկավ, փառավոր եկավ:

Սարվորները թամաշի էին դուրս եկել: Ահնիզորցիք ձիերից իջան, դրանց առոք-փառոք տարա իմ օջախը:

Էնպես մի առատություն էր՝ էլ սեր, էլ ղայմախ, էլ խմիչքներ, էլ թառ ու քյամանչա: Ջահելներն էլ ապրշումե կանաչի վրա լախտի էին խաղում, իսկ մենք համ քեֆ էինք անում, համ նշան խփում:

Մինչև արևի մտնելը քեֆ արինք: Անդոնի բերանը բաց էր մնացել, լացը գալիս էր, էնքան, որ սիրտը փափկել էր: Վերջում բաժակը վերցրեց, առաջարկեց իմ կենացն ու էսպես դիմեց սարվորներին.

– Ա՛յ պողոսքիլիսեցիք, աշխարհից ուրիշ բան չեմ ուզում, մենակ թե Անանանց Հայկը մի օր իմ դռանը ձիուցը վեր գա: Ու էն ժամանակ կտեսնի, թե ահնիզորցի Անդոնն ինչ մարդ է...

Ես էլ չթողեցի, որ շարունակի, սուփրի էն ծերիցը վեր կացա ու բարձր ասացի.

– Քեռի Անդոն, մի անգամ ես քո դռանը վեր եմ եկել...

Ասացի ու բեղիս տակ կծու քմծիծաղ տվի:

Անդոնը զարմացավ:

– Ե՛րբ, այ տղա:

– Սրանից տասը տարի առաջ...

– Դե լանվ, հանաք ես անում...

– Չէ՛, երկինքը վկա, քեռի Անդոն, ես քո դուռը եկել եմ:

Մոլորվեց, երևի մոռացել էր:

– Միտդ չի՞, որ սարիցը բեզարած, սոված եկա. էջ էի ուզում,– թրի նման վրա բերի ես:

Անդոնը գույնը գցեց. մին կարմրեց, մին էլ հենց դեղնեց, ոնց որ էս պատը: Ժողովուրդը շունչը պահեց, իսկ ես հանդարտ շարունակեցի.

– Էն ժամանակ, քեռի Անդոն, հիշում եմ, դու խոզ էիր խորովում, տկո՞վ գինին էլ կրակի կողքին մեկնված էր... Ահնիզորցի Անդոն (էստեղ ձենս բարձրացրի), իսկի ասացի՛ր, թե՛ ան բալա, սոված կլինես, նստիր, մի կտոր հաց կեր...

Ժողովուրդը քարացավ: Հարվածը էնպես անսպասելի էր, էնպես ծանր, որ բոլորն էլ՝ ծանոթն էլ, անծանոթն էլ ամոթից գլուխները քաշ էին գցել:

Անդոնի ճակատի ու վզի տամարներն էնպես էին ուռել, որ ասում էիր՝ էս մարդը հիմի կտրաքվի: Խեղդվելով միայն մի բան կարողացավ ասել.

– Իմ նամուսը դու գետնովը տվիր, Անանանց Հայկ... Դեռ ահնիզորցի Անդոնի անունը ոչով էսպես ցեխը չէր կոխել...

– Ոչինչ, քեռի Անդոն,– ասացի ես հանգիստ,– քեֆիդ կաց, աշխարհք է, էդպես էլ կպատահի: Մենակ մի խնդիրք ունեմ քեզանից՝ որտեղ քո՛նն ասես՝ էստեղ էլ ի՛մն ասա...

– Բան... նամարդ մարդին, էն էլ հարուստ՝ ամբարտավան մարդին, էդպէն պետք է պատժես,– իր պատմությունը վերջացրեց Հայկը:

Բուխարու առաջ, թաղիքին ծալապատիկ նստոտած, մենք որոշ ժամանակ լուռ մնացինք, ազդված էինք Հայկի պատմությունից:

– Ասում ես պախրա սպանեցիր,– հարցրեց Մելոնց Ամին:

– Հա, չորսը...

– Դե, պատմիր տեսնենք, ձմեռվա տարի գիշեր է, ո՞վ է քնողը...

Ամաչելով ես էլ իմ կողմից խնդրեցի:

Այն ժամանակ ես տասնչորս տարեկան էի, նոր էի սկսել որսորդությունը և հազար ու մի ցնորքներ կային գլխումս որսի հետ կապված:

Հայրս նոր էր եկել գյուղից, մյուս օրը միասին գնալու էինք սարից շալակով խոտ բերելու: Նա գոմից եկավ, ճրագը հանգցրեց ու տխուր նստեց բուխարու առաջ՝ քարի վրա:

Ես հարցական նայեցի:

– Էգուց որ խոտ չհասցնենք, մինչև իրիկուն չի ապրի,– ասաց հայրս տխուր ու սկսեց լցնել իր կավե ծխամորձը:

Խոսքը մեր Մաշկայի մասին էր:

Հետզհետե նրա մտածմունքներն էլ ցրվեցին, քանի որ գրույցը գնում էր իր սիրած նյութի՝ որսորդության շուրջը: Նա էլ քաշվեց խոսակցության մեջ:

– Միտս է, երեխեք էինք,– սկսեց նա,– աշնանամտին կալերում խաղ անելիս ամեն իրիկուն մեր գյուղի դիմացի սարից լսում էինք պախրի գոռոցը: Ձենը դմբդմբալեն գալիս էր գեղը հասնում: Մի օր էլ շատ շոգ էր: Մեկ էլ տեսանք մեծ–մեծ պոզերով մի պախրա ճանձերից նեղացած, իրեն պոզահարելով ու պոչահարելով, արտերի միջով գալիս է: Սրտապատառ փախանք: Դա մեր տան տակով անց կացավ ու գեղի ներքին բոստաններով գնաց, Դիլիջանի գետն անցկացավ: Որսկան Խալաթը չախմախավոր հրացանը վերկալավ, հետևից վազ տվեց: Միտս չի, սպանեց, թե՞ վիրավորեց:

Այսպես խոսք բացվեց եղջերուների մասին, ու մեր Հայկը

շարունակեց իր կիսատ թողած պատմությունը:

4

–Դե՛, ոնց որ ասացի,– սկսեց նա,– էն ժամանակ ես տասնվեց տարեկան էի: Մեր խմբի ղեկավար որսկան Շաքարը ասաց՝ պախրաները հիմա կլինեն Խալ-խալվի դռերին, քանի որ սարի էս երեսը արևին է մտիկ անում, տաք է, ձինը հալած կլինի: Թե որ հալած էլ չլինի՝ քամին ձինը սրբում–տանում է լեռնամատներից ու թոփալախտը բաց անում: Հենց էդ բաց տեղերում պախրաները շարվում են ու արածում:

Դեռ աքլորը չէր կանչել, որ մենք, բաշլղներով գլուխներս փաթաթած, տրեխներիս մեջ տաք բուրդ դրած, դուրս եկանք ձմեռանոցից:

Արևը ծագելիս արդեն սարումն էինք:

Ճիշտն ասած, մեր սարերին որ մտիկ արի, սիրտս լցվեց: Էն ռանգ–ռանգ ծաղիկները, էն փափուկ ատլասի պես կանաչը, մեր շուշանն ու նարգիզը, մեր էն սիրուն ուրթերը կարծես էլ չկային: Ո՛ր կողմը նայում էինք՝ տկճր, ձյուն... Ոչ չոբանի ձենն էր գալիս, ո՛չ շների հաչոցը, ո՛չ էլ կովերն էին բառաչում մեր էն սիրուն սարերում: Դրա համար էլ թուրքը քոչելիս, ետ է մտիկ անում, մեկ էլ է նայում իր սիրած սարերին ու դարդոտ ասում.

«Գեթդի գյուլ, գեթդի բլբուլ...»¹:

Ադրբեջանցի քոչվորները, ոնց որ գիտեք, սարերին ուղղած մի Վոխուր բայաթի ունեն, ուր խոսում են սարի հետ, ծաղկի հետ, դարդ են անում, որ աշունքանում է: Նրանք, ոնց որ գիտեք, լաց լինելով, մնաս բարի են ասում մեր սարերին ու տխուր երգում.

«Էլը քյոչտի արանա, դաղլար գաղի մարալա»²:

Ու էդ բայաթին էնպես են ասում, որ մարդի սիրտը կտրատվում է, ոչխարներն էլ են քար կտրած լսում...

Իսկապես որ սարը մնացել էր մարալին, ձմեռը նրանցից

1 «Վարդն էլ անցավ, տխակն էլ...»:

2 «Սարվորը դաշտ քոչեց, լեռները մսացին եղջերվին»:

բացի ուրիշ շունչ արարած չկար մեր Խալ-խալվում:

Դեմ էինք առնում ահագին զամբերի: Ներքև ես մտիկ անում անտակ ձոր է: Հրացանի կոթով ոտիդ տեղ ես անում ու գնում, գնում փնջալով, քափ-քրտինքի մեջ կորած:

Շատ չարչարվեցինք, շան...

Մեր սարի Սառն աղբյուրը հո գիտեք: Հեյ գիտի, աշխարհ, հան... Հո գիտեք, թե նրա կողքին ինչ բռնկուտ, ինչ թավուտ է: Դուրս գալիս, ինչ նարգիզներ են լինում: Ամառը խոտ հնձելիս էնքան են նրա կողքին մածուն կերել, էնքան են քնել նրա մոտի ծաղիկների մեջ... Հիմի տկլոր. ո՛չ կանաչ, ո՛չ ծաղիկ: Մարդու սիրտը լցվում է, որ Սառն աղբյուրն էդ օրն ընկած է տեսնում...

Աղբյուրի մոտ պճեղների տեղեր կային, կարծես կովեր ու մոզիներ ման եկած լինեին:

Պախրի նախիրը եկել է, ջուր խմել ու անցկացել,- ասաց Շաքար ամին, ու նրա էդ խոսքից մենք ամեն չարչարանք մոռացանք:

Աղբրի մոտ հաց կերանք, մի կուշտ ջուր խմեցինք: Էստեղ Շաքար ամին ջուր խմելուց հետո մի սրտալի «օխայ» արավ, չուխի փեշով բեղերը սրբեց ու ասաց.

- Զուր հո չի, մեռոն է, մեռոն...

Մենք վեր կացանք ու պախրանների հետքը բռնած՝ գնացինք, ո՛նց ենք գնում...

Խալ-խալվի գագաթը չհասած, Շաքար ամու կարգադրությունը իրարից ջոկվեցինք ու ամեն մեկս մի կողմով սկսեցինք սարը բարձրանալ:

Վերջապես ես մենակ դուրս եկա լեռան գլխի «ուրթը»¹: Մի շատ սիրուն, արևոտ օր էր: Ձյունը պլպլում էր ու էնպես էր աչքերս ծակում, խուտուտ ածում, ո՛նց որ թե մեկն էդ սարերում անհաշիվ ուլունքներ էր փռել: Մտիկ եմ անում՝ Լոռու աշխարհքը ո՛նց որ ոտներիս տակ լինի: Դիմացս Լոք, Լավվար, Լեջան սարերն են: Բարձր ու հպարտ: Հեռվում Թիֆլիսից դենը ընկած լեռներն են: Իսկ շան հեռու մի սպիտակ կատար էր երևում: Շաքար

¹ Ուրթ – սարահարթ:

ամին ասում էր դա Կավկազի ամենամեծ սարերից է, անունն էլ Կազբեկ: Ետ մտիկ արի մեր Ղազախի կողմը՝ ներքևում անտառներ, ձորեր, մինչև Քուռ գետը երևում է: Հարավի կողմը մտիկ անեմ և ինչ տեսնեմ, որ լավ լինի: Մասիսի ծերը երևում է, սպիտակ, ոնց որ շաքարի գլուխ: Նրանից դեսն էլ մի բան սիրուն կապտին էր տալիս, հետո հասկացա, որ Սևանա ծովն է:

Մի խոսքով, գլուխներդ ինչ ցավացնեմ, էդ բոլորից բարձր կանգնած, Կավկազին եմ մտիկ անում շաղված-տարված ու ինձ ու ինձ մտածում, թե՛ յարաբ մեր աշխարհքի պես էլ սիրուն աշխարհք կամ, թե չէ...

Դե մենակ մարդը էն ամայի սարի ծերին կանգնած՝ ինչ ասես, որ չի մտածի: Էդպես բնության խորհրդով տարված՝ չգիտեմ ինչքան եմ մնացել կանգնած, վերջապես ուշքս գլուխս եկավ, հրացանս վիզս գցեցի ու առաջ գնացի: Ձինը ուրթում խորն էր, բայց չէի թաղվում, երեսը սառած էր: Էնպես էի թեթև, կփկփպալեն գնում, ոնց որ կոկիկ ճամփով:

Գնացի՛, գնացի՛, վերջը դեմ առա Լոռին Ղազախից բաժանող Խալափա սարին:

Դե մեր Խալափի գիժ բնավորությունն էլ հո գիտեք: Ամառվա էն շոգին երբ արևը աշխարհքը էրում-խորովում է, Խալափում մեկ էլ տեսար հանկարծ երկինքը սևակնեց, գոռգոռաց, կարկուտ թափեց ու տավար-ոչխար ձորերը լցրեց:

Դե ձմեռն էլ գիժ է ու գիժ: Խալափը մի բուք ու բորան արավ, մի բուք ու բորան, որ էլ ասել չեմ կարող: Մի քարի տակ կուչ եմ եկել, ճնց եմ գնգըր-գնգըր դողացնում:

Որ բուքը հանդարտվեց, մի քիչ էլ առաջ գնացի ու դեմ առա ուրթի փեշին: «Կարող է էստեղ պախրա լինի»,– մտածեցի ես, ու ոնց որ Շաքար ամին էր պատվիրել, փորսող տալով հասա ուրթի պոնկին: Շունչս պահեցի ու գլուխս կամանց հանեցի քարի կողքով:

Որ գլուխս բարձրացրի, սիրտս վեր թռավ ու սկսեց մորթած հավի պես թալրտալ: Տեսնեմ, ինչ տեսնեմ, որ լավ լինի, դիմացս

մի ահագին նախիր հանգիստ արածում է: Քանի սիրտս խփում էր, ասի՝ չկրակեմ: Ու մտիկ եմ անում բերանս բաց, խելքս գնացած... Ասա՝ ո՞նց են արածում էդ պախրաները, առաջին ոտով ձինը քանդում են, ետ տալիս, խոտը բաց անում ու պոկում: Հետո՝ ուտելիս դունչները վեր են տնկում, խուշ-խուշ անում, չորս կողմը նայում ու էլի արածում:

Դե, ես ձեզ ի՞նչ պատմեմ, պախրա հո շատերդ եք տեսել. ոտները երկար, բարակ ու շիմշատ, մարմինները բարակ՝ կոկիկ ու սիրուն, ոնց որ նախշ: Որձերը շատ մեծ են, ամեն մինը մի եզան չափ: Պոզեր ունեն, ոնց որ ծառի ձղներ, իսկ էգը պոզեր չունի:

Նախրից ներքև, մի թմբի վրա վեց պախրա ջուխտ-ջուխտ նստած՝ որոճում էին: Զարմանալին է՛ն էր, որ մեկը երեսը դեպի է՛ն կողմն էր նստած, մյուսը՝ է՛ն կողմը, որ մեկը առաջը նայի, մյուսը՝ հետևը: Արածողներն էլ էդպես էին, մի մասը երեսը Լոռվա կողմն էր արել, մյուսը՝ դեպի Դիլիջան:

Է՛ն ժամանակ, ոնց որ ասացի, տասնվեց տարեկան էի: Է՛նպես խամ ու ջահել էի, ոնց որ երեխա: Շշկված, շունչս պահած մտիկ եմ անում որսին, իսկի չեմ էլ մտածում, որ կփախչեն, կամ սպանելու եմ եկել, էս ի՞նչ բանի եմ:

Որ շատ մտիկ արի, կշտացա, սիրտս էլ հանդարտվեց: Ետ քաշվեցի ու նշան բռնեցի: Հրացանի փակը բացելու չխկոցից պախրաները գլուխները վեր բարձրացրին, ականջներն սկսեցին ետ ու առաջ թեքել, սրել, իսկ մեծ բուղեն դունչն իմ կողմը մեկնեց ու սկսեց հոտոտել:

Նշան բռնեցի դրա կրծքին ու ոտը քաշեցի: Որ հրացանը տրաքեց, դրանք խամսվեցին, հավաքվեցին իրար գլխի ու կարծես հրամանի էին սպասում: Հրամանը ղրտեղից. նախրի ղեկավարին արդեն փռել էի, պոզերով, ոտներով քանդում էր ձինն ու խուլ բվվացնում:

Ու սկսեցի իրար հետևից կրակել հա՛ կրակել...

Խեղճ կենդանիները չգիտեին, թե գնդակը ո՞ր կողմից է

գալիս, որ փախչեն: Մեկ էլ որ կրակեցի, փախսան դեպի ինձ ու քիչ էր մնում գլխիս թափվեն: Երկու-երեք անգամ կրակեցի հենց դռշներին: Ինձ տեսան ու ճղեցին դեպի Լոռու սարերը: Դրանք որ փախսան, նոր տեսա, որ ուրթում երեք պախրա է ընկած:

Քիչ հետո ընկերներս տեղ հասան, գովեցին ինձ ու միասին վիրավորների հետքն ընկանք, գնացինք:

Շաքար ամին նրանցից մեկին սպանեց մի ձորում: Մեր որսը թաղեցինք ձնի տակ, և ես գնացի Ահնիզոր՝ էշեր բերելու: Դրանից դենն արդեն գիտեք. Անդոնի մասին ձեզ արդեն պատմել եմ:

Համա մի հրաշք բան պատահեց ինձ, որ չեմ ասել:

Այ տղա, որ էշեր ճարեցինք, տարանք պախրաները բերելու, իմ աչքերը շաղվում են, գժվում եմ ու հրացանը դեմ եմ անում, որ Շաքար ամին սպանեմ: Բռնում եմ, աչքերս տրորում, Շաքար ամին կրակ է անում ու ինձ դնում կեծեցած մոխրի մեջ: Դրանից ոտներս էրվել էին: Վերջը որսորդները որոշում են, որ պախրաների մեղքից է: Իհարկե, դատարկ բան է, մեղքի հարց չկար: Կարող է կամ խղճահարվելուց էր, կամ թե չէ՝ էդ օրն էնքան էինք չարչարվել, մրսել, որ մարդկությունից էլ էինք ընկել: Վերջը, գլուխներդ ինչ ցավացնեմ, ինձ էլ պախրաների հետ բարձում են էշերին ու բերում տուն:

Սաղափլուն որ անց կացանք, ուշքս գլուխս եկավ: Վեր եկա էշից ու մի կերպ, էրված ոտներով, կաղալով առաջ գնացի: Մեր գոմերից ներքև անտառապահներն առաջներս կտրեցին, որ պախրաները խլեն:

Սամսոնը աղաչեց թե՛ «Հազար ու մի ցավի տեր մարդիկ ենք, թողեք տանենք, մեր ցավին ճար անենք»:

Չլսեցին: Դե իմ գիժ ժամանակն էր: Անցկացա ծառի հետևը, հրացանը մեկնեցի:

– Շան որդիք, ումնից եք պախրա խլում,– որոտացի ես ու էն է՛ ոտը քաշում էի, Շաքար ամին թևիցս բռնեց:

– Ադամ, շաշ չես, մեզ Սիբիր կքշեն, ինչ ես անում,– ասաց նա կամաց ու հրացանս խլեց:

Վերջը անհրավները մեր որսը խլեցին ու գնացին Դիլիջան:
Մնացինք մոկտալով հետևներից նայելիս:

Մյուս օրը լսեցի, որ կառավարության մարդկանց վրա հրացան քաշելու համար ինձ բերդ են նստեցնելու: Փախա Հաղարծնի գոմերը: Հորեղբայրս՝ Ուսեփ քոխավեն, հո գիտեք ինչ անուն ուներ, գնում է Դիլիջան՝ պրիստավի մոտ, թե՛ «Ջահել է, դալաթ է արել, բաշխեցեք»: Կարող է էդ արանքում կաշառքից-բանից էլ ժաժ եկած լինի, թե չէ, չեմ կարծում, որ առանց դրա մի բան դուրս գար:

- Բն, էդպես բաներ, պախրեն մեր գլխին հարամեցին...-
վերջացրեց Հայկը:

- Էն ժամանակ էլ էին հարամում, հիմի էլ,- տնքաց հայրս,
ճրագը վառեց ու գնաց գոմը:

Երբ վերադարձավ, նրա աչքերը վիշտ էին արտահայտում:

- Մաշկեն սատկեց,- ասաց նա ու գլուխը կախեց:

- Հիմի էլ են հարամում,- կրկնեցի ես ցավով ու դանակը
վերցնելով, գնացի իմ փայփայած կովը մաշկելու...

Մյուս օրը մենք բքի բռնված ծնկահար ձյան միջով քայլում
էինք դեպի լեռները:

Գնում էինք շալակով խոտ բերենք՝ կենդանի մնացած
անասուններին փրկելու համար...

1934

ԽՂՃԱԼԻ ՀԱՅԱՅՔ

Դեռ փոքր էի, տասնչորս տարեկան հազիվ լինեի:

Մի առավոտ մեր հարևան Արթենանց Արշակը մեր դուռը ծեծեց: Բաց արի:

- Հրացանդ տուր,- ասաց,- Ջուխտակ աղբյուրներում նապաստակներ եմ տեսել, ո՞նց լինի, որ մեկը չբերեմ:

Հրացանս տվի՝ գնաց:

Կեսօրին Արշակը վերադարձավ՝ քրտինքի մեջ կորած:

- Մեկին մի թեթև վիրավորեցի, Բադալանց բլուրն անցկացավ-կորավ, չգտա,- ափսոսանքով հաղորդեց նա:

- Այ բալամ, որս անելը հո փլամվ չի, ամեն մարդի բան չի,- լուպազ-լուպազ ասացի ես ու հրացանը նրա ձեռքից առնելով, ձամփա ընկա:

Հասա Արշակի ասած տեղը, փափուկ ձյան վրա պարզ երևում էր նապաստակի բոլորովին նոր հետքը:

Երեք ոտքով էր վազել, ուրեմն մեկը վիրավոր է: Մի քանի քայլ չարած, ձյան վրա արյան հետքեր նկատեցի:

«Սա իմ ձեռքիցը չի պրծնի», - ուրախ ստածեցի ես և առաջ գնացի:

Հետքն անցնում էր քարերի կոճղերի արանքով, մացառների միջով:

Մի բարձր տեղ վիրավորը նստել էր: Ձյան վրա պարզ երևում էին նրա երեք թաթերի դրոշմած հետքերը, իսկ աջ թաթի տեղ արյուն էր թափվել և ալ կարմիր ներկել սպիտակ ձյունը:

Դիմացս մի մեծ քար կար, հետքն այդտեղ կտրվում է: Հասա, կռացա, ներս նայեցի քարի տակի արանքից, նապաստակը պռակել էր բնի հատակին և իր վիրավոր ոտքը թաղել մի ուրիշ՝ ավելի փոքր նապաստակի տաք ու փափուկ մազերի մեջ:

Վիրավոր նապաստակը մի խղճալի հայացք գցեց ինձ վրա և փախչելու փորձ չարավ: Ես անմիջապես շուռ եկա և քայլեցի դեպի գյուղ:

Այդ խղճալի հայացքը...

Պատահեց Արշակը. անասուններին ջուրն էր տանում:
Հեզնանքով նայում է ու հարցնում.

– Հ՞ը, բերի՞ր... Չէ՞... Բա լոպագանում էիր:

Ի՞նչ ասեի... Կամ որ ասեի՝ կհասկանամր...

1934

ԱՆԴՈՒՆԴԻ ՊՌՆԿԻՆ

(Որսկան Շաքարի պատմածներից)

Նորից աշունը եկավ. մեր անտառները մեկ էլ դեղնեցին ու տերևաթափ եղան:

- Տղերք, հիմի արջերի չաղ ժամանակն է, գնանք մի բախտներս փորձենք,- ասացի մի օր գյուղամիջում:

Հենց էդ օրը Ղազարենց Հանեսի ու Ալիխանենց Արթնի հետ ձամփա ընկանք դեպի Հաղարծնի անտառը: Ես ծմակի բերանին, մի քարափի թիկունքում տապ արի, իսկ տղերքը գնացին ներքևի ձորից սուրագ¹ անեն: Արևկող արած էնքան նստեցի, որ քունս տարավ:

Մեկ էլ տեսնեմ՝ տղերքը դատարկ, քոռ ու փոշման ետ են գալիս:

- Տղերք, բա ո՞ր է որսը:

- Ջատ չկա, Շաքար ամի, հոգիներս դուրս եկավ, էնքան ման եկանք,- պատասխանեցին նրանք ու հոգնած պառկեցին խաշամի վրա:

Ասի՝ տղերք, հիմի էլ դո՞ւք պատրաստ կացեք, ես գնամ, տեսեք արջին հանո՞ւմ եմ, թե չէ: Ես էլ հաստատ գիտեմ, որ էդ կողմերում արջ կա: Երեսս թեքեցի դեպի դիմացի կաղնուտը, գիտեմ, որ արջը հիմի կաղին ուտելիս կլինի:

Չորն անցկացա, մտա կաղնուտը՝ տեսնեմ խաշամը տեղ-տեղ ետ է տված: Արջն է արել... նշանները նոր են, սկսեցի առաջ գնալ մատներիս ծերով, որ խաշամը չխշխշա ու չորացած ճյուղերը ոտքերիս տակ չջարդվեն: Բարձրացա մի փոքրիկ թմբի գլուխ, մեկ էլ տեսնեմ ծառերի արանքում մի ահագին սև անասուն: Աչքի տակով գողեգող համ նայում է ինձ, համ առաջ գնում, էնպես զգույշ, որ իրեն չտեսնեն: Համա գիտեմ, որ քարափն անցկենալուն պես ամեն ինչ ջարդ ու փշուր անելով փախչելու է:

¹ Սուրագ անել - որսը քշել դեպի թաքնված որսորդը:

Հետևս անդունդ է, առաջս՝ գազանը: Հիմի ինչ անեն: Թե կրակեն՝ լավ գիտեն, որ էդ ահագին սարին մի գյուլով սպանել չի լինի, ես էլ ոչ փախչելու տեղ ունեն, ոչ ընկեր: Անիրավը վերևից վրա կտա, բուրդս կգզի:

Հրացանը երեսս կալա, որ կրակեն՝ սիրտ չարի: Արջը հասկացավ, աչքի տակով նեղացած մտիկ արավ վրես ու էն էր, ծառերի արանքում կորչում էր՝ կրակեցի: Դրա բրդոտ կողքից կանաչավուն ծխի քուլա երևաց, հասկացա, որ կպել է: Էդ անտերն էնպես գոռաց, որ սար ու ձոր դմբդմբաց: Գոռգոռալով, արին տալով դեպի ինձ ճնց է գալիս... հիմի էլ որ միտս է ընկնում՝ մազերս փշաքաղվում են: Ինձ չկորցրի, ետ գնացի, անդունդի պռնկին վեր ընկած մի ծառ կար, մտա դրա տակը:

Արջը մոնչալով եկավ ու կանգնեց գլխիս վերևը, համա աչքերը արյունով լցված էր, ինձ չտեսավ: Հիմի ծառի տակին կուչ եկած մտածում եմ, թե կրակեն՝ ուղիղ գլխիս կընկնի: Ասի՝ ինչ ուզում է թող լինի: Պատկած տեղից հրացանը դռշին դեմ արի ու «տրմբ-տրմբ», երկու անգամ կրակեցի: Ռոնաց, երկու թաթով գրկեց ծառն ու սկսեց կրծել: Էլի՛ կրակեցի, դես ու դեն է նայում ու չի հասկանում, թե որտեղից է գալիս գնդակը: Հրացանիս մեջ փամփուշտ չմնաց: Ո՞նց ժաժ գամ, ճնց նոր փամփուշտներ հանեն, ախար որ նկատեց՝ մահս կտա: Փորսող տալով մտա փտած գերանի տակը. անդունդի պռնկին եմ, էլ առաջ գնալու հնար չկա: Ջանս դող է ընկել, ասում եմ՝ էս է, վերջս եկել է:

Ո՞ւր են ընկերներս, ինչի՞ չեն գալիս իմ կրակոցների վրա: Սսկվել եմ, հույսս Հանեսի և Արթինի վրա է: Գերանի տակից թաքուն մտիկ եմ անում, ինչ տեսնեմ՝ արջը պազել է էստեղ, որտեղ ես էի քիչ առաջ: Արուն է գալիս կրծքից, ոտից, կողքից... Օրորվելով առաջ եկավ ու կանգնեց կողքիս՝ հենց քարափի ծերին ու գլուխը դեմ արավ մի քարի: Աչքերն արդեն շաղվել են, ինձ չի տեսնում:

Կամաց գլուխս բարձրացրի ու հրացանի կոթով բոթեցի,

գլխի վրա տնկվեց, կոճղի նման շուռ եկավ ու գլորվեց քարափից ներքև:

Ազատ շունչ քաշեցի, բարձրացա սարի գլուխն ու ինչքան ուժ ունեի գոռացի.

- Ադա Հանեն, Արթին, եկեք, արջը սպանել եմ, հեյ...

- Հեյ,- լավեց Հանեսի ձենը Ուսուրի սարի քարափներից:

- Գալիս եմ, հեյ,- լավեց Արթնի ձենը Արփավուտի գլխից:

Մնացի զարմացած, թե էս մարդիկ ինչի են էսպես իրար կորցրել: Նստեցի, Արթինն եկավ ինձ գտավ:

- Այ տղա, էդ ո՞ր եք կորել, Արփավուտի գլխին դու ինչ բան ունես:

- Շաքար ամի, մեր մեղքն ինչ պահենք, տրաքոցներ որ լսեցինք, մտածեցինք, որ դաշաղներ կլինեն, ու ամենքս մի կողմի վրա փախել ենք, գլուխներս ազատելու համար:

Ծիծաղեցինք:

- Համա դարդիման ընկեր եք, հա՛... Դե վազիր գոմերից լծկան բեր, որ արջը տանենք:

Ծմակը մթնեց: Հանեսը եկավ երկու լուծ եզն առաջն արած:

Համա արջը մեծ չարչարանքով դուրս բերինք ձորից, եզները քրտինքի մեջ կորել էին: Վաթսուն տարվա որսկան եմ, հալա-էդքան մեծ արջ չեմ սպանել: Ինչ ասեմ՝ մի դեզի չափ բան էր: Մենակ կաշին երկու փութ եկավ, իսկ եղը՝ հինգ փութ:

1934

ԴԵՊՔ ԵՂԵԳՆՈՒՏՈՒՄ

Մեր տունը գյուղի վերի ծայրին է՝ կանաչ պարտեզներով պտտած բլրի արևելյան լանջին:

Արեգակի առաջին շողերն ամենից շուտ ոսկեգօծում են մեր պատշգամբն ու բաց պատուհաններից խուժում ներս:

Այդ առավոտ էլ կոպերիս վրա զգացի առաջին ճաճանջներն ու արթնացա:

Ես նայում եմ մեր պատշգամբից և իմ առաջ տարածվում է Դիլիջանի հեքիաթային ձորն իր փրփրաբերան գիժ գետով, իր մթին ծնակներով և հսկա քարափներով, որոնք կանաչ թավուտների միջից վեր են հանել իրենց լերկ ծայրերը:

Իմ դիմաց Գյոյ-Դաղ լեռն է՝ կապույտ լեռը՝ իր անտառոտ լանջերով և ողորկ ու թավիշ սարահարթերով: Նրա մյուս երեսի փեշերը ծեծում են Սևանա լճի գեղածիծաղ կոհակները:

Հյուսիսում՝ Լոռին Ղազախից բաժանող լեռները պատած են վաղորդյան սպիտակ մշուշով:

Հովը շնկշնկում է պատշգամբում և ծաղիկների բույրը բերում իր հետ: Քաղաքի տոթից ու փոշուց մեկ օրով բնության գիրկն ընկած մարդու ազահությանը կլանում են անսպական ու խնկաբույր օդը:

Մի խումբ աղավսիներ ճախրում են օդում, և փայլում են նրանց թավիշ փետուրներն արևի ճառագայթների տակ:

Ես վերցնում եմ երկփողանի հրացանս, բարձրանում բլուրն ու կրակում իմ գլխի վրայով թռչող երամի վրա: Ես հավաքում եմ թռչունները, կախում կողքիցս և իջնում ցած:

Մեր տան առաջ ահագին փափախով, արծաթապատ դաշույնը գոտուց կախած, չուխի փեշերը հավաքած մի մարդ է կանգնել և ամուր հենվել իր ահագին մահակին: Նա զրույց է անում հորս հետ:

Ճանաչում եմ դեռ հեռվից՝ Շաքարն է, Ղազախի ամենահայտնի որսորդը: Չգիտեմ՝ պապիս եղբոր տղան է, թե՞ թոռը:

Ինձ նկատեց ու բամբ ձայնով բացականչեց.

– Ա՛յ տղա՛, դո՛ւ ես, տո դու բարձր ես եկել, հազար բարի ես եկել...

Ապա մի ծուռ հայացք ձգելով կողքիցս կախած աղավնիներին, ավելացրեց.

– Չէ՛, բալամ, դու էլ քաղաք գնացիր, լոր փախցնող դառար:

Հնամյա այդ որսորդի համոզմունքով, տղամարդու համար անպատվաբեր է թռչունների վրա կրակելը: Եվ նա քաղաքի որսորդներին դրա համար է հեգնում և մեկ էլ նրա համար, որ հետները որսի շուն են վերցնում:

Ութսուն տարեկան է և երեք քառորդ դար շարունակ կյանքն անց է կացրել բացօթյա, բնության գրկում, փարթամ կանաչի մեջ ու ձյան վրա, անդնդախոր կիրճերում ու բարձրաբերձ լեռների գագաթներին:

Իր հասակակիցներից շատերը, ինչպես ինքն էլ ասում, «օխոր պատան են մաշել»: Բայց նա առողջ է ու սրատես՝ որպես իր լեռների արծիվը:

Այժմ նա կոլխոզի նախրապանն է, և ոչ մի գայլ նրա նախրի կողքով չի անցնում: Այժմ էլ ձմեռ չի անցնում, որ արջը հոգեվարքի մեջ չգոռա նրա անվրեպ հարվածից:

– Դու է՛ն ասա, ամօղլի, թացանիչ ես բերե՛լ,– ասաց նա ցուցամատով կոկորդը կտկտացնելով:

– Կա՛, ո՞նց չէ, «Արարատ»-ը ողջ լինի, գնանք:

Մենք նստեցինք պատշգամբում, սեղանի շուրջը և լցրինք կոնյակի բաժակները:

– Ա՛յ պուճուր ամօղլի, ախր դու էս սաղ Հայաստանի ժողովրդի առաջ խայտառակ ես արել ինձ:

– Ինչի՞, բիձա,– զարմացա ես:

– Փիե՛, միթամ դու խաբար չէն... Էն օրը Դիլիջանի մեծ քուչով գնում եմ: Վիզները կարմիր շոր կապած երեխեքը էս ու էն կողմից մատով ցույց են տալիս, թե՛ «Էն է, այ՛, որսկան Շաքարը»: Ես էլ բանից խաբար չեմ: Մին էլ մինը մոտիկ եկավ մի գիրք

ձեռքին, թե՛ «պապի, քո նկարը տպված է, տեսն՞լ ես»: Արհնս գլուխս տվուց. ասի՝ նահլաթ քեզ, չար սատանա, յարաք, ես ի՞նչ վատ բան եմ արել, որ իմ պատկերքը գրքում քաշեն: Երեխեքն ուրախանալով ցույց տվին: Տեսնեմ՝ ռեխը լեն մի մարդ, մոթալ փափախը գլխին, թվանքի լուլեն դեմ է արել արջի դոշին: Համա հեչ ինձ նման չէր: Ասացի՝ բալա ջան, ես արջ շատ եմ սպանել, համա էդ մարդը ես չեմ, դրա ռեխը լեն է: Ասացին՝ ոչինչ, պապի, քաղաքում ձեռքով են նկարել, առանց քեզ տեսնելու:

Խնդացինք: Ըստ երևույթին, նրա ասած գիրքը «Պիոներ» ամսագիրն է եղել, ուր ես գրել էի իմ հիշողությունները որսկան Շաքարի հետ կատարած մեր արջաորսի մասին:

- Սկսիր որսից, էլ եմ գրքի մեջ գցելու,- ասացի ես:

- Թե էլի է՛նպես բեջուռա եք նկարելու, քեզ բան չեմ պատմի,- լրջորեն առարկեց Շաքար ամին:

Ծիծաղս զսպելով՝ ես նրան հանգստացրի, որից հետո սկսվեց հետաքրքիր գրույց վայրի խոզերի մասին:

Եվ Շաքար ամին պատմեց հետևյալ դեպքը:

- Մի տարի մարտի կեսերին խոր ձին եկավ: Ոչխարի սուրուն, որ արածում էր, մնաց գոնումն ու մի քանի օրում տավարի փայ խոտի մեջքը կոտրեց: Դե է՛ն վախտն էլ ոչ կոլխոզ կար, ոչ էլ կառավարությունն էր մերը: Մեյդանը Չաթալանց Վարթևանինն էր: Ամարաթները կանգնեցրել էր ու ապրում էր պոպոքի միջի պես: Աշունքը մշակների մեջքով խոտ էր արել, պահել ու էս նեղ վախտն իր հոր գինը դրել վրեն, ծախում էր: Խալխն էլ ճարները կտրած՝ ոչխարի, տավարի կեսը ծախում էր, խոտի տալիս, որ մյուս կեսը փրկի:

Տղիս ասացի՝ «Արմյոթ, այ որդի, փթով խոտ առնելով մենք տավար չենք պահիլ, դա էլ, ոնց որ տեսնում ես, աստվածն ուրացել է. արի ոչխարը քշենք Քոի դրաղը»:

Ասելն ու անելը մին արինք: Պուճուր տղիս՝ Աբելին վեր կալա ու ոչխարն առաջս արի:

Առաջին գիշերը Ջարխեսչում քնեցինք, մյուս օրը՝ Քարվանսարա,

չորրորդ օրը հասանք Աղստաֆա:

Ոչխարը ուղիղ քշեցինք Սալահլու՝ մեր ճանաչ թուրքերի մոտ: Դե, ոնց որ գիտես, ամառը նրանք մեր սարերն են գալիս ու մեզ հետ մերվել, ախպերացել են: Էդ մարդիկ հենց ջիգյարով մեզ ընդունեցին, հենց պահեցին, որ որդոց-որդի պարտական մնացինք:

Էդտեղ արդեն գարուն էր: Քուռը վարարել, պղտորվել էր, դամշկուտներումը դշերը սկսել էին բույն շինել: Կանաչը նոր էր դուրս եկել, էնքան, որ ոչխարը կշտանում էր:

Ոչխարի ծինն սկսվեց: Ծնեցնում ենք, կաթը դալ ենք անում, ուտում: Մեր շներն էլ մեզ հետ հավասար ուտում են, քոքանում ու էդ դուզերումը խաղ անում, գել չկա, բան չկա: Մի խոսքով, քեֆներս լավացավ:

Համա երկու շաբաթ է՝ որս չեմ արել, ջանս քոս է ընկել, ձեռքերիս մեջը քոր է գալիս:

Մի առավոտ մտիկ տամ, տեսնեմ՝ գոմի չորս կողմը թափած աղբը քանդած է. ոնց որ մեկը չուրթը գցի ու վարի-սևացնի: Նայում եմ՝ դուզումն էլ էնպես ծուռումուռ, վարած տեղեր կան:

Ասում եմ՝ «Էս ինչ բան է, Մհառլամ»: Նա թե՛ «Գիշերը խոզերն են վարել»: «Ինչ խոզեր»: «Վիրու խոզերը, դամշկուտից են գալիս»: Էդ որ ասեց, սիրտս ծուլ էլավ: Ես էլ խոզի որսին սովոր չեմ. դե, ոնց որ գիտես, մեր կողմերում խոզ չկա:

Դրանք ինձ ասացին, թե խոզը արջից էլ փիս է: Դժվար է սպանվում, ճրագուն էնքան հաստ է կաշվի տակ, որ վերքի առաջը փակում է, արինը չի գալի, ու խոզը մնում է կենդանի: Ու թե որ որձին վիրավորեցիր՝ էլ պրծար: Մհառլամը պատմեց, թե ինչպես իրենց գեղացիներից մեկը ձիով է որսի գնացել, որ վիրավոր վարազը չկարողանա վնաս տալ: Ձիու վրից կրակել է, վարազը կատաղած՝ վրա է տվել, հասել ձիու ետևից ու դուրս ցցած ատամովը ձիու ոտի կռճիցն սկսած մինչև բուդը ձղել է թրի նման:

- Վիրավոր վարազից ազատվելու համար կամ պետք է փոս

փորեա, դիրք մտնես, քանի որ խոզը դեպի ներքև չի կարող խփել, կամ թե չէ՝ պետք է քոթուկի վրա կանգնես, որ դունչը չհասնի:

Էդ կանոններն իմանալուց հետո գնացի դամշկուտը մի լավ տնտղեցի: Որոշեցի, թե քշելիս ո՞ր կողմը կարող են փախչել ու նստեցի էդտեղ՝ մի քոթուկի վրա:

Աբելին ասացի, դու շները վեր կալ, գնա դամշկուտի էն ծերիցը դալմադալ անելով քշի գան:

Աբելը գնաց, հեռացավ, շների հետ մտավ դամշկուտն ու սկսեց դալմադալով գալ դեպի ինձ:

Մեկ էլ տեսա դիմացի դամիշները ժաժ են գալիս ու ճրթճրթում: Խոզերի բոլուկը չորացած դամիշը փշրելով՝ առաջ էր գալիս: Եկան, թափով անց կացան, համա բարձր դամշի մեջ բան չեմ տեսնում: Մեկը երևաց՝ դունչը վերև ցից արած: Կրակեցի, տեսա, որ դիպավ: Դիպավ, համա կորավ: Քոթուկից վեր եկա ու ընկա դրա ետևից: Տեսա, որ դամշի վրա արնի շիթեր են երևում: Մի քիչ գնացի՝ դրա թիկունքը երևաց: Մեկ էլ կրակեցի ու առաջ գնացի:

Համա ոտներս խրվում են. շամբի տակ ցեխ ու ջուր է: Շեկ շամբուտում դրա քամակը մեկ էլ երևաց՝ կրակեցի: Որ կրակեցի, էդ անտերը ճղղաց ու դորթդորթացնելով ետ դառավ, վրա տվեց ինձ: Թվանքը դռշին դեմ արի՝ մեկ էլ կրակեցի: Կրակեցի, համա մինչև ծնկներս թաղվել եմ ցեխի մեջ: Էդ անտերը վրա հասավ ու ընկավ վրես. ուժ չունի որ խփի, դռշից ու քամակիցը արիւր խշշալով գնում էր: Հակառակի պես էլ թվանքիս լուլեն դրա տակն էր ընկել: Ձեռքս տարա խանչալիս, որ հանեմ, դռը խրեմ՝ չկարացի. խանչալը տակիս փաթաթվել էր դամշի արմատներին: Հիմի դա խոխոացնելով սատկում է, չի կարողանում ինձ խփի: Սատկում է, համա վրես է սատկում, ինձ էլ է տանում ցեխի տակը:

Շատ ինձ թափ տվի, շատ չարչարվեցի, ճար չելավ: Նահլաթ քեզ, չար սատանա, էս ի՞նչ խաթա էր: Խոզը հոգին փչելու

Ժամանակ մեկ էլ ցած եկավ՝ լրիվ մնացի տակին:

Բղավեցի՝ «Աբել, հասի, Աբել, հասի, հեյ»... Իմ ձենի վրա Աբելը շների հետ եկավ, վրա հասավ, խոզը շուռ տվեց մի կողմի վրա ու ինձ դուրս քաշեց ցեխիցը:

Բան, էդ անտերն ինձ էլ էր ուզում իր հետ տանի էն աշխարհը:

Համա խոզ մի ասիլ, մի գոմեշ ասա, ութ փութ միս ու եղ ուներ:

Ու դրանից եղը սովորեցի: Էլ որ աշխարհը քանդվեր, քոթուկի վրից վեր չէի գալիս,- վերջացրեց իր պատմությունը Շաքար ամին:

- Ես գիտեմ, էս էլ ես գրքի մեջ գցելու, համա խնթրվում եմ, ամօղլի ջան, խարաք բաներ չգրես ու պատկերս էլ էնպես բեջուռա քաշել չտաս,- ավելացրեց ծեր որսկանը, վերջին բաժակով խմեց իմ կենացը, ցանկություն հայտնեց, որ իմ «գյուլեն գետին չընկնի» ու վեր կացավ:

1934

ԱՆՏԱՌԻՆ ԱՆՍՈՎՈՐ ՄԱՐԴԸ

Բարձրահասակ, լայն թիկունքով, սև ու խիտ հոնքերով մի մարդ էր Վանոն՝ արտաքուստ հսկայական ու առնական:

Մի անգամ, երբ եղնիկը շալակած մտանք քաղաք՝ պատահեցինք նրան և նկատեցինք, որ դեմքին արհամարհական ժպիտ խաղաց:

- Ես էլ կարծում եմ բան են բերել,- փնթփնթաց նա քթի տակ:

Հաջորդ օրը, ի ցույց մարդկանց, ինձ առաջարկեց գնալ արջի որսի: Այս անգամ էլ ես սկսեցի հեգնել.

- Դաշտի մարդ ես, սարը քո բանը չի... Մեկ էլ քո էդ ահագին մարմինն ո՞վ է շալակողը...

Արհամարհանքով վերից վար նայեց ինձ և հանդարտ ու վստահ ասաց.

- Ղարաբաղում արջերն իմ ահից մկան ծակին օխտը թուման էին տալիս: Արջեր եմ սպանել ամեն մինը մի վագոնի չափ: Գնանք, տղամարդը սարում կերևա:

Համաձայնեցի: Ասի՝

- Վանո, արի կլինի այս անգամ արջերին բաշխի, գնանք եղնիկի, ես եղնիկ խփելու թույլտվություն ունեմ:

- Է, տղամարդը եղնիկի վրա էլ գնդամկ կփչացնի,- պատասխանեց նա, դժգոհ, բայց համաձայնեց:

Հաջորդ օրը մեկնեցինք Լոռի: Գնացքում կես քուն, կես արթուն լսում էի Վանոյի ինքնագոհ պատասխանները հետաքրքրվող տիկիներին.

- Արջաորսի ենք գնում...

- Դե ո՞ր պիտի պրծնի որ...

- Վտանգավորը՝ վտանգավոր է, բայց դե կյանքի իմաստն էլ վտանգն ու դժվարությունները հաղթահարելու մեջն է...

Այդ գիշեր անքնությունից ծանրացած գլուխներով գնացինք իջանք Ալավերդի կայարանում և զանգահարեցինք Ուզունլար:

- Էն ով ս...- լսվեց քնատ մի մարդու պատասխան:

- Գալոյին շուտ վեր կացրեք, բերեք հեռախոսի մոտ:
- Էն ով ան...- կրկնվեց համառ հարցը:
- Երևանից է, ասա՝ այսինչն է, շուտ կանչիր: Հերթապահը փնթփնթալով գնաց:

Քիչ անց՝ Ուզունլարից զանգահարեցին.

- Այտա ջան, էդ դու ես... Այտա, քե մատաղ, էդ էրբ ես եկել...

Որսկան Գալոն ուրախացել էր մեր ժամանման համար: Երևան գալիս միշտ ասում էր. «Ա՛խ, մի անգամ քեզ տանեմ Չափրելաձոր, էն զուլալ ջրերից խմես ու վազես կխտարների հետևից...»:

- Գամ ձեզ տանեմ,- առաջարկեց նա:

Չհամաձայնեցի. կլուսանար, որսի ժամանակը կանցներ:

- Դու նշաններով ասա, որտեղ է Չափրելաձորը, մենք կգնանք,- պնդեցի ես:

- Կգաք Սանահին կայարանը: Սարից եկող մի ջուր կա, էդ ջուրն ի վեր կհասնեք սարերը: Մի քարափի տակ գոմեր կան, Ուզունլարի գոմերն են. էնտեղ կպատահենք. ես էլ գնում եմ Ամոջա որսորդներին վեր կացնեմ բերեմ,- ասաց Գալոն ու կախեց հեռախոսի փողակը:

Մինչև Սանահին մենք քայլեցինք ոտքով:

Ուշ աշնան գիշեր էր: Եղյամը նստում էր չորացած խոտերին, իսկ Դեբեդը դուրեկան վշվշում էր ապառաժների տակ:

Հասանք Սանահին, գտանք Գալոյի ասած առուն և քայլեցինք նրա հոսանքն ի վեր:

Նեղլիկ այն կածանը, որով ընթանում էինք մենք, ձգվում էր առափնյա ժայռերի ու զառիվայրերի լանջերով: Ահավոր խավարը չոքել էր երկրի վրա, գիշերային մի թռչուն մենակ ու խորհրդավոր կանչում էր մոտակա անտառում, իսկ ներքև ջուրն էր խշշում մեղմորեն:

Եվ թռչունի կանչը, և՛ գետի խշշոցը, անտառի սոսափյունը գիշերվա այդ ժամին անտառին անսովոր մարդու մեջ գաղտուկ երկյուղ է առաջ բերում: Իսկ ես մտքով սլանում էի դեպի

տարիների հետևը թաղված իմ մանկությունը, երբ նիհիրում էի լեռնային գետակի ափին, ընդարմանում էի նրա միալար ու բազմախորհուրդ վշտոցի ազդեցությամբ: Նա օրորում էր ինձ գորովագույթ մոր նման, և ես երագում էլ լսում էի նրա դյութական ձայնը...

Մենք բարձրանում էինք լեռը: Ճանապարհն ավելի ու ավելի դժվար էր դառնում և հետզհետե հեռանում էր գետի ձայնը:

Երբ Վանոն չորրորդ անգամ վայր ընկավ ու զուսպ տնքաց, ես ստիպված եղա մի թեթև հանդիմանել.

- Այ տղա,- ասում եմ,- Աբովյանի մայրի պես ճամփին որ չես կարողանում քայլել, բա անտառում ո՞նց ես անելու:

- Ուրեմն սրանից է՛լ վատ տեղեր կան,- հարցրեց նա երկյուղով:

- Էն էլ ո՞նց, կածաններ կան, որ մի էջի ոտնատեղի չափ են: Նա, ով գիշերները քնել է հանդերում, ակնակիր գիշերներին փնտրել է գայլից ցիրուցան եղած հոտը, կարող է թանձր խավարի մեջ անտառում ընթանալ անսխալ ու անսայթաթ:

Որսորդությունը նույնպես մարդուս մեջ զարգացնում է կողմնորոշման ունակությունը: Եվ ես իմ դաշտեցի ընկերոջը զարմացնելու միտումով խավարի մեջ թռչկոտելով վազում էի քարքարոտ ու նեղ շավիղով և փորձում էի նրան:

Վանոն դժբախտաբար տեղ-տեղ չորեչորք, քարերը շոշափելով էր շարժվում առաջ, քանի որ ողջ կյանքն Արարատյան դաշտում էր անց կացրել:

Լուսադեմին ձյան բարակ շերտի վրա սկյուռի հետքեր տեսնելով, նա բացականչեց.

- Պահ, էս ինչ շատ աղվեսներ են ման եկել.

Պարզվեց «մինչև հատակը»: Զղջացի, որ նրան բերել եմ հետս:

Հեռվից, լեռների կազմությանն ու վտակների ուղղությանը նայելով, որոշեցի, թե որտեղ կլինի Ուզունլարի ձմեռանոցը: Ձմեռանոցն իրոք ընկած էր սարից եկող երկու վտակների արան-

քում, նրանց միացման տեղից քիչ բարձր:

Տեղ հասանք, նստեցինք առվակի ափին, մի գերանի վրա: Լոռեցիները դեռ չէին եկել:

Ուշ աշուն էր. անտառը վաղուց էր մերկացել: Գեղին խալերով վերջին տերևները ճախրում էին օդում, իջնում առվակի գուլալ ջրերի վրա, տեղ-տեղ էլ հավաքվելով կապել էին առվակի ընթացքը և կլոր ջրափոսեր գոյացրել:

Աշնանային քամին շնկշնկում էր անտառում, քշում-տանում էր դեղնած տերևները, ինչպես տեղացիք են ասում՝ տեղ էր ավելում ձյան համար: Ինչ տխուր է անտառն ուշ աշնանը...

Վանոն բերանը բաց նայում էր անթիվ-անհամար ծառերին ու թփուտներին:

- Էս լաբիրինթոսի մեջ դրս կերևա,- հարցրեց նա:

Եվ իսկապես, անսովոր աչքը դժվար կարող է նկատել եղնիկին ծառերի արանքում:

Վերջապես տեղ հասավ Գալոն՝ Ամոջի որսկանների հետ: Մեկը ջլապինդ ու արևխաշ դեմքով մի երիտասարդ էր, որ մտնելու էր ծակի ամենադժվար տեղերն ու քշելու էր որսը դեպի մեզ, իսկ մյուսը՝ մազոտ երեսով, բարձրահասակ, թիկնավետ մի տղամարդ՝ տաճկական հրացանով:

- Որսին փախցրու, հետո կրակիր, որ ասեմ տղամարդ ես...

Այս խրատը մեզ տալուց հետո այդ մարդը որոշեց մեր անելիքը.

- Կխտարները մեր դիմացի ծակում են: Էն պնդոցում, ուր արև չկա, էն դժվար տեղերն անպայման կխտար կա: Տիգրանը կգնա ներքևից կքշի: Ես, Գալոն ու ընկեր Վանոն կրոնենք էն թամբի պես տեղը, որտեղով կխտարները փախչելու են: Իսկ դու, այ քաղաքացի ընկեր (դարձավ ինձ), դու էլ էս դոշումը արևկող արա ու մոտիկ արա դիմացիդ ծակին: Հենց որ կխտարը հարմար ու մոտիկ երևա, հանգիստ նշան բռնի, ոտը քաշի:

Մենք արագ հաց կերանք ու չոբեցինք-խամեցինք առվակի առնորակ ջրից: Երբ Վանոն պայուսակից հանեց բաժակը

և երկու անգամ ողողելուց հետո խմեց, նկատեցի, թե ինչպես հեգնական մի ժպիտ խաղաց ամոջեցի ծեր որսկանի դեմքին:

Անտառի ձյունը ճեղքելով, թփերից կախվելով, հրացանի կոթը հենարան դարձնելով՝ մեր որսկանները ցրվեցին լեռան հյուսիս նայող լանջին, և յուրաքանչյուրը դեպի իր դիրքը դիմեց:

Ամոթով տեսա, թե ինչպես ընկերս գնում է գնում, բայց դեռ տեղն է. սողում է ցած: Իսկ Տիգրանն արդեն ներքին ձորից սկսել է աղմկելով որսը քշել: Նշաններով մի կերպ հասկացրի Վանոյին, որ մի ծառի հետև նստի, չշարժվի, որ եղնիկները չխրտնեն:

Իմ գործն ամենից հեշտն էր: Ես արևկող էի արել մի ժայռի գլխի ու նայում էի ձորի մյուս կողմի լանջին, ուր որսն է ու որսորդները:

Աշնանային արեգակի մեղմ շոյանքի տակ թմրություն էր իջել վրաս, երբ սթափվեցի հրացանի թնոյունից: Չեք կարող երևակայել, թե ինչպիսի հաճույք է զգում մարդ, երբ լսում է ընկերոջ հրացանի ձայնը:

Հայացքով արագ խուզարկեցի անհամար ծառերի արանքները ու գտա եղնիկին, որ առաջին ոտքից կաղալով վազում էր դեպի վեր: Գալոն արագ շրջվեց դիմացիս ժայռի մյուս երեսը, չոքեց ու մեկ էլ կրակեց: Եղնիկը գլորվեց ձյան մեջ: Մի այլ եղնիկ շփոթված վազում էր դեպի այն ծառը, որի տակ թաքնված էր Վանոն: Որսորդական կանոնի համաձայն, այն ժամանակ, երբ արդեն շուրջկալն սկսվել է, դարան մտած որսորդը ո՛չ միայն ձայն չպիտի հանի, այլև չպիտի շարժվի, եթե նույնիսկ մեղուն խայթելու լինի:

Վանոն, որ չէր նկատել իրեն մոտեցող եղնիկին, կանգնեց ամբողջ հասակով մեկ, դարձավ դեպի ինձ ու գոռաց.

– Վախթանգ, էն ով կրակեց, դու է՛իր...

Այդ ձայնից եղնիկը շանթահարված շուռ եկավ ու թեթև սուրալով կորավ անտառի խորքում:

Ես լսեցի, թե ինչպես Գալոն փնթփնթաց ու թքոտեց և թաքստարանից դուրս գալով, խռոված հոգով գնաց դեպի

սպանված եղնիկը: Որսը վերջացավ:

Դիմացի լանջով այծյամի թեթևությամբ իջան որսկանները, իսկ ես հայացքով հետևում եմ Վանոյին: Դեպի վեր էլի կարելի է չորեքթաթ բարձրանալ, բայց ձյունոտ զառիվայրով անհնարին էր իջնել մի մարդու համար, որն իր ողջ կյանքում քայլել էր հարթ տափարակում:

- Ո՞ր կողմը գամ, ո՞ր կողմը,- ձայն տվեց նա:

- Ուղիղ իջիր ձորը...

Թփերից կախվելով եկավ ու քիչ էր մնում մի բարձր ժայռից վայր ընկնի: Անսովոր մարդը վերից վար դժվար կարող է տեսնել ժայռն անտառում: Ներքևից նայելիս ժայռ է, իսկ վերևից՝ կարծես հարթ զառիվայր: Բայց սովոր աչքը դրանից չի խաբվում: Երբ տեսնում ես առաջիդ ծառերի միայն կատարներն են երևում, այդ նշան է, որ առաջդ ժայռ է, ծառերի բները նրա տակ են: Վանոն անդունդի եզրին էր, որ ես գռչեցի:

- Կանգնիր, առաջդ քարափ է...

Կանգ առավ, կռացավ նայեց ցած ու սարսափով ետ փախավ: Հասկացրի, թե ժայռի ո՞ր կողմովն իջնի, իսկ ինքս իջա ձորը և սկսեցի չոր փայտ հավաքել խարույկի համար:

Երեխայի նման հրճվում է մարդ, երբ վազում է անտառով, կուտակված չոր տերևները խշխշացնելով:

Արևը մայր էր մտել, դեկտեմբերի պարզկա երեկոն էր իջնում, օդը ցրտում էր: Այդ ժամին կրակն այնքան դուրեկան է: Որսկանները մրսած, կապտած երեսներով, ձյունոտ ու թաց ոտներով եկան, մոտեցան խարույկին ու սրտալի «օխայ» արին:

Վերևից լավեց գոռոց, և հրացանը թնդաց չորս-հինգ անգամ:

- Աղա հասեք, կխտարների սուրվին պատահեց տնաքանդը,- ձայնեց ամոջեցի որսկանն ու հրացանը վերցրեց վազեց դեպի վեր: Մենք հետևեցինք նրան: Լանջի կիսին պատահեցինք իմ «որսկան» ընկերոջը՝ սփրթնած դողալիս: Նա մեղավոր երեխայի հայացքով մեզ նայեց ու հասկացրեց, որ չի կարողանում իջնել, օգնության համար է կրակել:

Գալոն իմ տեղակ գետինը մտավ, իսկ ես՝ այդ վախկոտ մարդու: Լուռ իջա ցած:

Մեկ-մեկ կոնյակ խմեցինք, տրամադրություններս բարձրացավ:

- Ադա, կրակը թեժացրեք, աստծու ոտները խանձի: Պահ, պահ, պահ, էս ինչ խորոված ա գալի...

Ու մինչ Վանոն ընկճված ու հետաքրքրությամբ նայում ու հավանաբար մտածում էր՝ թե առանց շամփուրի ոնց ենք խորովածը գլուխ բերելու, Գալոն մասրենու ճյուղերից շամփուրներ շինեց, իսկ ամոռեցի Տիգրանը եղնիկի սիրտն ու ջիգյարը կոտորեց բաշլղի վրա ու աղ արավ:

Նրա կարծիքով ջիգյարը կիսախորով ու արնաթաթախ պիտի ուտել: Քիչ անց շամփուրները վերցրեց կրակի վրայից՝ կիսախորով վիճակում:

- Թողեք խորովի, այդպես անհնարին է մարսել,- բողոքեց Վանոն:

Լոռեցիները քահ-քահ խնդացին:

- Անհնարինը ո՞րն է, այտա, սա է մեր ձեռին, հո մենք չենք սրա ձեռին...

Այդպես էլ Վանոն ոչինչ չկերավ:

Երիկամներն էլ կրակին գցելուց հետո չոքեցինք և մեկ էլ խմեցինք քչքչացող առվակից: Որսկանինն էլ հենց այդ է. հաջող որսից հետո խարույկի մոտ խորոված ուտելը և չոքել-ջուր խմելը մի ամբողջ կյանք է նրա համար: Դրանից հետո ինչ կլինի, ո՞վ կվայելի որսիդ արդյունքը, դա որսկանին չի հետաքրքրում:

Երբ մենք փափուկ տերևների վրա պառկած հանգստանում էինք, կրակի լեզուները երկինք էին բարձրանում, և պաղ փողփողում էին հսկա կաղնու հենած մեր գենքերը: Իսկ լեռնային վտակը շարունակում էր իր ախորժալուր կարկաչյունը:

Իմ որսորդական խմբում մի լավ սովորություն կա. երբ մենք որսից վերադառնում ենք, ոչ-ոք չի կարողանում իմանալ, թե մեզանից ո՞վ է խփել որսը: Իմացան դո՞ւ ես խփել՝ ուրեմն

ընկերոջդ մեջքը գետնով տվիր, նրան ամոթահար արիր:

«Որսկան» Վանոն որսորդական բոլոր կանոններից միայն այդ մեկը լավ յուրացրեց:

Եվ երբ Գալոյի սպանած եղնիկը շալակին հպարտ-հպարտ քայլում էր Աբովյան փողոցով, ծանոթների այն հարցին, թե ո՞վ է սպանել, պատասխանում է լուրջ ու խորհրդավոր դեմք ընդունելով.

– Ասվիլ չի, որսորդական գաղտնիք է...

1934

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐՄ

1

Հրացանը ձեռքիս պատրաստ բռնած իջնում եմ բլրի քար-քարոտ լանջով:

Ներքևում փոված է կապուտակ ու ծիծաղուն Այդր լիճը:

Եղեգնուտում բաղեր երևացին: Սկսեցի զգուշությամբ առաջ գնալ, բայց Ջանգին՝ իմ որսի շունը՝ ինձ մատնեց. բաղերն իսկույն հասկացան, որ ես որսկան եմ: Հենց որ հրացանս մեկնեցի՝ ճղճղոցով թռան: Բայց ո՛ր պիտի փախչեն. կոտորակը հասավ նրանց ետևից և բաղերից մեկը մնաց ջրի երեսին ու թևերը թափահարելով սկսեց տարուբերվել:

Ջանգին թեն շատ փոքր էր ու դեռ կարգին լողալ չգիտեր, բայց ուրախության կլանչներ արձակեց և ջուրը նետովեց:

- Ջանգի, Ջանգի...

Բայց նա ուշադրություն չդարձրեց ու սկսեց լողալ՝ դունչը ջրից վեր ցցած: Ափին մի նավակ կար, նստեցի ու թիավարեցի:

- Ջանգի, դէսը, Ջանգի,- կանչում եմ ես: Ուզում եմ հասկացնել, որ դեպի իմ կողմը լողա: Բայց նա ջրի հետ կովելով դեպի բաղն է շարժվում:

Երբ ես մոտեցա, շունն արդեն վերջին ուժերն սպառած՝ սուզվեց ջրի տակ... Բաղը փոված էր երկու-երեք քայլաչափ նրանից հեռու: Ափսոսացի կորուստիս համար և գլխիկոր նստեցի նավակի հատակին: Հենց այդ վայրկյանին Ջանգին երևաց ջրի երեսին, դլղլացրեց, վերջին անգամ թույլ-թույլ շարժեց ոտներն ու հասնելով բաղին, բերանով բռնեց նրա ոտներից: Բաղն իր թեթև փետուրներով իմ թեթև շանը կարող էր մի պահ լճի երեսին պահել, բայց ջուրն սկսեց լցվել նրա բաց բերանը: Նա խեղդվելով սկսեց ցած իջնել և բաղն էլ հետը ջրի խորքը քաշել:

Ես այնպես ուժեղ թիավարեցի, որ նավակը ոստնեց և ջուրն

արագ պատռելով շանը հասավ այն ժամանակ, երբ միայն բադի գլուխն էր երևում: Բռնեցի թռչնի կտուցից ու կամաց վեր քաշեցի: Զանգին բերանից օդի պղպջակներ արձակելով, դեռ ամուր կախված էր բադի ոտներից:

Երբ իմ որսը ջրից հանեցի, դուրս եկավ նաև Զանգիի գլուխը: Լոշտակ ականջներից վեր քաշեցի ու պատկեցրի նավակի հատակին: Նա աչքերը խփած արագ-արագ շնչում էր:

Էլեկտրական ջրհանում աշխատող բանվորները աղմուկով դեպքի վայրը հասան, Զանգիին ափ հանեցին, կախեցին գլխի վրա, ջուրը քթքալով սկսեց փորից դուրս թափվել:

- Փրկվե՛ց, էլ բան չկա,- հուսադրեց ինձ ջրհան կայանի վարպետ Սամսոնը:

Շունն սկսեց դողալ, ծնոտները կափկափում էին: Ես նույնպես ամբողջովին թրջված էի:

- Տղերք, մի թեժ կրակ արեք,- կարգադրեց վարպետ Սամսոնն ու բադը վերցնելով, հարցրեց.

- Հը՞, բմբուլը քամուն չտամք...

- Խնդրեմ,- պատասխանեցի ես ու սկսեցի շորերս մզել:

Թեժ կրակի մոտ նստած ես չորացնում էի շորերս ու մտածում, թե ի՞նչ համառ որսորդ է այս կենդանին, կյանքը կտա, բայց որսը ձեռքից բաց չի թողնի...

Բայց հաջորդ օրը պարզվեց, որ Զանգին ոչ միայն լավ որսորդ է, այլև լավ ընկեր:

2

Լույսը նոր էր բացվել, երբ վարպետ Սամսոնը ձայն տվեց.

- Քաղաքացի ախպեր, ճաշ դառավ, վեր կաց...

- Էնիկ օրդկները երազում կփրթի,- ծաղրեց գյումրեցի մի բանվոր:

Վեր թռա, հագնվեցի ու Զանգիի հետ դուրս եկանք բարաքից: Տաք աղբյուրների ակունքներում, գետի ափերին, վայրի բաղերը

եռանդուն ետ էին տալիս տիղմը, քրքրում էին մամուռներն ու կեր ճարում:

Ձկնկուլը երբեմն թափով խփում էր ջրին, վայրկենապես դուրս բերում ձկնիկն ու փայլեցնում արեգակի առաջին շողերի տակ:

Եղեգնուտներում վայրի թռչունները ձղձղոց էին բարձրացրել: Քրդական խրճիթների արանքով մոտենում եմ գետին:

Պատանի հովիվը, որ շվշվացնելով, չարաձձի այծերին հայհոյելով, ֆերմայի հոտը դուրս էր անում գոմից, ինձ նկատեց ու զարմացած նայեց:

– Ինչ ես կուչ-կուչ անում, տո՛ւ, – հարցրեց նա քրդերեն:

Ձեռքով նշան արի. լռեց ու սկսեց հետաքրքրությամբ նայել:

Հասա մի քարի, կուչ եկա նրա հետևում և հարմար առիթի էի սպասում կրակելու:

Խելացի շունը փորսող տալով առաջ եկավ, թաք կացավ ոտներիս մոտ և սկսեց անհամբերությամբ մեկ բադերին, մեկ ինձ նայել:

Հրացանը մեկնեցի ու հենց ուզում էի կրակել, մեկ էլ հետևիցս դղրդյուն լսվեց. դինամիտով ժայռ պայթեցրին: Աղբյուրներից, եղեգնուտներից ու գետի կղզյակներից բադերը սարսափահար թռան և օդը լցրին աղմուկով:

Կրակեցի:

Երկու բադ ցած ընկան, մեկը՝ եղեգնուտը, մյուսը՝ ուղղակի գետի մեջ:

Ջանգին վազեց եղեգնուտի կողմը: Երևի գետի միջինը արդեն մերն էր համարում, չէր ուզում մյուսը ձեռքից բաց թողնել:

Բադը շատ մոտ էր ափից. կռացա. հրացանս մեկնեցի՝ չհասավ:

Քիչ էլ առաջ գնացի, կանգնեցի մի փոքրիկ քարի, հրացանիս ծայրը հասցրի բադին և հենց իրանս մի քիչ առաջ մեկնեցի, քարը խրվեց ցեխի մեջ, և ես, կորցնելով հավասարակշռությունս՝ ջուրն ընկա:

Էլ չիմացա ինչ եղավ: Հիշում եմ, որ բերանս լցվեց ջրով ու սկսեցի դլղլացնելով արագ իջնել խոր հատակն ու հեռանալ ավիից:

Զգացի, որ մեկն ուսիցս բռնեց ու վեր քաշեց: Ձեռքերս ու ոտքերս ուժեղ շարժեցի, դուրս եկա ջրի երեսը. Զանգին է, ատամները խրել է շորերիս մեջ ու դեպի ասի է քաշում ինձ:

Խեղձը փոքր էր, շուտ հոգնեց, բայց մի քայլաչափ մոտեցրեց ավիին:

Լողալ չգիտեի, շորերս թրջվել ու խիստ ծանրացել էին: Նորից իջա ջրի տակ և ինձ հետ ցած տարա իմ խեղձ Զանգիին: Նա սկսեց խեղդվել, բայց ինձ բաց չթողեց, իսկ ես նրան ցած էի տանում իմ ահագին ծանրությամբ: Խեղդվում եմ, բայց հրացանը պինդ պահել եմ ձեռքիս:

Մեկ էլ զգացի, որ շունը ինձ բաց թողեց ու բարձրացավ ջրի երեսը: Հետո իմացա, որ բռնել է հրացանի փոկից ու սկսել է լողալ դեպի ասի:

Նա արդեն ամուր հողի վրա կանգնած, ինչքան ուժ ուներ, քաշում էր փոկից: Ոտներով մի անգամ էլ խփեցի ջրին և հասնելով ասի, ուժասպառ ընկա տիղմի վրա: Շունը վազեց դեպի մոտակա տունը և դռան առաջ սկսեց հաչել:

Չանցած մի քանի րոպե, Զանգին վազելով վերադարձավ, իսկ նրա ետևից՝ հովիվ պատանին, որն ինձ տեսնելով սկսեց գոչել.

– Մստո՛՛, կո՛ւռո՛ որե՛՛, կուռո՛ որե՛՛...

Մստոն նրա ընկերներից էր: Նրանք ինձ տարան ֆերմայի հովիվներին հասկացված բնակարանը: Զանգին վազեց գետափ ու բերեց սպանված բադը:

Հավաքվեցին ֆերմայի աշխատողները, մեկը կրակ վառեց, մյուսը՝ թաղիք փռեց գետնին:

Ինձ պառկեցրին թաղիքի վրա, ապա փորս տնտղելուց հետո մի հասակավոր քուրդ գոչեց.

– Տղան տկճոր է դարձել, գլխի վրա կախեցեք:

Կախեցին՝ ինչպես երեկ Ջանգիին էինք կախել, և փորիս ջուրը դատարկվեց:

Երբ մի քիչ ուշքի եկա, գրկեցի իմ հավատարիմ ընկերոջ գլուխը: Նա հասկացավ, ձեռքերս լիզում էր և մտերմաբար շարժում պոչը:

Եկավ և վարպետ Սամսոնը, թավ բեղերի տակ ժպտաց ու նկատեց.

– Հը՛, մեր տղա, քեֆդ լավ չի երևում: Ապա շոյեց շանս գլուխն ու մտախոհ ասաց.– Մարդ սրա նման հավատարիմ ընկեր ունենա՛նք՝ էլ ինչ դարդ կունենա աշխարհում...

1934

ՈՒՐՈՒՐԻ ԲՈՒՅՆԸ

Մի տարի մեր գյուղը գնացի: Մինչ մայրս օջախում կարտոֆիլ էր խորովում ինձ համար, ես բարձրացա գյուղի վերևի բլուրը, ուր սևին տվող ցեղերում հատիկ էին ուտում թռչունները:

Քայլում եմ դեպի ցեղերը և խոր բավականությամբ շնչում գարնան երեկոյի բույրը, ձմռան քնից զարթնած մայր հողի բույրը, և լսում թփերում թառող թռչունների ախորժալուր ճովողունը:

Մեծ ճանապարհին փոշու ամպ բարձրացնելով հանդից վերադառնում է գյուղի նախիրը: Կայտառ ցիլկներն ու երինջները տրտինգ են տալիս, կովի բռնվում իրար հետ, խաղում:

Նախրի հետևից քայլում են մի քանի երեխաներ. նրանց ձեռքերին մանուշակի ու լալազարի «խաչ-փնջեր» կան, իսկ փափախների վրա ադամանդների պես պսպղում են լուսատուիկները: Ամենից վերջը քայլում է մեծ փափախով, միջահասակ մի մարդ, նա իր հետևից հաճարենու մի չոր ձյուղ է քարշ տալիս:

Մոտեցա, խոսեցնում եմ.

- Երեխներ, իսկի կարողանում եք ագռավի բներ քանդել:

- Պահ, էդ դո՞ւ ես... Այ բարձվ, հազար բարձվ,- անակնկալի եկավ փափախավոր մարդը և իր կոշտ ձեռքով ամուր սեղմեց մայրաքաղաքացու իմ փափուկ ձեռքը:

Հոտաղ երեխաները շփոթված կանգնած են, նրանցից մեկը բլուզի թևով սրբեց քիթը, իսկ մյուսը՝ գունատ ու նիհար մի տղա, ամաչելով ինձ մեկնեց լալազարի փունջը: Նրանք ինձ չեն ճանաչում և, հավանաբար, դեռ ծծկեր էին, երբ ես հեռացա հայրենի գյուղից: Իսկ փափախավոր մարդու՝ Ակոփի հետ մի քանի տարի տավար եմ պահել: Ինչպիսի անհամբերությամբ էինք մենք սպասում գարնան բացվելուն, որ ագռավի բներից ձվեր հանենք ու գլորենք թավիշ կանաչի վրա...

- Ճիշտն ասա, իսկի մեր ջահելությունը հիշում ես, թե քաղաք գնացիր՝ մեզ մոռացար,- հարցնում է Ակոփը:

- Ո՞ւց չեմ հիշում... հիշում եմ ու տխրում... Մեր սարերին

շատ եմ կարոտում, շանտ...

- Է, դու էլ կարոտելու բան ես գտել:

- Դուք ձեր բնության գեղեցկությունը չեք զգում, որովհետև նրա մեջ եք: Ես էլ առաջ էդպես էի: Բայց երբ գնացի Դարալագյազի դրոշերը տեսա, երբ Էջմիածնի մոծակները վրա տվին ու շոգը զոռեց, նոր հասկացա, թե ինչ աննման բնություն է ունեցել մեր Դիլիջանը:

- Բա ինչի գերանդին Ավելուկ-ուրթունը վեր գցեցիր, փախար Երևան,- հարցնում է Ակոփը, խուզարկու նայելով ինձ: Երևի կարծում է, թե իրեն մխիթարելու համար եմ գովում իրենց երկիրը:

- Դե էն ժամանակն ուրիշ էր, հիմի՝ ուրիշ... Դու էն ասա, միտդ է ձվերը,- խոսքս փոխում եմ ես:

- Դեռ խոսում էլ եմ, էն ինչ դրիր իմ գլխին, որ մտիցս ընկնի,- ծիծաղելով պատասխանում է նա ու փափախը վերցնելով գլուխն է ցույց տալիս:

- Տե՛ս, դեռ տեղը մնում է...

Սև ու փայլուն մազերի մեջ մի ձերմակ սպի կա՝ մեր գիծ մանկության հետքերից մեկը: Այն ժամանակ այս բրդոտ ու կոպիտ մարդը կարմրաթշիկ և կենսուրախ մի պատանի էր:

Այնտեղ, ուր վերջանում է անտառը և սկսվում են լեռնային արոտները, փովում ու հանդարտ արածում էր գյուղի նախիրը, իսկ մենք մագլցում էինք կաղնիների կատարը ու ագռավի պուտ-պուտ կապտավուն ձվեր էինք հանում: Անտառը լցվում էր ագռավների կոկոռոցով, ով էր ուշադրություն դարձնողը:

Մի անգամ էլ մի մեծ կաղնու կատարին ահագին բույն տեսանք և իսկույն հասկացանք, որ ագռավի չէ:

Ասի.

- Ակոփ, բարձրացիր:

Դա, թե.

- Էդ խելքին քանի ավապեր եք... Թե լավ է, դո՛ւ բարձրացիր: Ասի.

- Ինչ վախկոտն ես, տո՛ր:

Դա թե՛.

- Բա որ դու սրտոտ ես, ինչի՞ չես բարձրանում. էնտեղ իսկի սատանան էլ չի հասնի:

- Տո սարսաղ,- սկսեցի համոզել ես,- իսկի հասկանում ես, որ վայրի սագի բույն է... Հիմի մեջը լիքը սպիտակ ձվեր են, ամեն մինը գլխիդ չափ: Զատիկը գալիս է՝ կեփենք, կներկենք,- կշրխկացնենք... Իսկի Միխակի ձուրթած ձվերն էլ չեն դիմանա դրանց, բոլորն էլ կջարդենք-կտանենք:

Ինչ սագ, ինչ բան, փչում էի:

Այդ հեռանկարից Ակոփը սկսեց տատանվել: Իր ժամանակով ով տավարած է եղել, կիմանա, թե մենք ինչպիսի անհամբերությամբ սպասելիս կլինեինք զատկին՝ ձու կովեցնելու այդ երանելի օրերին, և կիմանա, թե ամուր ձուն ինչ գին կունենար տավարած պատանու աչքում:

- Ասում ես ղազի ձուն էդպես պի՛նդ է որ,- միամտորեն հարցրեց Ակոփը:

- Բա՛, էն էլ ո՛նց... Արձիճ լցրած ձուն ի՛նչ է նրա դիմաց,- փչեցի ես:

Նա գլուխը քորեց, նայեց ծառի բարձր կատարին, տատանվեց, ապա թքեց ափերի մեջ ու սկսեց մագլցել:

- Բայց քո բաժնից մինը ինձ կտաս,- վերևից ձայն տվեց նա:

- Դու բեր, հետո հեշտ է, մի բան կանենք...

Ակոփն անտառի զավակ էր: Նա վայրի կատվի նման արագ ու թեթև մագլցեց, հասավ ծառի կատարը, ձախ ձեռով բռնեց փափախը, աջով բնից մի ճերմակավուն ձու հանեց, խփեց ատամներին ու հրձվանքով բացականչեց.

- Պահ, քո տերը չմեռնի, ձու հո չի, իսկական դոչի ձակատ է: Դե հիմի թող լոպազ Միխակը գա, տեսնենք ում մերը լաց կլինի...

Ու սկսեց ձվերը մեկիկ-մեկիկ բնից հանել ու տեղավորել փափուկ փափախի մեջ:

Ես ներքևում ուրախությունից գլուխկոնծի տվի, մեկ էլ հանկարծ թևերի աղմուկ լավեց և ահագին մի ուրուր ամպերից նետվեց ընկերոջս վրա:

– Վայ, նանի ջան, ինձ կերավ,– գոռաց Ակոփն ու մի ձեռով սկսեց պաշտպանվել: Գազազած թռչունը իր հզոր ձիթանները խրեց տղայի ուսը և կեռ կտուցով սկսեց հարվածել նրա բաց գլխին: Ակոփը հովազից բռնված կապկի ձագի նման ձղձղաց, իսկ ես ներքևում հարայ–հրոց եմ բարձրացրել, դեպի վեր փայտի կտորներ եմ շարտում, որ ընկերոջս ազատեմ:

Թռչունը տեսնելով, որ տղան ձվերը բնի մեջ չի դնում, իր ապագա ձագերին փրկելու համար կյանքի ու մահվան կռիվ սկսեց իր թշնամու դեմ: Նա բարձրացավ ամպերը, նոր թափ առնելու համար, իսկ ես ձայն եմ տալիս.

– Վեր արի, Ակոփ ջան, լաց մի ըլիլ, վեր արի:

– Բա որ էլի գա, ձվերն ինչ անեմ,– արցունքի միջից հարցրեց նա, ամպերին նայելով:

– Որ գա, դու ձվերը պինդ պահի, մնացածը հեշ,– խրախուսեցի ես:

Ուրուրի ձու է, է, մասխարություն չի, ո՞ր հավի ձուն կդիմանա նրան,– մտածում եմ ես, սրտատրոփ վեր նայելով, իսկ Ակոփը մի ձեռքով փափախը բռնած, մյուսի օգնությամբ խուճապով իջնում է: Դեռ ծամի կեսը չէր հասել, երբ ուրուրը ամպերից ուժ առած ցած նետվեց և ռունքի նման խփվեց ընկերոջս: Հարվածին հաջորդեց, աղիողորմ մի ձիչ, ձվերը ճյուղերին դիպչելով ջարդվեցին, կձեպ–ները ցած ընկան, իսկ լարծուն պարունակությունը կախկախվեց տերևներից: Իր մոթալ փափախի հետ գլխի վրա ցած եկավ նաև իմ ընկեր Ակոփը: Ընկավ, գրխկաց, լռեց ու կապտեց:

– Վախես ոչ, Ակոփ ջան, ես էստեղ եմ, վախես ոչ,– սարսափած գոռացի ես: Էլ ինչ «վախես ոչ», տղեն ձեռից գնացել է: Փափախը վերցրի, վազեցի ձորը, թրջեցի առվում ու բերի մզեցի ուշաթափվածի գլխին: Որ ջուրը գլխին լցրի, Ակոփը աչքերը ձայնացրեց, ու դողդողացող շրթունքները արտասանեցին.

- Էս ինչ էր... Էս ո՞րտեղ ենք...

Ասի.

- Որտեղ որ ենք, ես քեզ հետ եմ, վախեն ոչ...

Ասում եմ, բայց ինքս վախից դողում եմ:

- Ակոփի գլուխը պատռվել էր: Հին կրակատեղից մի պտղուց մոխիր բերի, լցրի վերքի վրա ու բաշխողովս պինդ փաթաթեցի:

Ակոփը հիմի այդ վերքի տեղն էր ցույց տալիս ինձ:

- Ափսո՛ս մեր ջահելությունը... անց կացավ...- տխուր ասաց նա՝ գլուխը ծածկելով:

1935

ՎԱՅՐԻ ՄԵՂՐԻ ՈՐՍՈՐԴԸ

Լոռեցի Մեսրոպ ապալի պատմությունը

1

Տարեցտարի մեր կոլխոզը պնդեց. մեր ֆերմաներն աճեցին, ու մեր էն սիրուն սարերը, էն ծաղկոտ ուրթերը լցվեց ոչխարով: Ոչխար եմ ասում, է, դմակի ծանրությունից ոտների լուկեքը չեն դիմանում:

Ու երբ սարն եմ բարձրանում ու տեսնում եմ էդ չալտիկ հորթերին, էդ պախրի պես երինջներին, էդ շարմաղ ուլերին ու գառներին, էդ լեն ու բոլ խոտհարքներն ու ասլան-մաշինեքը, սիրոս գվարթացած մտնում եմ մեր կոլխոզի նախագահի վրանն ու ասում.

- Արամ ջան, հիմի էլ հո մենակ չենք, ահագին մեծ ընտանիք ենք դառել. բեղերը ծող շիմշատ տղերք էլ ունենք, կխտարի պես աղջկերք էլ, ախր աշունք է գալի, դրանց հարսանիքն էլ պիտի արվի, դրանց հարսանիքի սեղանին քաղցր մեղր էլ է պետք...

Արամը թե՛

- Մեսրոպ ապի, բան չեմ հասկանում, հարսանիք է պե՞տք՝ կանենք. մեղր է պե՞տք՝ կառնենք, շուկան լիքն է...

Էստեղ ես դրա խոսքը կտրեցի.

- Չէ՛, ապի, Արամ ջան, էդ չեղավ. էս ծաղկոտ, սիրուն երկրում ես ինչո՞ւ պետք է շուկայիցը մեղր առնեմ, թող շուկան ինձնից առնի: Դենը լսիր. դու արի մի տասը-քսան փեթակ առ, ես մի տարում քու կոլխոզավոր խալխին լիացնեմ մեղրով:

Դա թե՛

- Մեսրոպ ապի, ես գիտեմ, որ դու ձանձի լեզուն լավ գիտես, թե դրանից բան դուրս կգա՝ կառնեմ:

Ես պատասխանեցի՝

- Դու ան, մնացածը Աբրահամի տղա Մեսրոպի բանն է:
Էդտեղ էր Ֆերմայի ավագ հովիվ Չատնանց Մաթոսը: Դա էն կողմից վրա բերեց թե՛
- Խելքդ հացի հետ ես կերել, տո՛ւ, փող ունեք, ոչխարի վրա ծախսեցեք, ճանձն ի՞նչ է, որ մարդ ճանձին փող տա:
- Ասի՛
- Մաթո՛ս, այ, աշխարհքը մեղրով կլցնեն, որ սատկես էլ՝ մի կաթիլ չեմ տա:
- Դա թե՛
- Դու չոբաններիս շաքարը չկտրես՝ ճանձին տաս, քու մեղրը մեզ պետք չի:
- Դե Մաթոսը սարում մեծացած բռի մարդ է, նրան ի՞նչ ասես: Արամ ասածս էլ մարդ հո չի, կրակ է, կրակ: Խոսքը բերանիցը դուրս եկա՞վ՝ չի թողնիլ սառչի, կկատարի:
- Մեր գեղի վերև, անտառի մեջ մի սիրուն, ծաղկոտ բացատ կա: Արամը քսանհինգ արկղ մեղու դրեց էդ բացատում, մի տախտակ տնկեց, վրեն կարմիր ներկով «**Մեղվաբուծական Ֆերմա**» գրեց, ինձ էլ էդ Ֆերմայի վարիչ նշանակեց ու ասաց.
- Դե, քեզ տեսնեն, Մեսրոպ պապի, մեզ սևերես չանես:
- Դա որ մեղու առավ, Չատնանց Մաթոսն սկսեց էստեղ-էնտեղ փնթփնթալ, դժգոհել թե՛
- Այ խալխը, բա մարդ էլ էս բողոճներին փող կտամ...
- Դրա էդ խոսքը վառեց ինձ, մտքումս ասում եմ՝ «Կանց, Չատնանց Մաթոս, կտեսնես, թե էս բողոճներով ո՞նց եմ աշխարհքը զարմացնում: Դեռ իմ մեղրի հոտին դալի՛ պես դունչդ տնկած կգաս»:

2

Սիրտս ու հոգիս դրի էդ փեթակների մեջ՝ գործն առաջ գնաց, Ֆերմաս ուժեղացավ: Տարին հաջողակ էր, Ֆերման քառասուն

1 Դալա - կզաքիս, թանկագին մորթի ունեցող և մեղր սիրող կենդանի է:

արկղ դառավ, ամեն արկղից էլ համարյա փութ ու կես մեղր հանեցի: Հիմա մեղր եմ ասում, է, ոնց որ դեղին խունկ:

Հենց որ աշունքացավ, գործից պրծանք, մեր կոլխոզի ջահել չորֆաններից մեկին հարսանիք արինք: Դեղին մեղրահացերը շարել էին սեղանների վրա. համա մեղր եմ ասում, հա՛:

Էդ կոլխոզավոր խալխը մեղրով լիանում է, ես էլ սուփրի ծերին նստած՝ քեֆս գալիս է ու ինձ ու ինձ մտածում եմ. «Աբրահամի տղա Մեսրոպ, ուրեմն դու էլ պետք եկար ժողովրդին, ուրեմն փափագդ կատարվեց, է՛լի...»:

Որ մեղրս գովեցին, ափ՛

– Տղերք, էս հլա նուբարն¹ է, մեղրը դուք հետո կտեսնեք... Բեղերս կկտրեն, որ գեղը չհեղեղեմ մեղրով, ինձ ճանձի որսկան Մեսրոպ կասեն:

Հենց էդ ասելս ու Չատնանց Մաթոսի ներս մտնելը մեկ եղավ:
Ափ՛

– Մեծաբերան Մաթոս, էս բողոճի ծերտի հետ ո՞նց ես:

Հարսանքավորները ծիծաղեցին, դա նեղացավ, մեղրին մոտ չեկավ:

Ափ՛

– Լավ, Մաթոս, անցածն–անցած է, մեղր անուշ արա:

Դա թե՛

– Ոչխարի արաժանը թողած՝ մեղր եմ ուտելո՞ւ:

Հաստակող սարեցի է. չի ուզում մեջքը գետնովը տա:

3

Արդեն ուշ աշուն է, ձյուն է եկել, համա ես էլի իմ ճանձերի հետ եմ և անընդհատ ոտիս վրա հա՛ ծածկում եմ, հա՛ ջերմաչափը դնում, մի խոսքով, գլուխներդ ինչ ցավացնեմ, իսկի հարազատ մերն էլ չէր իր երեխեքին է՛նպես մտիկ անի, ինչ ես էի էդ մեղուներին մտիկ անում:

¹ Նուբար - առաջին համտես:

Մի առավուտ էլ մեղվանոցը գնացի ու, հանկարծ, ոնց որ ճակատիս գյուլլա տան. տեսնեմ մի արկղի առաջ սատկած մեղուներ ու մոմի կտորներ կան թափթփված:

Փեթակը բաց արի ու ինչ տեսնեմ. էդ անտերն արկանոցը¹ կրծել-լայնացրել է, թաթը ներս կոխել, մեղրահացերի մի մասը կտոր-կտոր հանել է լափել, մնացածն էլ իրար խառնել, ու էդ թալանի ժամանակ ահագին ճանձ է կոտորվել: Սիրտս ցավից տնքաց ու տեղն ու տեղը երդում կերա.

- Ես Աբրահամի տղա Մեսրոպը չլինեմ, թե քո կաշին չքերթեմ:

Դալի արած դալաթն էր:

Նոր նստած ձնի վրա դրա իզը² տեսա: Երևում է, որ պտտվել է մեղվանոցի շուրջը, հետո սնով վեր է բարձրացել, ծակին խցկած խտոր դուրս է քաշել ու ընկել մեղվանոցը:

Էդ օրը թալակը³ լարեցի մեղվանոցի ծակի առաջ:

Գիշերը քունս չտարավ, ուշքս ու միտքս մեղվանոցի կողմն է:

Լուսադեմին դեռ հեռվից տեսա, որ դալեն ոտը թալակումը թափ-թափ է անում, որ փախչի:

Ասի՛

- Հո կաշիդ հանեցի: Ասացի ու վրա հասա, որ բռնեմ կաշին քերթեմ, մեկ էլ տեսնեմ թալակն ընկածը մեր կատուն է:

- Պահ, քո տերը չմեռնի...

Խեղձի ոտը ջարդվել էր:

Սիրտս ցավեց, թոռս էլ տեղ հասավ ու սկսեց լացուկոծ անել, թե՛

- Իմ փիսիկի ոտն ինչի՞ ես ջարդել:

Դրա խաթրն առնելու համար ասի՛

- Վաչիկ ջան, լաց մի լինի, էգուց դալեն կընկնի, մորթին կտանեմ որսորդական խանութը, մի սիրուն ելիսապետ⁴ կառնեմ

1 Արկանոց - անցք, որով ելումուտ են անում մեղուները:

2 Իզ - հետք:

3 Թալակ - թակարդ:

4 Ելիսապետ - հեծանիվ:

քեզ համար:

Վաչիկս ձեռնը կտրեց–հանդարտվեց, իրեն վիշտը մոռացավ ու անհամբեր սպասում էր մյուս օրվան:

Հենց որ լուսացավ, Վաչիկիս հետ մեղվանոց գնացինք, տեսանք դալեն եկել է, թալակի շուրջը պտտվել: Ինչպես երևում է երկաթի հոտն առել ու հասկացել է, որ էստեղ վտանգավոր բան կա: Դրանից հետո մի քանի օր շարունակ դալեն գալիս էր իր հոգեառի շուրջը պտտվում ու առանց փեթակներին ձեռ տալու գնում:

Հետո մի ամբողջ շաբաթ չերևաց, ու ձինը ծածկեց թալակում դրված մսի կտորը:

Թոռս էլ ամեն օր հոգիս հանում է իր հարցումներով. «Պապի՛, բա հեծանիվ է՞րբ ես առնելու... Բա դալին է՞րբ ես բռնելու...»:

4

Դեկտեմբերի մի առավոտ մեղվանոցի մոտ նորից երևաց դալի ոտնատեղը: Վաչիկիս վերցրի ու դրա հետքը բռնեցի դեպի անտառ. ո՛նց եմ գնում: Ճամփին մեր կոլխոզի նախագահը պատահեց:

– Ո՛ւր, Մեարոպ ապի:

– Գնում եմ դալին տիկ հանեմ:

– Մեարոպ ապի,– ասում է,– արի ձեռ քաշի դու դրանից, դա հիմի օխտը սարի քամակին է, քո բանը չի, թող ջահելները գնան: Ասի՝

– Առաջինը՝ թող օխտը ջահել դուրբան լինի Աբրահամի տղա Մեարոպին, էդ դու լավ իմացիր: Երկրորդն էլ՝ հանաք բան չի, է՛, համայնական մեղր է կերել, մինչև ես դրա քթածակերիցը չհանեմ, ջանս դինջանալ չի:

– Էդ բանը գլուխ գալու չի,– պատասխանեց Աբամը և ուզում էր գնալ, դրա թևիցը բռնեցի:

– Կաց,– ասի,– նախագահ ես, համա ջահել ես, կաց, սովորի:

Ախր դալեն, որ սաղ գիշերը մինչև լույս սար ու ձոր ոտի տակ է տալիս, ծառերն է բարձրանում, փչակներն ու քարերի տակերն է ակն տալի, իսկի մտածե՞լ ես, թե դրա տենդն ինչի՞ համար է:

- Ինչի՞ համար:

- Մեղրի համար է, մեղրի՛, տերը չմեռնի մեղրի, նրա կարոտից անասուններն էլ են վառվում: Էէէ, ջահել ժամանակս դալի հետքով ինչքան եմ մեղր գտել... Միտո՞ է իմ փեթակները, էս կողմերում հո էդպես մեղվանոց չկար: Միտո՞ է, որ տասնինը թվականին մաուզերիստները փեթակներս ջուրը քաշեցին հանգցրին ու մեղրը տարան... Ախր, էդ մեղվանոցի հիմքը անտառից բերած մեղուներով էի դրել, է՛ն մեղուներով, որ գտնում էի դալի հետքով: Չէ՛, Արամ ջան, դու գնա բանիդ, մինչև ես նրան տիկ չհանեն ու կերած մեղրի տասնապատիկն էլ չբերեմ, հոգիս չի հանգստանալ, ինձ որսկան Մեսրոպ կասեն...

...Դալի հետքը բռնած մինչև ճաշը սար ու ձոր ոտի տակ տվինք, չհասանք դրա բնին: Էդ անտերը մի գիշերվա մեջ էնքան է ման գալիս, ինչքան որ մարդը երկու օրումը ման կգա: Տերը մեռնի մեղրի, էդ նրա՛ գորությունն է քաշում, վայրի մեղր է փնտրում...

Դե դալի հետքն էլ հո բոլորիդ ծանոթ է. կարծես սար ու ձորով մի անվերջանալի սիրոն հաշիա՛ ձգված լինի, քանի որ դալեն առաջին ոտներն էլ հետևինն էլ ջուլստ-ջուլստ իրար հետ է գնում, ու նրա հետքը սիրուն շարվում է նախշի պես:

Վերջապես մի ձորում տեսանք, որ մի մեծ կաղնու տակ հետքը կտրվում է: Գլխի ընկա, որ դալեն ծառն է բարձրացել: Ներքև նայեցի՝ ծառի տակ, ձնի վրա մեղրամոմի կտորներ կան թափված: Էդ է, որ կա, ուրեմն մեղրը գտել է:

Ասի՛

- Վաչիկ ջան, դու կաց, էս է մեղրը բերում եմ:

Ասի ու փեշերս հավաքեցի ծառը բարձրացա, տեսնեմ մի դատարկ փչակ, մեջը հին մոմի կտորներ, սատկած-չորացած

1 Հաշիա – ժանյակ:

ճանձեր, ինչ-որ կենդանու մազեր: Հասկացա, որ մի ժամանակ էդտեղ մեղվի ընտանիք է եղել, արջը մեղուն հանգցրել է, մեղրը կերել: Հիմի էլ դալեն տեսել է մեջը բան չկա՝ թռել է հարևան ծառի վրա, էստեղից էլ ներքև ու կորել:

Հույսս կտրած ասի՝

– Վաչիկ ջան, բան չկա, տուն գնանք:

Ասի, մեկ էլ տեսա հետքը Քարկապի կողմն է գնում:

Նորից դրա հետքն ընկանք, գնացինք:

Ասի՝ գուցե մեր բախտից Քարկապում մի քարի տակ մտած լինի: Գիտեմ, որ դալեն սաղ գիշերը ման գալուց հետո ցերեկը կամ ծառի փչակում է քնում, կամ՝ քարի տակի խոր ծակերում: Հասա Քարկապը, մեկ էլ ըհը՞, հետքն ուղիղ գնում է մի քարի տակ: Նրա ձնոտ ոտնատեղերը ծակի առաջ, չոր հողի վրա տեսա ու քեֆս բացվեց: Ասի՝

– Վաչիկ ջան, հիմի որ ասլան պապիդ ձեռիցը պրծնիլ չի:

Ման եկա, էդ քարափի ծակ ու ծոփերից չոր տերևներ հանեցի լցրի դալի բույնը, վառեցի ու փչեցի: Ծուխը սլնալով ներս գնաց, ու քարափի խորքիցը մի տեսակ բխկոց, հազոց, խզոց եկավ:

Ասի՝

– Վաչիկ ջան, ելիսապետդ եկավ...

Երեխեն, որ մինչև էդ ձնից ու ցրտից կուչ էր եկել, ուրախութունից սկսեց ծուլ-ծուլ լինել, դալմադալ անել:

Բայց դե գործն էնքան էլ լավ չգնաց: Կռացա, որ մեկ էլ փչեմ կրակին, ծուխը լավ ներս գնա, մեկ էլ անտերը դուրս պրծավ, խանձվելով դիպավ ճակատիս, կրակը ցրիվ տվեց, բեղերս խանձեց ու ներքև թռավ: Երեխեն ինձանից ներքև էր: Էդ անտերը թռավ, որ իրեն ձորը գցի՝ դիպավ երեխու դռշին: Խեղճ երեխեն լեղաձաք եղավ, վեր ընկավ ու գոռգոռաց: Հենց դա վեր ընկավ, ես դրա գլխովը թռա ու շշկլած դալի բկիցը բռնեցի (դե իմ հունարն էլ հո գիտեք...):

Բկիցը բռնեցի ու ասում եմ.

– Էլ դես ու դեն մի ընկնիլ, ասլան Մեսրոպի ձեռիցը քեզ

էլ փրկություն չկա: Դու ինձ վառել ես. մինչև կաշիդ չհանեն՝ դինջացողը չեմ:

Մի խոսքով, մյուս օրը դալեն կախված էր որսորդկոռպի խանութում, իսկ իմ Վաչիկը բակում աշխարհք էր գարմացնում իր ելիսապետով:

5

Մտանք հունվար: Ձմեռը սաստկացավ, քամին ձինը մեղվանոցի ձեղքերից ներս էր լցնում: Ես փեթակները ծածկել եմ թաղիքով, փալասներով, շուտ-շուտ ջերմաչափն եմ ստուգում, մեղուների ձմեռվա պաշարն եմ ստուգում: Չէ, ամեն ինչ կարգին է:

«Չատնանց Մաթոս, թե մի գարունը հաջող կբացվի, կմտնենք բերքառատ աման, գեղականին էնպես մեղրով լիացնեմ, որ աչքերդ բաց մնան»:

Մի անգամ էլ էդ մտքերով տարված մեղվանոց մտա ու... աչքերս մթնեցին: Էլի էդ տերը մեռած դալեն փեթակներից մեկը փչացրել է: Ինչ անեմ, մտիկ եմ անում սաստկած ճանձերին, նրանց քանդված բնին ու գլխիս կրակ է մաղվում: Իմ ցավը հերիք չի, Չատ նանց Մաթոսն էլ մի կողմից է փնթփնթում թե՛

- Բա որ ասի էդ ճանձերից գատ չի դուրս գալ...

Ասի՛

- Մաթո՛ս, գիշերհանա ագռավի պես կռավիլ մի, բա իսկի քո ոչխարիցը մեկն ու մեկը քարափիցը վեր չի ընկնում...

- Վեր է ընկնում՝ աբրշումի պես բուրդը պետությանն ենք տալիս, միսն էլ խորոված ենք անում... Դե դու սաստկած ճանձերը կեր, տեսնեմ ոնց ես ուտելու:

Ասում է ու փառ-փառ ծիծաղում: Դե, ինչ արած, իրավունք ունի:

Սիրտս դաղված մեղվանոց գնացի ու թալակը լարեցի: Մի քանի օր սպասեցի՝ բան դուրս չեկավ: Անքուն գիշերներից

աչքերս ուռել է, ստածում եմ. ո՞նց թե եկող տարի Չատնանց Մաթոսը Մոսկվա ցուցահանդես գնա, մեդալը դռշին ետ գա. բա ուրեմն իմ գլխին փափախ չկամ:

Էլի Վաչիկիս վերցրի ու հետքը բռնած, ճամփա ընկա դեպի սարերը:

Թոռս հասակով կարճ էր: Հակառակի պես էդ տարին էնքան ձին էր եկել, որ երեխեն խրվում էր մինչև գոտկատեղը: Ես ձնի միջից դրան դուրս էի քաշում, թափ տալի, էլի էինք գնում, էլի խրվում: Էդ անիծված դալեն էլ հակառակի պես ծնակի ամենադժվար տեղերով էր գնացել: Տեղ–տեղ ծառերն էր բարձրացել, փչակները ստուգել էր ու էլի առաջ գնացել, տեղ–տեղ թաթերով ձինը ետ էր տվել, ուտելիք փնտրել, էլի տենդով բռնված առաջ վազել, որ մինչև լուսանալը մեղր գտնի:

Քափ–քրտինքի մեջ կորած, լեզուներս հանած գնում ենք, մեկ էլ հետքը մի տեղ գիրթ կտրվեց: Վերև մտիկ անեմ տեսնեմ՝ մի չորացած աճարի ծառ՝ գլուխը կտրած:

Ծառին թխկթխկացրի՝ մեջը փուչ է: Համա փչակը խոլ, ծանր ձեն է տալիս, հասկացա, որ մեջը լիքը մեղր է:

– Պապի ջան, քո հեծանիվն էլ եկավ,– կանչեց թոռս:

Ասի՝

– Այ լակոտ, ձենդ կտրի, տեսնենք ինչ ենք անում:

Ախր որսորդ մարդն էդ ժամանակ գազազած է լինում:

Ծառը բարձրացա: Ոնց որ ասացի՝ ծառը փուչ էր ու գլուխն էլ կտրված: Մի հրաշք բան տեսա. էդ ծառի կտրած գլուխը մեղրա–մոմով սիրուն սվաղած էր: Մտքումս ասում եմ՝ Չատնանց Մաթոս, մի արի էդ բողոճների խելքին մտիկ, է՛, փչակի վերևի ծակը մոմ են լցրել–սվաղել, սիրուն կտուր շինել, որ անձրևաջուրը իրենց բույնը չթափվի:

Դալեն ծակել էր էդ մոմե կտուրը, ներս ընկել, մինչև բուկը մեղր էր կերել ու հենց մեղրահացերի մեջ էլ քնել: Ցրտից կուչ եկած ճանձերը չէին էլ պաշտպանվել:

Մոթալ փափախս խրեցի էդ ծակն ու ձեն տվի՝

- Վաչիկ ջան, հիմի որ դալեն մերն է:

Ներքև իջա, տեսնեն ծառի դռշին մոմով ծածկված մի ծակ. արկանոցն էր: Կացնով տաշեցի, էդ ծակը լայնացրի: Դալեն զարթնեց ու խրթխրթալով վերև բարձրացավ, տեսավ կտրի ծակը փակած է, էլի ետ եկավ:

Ասի՝

- Կանց, սիրելին, հիմի կոլխոզի մեղրը ես պնչներիցդ կհանեմ:

Էդ որ ասացի՝ մեր Վաչիկը ներքևում սկսեց ուրախությունից ձնի վրա պար գալ:

Ձեռս փչակը կոխեցի, դալի թիկունքիցը բռնեցի ու դուրս քաշեցի: Ես որ դրան դուրս քաշեցի, մեր էդ մոզին ներքևում ուրախությունից ձնի մեջ գլուխկոնծի տվեց, վեր ընկավ: Էդ անտերն էլ մեղրոտ ճանկերը գցել է ձեռքիցս, կռացել է ու ատամները խրել բուր մատիս մեջ: Ասի՝

- Այ լակոտ, էս անտերը մատս պոկեց, ինչ ես դալմադալ անում...

Համա բուր չէ, որ սաղ ձեռքս էլ պոկի, իսկի բաց կթողնեմ որ: Ինչքան ուժ ունեի սկսեցի ձեռս պտտել օդում: Էնքան դրան պտտեցի, որ շմեց, մատս բաց թողեց: Հետո գլուխը ծառին խփեցի՝ մեկ, երկու, երեք, մինչև որ մեղավոր հոգին ավանդեց:

Ծառը կտրեցի, վեր ընկավ ու փորը պատռվեց: Ոնց որ խանչալով պատռես Բորչավլի երկար սորթի ձմերուկի փորն ու դեղին միջուկը երեսիդ ծիծաղի, էսպես էլ ծառի պատռված փորից դեղին մեղրահացերն են աչքով անում, խելքամաղ անում մարդի:

Մեղրը դուրս տվի, համա մեղր եմ ասում, է, մի չտեսնված բան էր. սպիտակ, համրվ, հոտով... մեղր չէր, մի գժվելու բան էր: Էդ անտերը որ արևի տակ ծոր էր տալիս, էն ավազի պես, մեր սարերի էն շաղի պես պսպղում էր: Շատ ուժեղ ճանձ էր, համարյա երեք փուր մեղր հանեցի:

Որ տուն եկանք, ասի՝

- Արամ, բերի՛, թե չէ:

Ասաց՝

- Կեցցեն, Մեսրոպ ապի, բերիր:

Ասի՝

- Դե Չատնանց Մաթոսի կռավոցը կտրիր, թե չէ աշխարհքը գլխին կհավաքեմ:

Գրասենյակում ծիծաղեցին:

Էդ մեղրը տարա մեղվանոց, մի մասը դրի դալի վնասած փեթակումը, մնացածն էլ բաժանեցի թույլ փեթակների վրա:

Արամն էդ բանն իմացավ ու վրես շատ նեղացավ:

Ասում է՝

- Մեսրոպ ապի, չարչարվել ես, քո տունը տար:

Ասի՝

- Չէ, Արամ ջան, առաջ գյուղի վնասը կծածկենք, հետո մեր մասին կմտածենք: Համ էլ տանն էնքան մթերք ունեմ, որ կիսին չեմ արժանի: Իմ հոգին էլ էս ճանձերի հետ է, թող ուժ առնեն, գարունքը բռնալով աշխատեն, էս կոլխոզավոր խավխին լիացնեն, մուրագս կատարվի, էլ ուրիշ դարդ չունեմ:

6

Գարունքացավ, ճանձերիս դզզոցը սաղ աշխարհքը բռնեց: Ամառնամուտին բերում են, ո՛նց են բերում. մեր սարերում ինչքան անմահական բան կա օրն-օրին գալիս է փեթակները լցվում: Ա՛յ, իսկական կոլխոզ...

Տերդ մեռնի մեղր, մագնիսի ուժ ունի էդ անտերը, էլ գող, էլ դալա, էլ աղվես՝ ամեն օր դոնաղ էին գալիս մեղվանոցիս:

Ասենք, էդ իմ մեղքիցն էր, որ չորս կողմից վրա էին տալիս. ախր մեղր չէր է, հոտը սաղ աշխարհքը բռնել էր. դարչնի, մելխակի, զանջաֆիլի հոտն ինչ է դրա առաջ: Ու էդ անուշ հոտը շշմեցնում էր թե մարդի, թե գազանի ու մինչև անգամ Չատնանց Մաթոսին:

Բան, էդտեղ է ճանձի որսկան Մեսրոպի հունարը, հան...

Բայց դե մեր Արամն էլ ավնագի պես կտրուկ տղա է: Պահակներ դրեց՝ արջին սպանեցին, գողերին բռնել տվեց, աղվես ու դալա բռնելն էլ հո ուստա Մեսրոպի բանն է. թալակ դրի, բռնեցի, դրանց կաշին քերթեցի, մեկը պառավիս վիզը գցեցի, մեկն էլ հարսիս:

Աշունքը մեղրին էլ տեղ ու դադար չեղավ: Ապրեն իրանք, դրա ճամար ինձ Մոսկով ուղարկեցին:

Մաթոսն էլ եկավ, մարդը ոչխարը լավ էր պահել: Մեղալները դռններիցս կախ արած ետ եկանք Մոսկովից, սաղ գեղը դուրս թափվեց, Արամն էլ եկավ դիմավորելու, եկավ գրկեց ու ասաց.

- Կեցցեն, Մեսրոպ ապի, քեզ հալալ է: Հետո մտիկ արավ դռշիս մեղալին թե՛

- Էս ո՞նց է, քո մեղալը Մաթոսի մեղալիցը մեծ է:

Էստեղ Մաթոսը կարմրեց ու կմկմաց թե՛

- Ախպեր, Մեսրոպը տարավ, դրա բողոճներն իմ դռներին հաղթեցին...

Հիմի, ախպեր ջան, մեղվանոցս բռալով աշխատում է, փեթակները քաղցր մեղրով են լցվում, իմ գրքույկն էլ՝ տառուգ աշխօրերով:

Ու էդ մեղվանոցի շտրիիվ տարի չի լինում, որ հինգ-վեց դալա տիկ չհանեն:

Ձմեռվա էն ազատ օրերին էլ, երբ ճանձերս հանգիստ քնած են, գեղի ջանելներին հարսանիք եմ անում, դեղին մեղրահացերը շարում եմ սեղանին ու սաղ գեղականին լիացնում անմահական մեղրով...

1935

ՄԻ ՉԱՐԱՃՃԻ ԿԵՆՌԱՆՈՒ ՄԱՍԻՆ

1

Ամեն կեսօր մենք լողանում էինք Սևանի ջինջ ջրերում, պառկում ավազի շեղջերի վրա և կլանում հուլիսյան արևի դուրեկան ջերմությունը: Եվ միշտ մեզ հետ էին մեր հարևան Ազիզի որդիները՝ Գրիգորն ու Գրիշը:

Գրիգորից լավ վեգ խաղացող չկար լճից հեռու, ձորակում պատսպարված մեր խնամոնց գյուղում: Նա բոլորիս էլ տանում էր: Ասում են, որ նրա «սախկան»¹ սև խոյի աջ ոտից են հանել ու ամեն գիշեր պահում են գոմի մտուրում:

Իսկ սնահավատ գյուղացիներից մի քանիսը համոզված էին, որ ամեն գիշեր սատանաները մտնում են Ազիզի գոմը, ջրիիդ են խաղում ձիերի վրա, հյուսում նրանց պոչերն ու բաշերը և լուսադեմին, Գրիգորի վեգով խաղալուց հետո, գնում թաքնվում են Զանգվի եղեգնուտում:

Դրանից էր, որ Գրիգորի «դախկան» խփում էր անվրեպ և վեգերը ջուխտ-ջուխտ տանում:

Ու մենք ահով էինք նայում Գրիգորի մեծ վեգին և նրա նոր ձիերին:

Մի առավոտ էլ Գրիգորը գոմից դուրս վազեց ու խուճապահար գոչեց.

– Ձիերը քափ-քրտինքի մեջ կորել են...

Ներս մտանք և ինչ. ձիերն իսկապես հետում են, գոլորշի է բարձրանում նրանց վրայից, իսկ բաշերն ու մազերը ոլորած են:

– Վա՛խ, մեր օջախն անհիծվանվ... Սևանի վարդապետներն են անհիծել մեր մեղքերի համար...– սգում էր Ազիզի պառավ մայրը:

– Տղերք, եկեք գիշերը պահակ կանգնենք, տեսնենք էդ ինչ տեսակ սատանաներ են,– առաջարկեցի ես:

¹ Սախկա կամ դախկա - խոշոր վեգ, որով խաղալու ժամանակ խփում տանում են մյուս վեգերը:

Ընկերներս համաձայնեցին:

Արևը թաքնվեց Ծաղկունյաց լեռների հետևում, գյուղի նախիրը արոտից գյուղ վերադարձավ՝ իր հետևից թողնելով թանձր փոշի: Հարս ու աղջիկներ աղբյուրից տուն եկան, և անձրագ ու հոգնած գյուղը շուտով քուն մտավ, ու երկիրը երկյուղալի խորհրդավորություն ստացավ:

Ես նստել էի գոմի պատի տակ ու սեղմվել հարդի կողովին, իսկ Գրիգորը հենվել էր սյանը:

Շունչներս պահած, ականջներս ձայնի՝ սպասում էինք սատանաների երևալուն, իսկ ձիերը հանգիստ, խրթխրթոցով կեր էին ուտում ու մերթ-մերթ էլ փռռացնում:

Ջանգվի եղեգնուսներում գորտերն էին կռկռում, ջրից ինչ-որ խորհրդավոր գոռոց էր լսվում, որի մասին գյուղի ծերերն ասում էին, թե սպիտակ գոմեշ է: Հեռվում ավեր միալար ծեծում էին Սևանի ալիքները: Այդ բոլոր ձայներն այնպես խորնրդավոր էին ու ահալի...

Հավերից մեկը երևի կտցեց մյուսին, սա դժգոն քրթմնջաց ու թևերը թափահարեց: Չգիտեմ, թե Գրիգորն ինչ վիճակում էր այդ ժամանակ, բայց իմ սիրտը սկսեց թպրտալ:

Մի կերպ դրան հասկացրի, որ հավ էր՝ հանգստացավ:

Մի քիչ ժամանակ էլ անցավ: Պատում ինչ-որ բաներ են քրթքրթացնում. սատանաներ են, թե՛ մկներ...

Հանկարծ ձիերից մեկը փռռացրեց ու ծառս եղավ հետևի ոտքերի վրա: Սիրտս ահից տապ արավ:

- Ճրագը չվառե՛նք,- շնչացի ես Գրիգորի ականջին:

- Չ, չ, է...- ատամները չխկխկացրեց Գրիգորը:

Ձին թափահարում էր բաշը և, չգիտես ինչու, օդում աքացի էր գցում ու չարչարվում, որ կապը կտրի:

Ես չհամբերեցի ու վառեցի ձրագը: Նրա երերող լույսի տակ առաջին բանը որ տեսանք, մի փոքրիկ գազանիկ էր, առնետի նման մի բան, որ կախվել էր ձիու բաշից և մանր ու պսպղուն աչքերը պլզացրել մեզ վրա:

Ճրագը բարձր բռնած մոտեցա տարօրինակ գազանին, բայց Գրիգորը ճչալով դուրս փախավ գոմից:

- Մարե՛, սատանեն ձին խեծեր ան, սատանեն ձին խեծեր ան,- լսվեց նրա սարսափահար կանչը դրսի խավարից:

Շները հաչացին, Ազիզի տնեցիք և հարևանները զարթնեցին, և որը շապկով, որը կիսահագնվել, որը ոտաբոբիկ՝ թափվեցին գոմը, բայց գազանիկն այլևս չկար:

- Գյաղի աչքին քաջքեր կերևան, երեխան վախեցել ա, վանքը ուխտի տարեք,- եզրակացրեց հարևան Թումոն և գնաց քնելու:

Մյուս օրը գյուղի պատանիները շրջապատել էին Գրիգորին և հարցուփորձ էին անում:

- Սատանեն պոչ է՞լ ուներ:

- Բա իմա՞լ չուներ:

- Ինչ ջանավար էր, ինչի՞ էր նման:

- Թումոյենց չալ կատվի նման էր... աչքերից ու մեջքից կրակ կթափեր,- չափազանցված պատմում էր Գրիգորը:

Օրեր անցան, գյուղում շարունակում էին խոսել այդ դեպքի մասին: Առնետի չափ կենդանին բերնից բերան անցնելով, դարձել էր երեք գլխանի դև, ամեն գլխին մի եղջյուր...

Հարևանները բոլոր տեսակի կապերը խզեցին Ազիզենց «անիծված» տան հետ, սնահավատ պապերի ու տատերի խորհրդով երեխաներն այլևս Գրիգորի հետ վեզ չէին խաղում:

Մի առավոտ էլ Ազիզի կինը գզգզված մազերով դուրս վազեց գոմից և կերկերուն ձայնով ձչաց.

- Յաման, մեր տուն-տեղ քաջքերով լցվան՛վ...

Ազիզը մտավ գոմը և տեղում քարացավ, հևացող ձիերի պոչերն ու բաշերը կանոնավոր ոլորած էին...

Մարդը ահից գունատվեց, երեսը խաչակնքեց ու ետ-ետ գնաց:

Նույն օրը իր ձիերին նա կես գնով ծախեց մի բասարգեչարցու, որն, իհարկե, չգիտեր, թե այդ կենդանիները «քաջքերի բաժին» են դարձել:

- Գոմը փլցրու, քանդիր էդ դևերի բունը,- լալով կանչում էր կինը:

Անուսինն ստիպված եղավ բահն առնել ու քանդել իր պապե- նական գոմը: Գերանները, սյուները, տալստակները ջարդեց, վառելիք դարձրեց, հողը հավասարեցրեց և տեղը ցորեն ցանեց...

2

Քսան տարի անցավ:

Մի անգամ երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը ցանկություն հայտնեց հետս Արագդայանի սարերը որսի գնալու:

- Ես դժվար թե կարողանամ այծ խփել, բայց հո բնության մեջ կտեսնեմ վագելիս, այդքանն էլ հերիք է ինձ,- ասաց նա:

Առանձին ջերմությամբ էր նա սիրում բնությունը, որսորդի թափառիկ ու արկածալից կյանքը:

Երեկոյան մենք հասանք Մարալ-բախան սարի ստորոտը, մի մռայլ անձավում խարույկ վառեցինք և նրա շուրջը նստած զրույց էինք անում:

Ինչի մասին կխոսեն որսորդները իրար հետ. աշնան երկար գիշերը լուսացնելու համար մեր գլխով անցած որսորդական արկածներից էինք պատմում:

Նոր նշանված մի տղայի ասել են՝ աներանցդ տանը մեծ- մեծ բաներ կասես, նա էլ փղերի ու գոմեշների մասին է խոսել: Ճիշտ այդ փեսացվի նման մինչդեռ մենք արջերի մասին էինք պատմում՝ մեր անվանի հյուրին զարմացնելու համար, նա բարեսրտությամբ ժպտաց ու նուրբ հեգնանքով ասաց.

- Ես ձեզ նման, արջերի հետ, իհարկե, կովի չեմ բռնվել,- Ես մանր կենդանիներ ու թռչուններ եմ որսում: Բայց հիմա կպատմեմ ինձ պատահած մի կենդանու մասին, որը բնասերի համար շատ ավելի հետաքրքրական է, քան ահագին արջն ու վարազը:

Մի անգամ Ձագ տնտեսության վերևի բլուրներում կաքավ էի

որսում, պատահեցի մի աքիսի: Առնետի չափ, չալտիկ մարմնով մի փոքրիկ կենդանի է դա: Երեք-չորս քայլի վրա կանգնել է, գլուխը հպարտ բռնած ինձ է նայում այնպես անվախ, կարծես կռվի է հրավիրում: Գոռացի՝ չչարժվեց, կանգնած է սպառնալից դիրքով: Կրակեցի վրան, որ խրտվիլակը հանձնեմ բնագիտական թանգարանին, նոնակի նման խփվեց կրծքիս ու ձիրանները խրեց շորերիս մեջ: Եթե քիչ էլ բարձր ցատկեր, երեսս պատառոտելու էր անհրավը, այնպիսի խիզախ կենդանի է այդ աննշան արարածը:

Եվ ինչպիսի՞նք գայրույթ ու վրեժ կար նրա աչքերում... Բայց միայն քաջությունը չի, նա մի զարմանալի հատկություն էլ ունի: Դուք բոլորդ էլ գյուղացի տղերք եք եղել, լսած կլինեք, որ քաջքերը հյուսում են ձիերի բաշերը և շիրիդ խաղում նրանց վրա (այստեղ ականջներս սրեցի, Ազիզի ձիերը միտս ընկան...): Դա հեքիաթ չէ, իրոք, շատերն են տեսել ձիերին քրտնած, հեալիս...

- Ես էլ եմ տեսել,- նրա խոսքը կտրեցի ես:

Պատմությունն ինձ համար հետաքրքիր էր դառնում:

- Տեսել ես, բայց երևի դու էլ դա չարքերին ես վերագրել: Այնինչ այդտեղ չարք չկա, բոլորն աքիսի արած գործերն են: Մազերը ոլորելը նրա ամենասիրած ու զվարճալի զբաղմունքն է...

- Վահ, այդ հո Ազիզի գոմում իմ տեսած կենդանին է,- բացականչեցի ես:- Բայց ինչո՞ւ են ձիերը քրտնում:

- Ձիերին քրտնացնողն էլ աքիսն է. ձիերի մեջքը խուտուտ է ածում, կատաղեցնում և լիզում քրտինքի հետ դուրս տված սպիտակուցը: Իսկ միամիտ գյուղացիները կարծում են, թե սատանաներն են ձիերը հեծել, ջիրիդ խաղացել:

Ա՛յ քեզ բան... Այնքան ահավոր երևույթը միթե այդպիսի չնչին պատճառ է ունեցել: Եվ ի՞նչ հեքիաթներ ասես, որ չի հյուսել սնահավատ հին գյուղն այդ աննշան կենդանու չարածձի արարքի մասին...

Եվ ես պատմեցի մեր խնամոնց գյուղում իմ տեսած դեպքը:

Հետագայում որսի ժամանակ ես հաճախ եմ հանդիպել այդ

զարմանալի կենդանուն, որ մեր խեղճ պապերին ահի մեջ էր պահում իր «սատանայական» արարքներով:

Ու ամեն անգամ նրան պատահելիս աչքիս առաջն է գալիս մեր խնամոնց հարևան Ազիզը՝ բահը ձեռքին, իր պապենական գոմը տենդագին քանդելիս, և տասնամյակների խորքից դեռ լսում եմ նրա կնոջ աղեկտուր ձիչը.

– Յաման, մեր տուն–տեղ քաջքերով լցվանվ...

1935

ԵՂՆԻԿԻ ՁԱԳԸ

1

Հովտում շոգ էր, իսկ անտառում, որով ընթանում էին մեր ձիերը, դուրեկան գոլ էր տիրում: Քանի վեր էինք գնում՝ անտառը հետզհետե նոսրանում էր, սկսվում էին թփուտները, մոտենում էինք լեռնային արոտներին:

Վերջապես մտանք ծով կանաչի աշխարհը և Լավվարի բարձունքից եկող հովը շոյեց մեր դեմքերն ու զվարթացրեց մեզ:

Ես ցած թռա ձիուց ու նրա սանձը բռնած սկսեցի քաղել թավիշ կանաչի միջով: Ցածում Լոռու չնաշխարնիկ ձորն է՝ իր աղմկարար Դև-Բեդով, մեր դիմաց Չաթինդաղն է՝ իր ապառաժներով ու որսառատ ծակներով, իսկ նրանից վեր՝ ամպերի մեջ կորչում են Ղազախի լեռները, ուր անցել է իմ մանկությունը:

Մինչ ես տարվել եմ Լոռվա չքնաղ բնությամբ, որտորդ ընկերս՝ Գալուստը՝ կուզեկուզ ետ վազեց դեպի մացառները և պիջակի թևերը լայն բացելով, բերանքսիվայր փովեց մի թփի վրա: Ճյուղերի ճարձատյունի հետ բայունի նման մի ձայն լսեցի:

Քիչ անց ընկերս դուրս եկավ թփուտից: Նրա պիջակի փեշից մի փոքրիկ կենդանի դուրս էր հանել իր խոշոր ականջներն ու փոքրիկ գլուխը և սարսափած, անմեղ աչքերով նայում էր ինձ ու աղեկտուր բայում: Եղնիկի ձագ էր: Նա լարում էր իր փոքրիկ ուժերը և իրեն կաշկանդող բազուկներից դուրս պրծնելու հուսահատ փորձեր էր անում:

Ես սկսեցի շոյել նրա ողորկ ու փափուկ մազերը: Դա երկար, բարակ ոտներով, գեղեցիկ վզով, շնորհալի կազմվածքով և երկյուղով լի աչքերով մի արարած էր և դեռ այնքան փոքր, որ չէր հասկանում իր դրության ողջ լրջությունը:

Մենք խոսելով առաջ ենք գնում:

– Սրա մերն էստեղերքից չի հեռանա, – ասաց Գալուստը, հա–

յացքով խուզարկեց անտառի նոսր փեշերն ու գոչեց:- Չասացի՞...
Մի փոնփոխ կաղնու տակին մտիկ...

Այո՛, մայր եղնիկը գանգրահեր կաղնու տակից դունչը դեպի
մեզ մեկնած, հոտոտում էր և խղճալի բայում:

Միր ձայնը լսելուն պես, ձագը գլուխը թեքեց նրա կողմն ու
սրտաճմլիկ մայրցով պատասխանեց, կարծես ասում էր. «Բաց
չեն թողնում, մամմ, ազատիր ինձ...»:

- Գալո՛ւստ, մեղք է, բաց թող գնա,- հանդիմանական տոնով
դիմեցի ես լոռեցուն:

- Ա՛յ տղա, էդ քաղաքացիներդ էդ ի՞նչ տեսակ ժողովուրդ եք,
բա մարդ էլ ձեռն ընկած որսը բաց կթողնի,- զարմացավ Գա-
լուստը:

Ես դժգոհությամբ ձիս հեծա և մտրակեցի, և երբ ետ նայեցի,
նկատեցի որ մայր եղնիկը դուրս վազեց անտառից ու հեռվից
հետևում է մեզ:

Այստեղ էլ խեղճ ձագն էր բղավում, ուզում էր դուրս թռչել
մարդու ձեռքերից:

Այդ տեսարանը ազդեց ինձ, շատ զգացվեցի: Փորձեցի շարժել
լեռնականի սնահավատությունը.

- Գալո՛ւստ, դրա մեղքիցը հաց չես գտնիլ, բաց թող...

Լոռեցին անդրդվելի մնաց:

Խեղճ մայրը հեռվից մեզ հետևեց մինչև ֆերմայի վրանները:
Շների հաչոց լսելով, կանգ առավ, դունչն իր ձագի կողմը մեկնեց,
հոտոտեց օդը, շուռ եկավ, մոլոր քայլերով գնաց դեպի անտառ,
իր դարդը սարին ու քարին պատմելու...

2

Երկու շաբաթ անցավ:

Ես նորից Լոռի գնացի և բարձրացա անտառի փեշին, գեղեցիկ
պարտեզների մեջ թաղված Ամոջ գյուղը, ուր ամառանոց էի
տարել իմ ընտանիքը:

Տուն մտնելուն պես իմ առաջին հարցը եղավ.

– Գալուստն էն կենդանուն բաց չթողնեց...

Կարծես հարցիս որպես պատասխան լավեց երեխայիս ուրախ կանչը.

– Բիժո՛, բիժո՛, բիժո՛...

Իջա պարտեզ և տղայիս տեսա՝ եղնիկի ձագի հետ խաղալիս: Վազեցի փոքրիկ կենդանու մոտ, շոյեցի նրա սիրուն մազերը, համբուրեցի անմեղ ու երկյուղ արտահայտող աչքերը և ուսիս դնելով, սկսեցի վազվզել խնձորենիների տակ: Տղաս ուրախության ճիչերով հետևում էր ինձ: Եղնիկի ձագը ուսիս շատ թեթև թվաց: Ցած դրի և ուշադիր նայեցի. խեղճ որբուկ, ինչքան է նիհարել...

Տեսցիք ինձ ասացին, որ Գալուստի կինը նրան ամեն օր կերակրում է ոչխարի կաթով: Բայց դե աշխարհում ինչը կհասնի հարազատ մոր կաթին...

Նրա վիճակը լավացավ, երբ սկսեց արածել: Այնունետև օր-օրի աճում ու գեղեցկանում էր և շուտով այնքան մեծացավ, որ միայն խոտով էր կերակրվում:

Եղնիկն այնպես էր կապվել տղայիս հետ, որ շարունակ նրա հետևից էր գնում, ձեռքը լիզում, դունչը մեկնում՝ հաց էր խնդրում և տխրում էր առանց նրա: Գիշերները երբեմն վեր էր կենում իր անկյունից և բերանով բռնում, քաշում Գալուստի կնոջ վերնակից: Կինն արթնանում էր, վրդովվում, որ քունը խանգարվեց, ապա խղճում էր (չէ՞ որ նա էլ մայր էր...) ու կաթ տալիս:

Կանաչ պարտեզ, լավ խաղընկեր, սնունդ, կարծես ամեն ինչ կար, որ փոքրիկ եղնիկն իրեն լավ զգար: Բայց երբեմն տխուր ու մտածկոտ էր դառնում և մեղամաղձոտ հայացքով նայում էր սարի լանջին փոված անտառին:

Մի անգամ, երբ արևի վերջին շողերը հանգան Չաթինդաղի բարձունքներում և սառը հով փչեց, ես տեսա, թե ինչպես եղնիկի ձագը դուրս եկավ պարտեզից, կանգնեց հին գերեզմանատան

բլրին ու դունչը մեկնելով Լավարի կողմը, սկսեց հոտոտել օդն ու տխուր բայել...

Լեռներից եկող հովը հարազատ մոր հեռավոր մղկտոճն էր բերում, թե՛ կարոտում էր իր մայր բնությանը, ձգտում էր դեպի անտառի թավուտը, դեպի հարազատները: Ո՛վ գիտի... Հավանաբար խեղճ որբուկը մորն էլ չէր հիշում, այնքան փոքր էր, երբ բաժանվեց նրանից:

Թե՛ այժմ նրա մեջ միայն կենդանական բնագղն էր խոսում, ազատասեր եղնիկի բնագղը, ծերպերով սուրալու, թփուտներում թռչկոտելու, կածաններով ազատ վազելու տենչը...

3

Մի անգամ էլ, երբ գյուղ գնացի, կոլտնտեսության հովիվ Ավագը ինձ պատմեց, որ մի եղնիկ ամեն երեկո-առավոտ սարից ցած է իջնում, պտտվում է գյուղի շրջակայքի թփուտներում ու աչքը գյուղին՝ մղկտում:

- Իմ կարծ խելքովը դա էդ եթիմի մերը կլինի... Ինչքան շները հետևիցն են ընկնում, ինչքան գեղի մոտերքում թվանք է տրաքում, էդ կենդանին էլի ձեռ չի քաշում էս կողմերից: Մոր ջիգյար է, է՛, վառվելով-խորովվելով՝ իր հորթին է ման գալիս...

Այսպես ասաց ծեր հովիվն ու Գալուստի արարքից դառնացած, գլուխը տարուբերելով գնաց:

4

Կակաչները թափեցին իրենց թերթիկները, Լավարի լանջը դեղնեց, անտառը ծիրանագույն զգեստներ հագավ և պարտեզներում հասունացան պտուղները:

Իմ երեխան բարձրանում էր ծառը, հրճվանքով ցած էր թափում խնկագույն խնձորները, իսկ եղնիկի ձագը ամեն խնձոր կաթելիս խլուշ-խլուշ էր անում, խրտնում ու ոստոստում ծառի տակ:

Դա նրանց վերջին զվարճությունն էր ամառանոցում. իմ ընտանիքը քաղաք վերադառնալու պատրաստություն էր տեսնում:

Վերջապես եկավ բաժանման ժամը: Երեխասս փարվել էր եղնիկի վզին, և երբ մենք շարժվեցինք, նա արցունքի միջից հայտարարեց, որ ոչ մի դեպքում չի թողնի իր «բիժոյին»:

Եղնիկը լիզում էր նրա ձեռքը և մեկ մեզ նայում, մեկ տղայիս, կարծես հարցնում էր. «Ի՞նչ է պատահել...»:

Այն ժամանակ Գալուստը եղնիկը նվիրեց իմ որդուն, և մենք հնձած արտերի միջով ուրախ-ուրախ ձամփա ընկանք դեպի երկաթուղու կայարանը: Մեր հետևից, կայտառ ոստոստելով ու մեծ-մեծ ականջները խուշ-խուշ անելով, գալիս էր եղնիկի ձագը:

- Տես ղնց են զարմանալու մեր բակի երեխաները... հետս մանկապարտեզ էլ կտանեն... Ամբողջ քաղաքն իմ եղնիկի մասին է խոսելու... Բիժո ջան, բիժո ջան,- ձանապարհին ուրախությունից կցկտուր շաղակրատում էր իմ տղան:

Բայց նրա երազանքները չիրականացան:

Գնացքը եկավ աղմուկով ու դղրդոցով: Խեղճ կենդանին դողդողում էր իմ գրկում. ինչ սարսափելի հրեշ պիտի երևար նրա աչքին շոգեքարշը...

Երբ մենք պատրաստվում էինք գնացք նստել, դեպոյից մի շոգեկառք եկավ, մոտեցավ մեզ և իր պողպատե կոկորդով այնպես սուլեց, որ երեխասս սարսափահար դեպի մայրը վազեց, իսկ եղնիկի ձագը գրկիցս դուրս պրծավ ու փովեց կառամատույցին:

Ես կռացա կենդանու վրա, որպեսզի որոշեմ, թե ինչ պատահեց նրան, այդ պահին խփեց երկրորդ զանգը, ու մեկը կանչեց.

- Այտա՛, կխտամրը, կխտամրը... Մի դենը մտիկ արեք...

Նայեցի նրա մատի ուղղությամբ, իրոք, Դեբեդի մյուս ափին, զառիվայրի թփերի մեջ մի եղնիկ էր բայում սրտակտուր:

- Հայ, հայ...- գոչում էին կայարանում հավաքված մարդիկ: Նրանց մեջ միայն էն գիտեի, որ մայր եղնիկն է, սարից իջել է վտանգն արհամարհելով ու մղկտալով իր սիրասուն զավակին

է կանչում ու իր կենդանական լեզվով բողոքում է մեր արարքի դեմ, թե. «Անխիղճ մարդիկ, ո՞ր եք տանում իմ բալին...»:

Եվ այդտեղ պատահեց այն, ինչ ցանկանում էի ես իմ ամբողջ սրտով. եղնիկի ձագն ուշքի եկավ, սրեց մեծ-մեծ ականջները, հասկացավ, որ հարազատն է կանչում իրեն ու վեր թռավ տեղից: Ապա մի քանի ուսոյուններով հասավ բարակած գետին, ցատկեց-անցավ ջուրը, հասավ մորը ու մտավ նրա վզի տակ...

- Այտա, էս ինչ բան էր...- հարցնում էին իրար՝ գործից անտեղյակ լռեցիները:

Իսկ նրանք՝ մայր ու որդի՝ իրենց մուրազին հասած, սուրացին զառիթափն ի վեր՝ դեպի Չաթինդաղի անառիկ ծերպերը, դեպի ազատ բնության ծոցը...

Որդիս բռունցքներով տրորում էր աչքերը, բայց երբ հասկացավ, թե ինչ է տեղի ունեցել, արցունքի միջից ժպտալով հարցրեց.

- Իր մամային գտավ... Ինչ լավ է, որ գտավ...

Գնացքը շարժվեց, իսկ նա վագոնի պատուհանից աչքը չէր կտրում Չաթինդաղի լանջից, ուր անհետացավ իր խաղընկերը, իր սիրելի «բիժոն»:

- Միր արինը քաշեց-տարավ,- ինքն իրեն թոնթորում էր մի պառավ ու գոգնոցով սրբում աչքերը, երևի նա էլ իր կորած որդուն էր հիշում...

1935

ՈՐՍԸ ԼՈՒՄՆԻ ԼՈՒՅՍՈՎ

Ձմեռանոցում իմ անբաժան ընկերը՝ հրացանս միշտ ինձ հետ էր և սարսափի մեջ էր պահում շրջակայքի նապաստակներին: Հաճախ էր նա ահեղ ձայնով որոտում խեղճ շղիկների ետևից, բայց միշտ էլ ապարդյուն:

Մի անգամ էլ, երբ ես վերադարձա անհաջող որսից և գնացի խոտ բերելու, դեզի շուրջը նապաստակի հետքեր տեսա: Ուրեմն գիշերը գալիս են խոտ ուտելու:

Ցերեկն իմ որսորդությունն անհաջող է անցնում, որոշեցի բախտս փորձել գիշերը: Ամեն երեկո ես նայում էի կիսալուսնին և անհամբեր սպասում էի նրա կլորանալուն: Վերջապես նա դարձավ բոլորակ ու պայծառ: Ես բարձրացա խոտի դեզին, փոս արի, մտա մեջը և հրացանիս փողն ուղղեցի դեպի դիմացի լանջը, որտեղից գիշերն իջնում են նապաստակները և առուն անցնելով, սկսում են իրենց կողոպուտը:

Թեև հունվարն էր, բայց գիշերը մեղմ էր: Առհասարակ մեր կողմերում, ուր ձմեռանոցները պատսպարված են անտառոտ ու քամիներից պաշտպանված ձորերում, ձմեռը մեղմ է լինում:

Լուսինը բարձրացավ, և ծառերի ստվերներն սկսեցին կարճանալ:

Ձմեռանոցում հետզհետե մարեցին կրակները և ամեն ինչ լռեց. միայն ես էի արթուն, առուն և մեկ էլ Հովի. Թումանյանի նկարագրած գիշերային թռչունը, որ տխուր ու սրտամաշ կանչում էր՝ «Սհանկ, Սհանկ, Սհանկ...»:

Այդ օրը շատ էի հոգնել, սկսեցի նիքիել:

Ես պթափվեցի ինչ-որ շրշունից: Ձյունը բամբակից էլ ձերմակ էր թվում և ամեն ինչ պարզ երևում էր նրա վրա: Ահա դիմացս, առվի մյուս ափին, ոստոստելով ցած են իջնում երկու նապաստակ: Նրանք ցատկեցին առուն և զգուշությամբ մոտենում են իմ դեզին: Շունչս պահեցի: Մեկը կանգ առավ դեզերից քսան-քսանհինգ քայլ հեռու և դունչն առաջ մեկնելով, սկսեց հոտոտել:

Ես հրացանս ուղղեցի դեպի նա, նապաստակներն անմիջապես ետ ցատկեցին և կանգ առան առվի մոտ. մի քիչ տատանվեցին, պապ զգուշությամբ շարժվեցին դեպի դեզը:

«Չէ, կգաք, անպայման կգաք,– չարախնդությամբ մտածեցի ես:– Խոտն ինձ մոտ է, կգամ»:

Եվ իրոք, նրանք ոստոստալով մոտեցան: Հրացանի ձայնից թնդաց ողջ ձմեռանոցը: Շները դուրս թռան իրենց տաք անկյուններից և ձորը լցրին հաչոցով:

– Հէ՛, հէ՛...– լսվեց Ակոյենց Քոչարի քնաթաթախ ձայնը:

Նա շապկանց կանգնած էր իր գոմի դռանը, նավթի ճրագը ձեռքին: Երևի կարծում էր, թե գայլ է մտել ձմեռանոցը:

Շները հետզհետե հանդարտվեցին: Ես իջա դեզից և վերցրի սպանված նապաստակը:

Հնարը գտնված էր. ուրեմն կարելի է լուսնի լույսով որս անել: Հաջորդ գիշերը, փորձի համար, ես խոտով չքողարկվեցի, հազա իմ տաք կիսամուշտակը, ուղղակի նստեցի դեզի վրա, մեջքս դեմ արի խոտին և համբերությամբ սկսեցի սպասել:

Գիշերն այնքան պարզ էր, սար ու ձոր այնպես էին ողողվել լիալուսնի կաթնագույն լույսով, որ կարծես ցերեկ լիներ:

Ձմեռանոցը նոր էր քուն մտել, երբ նորից երևացին նապաստակները: Ես դեռ հեռվից հրացանս մեկնեցի դեպի նրանց և այդպես անշարժ մնացի: Գլխավորն անշարժ մնալն է, այդպես քեզ կոճղի տեղ կդնեն: Զուրն անցան, կանգ առան ու երկար ինձ են նայում:

Մեկը պագեց և առաջին թաթերով սկսեց չխոսկան հարսի նման շարժումներ անել, կարծես հարցնում էր. «Որ խոտիդ համը տեսնեմ, հո ինձ վնաս չէ՞ս տա»:

Քիչ մնաց փոթկացնեի նրա ծիծաղաշարժ շարժումների վրա, բայց չկրակեցի և չշարժվեցի: Ինձ հետ թաթերով խոտոլ նապաստակը մոտեցավ ընկերոջը, և նրանք քիթ-քիթ տված սկսեցին քրթմնջալ՝ և ստեպ-ստեպ իմ կողմը նայել: Ըստ երևույթին խորհրդակցում էին և ուզում էին որոշել, թե ինչ են ես, մամրդ,

թե մի այլ բան: Վերջապես վճռականություն առած բոլորովին մոտեցան դեզին: Այստեղ ես էլ չհամբերեցի և քաշեցի ձգանք: Կրկնվեց նախորդ գիշերվա պատմությունը. շները նորից աղմուկ բարձրացրին, Ակոյենց Քոչարը նորից դուրս եկավ շապկանց, ճրագը ձեռքին և գլխի ընկնելով, որ ես եմ աղմուկի պատճառը, սրտնեղած գոչեց.

– Տո, սարսաղ, էդ ի՞նչ բանի ես, թող մի հալալ քնենք, է՛...

Ու փնթփնթալով խրճիթ մտավ:

Ես, ամբողջ ձմեռանոցը մոռացած, միայն մի բանի մասին էի մտածում՝ «Այսքան սարսափից հետո սպանված նապաստակի ընկերը ե՞տ կգա, թե՞ ոչ»: Որսորդները համառ են լինում: Եվ ես որոշեցի նստել մինչև լույս և սպասել:

Վերջին շան ծույլ հաչոցն էլ կտրվեց և նորից մնացինք ես, առուն և կանչող թռչունը:

Ես մոտ երկու ժամ անշարժ նստեցի: Կեսգիշերին առվի մյուս ափին, ծառերի արանքում, հայտնվեց երկրորդ նապաստակը:

Նա տեսավ ինձ, բայց, այնուամենայնիվ, զգուշությամբ առաջ էր շարժվում՝ աչքը հառած խոտին: Ինձ համար պարզ չէր, թե ի՞նչն է մղում նրան դեպի հրացանի մահաբեր բերանը, հիմարությունը, անտանելի քանդոցը, անվախությունը, թե՞ հույսը, որ մարդը չի գրկի կյանքից անպաշտպան ու քաղցած կենդանուն...

Այս վերջին միտքը ավելի հավանական թվաց ինձ, խիղճս գլուխ բարձրացրեց, և ես չկրակեցի նրա վրա...

1935

ԹՌՉՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՐ ՏՎԻՆ

Ձմռան մի օր մենք դեմ առանք Ասնի լեռան մեծ ժայռերին: Բարակ ձյուն էր մաղում, և քամին ձյան կարծրացած հատիկներով խփում էր մեր դեմքերին: Բարձրաբերձ ժայռերը կուլ էին գնացել նոսր մառախուղին:

Վերելքը դժվար էր, եղանակը դաժան: Մենք քարայծ որսալուց հույսներս կտրած՝ որոշեցինք հրաժարվել լեռ բարձրանալու մտադրությունից: Բայց մեր խմբի պետը՝ լոռեցի Գաբոն, այդպես շուտ հուսահատվող մարդկանցից չէր:

- Մեռնեմ լավ է, քան թե դատարկ քաղաք մտնեմ,- ամուր ասաց նա և շարունակեց մագլցել լեռն ի վեր: Նրան համոզել դժվար էր, քանի որ որսը, այն էլ այն պահին, երբ տարերքը խառնված են իրար, նրա համար գերագույն հաճույք էր:

Ժայռաշարքից ներքև կանգնած՝ մենք հայացքով հետևում էինք նրան: Քիչ անց Գաբոն անհետացավ լեռան ծերպերում՝ թանձրացող մառախուղի շղարշի հետև:

Ինչ անենք, իջնենք ավտոմեքենայի մոտ, թե որս որոնենք ներքևի ձորակներում:

Ես և ընկերս մեր անելիքը դեռ չէինք որոշել, երբ թնդյուն լավեց վերին ժայռերից: Կրակոցի հետ որսորդի գլխում միայն մի հարց է շամփրում, «կպամվ, թե ոչ...»:

- Մառախուղ է, դժվար թե դիպած լինի,- լռությունը խզեց ընկերս:

Այդ պահին դեպի կրակոցի կողմը սև թռչուններ թռան՝ կարմիր կտուցներով ու նույնպիսի կարմիր ոտներով: Նրանց տեսնելուն պես ուրախ գոչեցի.

- Չէ, կպել է, դատարկ չենք գնա...- և աշխուժացած սկսեցի վեր մագլցել լոռեցի Գաբոնի հետքերով: Ընկերս հետևեց ինձ, բայց գալիս է անսիրտ, տատանվելով: Կանգ առավ, հևում է:

- Իզուր ենք գնում,- ասաց նա:

- Ո՞նց թե իզուր, համ սպանի, համ ահագին կենդանուն շա-

լակի բերի, դա խիղճ է: Գնանք օգնենք:

Ընկերս տատանվում է:

- Իսկ եթե խփած չլինի:

- Խփել է,- պնդեցի ես:

- Ինչից գիտես:

- Սև թռչունները պատմեցին ինձ,- ծիծաղեցի ես:- Չտեսա՞ր
ոնց շտապեցին դեպի կրակոցի կողմը:

Եվ ես նրան պատմեցի այն, ինչ լսել էի փորձված որսորդներից
այդ թռչունների մասին:

Նրանք երկնքից հետևում են կենդանուն, և երբ սա գնդակից
ընկնում է, շտապում են վայելելու վերքից ծորող տաք-տաք
արյունը:

- Բայց չէ՞ որ մառախուղ է, ինչից իմացան, որ այծը սպանվել
է,- իր տարակուսանքը հայտնեց ընկերս:

- Ով գիտի... գուցե արյան հոտից... Գնանք...

Մենք շատ չգնացինք, քիչ անց լոռեցի Գաբոն եղջուրներից
բռնած, ձյան վրայով դեպի մեզ քարշ էր տալիս քարայծր:

1936

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ

Մեր գյուղում մի որսկան կար Ասլան անունով: Ասլանը պողպատի պես մարդ էր ու շատ էլ սրտոտ: Մի օր բահը ձեռքին այգում ջուր էր կապում թմբերի վրա, մեկ էլ տեսնում է երկու օձ՝ մինը սիրուն, չալտիկ, մյուսը՝ կուպրի պես սև, իրար փաթաթված արևկող են արել ու դունչ-դնչի տվել, երևի իրար սիրո խոսքեր են ասում: «Էս սև մուռտամը ինչի է էս սիրունին փաթաթվել», - մտածում է որսկանն ու քարը վերցնում է, որ սևին սպանի ու իրեն կարճ խելքովը էս սիրուն օձին ազատի նրա գրկից: Էլ չի մտածում, որ սիրտը սև ու սպիտակ չի հարցնում: Ջուր չի ասված թե՛ սերն աթարին կպավ պոկ չեկավ: Քարը գցում է, թարսի պես էս սիրուն շահմարին է դիպչում: Սև օձը ետ է տալիս իր օղակները, ճիպոտի պես դիք կանգնում է պոչի վրա ու էնպես է շվացնում, որ էդ ժայռի սիրտ ունեցող մարդը գույնը գցած մինչև տուն մի շնչում է փախչում:

Մյուս օրը, որ այգին է մտնում, տեսնում է սև օձը էլի փաթաթվել է շահմարին ու գուրգուրում է նրա մեռած մարմինը: Օձը մարդին տեսնելուն պես վեր է թռչում, կծիկ դառնում ու իրեն շարտում նրա կողմը: Ասլանը մի կերպ փախչում է, պրծնում:

Մեր գեղում մի խելոք, իմաստուն մարդ կար՝ Ադամ անունով. Ադամը խրատ է տալիս Ասլանին թե.

- Այ որդի, դա իր սիրածին կորցրած, վրեժով լցված կենդանի է, մինչև իր ասածը չանի, դրա էրվող սիրտը չի հովանավ: Արի կլինի, գնա մեր հարևան Չիման գյուղը, էստեղ յուր գնա, թող ամառն անց կենա, ցուրտը որ ընկավ, օձերը քուն կմտնեն, նոր ետ կգաս:

Ասլանն ասում է.

- Քեռի Ադամ, բա ես կյանքումս մազերիս համրանքովը մեկ արջ սպանած ըլեմ, բա ես մի ժանգոտ խանչալով արջի բունը մտած ըլեմ ու հիմի օձի առաջից չոլերն ընկնեմ... Բա խալխն ինչ կասի...:

- Այ տղա, սարսաղ-սարսաղ մի դուրս տալ, քեզ բան են ասում, հասկացիր: Ախր սրտին ես դիպել, է, սիրածին ես սպանել, հանաք բան չի, մինչև քթիցդ չհանի, հանգստացողը չի...

Որսկան Ասլանը լսում է ծերունու խոսքը, ճամփի պաշարը խուրճին է լցնում, ուսը գցում, կնկանը, երեխանցը համբուրում ու ճամփա ընկնում դեպի Չիման գյուղը: Այգու կողքովն է գնում, ուզում է մեկ էլ մտիկ անի տեսնի՝ օձը հո էնտեղ չի: Տեսնում է, որ նա էլի փաթաթվել է իր սիրուն շահմարին ու ճնց է գլուխը լիզում, ճնց է շոյում: Ու մտածում է որսկան Ասլանը՝ «Փառքդ շատ լինի, աստված, էս ինչ սիրտ ես դրել ամեն կենդանու մեջ...»:

Ու գնում է որսկան Ասլանը ետ-ետ մտիկ անելով, փախչում է էդ արնոտ տեղից, որ մոռանա իր անխիղճ արարքը:

Փախչում է ու նրան թվում է, թե մի սև բան խոտերի միջով հետևում է իրեն: Խշոց է լսում ճամփին ու նրան թվում է, որ հասած դեղին արտի միջով մի սև պարան է գալիս գալարվելով: Մի տեղ էլ նրան թվում է, թե մի սև կծիկ վերևից իրեն ճամփի տակը գցեց: Սարսափած վազ է տալիս, գետն անց կենում ու նրան թվում է, թե վերևում մի սև կծիկ թռավ գետի մյուս կողմը:

«Անպայման վախեցել եմ, աչքիս է երևում», - մտածում է որսկանն ու իրեն նախատում, սիրտ տալիս ու գնում:

Գնում է որսկան Ասլանը ու Չիման գեղի քյոլավի մոտ մշակ է մտնում, սկսում է հունձ անել նրա համար:

Մի լուսնյակ գիշեր, հոգնած մշակները դաշտում քնած ժամանակ, Ասլանը նստած տրեխ է գործում ու միտք անում իր կնկա մասին, երեխաների մասին, ու մեկ էլ խշոց է լսում ու տեսնում է, որ մի սև բան խշշալով մտավ խուրճերի բլուլի մեջ:

- Ձեզ մատաղ, օձը, - գոռում է նա:

Մշակները վեր են թռչում ու զարմացած հարցնում, թե ինչ է պատահել: Ասլանն էդտեղ օձի պատմությունն ասում է ու ասում.

- Եկել է հոգիս առնի, մի ճար արեք, ձեզ մատաղ: Ասում է ու էդ ասլանի պես որսկանը ուռի պես դողում:

- Ինչ ես սփրթնել տո, իրեն ոտովը եկել է թակարդն ընկել, էլ ինչ ես ուզում. էս է բլուլը կրակ կտանք՝ նետը կվառի կգնա, իր հոգին էլ կհանգստանա, քոնն էլ,- սիրտ է տալիս մշակներից մեկն ու Ասլանին գեղն է ուղարկում, որ քոխվիցը բլուլը վառելու իրավունք առնի:

- Ախպեր, իմ տասն օրվա աշխատանքն էլ քեզ հալալ, առ ձեռիս ունեցած-չունեցածն էլ տամ, թող էդ բլուլը վառենք՝ պրծնեն էդ փորձանքիցը,- աղաչում է որսկանը: Տերը համաձայնում է: Որսկանն ուրախացած մինչև դաշտ մի շնչում վազում ու տեղ հասնելուն պես դեռ հեռվից ձեն է տալիս.

- Կրակ տվեք...

Խրձերը կրակ են տալիս, իսկ Ասլանը հեռու կանգնած մտիկ է անում: Կրակի կարմիր լեզուների միջից մի սև բան է ցցվում վեր, լախտի պես ֆռռում է օդում, ու որսկանը ձչալով գետին է տապալվում:

Մշակները վրա են հասնում, տեսնում կրակից խորովված օձը օղակ-օղակ փաթաթվել է Ասլանի վզին ու էնպես էլ սատկել: Պոչը ոլորում են, օղակները ետ տալիս, մարդը սառել-փետացել է: Վզին կծած տեղ չեն գտնում, խեղճ մարդը սարսափից էր մեռել...

Բան, էդպէս սեր են ասում, է՛, մինչև թշնամուն չի սպանում ու ինքն էլ չի սպանվում, էրված հոգին չի հանգստանում:

1936

ՄԱՅՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Ես կանգնած եմ լեռան ամենաբարձր կատարին, երկնասլաց ժայռերի վրա ու նայում եմ ցած՝ իմ դեմ փռվող Արաքսի կանաչ հովտին:

Մայիսյան խաղաղ երեկո է: Աղջամուղջը ձորերից բարձրանում է դեպի թավիչ բարձունքները: Ժայռերը հետզհետե ընկղմվում են իրիկնային մշուշի մեջ: Հետզհետե լռում են օրվա ձայները, և իմաստուն մի անդորր է իջնում երկրի վրա:

Ես նայում եմ իմ դիմաց վեր ելնող սպիտակափառ Արարատին, լսում եմ մայիսյան հովի մեղմ շնկշնկոցը և ընկղմվում եմ մտքերիս ծովի մեջ, այն մտքերի, որ ունենում է միայնակ մարդը անսասանելի բարձունքներում:

«Ճի՛վ, ձի՛վ, ձի՛վ...», – հասկարծ լավեց հեռվից, ապա ժայռի մյուս կողմից հետզհետե մոտեցող և ուժեղացող վշտոց լավեց, կարծես հեռվից փոթորիկ էր մոտենում կամ գարնանային հեղեղ: Օդը լցվեց հարյուրավոր թևերի թափահարումներով, և սև փետրավոր ու կարմիր ոտքերով թռչունների մի ահագին բազմություն վրա տվեց այն ժայռին, որին հենված էի ես:

Ես ընկղմվեցի թռչունների սև ամպի մեջ:

Իրենց կարմիր ու ձկուն կտուցները լայն բացած, նրանք մոլեգին թափով ցած էին նետվում երկնքից, պտույտներ գործում շուրջս և այնպիսի ձվձվոց էին բարձրացնում, որ ես շփոթմունքից մի պահ քիչ մնաց անդունդը գլորվեմ: Անհատակ ձորի վրա կախված այդ հեռավոր ժայռին կոթնած, խաղաղ ու խորհրդավոր այդ ժամին, թռչունների հոծ բազմության տագնապալի աղմուկից ես ցնցվեցի: Այս ի՛նչ հրաշք է...

Կրակոցը սրտապնդում է մարդուս մենության ժամին. կրակեցի թռչունների սև ամպի մեջ: Ձորը դղրդաց, քարայծերը դուրս վազեցին քարանձավներից և սարսափահար փախսան անմատչելի կածաններով: Թռչուններից երկուսը քարի նման ցած ընկան և կուլ գնացին անդունդի սև երախին, իսկ մնացածները

զայրագին կանչերով շրջապատեցին ինձ:

Մի ձեռքով քարերից բռնելով, իսկ մյուսով հրացանն օդում շարժելով և պաշտպանվելով՝ ես բնագոյաբար առաջ շարժվեցի և կռացա՝ նայեցի ժայռի մյուս երեսը,– իջնելու տեղ էի փնտրում:

– Ա՛յ քեզ բան...– գոչեցի ինքս ինձ և թեթև շունչ քաշեցի, այնտեղ մի ընդարձակ քարայր էր, բազմաթիվ թռչուններ տագնապով ներս ու դուրս էին անում ու անընդհատ ձվձվում:

– Անպայման ձագեր կունենան,– անցավ մտքովս:

Ես ուշադիր նայեցի այրի ներսը և ամեն ինչ պարզվեց ինձ համար. ապառաժի պատերին և առաստաղին հարյուրավոր բներ էին շինված, որոնց միջից աղվամագոտ փոքրիկ գլուխները դուրս էին հանել և անօգնական ու թույլ ձայնով ծվծվում էին սև թռչունների մոխրագույն ձագերը:

Ես գտնվում էի ինձ անհայտ «թռչնային քաղաքի» դարպասների մոտ, և նրա բնակիչները պատրաստ էին կյանքները զոհել՝ իրենց «քաղաքն» ու ձագերին պաշտպանելու համար:

Ես ժայռից իջա և ներքևից նայեցի քարայրի ներսը: Այնտեղ, վերևում, տագնապ ապրած մայրերը սվսվալով հանդարտվում էին, իսկ նրանց թևերի տակ հավանաբար արդեն նիհիում էին աղետից ազատված իրենց ձագերը:

1936

ՀԵՏԱԽՈՒՅՁ ԱՂԱՎՆԻՆ

Սևան կղզու բնակիչները միշտ էլ խաղաղ են եղել. առաջ վանականներ էին այստեղ և ուխտավորներ, իսկ հիմա կոկիկ շենքերում աշխատավորներն են հանգստանում: Կղզու բնակիչները չեն հալածել թռչուններին, դրանից է, որ վայրի աղավնիների մի երամ մարդկանց ներկայությամբ թառում էր հինավուրց վանքի գմբեթին, խիստ քանու պահին պատսպարվում էր կղզու ժայռերի խոռոչներում, իսկ արև օրերին ձախարում ջինջ օդում:

Ամեն առավոտ ես բլուրն էի բարձրանում արևածագը տեսնելու: Լձից դուրեկան գոլություն էր փչում և կնճռոտվում էր վիթխարի կապույտ հայելին: Արևի շեկ-կարմրավուն գունդը վեր էր ելնում Այծեմնասարի թիկունքից և այդ պահին լիճն առկայծում էր՝ կարծես մի երկար շերտ հալոցք էին թափում ջրերի վրա:

– Ղճ, ղճ, ղճ, ղճ, ղճ,– լսվում էր ցնծագին կանչը մոտակա քարափից և երամն օդն էր բարձրանում՝ լողալու արևի առաջին շողերի մեջ, հիանալու ներքևում ծփացող ջրերի գեղեցկությամբ:

Մի անգամ էլ, դա վաղուց էր, բլրի գագաթին կանգնած նայում էի Գեղամա զարթնող լեռներին, արևի առաջին շոյանքից հուզվող ջրերին, իսկ որսորդն իմ մեջ խլրոտում էր ու տագնապով շշնջում ականջիս.

– Տճ, ինչ քնքշության ժամանակ է, սրանից հաջող որս որսե՞ղ կգտնես... Վազիր հրացանդ բեր...

Ամեն օր զսպում եմ նրա գայթակղեցնող փսփոցը, բայց այս անգամ հաղթեց ինձ, և քիչ անց, երկփողանի հրացանն ուսիս, ես նորից բլուրը բարձրացա:

Եվ որովհետև հրացանն ուսիս էր, այդ պատճառով էլ բնության հրաշալիքներն այդ առավոտ բոլորովին այլ տեսք ունեին իմ աչքում,– ջրերի վրա սահող բաղերին ես նայում էի որսորդի ագահությամբ, երկնքում ձախարող գորշ-կապտավուն թռչուններն այլևս չէին հնայում ինձ, և իմ մեջ միայն մի միտք կար, թե երբ են

իջնելու ժայռերին, որ կրակեն...

Մտա կծոխուրի թփի մեջ և հրացանը պատրաստ սպասում են, հայացքս հառած հեռվում մերթ փայլփլող, մերթ մարվող մոխրագույն կետերին:

Վերջապես աղավնիները վերջացրին իրենց արևածագի ձախրանքը և մոտեցող հողմի ձայնի նման լսեցի նրանց թևերի շափշափյունը: Սիրտս սկսեց ուժգին բաբախել. երամն ուղիղ ինձ վրա է գալիս: Կրակեցի, և մի թռչուն շանթահար լիճը ընկավ ու թևերը փռած սկսեց տարուբերվել ալիքների վրա:

Իր բարքերով կուսական կղզին այդպիսի բարբարոսություն երևի չէր տեսել:

Մյուս օրը նորից ժայռերի գլխին էի՝ մահաբեր գործիքը ձեռքիս: Թռչուններն այժմ անվստահությամբ ընդունեցին ինձ. գլուխս տեսնելուն պես նրանք խուճապով թռան և պտույտներ գործելով իջան մյուս ափին՝ Ցամաքաբերդի ժայռերին:

Ես դարան մտած հովազի համբերությամբ սպասում եմ նրանց վերադարձին: Սա նրանց բույնն է, այստեղ են ձագեր հանել, այստեղ ամեն մեկը նրանցից սիրային արկած է ունեցել, վաղ թե ուշ՝ այստեղ պիտի գան:

Քիչ անց հյուսիսից մի ցուրտ քամի փչեց, և բնությունը պղտորվեց: Որորները զիլ կանչերով թևածում էին հողմերի դեմ. փոթորիկ էր սպասվում:

«Կգան», չարախնդությամբ մտածեցի ես և այդ պահին գլխիս վերև թևերի շափշափյուն լսեցի:

Հենց հրացանս վերև մեկնեցի, երանը խուճապով շուռ եկավ և ծածկվեց իմ տեսողությունից:

Մտա խիտ թփերի տակ և լավ քողարկվեցի: Քիչ անց՝ նորից թևերի ձայն: Տերևների արանքից տեսա կուրծքը ձերմակ մի մեծ աղավնի պտույտներ է գործում վերևում և կտուցը ցած մեկնած՝ ուշադիր խուզարկում է ամեն թուփ ու խորշ:

«Հետախույզ են ուղարկել», – անցավ մտքովս, և ես շունչս պահեցի: Թռչունը ոչինչ կասկածելի բան չտեսնելով՝ վերադարձավ:

Քիչ անց նորից եկավ մենակ և այս անգամ այնքան ցածր էր թռչում, որ եթե կանգնեի ու հրացանս մեկնեի՝ կհասներ: Զգուշության համար նորից են ուղարկել... Բայց ես աշխատեցի իմ խորամանկությամբ գերազանցել նրանց. կուչ եկա թփերի տակ, դարձա մի ոգնու չափ:

Հետախույզը, որ հանդարտ էր թռչում, շուռ եկավ և սլացավ դեպի Ցամաքաբերդ. երևի ուրախ լուր էր տանում:

Հեռվից վշտոց լսվեց, և քիչ անց օդը լցվեց բազմաթիվ թևերի աղմուկով: Ես իմ թաքստոցից տեսա, որ երամն առաջնորդում է իմ ծանոթ թռչունը՝ կուրծքը ձերմակ: Եվ երբ նրանք իջնում էին կողքիս քարերի վրա, հրացանս ծուխ ու բոց ժայթքեց, մեկն օդում պտույտներ գործեց, տարուբերվեց հարբածի նման և ընկավ ժայռի ստորոտում աղմկող ջրերի մեջ...

Ես ցած իջա: Մահացու վերք ստացած թռչունը տարուբերվում էր փրփուրների մեջ և իր դահձից ահաբեկված ձգտում էր դեպի լճի խորքը: Բայց նրա ուժերը հետզհետե սպառվեցին և լիովին հանձնվեց ալիքների քմահաճույթին:

Լիճը նռայլվեց, վրդովված վշտացրեց ու փրփրած կոհակներով խփվեց ժայռերին, և թվաց, թե իմ անխիղճ արարքից է հուզվել նա: Ալիքն ափ նետեց սպանվածին: Ես վերցրի և սիրտս կսկծաց ցավից. կուրծքը ձերմակ աղավնին էր...

Խեղճը զոհ էր գնացել ընկերների համար կատարած իր անհաջող հետախույզությանը...

1936

ԲՈՂԱՐԻ, ՉԱԼԱՆԿԻ ՈՒ «ԱՍԵՂ ՄԱՇԿՈՂ» ԵՂՈՅԻ ՄԱՍԻՆ

1

Մենք մի ծեր շուն ունեինք, Բողար անունով: Երբ ես անասունները քշում էի հանդ, նա պոչը ոլորած, մեջքին դրած հպարտ-հպարտ քայլում էր իմ հետևից: Վիզը հաստ, բրդոտ, ոտքերը հզոր մի իսկական գայլախեղդ էր նա: Փոքր ժամանակ հայրս ականջները կտրել էր, որ անցքերը միշտ բաց մնան և լավ լսի:

Սարում, ակնակիր գիշերներին մեկ էլ տեսար Բողարը վեր կացավ վրանի շենքից ու ձորերը դմբդմբացնելով կորավ խավարում. գնում էր գայլերին հալածելու:

Շատ տարիներ են անցել, մինչև այժմ էլ երագում տեսնում եմ մեր Բողարին, միշտ ահարկու գողերի ու գայլերի համար, և մեղմ ու բարի՝ երեխաների, կանանց ու անօգնական արարածների հանդեպ:

Բողարը շատ մտերիմ էր մեր հարևանի շանը՝ Չալանկին: Սա մի ջահել չալ շուն էր, միշտ կայտառ, միշտ չարածձի: Գուցե դա նրանից էր, որ Չալանկը դեռ ձագեր չուներ և հոգսի տակ չէր ընկել:

Մեր Բողարը, թեև ծեր էր, բայց իր նախկին վեհությունն ու հպարտությունը դեռ պահպանում էր: Միշտ լուրջ էր ու գլուխը բարձր պահած, կատակներին չէր արձագանքում, պոչով գետինն ավլել չգիտեր ուրիշ շների նման: Արժանապատվություն ուներ մեր Բողարը:

Բայց առանձին քնքշանքով էր վերաբերվում ջահել Չալանկին և ինչքան էլ վրդովված լիներ, նրան տեսնելուն պես մեղմանում էր, յուրովի «ժպտում»:

Հանդում, կանաչ մարգագետիններում, Չալանկը պտտվում էր Բողարի շուրջը, թռչում էր նրա վրայով, բկից բռնում էր դնում

տակն ու «խեղդում», և հազար ու մի չարաձձիություններով չարչարում էր ծերուկին: Իսկ սա համբերությամբ տանում էր ու ներողամիտ նայում իր ջահել հարևանուհուն:

Նրանց խաղերի արդյունքն այն եղավ, որ Չալանկն ամառնամուտին ձագեր բերեց և մնաց տանը նրանց խնամելու:

Այդ օրից սկսած մեր Բողարին դժվարությամբ էինք պահում հանդում. շարունակ ձգտում էր դեպի վրանները, ուր ձագերն էին և նրանց մայրը:

2

Տարին վատ էր, մեր գյուղում սով էր, մարդիկ քաղցից կանաչ էին ուտում և ուռչում, ճվ շանը հաց կտար... Քանի հանդ էր գալիս Չալանկը, քաղցած չէր մնում, մի բան մենք էինք տալիս, մի բան Բողարն էր իր բաժնից մաս հանում: Այժմ տանը խեղձ Չալանկը ինչպե՞ս կերակրի և՛ իրեն, և՛ ձագերին:

Գուցե դրանից էր այնպես տխուր մեր Բողարը:

– Չալանկը չի ապրի...– մի օր ասաց տերը՝ մեր ընկեր Պետրոսի հայրը:

Մեր գյուղում մի հարուստ մարդ կար՝ «ասեղ մաշկող Եղոն»: Ասում էին երկու տարվա ցորեն կա նրա հորերում: Ծախում էր Եղոն այդ ցորենը առասպելական գներով: Մի եզին երկու փութ էր տալիս, մի գորգին՝ մեկ փութ, ոչխարին՝ կես փութ, իսկ փոխ տալիս էր՝ աշնանը մեկին հինգ վերադարձնելու պայմանով:

Պետրոսի հայրը Եղոյից փոխարինաբար ալյուր էր խնդրել, բայց վաշխառուն մերժել էր:

– Թե քո արտին եմ մտիկ անում, նրանից ուրիշ բաներ դուրս կգան, համա ցորեն չի դուրս գալ, քեզ ի՞նչ հույսով պարտք տամ,– պատճառաբանել էր նա:

– Ախր էն անլեզու կենդանին սատկում է, ճուտերը մեղք են, գոնե մի գրվանքա գարու ալյուր տուր,– խնդրել էր Պետրոսի նայրը:

- Ո՞ր կենդանին, շճունը,- գլխի էր ընկել Եղոն ու փառ-փառ ծիծաղել, ինչպես առաջ կուշտ մարդիկ էին սովոր ծիծաղելու:

Ու ասեղ մաշկող Եղոն, դրանից հետո, բինայում կանգնում էր, բույթ մատները խրում արծաթե գոտու տակ, պատմում էր այդ դեպքը սարվորներին, ու ծիծաղելուց ցնցվում էր նրա պարարտ փորը:

- Աղքատի խելք է, է, ինքը հացը երագում է տեսնում, շանը ուզում է գարի ավրով լակ տա...

Պետրոսի հայրը ճարահատյալ որոշել էր Չալանկի ձագերին ոչնչացնել, բայց կինը դեմ էր կանգնել, թե՛ «Մեղք են, անխիղճ բան մի անի»:

Դե նա էլ էր մայր, ինչպե՞ս կարող էր այդպիսի դաժանություն թույլ տալ իր հարկի տակ:

3

Մի օր մենք՝ տավարածներով մի ծառի տակ նստած, խոսում էինք Չալանկի անհուսալի վիճակի մասին, իսկ Բողարը ուշադիր լսում էր ու իր թախիծով լի աչքերով նայում մեզ:

Այդ պահին հարևան ծառից մի սկյուռ վար ցատկեց, բայց դեռ հաջորդ ծառին չհասած, Բողարը վրա հասավ, հափշտակեց գազանիկին և ձորակն ի վեր վազեց դեպի վրանները: Այն ժամանակ մենք գլխի չընկանք, թե ո՞ր է շտապում նա, բայց երեկոյան Պետրոսը մտավ մեր վրանը՝ սկյուռի պոչը ձեռքին:

- Որտեղի՞ց,- հետաքրքրվեցի ես:

- Չալանկի բնում գտա,- ու նշանակալից ժպտաց:

Հաջորդ օրը ես պարսատիկով մի ագռավ սպանեցի ու գցեցի Բողարի առաջ: Շունը որսը վերցրեց և գողեգող, չորս կողմը նայելով իջավ ձորակն ու այնուհետև ամբողջ օրը չերևաց:

Երեկոյան Պետրոսը նորից մտավ մեր վրանը, նրա լայն դեմքը փայլում էր բավականությունից:

- Հը՞, չլինի՞ Չալանկի պառավ փեսացուն էլի որս է բերել,-

հարցրի ես ծիծաղելով:

- Հա՛, Չալանկի բունը լիքն է ագռավի փետուրներով...

Մեր Բողարը գնալով նիհարում էր, իսկ Չալանկի դրությունը վատ չէր, չնայած ձագեր էր կերակրում:

- Էս շանը լավ չեք մտիկ անում,- մի օր մորս վրա նեղացավ հայրս:

- Ամեն ժամանակվա չափ ուտելիք ենք տալիս, բայց դե, պառավել է, լղարելու է, հո չի չաղանալու,- արդարացավ մայրս:

Ես գլխի ընկա, թե ինչ է կատարվում, և այնպես ուրախացա, որ վագեցի իմ ընկեր Պետրոսի մոտ, նրան վրանից դուրս կանչեցի ու հարցրի.

- Պետրո՞ս, էսօր մեր սարում անասուն չի՞ փչացել:

- Ոնց չէ, Մարկոսենց մոզուն գելը կերել է:

- Բոլորը՞:

- Չէ՛, ռեկիցը խլել են բերել... Հրե կշեռքը դրած միսը ծախում են:

- Դե գնանք առնենք:

- Մեզ փող որտեղի՞ց,- տատանվեց Պետրոսը:

- Փող պետք չի, գնանք:

Մտանք Մարկոսենց վրանը:

- Բեռի՛,- դիմեցի էս ծեր հովվին,- մեր Բողարի համար մի քանի ոսկոր տուր, էգուց քեզ համար անտառում մի լավ չոմբախ կշինեմ:

- Տա՛ր, բա՛լա, որ չոմբախ չբերես չե՛մ տա: Ամոթ չի՛, հարևան մարդիկ ենք,- նեղացավ ծերունին և մոզու վերջավորությունները մսալի կտրեց ու հանձնեց ինձ:

- Բայց դե հարամ ուտի Բողարը, որ առաջվա Բողարը լիներ, իմ մոզին գելերո՞ց կլիներ,- ավելացրեց ծեր հովիվը:

- Դե նա մեր Չալանկով էնքան է տարվել, որ արար-աշխարհք մոռացել է: Վերջին սերն է, մեղադրելու չի,- ծիծաղելով պատասխանեց Պետրոսն ու դուրս եկանք վրանից:

Ամառվա լուսնյակ ու մեղմ գիշեր էր: Գնացինք մեր Բողարի

բնի մոտ, ոսկորները դրինք առաջն ու թաքնվեցինք մեր վրանի հետևում: Այդտեղ լուսինը չէր ընկել, մութ էր, իսկ շան բույնը ցերեկվա նման լուսավոր էր: Մեր թաքստոցից գաղտագողի դիտում էինք:

Բողարը դուրս եկավ բնից, շուրջը նայեց: Համոզվեց, որ ոչ ոք չի տեսնում իրեն, մի կտոր մսոտ ոսկոր վերցրեց ու վազեց դեպի Պետրոսենց վրանը: Քիչ անց, եկավ մի կտոր էլ տարավ, ապա երրորդը, չորրորդը, և վերադարձավ իր բույնը: Մենք գնացինք Չալանկի մոտ և նրան տեսանք ճոխ ընթրիքի նստած...:

Լուսնի լույսով նրա աչքերը երջանկությունից պսպղում էին, իսկ ձագերը ստինքներից կախված՝ մուշ-մուշ անուշ էին անում մայրական քաղցր կաթը:

Մենք նստել էինք աղաքարին, իսկ շունը և ուտում, և բարեկամաբար շարժում էր պոչը:

- Մի կտոր էլ Բողարին տանենք,- առաջարկեց Պետրոսը:

- Չի վերցնի... նրան հո գիտես...:

- Մարդ Եղոյի ականջիցը բռնած բերի ցույց տա, որ գոնե էս շներից ամաչի,- դառնությամբ ասաց Պետրոսը:

Բինան մուշ-մուշ նիրհում էր ամառվա ջինջ երկնքի տակ, անասունները մեղմ որոճում էին, իսկ ես ընկել էի մտքերիս ծովը. «Ինչո՞ւ է մեռել մարդկանց խիղճը... Ինչո՞ւ գոնե է՛ն անլեզու կենդանու չափ չեն օգնում իրենց սոված հարևաններին», - մտածում էի ես, մտածում, մանուկ հոգիս փոթոթվում էր, բայց պատասխանը չէի գտնում...:

1939

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Հին ժամանակ մի ազգահ որսորդ է լինում:

Էդ որսորդը շատ քարայծեր ու վայրի ոչխարներ է սպանում, քայց աչքը չի կշտանում: Մի օր էլ կնոջն ասում է.

– Ես դրանց կենդանի պիտի բռնեմ:

Ասում է, հրացանն առնում, սար է բարձրանում, մի շատ խոշոր արու այծ է սպանում: Տիկ է հանում էդ այծին, մտնում մորթու մեջ, ահագին եղջուրներն էլ ամրացնում իր գլխին ու այդպես գնում լեռան ծերպերը, ուր քարայծերն էին թաքնվում:

Ժայռերի տակով նա զգուշությամբ մոտենում է այծերի հոտին, էն մտքով, որ նրանց խաբի ու կենդանի-կենդանի բռնի:

Էստեղ մի որսորդ դարան մտած՝ որսի է սպասելիս լինում: Էդ որսորդը տեսնում է մի ահագին քարայծ կամաց-կամաց գնում է դեպի մառախուղի մեջ հազիվ երևացող հոտը: Հրացանը մեկնում է, որ կրակի, մեկ էլ մտածում է. «Շատ է մեծ, վայթե մի գնդակով չընկնի»:

Իր հին հրացանի փողից մի մեծ կլոր գնդակ էլ է ներս գցում, շամփուրով ամրացնում և զույգ գնդակներն էլ արձակում քարայծի վրա: Կրակելուն պես մի մարդկային ճիչ է լսում: Վազում տեսնում է, որ իր սպանածը մարդ է՝ այծի մորթու մեջ...

– Ա՛յ մարդ, ինձ ինչի՞ արյան տակ գցեցիր,– գոչում է որսորդը սարսափած:

Այդտեղ այծի մորթով մարդը պատմում է իր սպանության ու խորամանկության մասին և հոգին փչում է:

Որսորդը նրան թաղում է, գերեզմանին մի տափակ քար է գցում ու վրան փորագրում հետևյալ խրատական խոսքը.

«Ով իր մորթին փոխի՝ զույգ գնդակի կպատահի»:

1939

ՈՐՄԿԱՆ ԱՎԱԳԸ

Մեր հարևան Ավագը հիվանդ էր: Սարերում, արջերի ու եղնիկների հետ մեծացած այդ մարդը, որի մարմինը պողպատ էր դարձել դաժան բնության դեմ ամբողջ երեք քառորդ դար կռվելով, այժմ անօգնական ընկած էր հին թախտին և աչքերը առաստաղին հառած՝ ծանր տնքում էր:

Տանեցիք ուզեցին Դիլիջանից բժիշկ կանչել՝ չհամաձայնեց:

- Իմ դարմանն է՛ն անմահական ծաղիկներն են, որ չորացանկորան,- տնքոցով ասում էր նա:

Դրսում մռայլ աշուն էր, և ծեր որսկանի մեռնող հոգին թափառում էր իր սիրած սարերում:

- Մի աստծու բաներին մտիկ, է,- խոսեց նա ինքն իրեն, գառանցելու նման:- Ինքը ստեղծում ա, սնր, չո՛ղ, հանդ, ուրթ ու ձոր զարդարում մեխակով ու նարգիզով, վարդ ու տերևով, սուսամբարով ու լալագարով... ու ինքն էլ իր ձեռքով փչացնում, չորացնում ա էս դրախտ երկիրն ու սառը ձնով ծածկում... Բա սա խնկր ա, այ խալխը, բա էդ ի՛նչ արնախումբի ձեռք պիտի լինի, որ իրան սարքած է՛ն սիրուն գյուլստանը քանդի...:

Հիվանդը ջուր ուզեց. նրա ներսն այրվում էր, չգիտես ջերմություննից, թե՛ իր սիրած սարերի կարոտից:

- Հան՛ն չկա, լազաթ չեմ առնում էս գահրումարից,- դժգոհեց նա խմելուց հետո:- Ա՛խ, աշխարհիցը ուրիշ բան չեմ ուզում, մեր սարի Ջուլստակ աղբրների ջրիցը փարչով՝ մի կլկլալեն խմեն, սիրտս վառող կրակը կհանգչի ու վեր կկենամ...:

- Էլի շաշ-շաշ մի՛ խոսի: Սարերում ձին է գալիս, գելերն են ոռնում, սրա ուշքն ու միտքն էլի սարումն է... Ջուրը ջո՛ր է, էլի. սարինը ո՞րն է, գեղինը ո՞րը,- նախատեց կինը և կարծես ինքն իրեն շարունակեց:- Էս տնաշենին առա-չառա, մի օր տանը չմնաց, ամառ, ձմեռ, գիշեր, ցերեկ չուլերն ընկած յա որսի հետևից, յա ոչխարի... Ը՛ր, կտրվես դու, յարաբ ի՛նչ ես հասկանում էդ դա-

1 Փարչ - կուլա:

չաղի կյանքից...

Հիվանդը ծիծաղեց:

- Ախր կնիկ ես, է՛, ուշքդ քու տան պուճախումն ա: Իսկի մտածե՛լ ես, թե էս ի՛նչ տեսակ երկրում ենք ապրում... Իսկի Խալ-խալլվի գլխին կանգնել ու ոտներիդ տակին փռված աշխարհքին մտիկ ես արե՛լ... Իսկի պանիրն ու հացն ուտելուց հետո Ջուխտակ աղբրի վրա չոքել, խմել ու «օխսնյ» ես արե՛լ, որ հասկանամ, թե ես ի՛նչ եմ ասում, յա սրտումս ի՛նչ կա...

Հիվանդը շուռ եկավ իմ կողմը:

- Իմ ասածը սա՛ կհասկանա, սա՛ տավարած ա, կհասկանա... Վախթանգ ջան, էս անձրևների վրա հիմի ուրթերումը սունկ ա դուրս գալիս, չէ՞...

- Հա՛, ո՞նց չէ, երեկ էլ ենք հավաքել:

- Վրեն աղ եք ցանում, պեծին գցում ու մոխրակոլով ուտո՞ւմ...

- Ուտում ենք, բա՛...

- Ու վրեն էլ չոքում եք Ջուխտակ աղբրի ջուրը խմում, էլի՛...

- Էն էլ ո՞նց...

- Օխսնյ, այ՛ բալեք, երանի ձեզ....

Եվ այդ աժդահա մարդը անգորությունից ու սրտի նեղվելուց արտասվեց:

- Նանի՛, փարչը տուր,- գոչեցի ես վեր թռչելով:

Մայրս հասկացավ ու սփրթնեց:

- Ա՛յ որդի, գելերոց կլինես...

Էլ մնացածը չլսեցի: Կուլան վերցրի, չոմբախն ուսիս դրի ու դուրս թռա տնից:

...Քափ-քրտինքի մեջ մտած՝ դեպի սարերն եմ շտապում: Աշնան մերկ անտառը տխուր սվսվում էր ցրտաշունչ հողմի առաջ, մառախուղը ձորերից դեպի վեր էր բարձրանում ու վարագուրում սարերը, ուր Ջուխտակ աղբյուրն է:

Հասա սարահարթին: Ահա վրանները առանց թաղիքների, միայն ձիպոտներն են մերկ ցցված՝ կմախքների նման:

Ի՛նչ տխուր է աշնանը սարում: Հիմա ես հասկանում եմ, թե

ինչո՞ւ է որսկան Ավագը այնքան ցավով խոսում սարի ծաղիկների չորանալու մասին...

Սարահարթն ուշ աշնան անձրևներից նորից թավիչ կանաչով է ծածկվել: Կանաչ հարթավայրում տեղ-տեղ ճերմակ բաներ են սպիտակին տալիս. կարծես սագի, հավի, ուրուրի ձվեր ցրված լինեն այդ տափարակում:

- Սունկերը...

Ի՞նչ ազահությամբ են հավաքում-լցնում փափախս:

Վերևում գազաթները թաղվել են մառախուղի մեջ: Այդ ինձ չի վախեցնում՝ ես սարի ծնունդ եմ ու սովոր նրա և՛ փոթորկին, և՛ գազազած տարերքին: Բայց սարահարթի եզրից ներքև սկսվում է անտառը, և ես գիտեմ, թե ի՞նչ մեղրահամ գլեռ կա թփուտներուն: Ցած իջա, ժայռերից ներքև գլեռի ծառերի պատահեցի: Այդ ամայի վայրում գլեռը մնացել է անարատ ու հասել-«մեղրակալել է»: Ծառերի տակ չոր տերևները խառնված են, ճյուղերը՝ փշրված, ինչ-որ անասուններ են ջարդել: Սա արջերի գործը կլինի:

Լավ գլեռ կերա, սունկ խորովեցի, անուշ արի, մտա ժայռի խոռոչն ու թեք ընկա...

Դրսում ուշ աշնան անձրևն էր մաղում ու իր դուրեկան, հագիվ լսելի խշշոցով անդորր բերում ինձ:

Քնեցի:

Երբ արթնացա, կեսգիշեր էր արդեն: Ափսոս, լուսին չկար, թե չէ սարը կբարձրանայի, որ պապիս ուզած ջրից կուլաս լցնեմ: Ակնակիր գիշեր է, հիմի ինչ անեմ: Ճարահատյալ կուլան լցրի ներքևում քչքչացող աշնան գուլալ առվից ու անտառներով, մթնում խարխափելով գյուղ գնացի: «Նա ի՞նչ գիտի Ջուխտակ աղբրից է, թե՞ Գառնաքարի առվից», - մխթարում էի ինքս ինձ ճանապարհին:

Երբ տուն մտա, որսկան Ավագն աչքը շեմքին գցած՝ ինձ էր սպասում: Երևի մերձիմահ էր, որ հավաքվել էին հարևանները, իսկ հայրս գնացել էր քահանա կանչելու:

- Եկամք, բալա ջան,- ասաց նա՝ այրվող աչքերը կուլային հանելով:

- Հա, պապի, եկա:

- Բերի՞ր:

- Բերել եմ:

- Սունկն էլ:

- Սունկն էլ, հլա զկեռն էլ, հլա տզգան խնձորն էլ,- պատասխանեցի ես՝ տոպրակս անկողնու վրա դատարկելով:

- Վայ, ես քու արևին մատաղ, այ ասլան-բալա, դե էդ ջուրը մի դեսը տուր...

Դժվարությամբ վրա նստեց, դողդողացող ձեռքերով վեր բարձրացրեց կուլան, կըլ-կըլ-կըլ խմեց ու սրտալի ասաց.

- Օխայ, սիրտդ հովանա, ոնց որ իմ սիրտը հովացավ... Կյանքդ էս ջրի չափ երկար լինի, բալմ...

Ու կնոջը դառնալով զվարթ ձայնեց.

- Շորերս բեր, կնիկ:

- Ա՛յ մարդ, հալիդ կաց,- նախատեց կինը գլուխն օրորելով:

- Կնիկ, ասում եմ շորերս բեր, սրան Խալ-խալվի ջուր կասեն, սա որտեղով գնում ա, կյանք ա տալի, ծառին էլ, կանաչին էլ, հողին էլ... Տարամ, կնիկ ջան, շորերս բեր, ինչքան ցավ ունեի, քչեց-տարավ... Սրան սարի ջուր կասեն, ես սրա զորությանը դուրբան:

...Երկու օր անց որսկան Ավագը «բերդանն» ուսին գնում էր որսի...

1939

ԹՈՐՈՍԵՆՅ ԱԹՈՆ

1

Աթոյի տունը երկհարկանի էր, թիթեղյա տանիքով և արևոտ սենյակներով: Ձորին նայող պատշգամբի կեսն ապակեպատ էր՝ կազմված եռանկյունի գույնզգույն մանր ապակիներից, և երբ արևը ծագում էր, սենյակներում խաղում էին ծիածանի բոլոր գույները: Նկուղներն ընդարձակ էին և լի ամեն բարիքով: Այդտեղ տարվա բոլոր եղանակներին դուք կգտնեիք արկղներով մեղրահացեր, կարասներով յուղ, պանիր, դաուրմա, առաստաղից կախած խնձորի և տանձի կախաններ:

Տան հետևը, գյուղից դուրս, Աթոյի գոմն էր, ուր կապված էին քսան-քսահինգ կով, գոմեշներ, եզներ: Ձիանոցում գարի էին խժռում և ուրախ խրխնջում ձիերը, իսկ ոչխարի հոտը գյուղից հեռու, անտառի մեջ շինված ձմեռանոցումն էր:

Աթոն մեր գյուղի ամենահարուստ և ամենաժլատ մարդն էր: Իր կյանքում այդ մարդը լավություն արած չկար: Ոչ ոք նրա տունը հյուր չէր գնում, ոչ ոք նրանից ո՛չ հաց էր փոխ առնում, ո՛չ կացին, ո՛չ բահ:

Մարդն ահագին հարստության մեջ թաղված՝ տանջվում էր այն մտքից, թե իր հարսները թաքուն կարող են հաց ուտել: Մոդուկների բանալիներն իր մոտ էր պահում, հավերին ամեն լուսադեմ «ակն էր տալիս» և ձվերի հաշիվը պահում, բայց էլի հանգիստ չէր հոգով, կասկածը տանջում էր նրան:

Բացի ժլատ լինելուց, զարմանալի չկամ մարդ էր Աթոն, չէր ուզում, որ ուրիշի վրա արև կայչի, չէր ուզում, որ հարևանն ապրի: Վայ այն հարևանին, որ կհամարձակվեր լվացք անել ու շոր փռել այն օրը, երբ Աթոյի տանը լվացք ունեին:

Կբարձրանար մարագի կտուտը, բուծ մատը կխրեր արծաթե գոտու տակ, ոտքերը լայն դրած՝ կոճղի նման կկանգներ ու բե-

րանը բաց կաներ.

- Քեզ ասել չեմ, որ օրը լվացք ունենք՝ դու շոր մի փռիլ, հը... Էս տեսակ էլ անամոթ կնանիք կըլեն, տո ո՛ր քոչենք, որ պրծենք սրանց ձեռիցը: Թողեք էս զահրումար արևը մեր լվացքը չորացնի, հետո դո՛ւք փռեցեք, էլի...

Կարծես արևը չէր կարող և՛ իրենց շորերը չորացնի, և՛ հարևանի:

Կամ փայտը կվերցնեն ու հայհոյելով կընկներ աքաղաղի հետևից.

- Ը՛րը, ես քու կտուցը... հերիք չի՞ իմ կուտն ուտես, գնաս խալխի կտերը ծուղրուղու կանչեմ...

Որ հարևանի երեխան կրակն ընկեր, ձեռքը չէր մեկնի, որ ազատի: Բնությունը կարծես ջոկել, նրա մեջ դրել էր այն ժամանակվա մարդկանց բոլոր արգահատելի գծերը:

Այսպիսի մարդ էր Թորոսենց Աթոն:

Վայ այն դժբախտին, որ նեղության մեջ ընկած ժամանակ մի քանի ռուբլի պարտք կվերցնեն նրանից, էլ մինչև մահը տոկոսների ու նրանց տոկոսների տակից չէր կարող դուրս գալ:

Դրա համար էլ մեր գյուղում ատում էին Աթոյին:

Բայց ուժը նրա՛ ձեռին էր, գյուղի ամենալավ հողերը նրանն էին, հարստությունը նրանն էր:

2

Ինչպե՞ս էր հարստացել Թորոսենց Աթոն:

Այդ հարցը շատերն էին տալիս իրենց, բայց քչերը գիտեին նրա պատասխանը: Հասակակիցները գիտեին, որ նա երիտասարդ ժամանակ մանրավաճառի փոքրիկ խանութ ուներ և շատ աչքաբաց, «ժուլիկ» տղա էր:

1877 թվականին մեր ձորերով մեծ գորք էր անցել, - ռուսական գորք, - և գնացել էր կռվելու Տաճկաստանի դեմ: Այդ կռիվը մեր կողմերում հայտնի էր «Լոռիս-Մելիքովի կռիվ» անունով:

Թորոսենց Աթոն եթե այդ կովովը հարստանար՝ հասկանալի կլիներ, քանի որ այդ խառը ժամանակները ոմանք գորքի հետևից ռազմաձակատ էին գնացել և ավար ճանկել: Բայց Աթոնյի բերանը ոսկոր չընկավ այդ ժամանակ. նա հանկարծ հարստացավ՝ պատերազմը վերջանալուց հետո:

Այսպես եղավ:

Մեր գյուղում նահապետական մի ընտանիք կար, որի գլխին կանգնած էր բարի ու աշխատասեր ծերունի Մելիքենց Արշակը: Նա ութ չափահաս տղա ուներ և բազմաթիվ թոռներ: Ընտանիքում տասնչորս աշխատող տղամարդ կար. մեկը ոչխարն էր պահում, մեկը՝ տավարը, մեկը մեղվանոցին էր հսկում, մի քանիսը վար էին անում:

Մելիքենց Արշակը հաց էլ շատ ուներ, անասուն էլ: Նա լավ բերք վերցրեց Լոռիս-Մելիքովի կովի տարին և հացի ու անասունների մի մասը լավ գնով ծախեց գորքին:

Երբ կռիվը վերջացավ և ժամանակ անցավ, մի օր ծերունի Արշակը մտավ Աթոնյի տուն և շուրջը նայելով՝ գաղտնի ասաց.

- Սանիկ ջան, մի քիչ փող ունեմ, գիտեմ ոչ ճրտեղ պահեմ: Դե մեծ օջախ, գնացող-եկողին էլ հաշիվ չկա, ո՛վ գիտի, ինչ կպատահի...

Երիտասարդ չարչու աչքերը պսպղացին գող կատվի աչքերի պես:

- Քավոր ջան, հո սանիկը, հո՛ նարագատ տղեն՝ մի՛ բան է, տուր պահեմ, երբ հարկավոր կըլի՝ կտամ,- ասաց նա:

Ծերունին արխալուղի գրպանից հանեց իր կարմիր թաշկինակը, դողդոջուն ձեռքերով քանդեց կապը և թղթադրամները հանձնեց իր սանիկ Աթոնյին:

Սա համրեց նոր կտրած «ճոճոան» Նիկոլայի հարյուրանոցները և, աշխատելով անտարբեր ձևանալ, ասաց.

- Տասնչորս հատ է:

- Հա՛, տասնչորս հատ ա, սանիկ ջան, պահի՛, Սեդրակիս հարսանիքին ինձ կտաս:

- Հանգիստ գործիդ գնա,- պատասխանեց «սանիկը»՝ սնդուկը կողպելով:

Իսկ երբ քավորը դուրս էր գալիս, շենքում նորից հիշեցրեց.

- Տասնչորս թուղթ փող ինձ պահ տվիր համ, քավոր Արշակ. լավ միտդ պահիր...

Մի տարի անց Սեդրակին նշան դրին:

Քավոր Արշակը գնաց փողը վերցնի իր սանիկից, որ տղայի հարսանիքի ծախսերը հոգա:

Աթոն սնդուկից մի փոքրիկ կապոց թղթադրամ հանեց, հաշվեց և ծերունուն հանձնելով ասաց.

- Տասնչորսն է, թե՛ չէ:

- Տասնչորսն ա, սանիկ ջան, կյանքդ երկար ըլի:

Ու գնաց:

Այդ այն ժամանակ էր, երբ մեր լեռնային հետամնաց գյուղերում շատ քիչ մարդ կար, որ փողը լավ ճանաչեր, դեպք էր եղել, երբ նոր կտրված երկու կոպեկանոցը մեր գյուղում ոսկի դրամի տեղ էին ընդունել: Այդ դեպքից հետո գյուղացիները այլևս ոսկի չէին վերցնում, կասկածում էին, թե ոսկու տեղ պղնձե դրամ կտան իրենց: Այդ ժամանակ փակ նահապետական տնտեսություն էր. ճվ էր փողի երես տեսնում, փողի մասին ճվ գաղափար ուներ:

Ուրեմն թող զարմանալի չթվա, որ երբ Մելիքենց Արշակը մի թղթադրամ հանձնեց իր ավագ որդուն՝ Սմբատին, և պատվիրեց Սեդրակի համար «ղարամանդուլ» արխալուղ ու «բուխարա» (կարակուլ) փափախ գնի, Սմբատն էլ չհասկացավ, որ իր ստացածը ճիշտ հարյուրանոց է, այլ ռուբլիանոց... Այդ բանը պարզվեց միայն գավառական քաղաքում՝ իր նոր պատվիրած իրերը գնելիս:

Մելիքենց Արշակը սիրտը սևակնած՝ գնաց իր սանիկի մոտ. թուք ու մուր տվեց, ոչինչ դուրս չեկավ:

- Ախպեր, տասնչորս հատ տվել ես, մոտդ հաշվել եմ ու դրել սնդուկը: Եկար՝ տասնչորսն էլ քեզ տվի, էլ ի՞նչ ես ուզում ինձանից:

- Բա տասնչորս ճիպտոն ու տասնչորս կաղնի գերանը մին ամ: Ես քեզ կաղնի գերաններ եմ պահ տվել, տեղը ճիպտոններ ես տալիս,- իրեն հանգի պատկերավոր բացատրում էր ծերունի Արշակը.

- Ճիպտո ես պահ տվել, գերանի երես չեմ տեսել,- ուրացավ Աթոն:

- Թո՛ւ էդ նամուսիդ, նամարդ...

Ու ծերունին դառնացած սրտով վերադարձավ իր տուն, անկողին մտավ և այլևս վեր չկացավ:

Մեռնելուց առաջ նա իր մոտ կանչեց իր որդիներին, հարսներին և երեսունի հասնող թոռներին ու ծոռներին և թույլ ձայնով ասաց.

- Հարյուր տարի էն ծմակի կաղնու պես կանգնած էի, երեխեք ջան, ու ո՛չ սելավն է ինձ տեղահան արել, ո՛չ էլ գլուխս եմ ծռել քամու առաջ: Բայց նամարդ մարդն իմ մեջքը կոտրեց: Չասեք, թե մեր կորած փողի մասին եմ մտածում: Փողը հե՛նչ, փողը ձեռի կեղտ ա, էսօր կա, էգուց չկա: Իմ դարդն էլ էն ա, որ աշխարհքը փչացել ա, մարդիկ դառել են խորամանկ, կեղծավոր, խաբում են իրար, հարևանին տրորում են՝ իրանք բարձրանում: Էդ իմ մեջքը կոտրեց, երեխեք ջան...

Ու մեռավ ծերունի Արշակը՝ ցավը սրտում, որ «աշխարհքը փչացել ա»:

Իսկ Աթոն նրա փողերով գեղեցիկ տուն կառուցեց: Ռուսաստանից խնձորենու և տանձենու տնկիներ բերել տվեց և մի մեծ այգի գցեց, տավար-ոչխար առավ, աղքատների հողերը չնչին գներով գնեց ու սկսեց օր-օրի հարստանալ:

3

Աթոն աղջիկներ շատ ուներ, ու ամեն անգամ նրանց մարդու տալիս մեկ սրտանց ուրախանում էր, որ մի ուտողից ու հագնողից էլ է ազատվելու, մեկ էլ տնքում էր, որ հարսանիքին

մարդիկ են գալու իր տուն և ծախսի տակ են գցելու հրեն:

Այդ տարի նրա աղջիկներից մեկին հորեղբորս տղային ուզեցին:

- Ասում եմ մի քանի մարդով գնանք սուսուփուս բերենք մեր հարսին, Աթոյի օջախում հաց ուտելը հարամ է,- ասաց հայրս իր փոքր եղբորը՝ Սաքոյին:

Սաքոն ուտող-խմող, քեֆ անող մարդ էր: Խոզեր էր պահում-շատացնում մինչև աշուն: Աշնանը բոլորն էլ մորթում էր, բացի երկու մերունից, և ձմեռը հյուրասիրում էր ընկերներին ու բարեկամներին ու ինքն էլ հետները քեֆ էր անում:

Մեր գյուղում Աթոն ու իմ հորեղբայր Սաքոն ամեն մեկը մի բևեռում էին՝ մեկը ծայրահեղ ժլատ, մյուսը՝ ծայրահեղ սրտաբաց ու հյուրասեր: Այդ էր պատճառը, որ ոչ ոք Աթոյին այնքան չէր ատում, որքան Սաքո ամին:

Դրա համար էլ նա եղբոր խոսքը կտրեց և, իր սովորության համաձայն, տաքացած գոչեց.

- Իի՛նչ... սուսուփուս բերե՛նք: Չէ, ես չեմ թողնի, որ Աթոն էժան պրծնի: Մինչև ծովսը նրա քթից չհանեմ՝ չեմ հանգստանա, նա ինձ վառել է...

Բոլորն էլ գիտեին տաքարյուն Սաքոյի բնավորությունը, ուստի չառարկեցին:

- Հարսանիքը կազմակերպողն էլ եմ ես, կառավարողն էլ, ոչ ոք մոտ չգա,- կարգադրեց նա:

Այդ նշան էր, որ մեր խնամի Աթոյի գլխին փոթորիկ է պատրաստվում:

Սաքո ամին չուխի փեշը ընկույզով լցրեց, բարձրացավ կտուրն ու այնտեղից բուռ-բուռ սկսեց շարտել՝ մեկ կալի, մեկ մեծ ճանապարհի կողմը: Թաղի երեխաները իսկույն հավաքվեցին կուտ տեսած հավերի նման ու սկսեցին իրար հրմշտելով հավաքել ընկույզները:

Ապա կտուրից իջավ, մոտեցավ մեզ ու գոչեց.

- Ձեններդ կտրեցեք, բան եմ ասում:

Հետո մեզ փոքր խմբերի բաժանեց ու հրահանգեց.

- Ադա՛, Ենո՛ք, ներքի թաղը քեզ: Վերի թաղը էս մեր կաշա-
ղակի ճուտին, Ակոյենց թաղը՝ Մացակի էս լպուզին: Այ ճիպրո՛
(դարձավ ինձ), Ալխանանց թաղն էլ քեզ: Կգնաք տնետուն ման
կգաք ու կասեք՝ Սաքո ամին պատվիրել է, որ էգուց դիողի ձենն
առան թե չէ, թող տնով-տեղով, ճժով-պժով գան ինձ մոտ: Ասա-
ցեք՝ Սաքո ամին բոլորիդ էլ դո՛նաղ է կանչում, ում տանը որ
երկու ոտանի է մնացել, կգամ տեղնուտեղը կսպանեն...

Մենք թովռալով հենց ուզում էինք ցրվել դեպի նշանակված
տեղերը, Սաքո ամին որոտաց.

- Կացե՛ք: Բա հանդերում, գոմերում, քոլերում չոբաններ էլ
կան, ծառ կտորողներ էլ, խոզարածներ էլ կան, բա նրանք իմ
խնամի Աթոյի հավերի համը չպետք է առնեն, ինչ եք կարծում:

- Պետք է առնեն,- ձայն տվինք մենք ուրախացած:

- Դե՛, լակոտներ ջան, գեղը որ պրծնեք՝ մի խումբը թող գնա
Անագյունեի գոմերը¹, մեկը Դոշտողանի գոմերը, մեկը՝ Հաղարծնի
գոմերը, ինչքան չոբան ու տավարած կա, կհավաքեք կբերեք:
Համա որ մեկը պակաս էլավ, ձեր մեծ թիփեն ականջներդ եմ
թողնելու, հա՛...

Այսպես ամուր պատվիրեց Սաքո ամին, ամեն մեկիս ձեռը մի
մեծ շիշ հոնի օղի տվեց ու ավելացրեց.

- Ամեն պատահողի մի բաժակ օղի կտաք ու կստիպեք, որ
խմի: Որ խմեց՝ կգա:

Հին գյուղի սովորությունն այդպես էր. հարսանիքի կանչելիս,
որպես հրավերի նշան մարդկանց գտնում և մի գավաթ օղի էին
խմեցնում, որից հետո օղի խմող մարդու համար հարսանիք
գալը պարտադիր էր դառնում:

Մենք տնետուն պատեցինք, ապա հանդերն ընկանք, ձմեռա-
նոցները գնացինք և ում պատահեցինք՝ բոլորին էլ հրավիրեցինք
հարսանիքի:

¹ «Գոմեր» մենք ձմեռանոցին էինք անվանում:

Ո՛վ էր գլխից ձեռք վերցրել Դավի Սաքոյի հրավերը չընդունել...

4

Մյուս օրն առավոտյան հենց գունճան փչեց, ամբողջ գյուղը՝ մեր ու մանուկ, հարս ու աղջիկ, ծեր ու ջահել, բոլորն էլ հավաքվեցին Սաքո ամու ընդարձակ կալը:

Քիչ անց, ձմեռանոցներից չոբաններն ու տավարածներն էլ եկան՝ թութակ ու սրինգ փչելով: Դրանք էլ որ եկան, Սաքո ամին քարձր ձայնով հարցրեց.

– Ժողովուրդ, տներումն էլ մարդ չի մնացել:

– Չէ, չէ,– ձայն տվին այս ու այն կողմից:

– Մեր օրորոցումը մի երեխա կա,– կատակեց մեկը:

– Նրան էլ բերեք, նրան օրորողին էլ, թե չէ...– որոտաց Սաքո ամին:

Ժողովուրդը քրքջաց: Գնացին, որ օրորոցի երեխային ու նրան խնամողին էլ բերեն:

– Ուստա Ակոփ, մի «Քոչարի» փչի,– կարգադրեց Սաքո ամին ու, խմբի գլուխն անցած, սկսեց պարել: Դրանից հետո հերթը «Լեզգիկային» հասավ, հետո՝ «Խնկի ծառին», հետո՝ «Որսկանի պարին»:

Այդպես, Սաքո ամին մինչև կեսօր բոլորին էլ պար ածեց, հալից գցեց և մի քարի բարձրանալով, ձայն տվեց.

– Ժողովուրդ, գիտե՞ք ձեզ ինչի եմ էսքան լեզգիկա պար ածում:

– Ինչի՞...

– Նրա ճամար, որ փորներդ նստի, մի լավ սովեք:

– Նստած է, այ մարդ, սովից կոտորեցիր մեզ,– ձայն տվին այս ու այն կողմից:

– Ես էլ էդ եմ ուզում, է՛... Ուզում եմ ոսկորներդ սով ընկնի, որ առատ մարդու տուն ենք գնում: Ա՛յ ժողովուրդ,– ձայնը բարձ-

բացրեց նա,- իմ խնամի Աթոն խնդրել է մի-մի բաժակ օղի խմեք, որ ախորժակներդ բացվի:

Ծիծաղ բարձրացավ, լրիվ պարզվեց նրա մտադրությունը:

- Այ մարդ, աղիքներս կտրատվում են, քարից կակուղ ինչ ձանկա ընկնի՝ կուտեմ, ինչ արաղի ժամանակ է, շուտ արեք մի բան տվեք ուտելու,- դժգոհեց մեր գյուղի անվանի ուտող Խեչանը:

Բայց Սաքո ամին ականջ չդրեց: Նա մատովակիին կարգադրեց մեկական բաժակ օղի խմեցնել ներկա եղողներին:

Ապա ձայն տվեց.

- Ախորժակներդ բացվեց, ժողովուրդ:

- Էն էլ ճնց, ճար ունես՝ տես...

- Ճար ունեմ, այ ժողովուրդ, համա խնամի Աթոն շատ կնեղանա, որ առաջ իմ տանն ուտեք, հետո՝ իրեն... Դե՛, ուստա Ակոփ, գումնեդ փչի, քավոր, հարսնախպեր, փեսացուն, առաջ ընկեք:

Ու ամբողջ գյուղը պոկ եկավ դեպի մեր խնամի Աթոյի տուն: Կարգն այդպես էր, փեսան իր մարդկանցով գնում էր հարսին բերելու: Բոլորին էլ զվարճացնում էր այն միտքը, թե ինչպես է ընդունելու Աթոն այդ ահռելի բազմությունը:

Հակառակի պես այդ գիշեր անձրև էր եկել և գյուղամեջը ցելս էր: Մեր գյուղի ցելսն էլ հո՛, աստված հեռու տանի...

Ժողովուրդը հարայ-հրոցով, պարելով, կատակներով հոսեց դեպի գյուղի ներքին թաղը ու խուժեց Թորոսենց Աթոյի բակը:

Աթոն դուրս եկավ, տեսավ սելավի պես եկող բազմությունն ու աչքերը մթնեցին:

Սաքո ամին պարելով առաջ եկավ, գրկեց իր խնամուն, հետը պար եկավ և մի բաժակ օղի առաջարկելով ասաց.

- Խնամի Աթո, լավ կամպանիայով ենք եկել, հը՛...

- Լավ եք արել, խնամի Սաքո, աչքիս վրա եք եկել,- խեղդված պատասխանեց Աթոն:

- Համեցեք ներս, սրտավի՛ մտեք,- գոչեց Սաքո ամին առաջի շարքերին, երբ տեսավ, որ մարդիկ իրենց տրեխների ցելսին են

նայում ու չեն համարձակվում մտնել Աթոյի սիրուն սենյակները:

Ու ժողովուրդը խուժեց Աթոյի տունը, տրորեց նրա խալիները, լցրեց նրա բոլոր սենյակներն ու ամուր տեղավորվեց:

- Տղերք ջան, սրտալի կերեք,- խրախուսում էր թամադա Սաքոն ու այնպիսի թանկագին կենացներ էր առաջարկում, որ բոլորն էլ պարտավոր էին համարում խմել մինչև հատակը:

Դրսում նոր ոչխարներ մորթեցին, և Թորոսենց Աթոյի հավանցում այլևս փետրավոր չմնաց:

Իսկ Սաքո ամին բաժակաճառ բաժակաճառի հետևից էր սառնում.

- Սեղանակիցներ, ո՛վ չի ճանաչում իմ խնամի Աթոյի օջախը, ո՛վ չի հաց կտրել նրա առատ սեղանից: Էն հեռավոր Քոյի դրաղի թուրքն էլ ամառը մեր սարը գալիս՝ աչքը գցում է մեր գեղի վերի էս տան կարմիր կտուրին ու մտքումն ասում՝ «Քիչ մնաց հա՛, հիմի կհասնեմ Աթոյի օջախն ու նրա հարկի տակ հանգիստ կառնեմ»: Ուրեմն, սեղանակիցներ, խմենք մեր խնամի Աթոյի օջախի կենացը ու վրեն էլ սրտալի ուտենք մեր խնամի հարսների տապակած հավերը...

Այս ծաղրը բոլորն էլ հասկանում, իրար աչքով էին անում ու բաժակներն իրար խփելով, հռիռալով խմում էին ու անուշ անում սեղանի բարիքները:

- Շեն մնա խնամի Աթոյի օջախը, կերե՛ք,- լսվում էր այս ու այն կողմից:

Իսկ Աթոն մեկ վրդովմունքից ուռչում էր, մեկ նիհարում էր ու գունատվում, մեկ էլ աշխատում էր անհոգ ձևանալ, ծիծաղել, բայց անբնական ծիծաղ էր դուրս գալիս նրա բերանից:

Այդպես, մեր գյուղացիք այդ օրը բոլորն էլ լիացան Աթոյի առատ սեղանից, բացի Սեդրակից. նա երդվել էր իր կյանքում չկտրել Աթոյի «հարամ հացը»:

1939

ՎՐԵԺ

Մենք տավար էինք պահում և ամառ-ձմեռ բնության ծոցումն էինք՝ սարերում, անտառներում, ձմեռանոցում: Մայիսից մինչև հոկտեմբեր հանդերում էինք գիշերում և անկողին չէինք տեսնում: Բնությունն էր մեր դպրոցը, մեր ուսուցիչը, մեր մայրն ու դաստիարակը: Նա էր մեր օթևանը, մեր օրրանը: Երբ մռայլ էր նա, մենք կուչ էինք գալիս քարանձավներում ու տխրում նրա հետ: Երբ ուրախ ծիածան էր կապում ամպերի տակ ու ցողի բյուրավոր փայլփլող կաթիլներով ժպտում էր մեզ, նորից կյանք էինք առնում ու մեր հորթերի հետ տրտինգ տալիս կանաչ սարահարթերում:

Բայց մեր ընկեր Սիմոնի տրամադրությունը ոչ այնքան բնությունից էր կախված, որքան իր տիրոջից՝ Աթոյից:

Մենք հաճախ էինք նրան տեսնում ուռած-կարմրած աչքերով ու հասկանում, որ մի դատարկ առիթով ծեծ է կերել: Սիմոնի բախտից Աթոն անձամբ էր ղեկավարում իր տնտեսության հիմնական ճյուղը՝ անասնապահությունը: Նա ամառը անասունների հետ սարումն էր, ձմեռը՝ ձմեռանոցում, քիչ էր պատահում, որ գյուղ գնա: Անձամբ հսկում էր, որ Սիմոնը բոլորից շուտ արթնանա, բոլորից շուտ գոմը մաքրի, անասուններին բոլորից շուտ հանդ տանի, և պահանջում էր, որ իր կովերը ամենալավ արոտներում արածեն, իսկ ինքը՝ Սիմոնը, իր ուտելիքը ձարի անտառում:

- Խոզերն էլ, արջերն էլ չաղանում են, էնքան միրգ կա ծմակում: Ա՛յ որդի, քո գլուխը պահի, էլի,- հայրաբար խրատում էր նա:

Չնայած իր սհագին հարստությանը, Աթոն առանց մաղել գարու այլորից առանձին հաց էր թխել տալիս իր չորանի համար, ու այդ բանը տակնուվրա էր անում մեր մանկական հոգին:

Աթոն չէր սիրում Սիմոնին, երևի այն պատճառով, որ սա

աշխատելուց բացի ուտել էլ գիտեր: Պատահում էր, որ խեղճ տղան քաշվելով Աթոյին ցույց էր տալիս իր քրքրված տրեխները. նույնիսկ տրեխ էլ էր ուզում: Դե արի այդպիսի մարդուն սիրի:

Ու Աթոն իր ատելությունը չէր թաքցնում: Նա տեղի-անտեղի ձայն էր տալիս հանդում ոչխար պահող իր հովվին ու հայհոյում առանց պատճառի:

Մի օր որսկան Քոչարը հարցրեց.

- Աթո՛, ինչ ես ուզում է՛ն տղից, ինչի՛ ես անտեղի ձեն տալիս, սիրտը ցավեցնում:

- Հը՛մ, գիտե՛ս ինչի եմ ձեն տալի՛ս: Հանդում ընկերների հետ խաղով է ընկնում, մոռանում, որ տեր ունի, որ ես կամ... Բա՛մ, նոքար մարդը միշտ պետք է հիշի, որ ինքը իրավունքի տակ է...

Դե եկ այդպիսի մարդուց վրեժ մի հանիր քո ընկերոջ համար: Բայց դե մենք ի՛նչ էինք, որ մեր վրեժն ինչ լիներ: Բայց ինչ էլ որ լիներ, հո՛ սրտներս մի քիչ հովացնում էինք:

Պատմե՛մ մեր մանր վրեժներից մեկը:

Մի օր մեր տավարած ընկեր Գրիգորը վայրի խնձորենու վրայից ձայն տվեց.

- Էս տղեն որ էգուց Աթոյի կարմիր աքլորի միսը չուտի, ուրեմն իզուր է ապրում էս աշխարհքում:

- Է՛, որ ամոթո՛ մի կողմ դնես, իհարկե, կգողանաս կուտես,- դիտեցի ես:

- Չէ՛, ազնիվ ճանապարհով ենք ուտելու: Հենց անեմ, որ իրեն ձեռովը մորթի ու մեզ էլ համեցեք անի:

- Նա իր ձեռքով աքլոր մորթողը չի,- ասաց Սիմոնը, որ բոլորից լավ գիտեր իր տիրոջ ժլատությունը:

- Կմորթի՛,- պնդեց Գրիգորը:- Կմորթի և իրեն կամքով: Դեռ քո կտրած վարձն էլ կտա:

Չհավատացինք, դե Գրիգորն է, է՛լի, կատակով պարծենում է: Բայց հետաքրքիր է, ի՛նչ ծրագիր կա հնարքներով լիքը նրա գլխում...

Երեկոյան, երբ սովորականի պես հավաքվեցինք վառվող

օջախի առաջ, Գրիգորն ասաց.

– Դուք սպասեցեք, ես գնամ Աթոյի մոտ:

Գնում է Աթոյի տուն ու գույնը գցած, դողալով ասում է. «Քեռի Աթո, երագումն ամպերը ճղվեցին, մի լիս վեր եկավ քո կտրին ու շողքը գցեց տանդ առաջի տանձի ծառին: Ինչ նշան է, չեմ հասկանում»:

Աթոն հուզմունքից այլայլվում է ու քաղցրացած ասում. «Քու էդ անմեղ բերանը տաճար դառնա, Գրիգոր ջան, ուրեմն աստծու աչքը քաղցրացել է վրես, ինչ բան պիտի ըլի»: Այդ մարդը ինչքան ժլատ էր ու աչքածակ, այնքան էլ հավատացյալ էր:

Ծերունուն մենակ ու մտատանջության մեջ թողնելով՝ Գրիգորը ետ եկավ և մեզ հրահանգեց.

– Դե, գնանք...

Թե ո՛ր, ոչինչ չասաց:

Լեռնային նեղ կածանով, գիշերային մթության մեջ մենք շարժվեցինք դեպի Ջուխտակ վանքերը:

Շատ հին ժամանակ այդ ձորում գյուղ է եղել, որի մոտ միջին դարերում երկու խոշոր վանք են կառուցել: Այժմ գյուղի տեղը ավերակներ են, մեծ վանքի գմբեթը երկրաշարժից կործանվել է, իսկ փոքրի վրա մի ծառ ու մանր թփեր են աճել:

Այդ հինավուրց վանքերը, հեռավոր ու խուլ այդ անտառոտ ձորում, ուր լեռնային գետակն է գոռում–գոչյունով ցած թափվում ջրվեժներից, մեզ՝ սնանավատ լեռնցիներիս վրա ծանր տպավորություն էին թողնում:

Ահը սրտներումս հասանք վանքի պատի տակ:

– Մի խաչքար ջոկեցեք, տղերք,– կարգադրեց Գրիգորը:

Կործանված գմբեթի քարերը թափված էին այդտեղ: Վրան մեծ խաչ փորագրած մի քար գտանք, վախով բարձրացրինք, ու փոխեփոխ շալակելով, մեծ տանջանքներով, մի կերպ ձմեռանոց հասցրինք:

Տեղ հասանք, քարը բարձրացրինք դրինք Աթոյի տան դիմացի տանձենու վրա, երկու ճյուղերի մեջտեղը ու ծկվեցինք:

Լուսադեմին դեզի տակ դարան մտած թաքուն նայենք, ինչ տեսնենք. Աթոն իրեն տան շենքում չոքած, ձեռքերը դեպի խաչքարը պարզած՝ աղոթում է:

Մենք լռելյայն առաջ գնացինք, ակնածությամբ գլխարկներս վերցրինք ու սկսեցինք եռանդով խաչակնքել:

Գրիգորը հազաց ու ասաց.

- Բարի լիս, քեռի Աթո, թևավոր խաչը դո՞նաղ է եկել քեզ... օջախդ սրբացավ, էլ ինչ դարդ ունես...

- Հա՛, եկել է...- արցունքն աչքերին ու փափկած պատասխանեց նա: - Քու էն արդար սրտին մատաղ, Գրիգոր ջան, աստո՞ծ առաջ քեզ իմաց տվեց, հետո խաչն ուղարկեց...

Ծիծաղներս դժվարությամբ էինք պահում, այնքան գվարձալի էր Աթոյի դեմքի արտահայտությունը: Այդ պահին նրան նայողը կասեր՝ սրանից էլ անմեղ, սրանից բարի մարդ չկա աշխարհում:

Մենք մեկ-մեկ ձեռք տվինք Աթոյին, խաչակնքեցինք ու, «հո, հո» անելով, տավարը քշեցինք հանդը:

Գրիգորը մնաց. «հատիկ ուներ ծեծելու»:

Քիչ անց նա հևիհև հասավ մեզ ու փորը բռնած ասաց.

- Բա որ ասում էի կարմիր աքլորի միսն ուտելո՞ւ ենք... Ախմախին հավատացրի, որ եթե մատաղ չանի, խաչը կխտովի, անեծք կթափի օջախի գլխին ու ետ կգնա:

Եվ իսկապես, այդ երեկո լավաշի մեջ փաթաթած մի-մի կտոր խաշած միս ստացանք, կարմիր աքլորը մատաղ էր գնացել խաչքարին...

Արտասովոր լուրը կայծակի արագությամբ տարածվեց գյուղում, և բոլորն էլ սկսեցին դժգոհել խաչի արարմունքից:

- Ախպե՛ր, էս ինչ արդարություն է,- ասում էր ծեր որսկան Քոչարը: - Պատարագի ժամանակ տերտերն ասում է՝ ավելի շուտ թոկը անց կկենա մախաթի ծակով, քան հարուստը արքայության դո՞նով, բայց արի տես, որ ապրանքն էլ է հարուստ Աթոյին տալիս, հացն էլ, կարողությունն էլ, բախտն էլ: Հիմի էլ խաչն իրեն ոտով եկել է նրա օջախը սրբացրել, բա էդ տեսակ խաչի գլուխը

ես չջարդեմ:

- Վրյ, գժվել ամ էս մարդը,- ամուսնու խոսքերից սարսափած՝ ականջները ծածկում էր Քոչարի պառավ կինը:

Աստծու՝ աչք ծակող այդ կողմնապահությունը գյուղացիներից շատերին հիասթափեցրեց: Իսկ որսկան Քոչարը մատը թափ տալով մի օր սասց Գրիգորին.

- Ա՛յ տղա, ես գիտեմ, էս քո սարքած օյինները կլինեն, թե չէ, դժվար թե աստոծ էդ տեսակ կեղտոտ մարդու տունը խաչ ուղարկի:

Գրիգորը միայն իմաստալից ժպտաց:

Ամեն օր արևը մայր մտնելիս և ամեն առավոտ արշալույսին Աթոն չոքում էր իր տան առաջի ծառի տակ, բազուկները վեր պարզում ու ջերմեռանդ աղոթում՝ իր մեղքերի թողության համար:

Բայց դա չէր խանգարում, որ նա էլի Սիմոնի հետ միշտ գարու հաց դնի, չոր խոտի վրա քնացնի ու անխնա ծեծի: Խաչքարը նրա սիրտը մի քիչ փափկացրել էր, բայց Գրիգորի հաշիվները սխալ դուրս եկան՝ Աթոն հրաժարվեց Սիմոնի վարձը տալ:

- Ախար, Աթոն քեռի, քո օջախը հիմի սուրբ է, դու ո՛նց ես անխիղճ բան անում,- իր ճարտար լեզուն գործադրում էր Գրիգորը, բայց ոչինչ չէր օգնում. Աթոն իսկի բաց աչքով Սիմոնին մի հորթ ու երկու ոչխար կտար:

- Չէ, կռիվը պետք է շարունակենք,- հայտարարեց Գրիգորը:- Եթե Աթոն Սիմոնի վարձը կտրեց ու մարսեց, ուրեմն մենք իզուր ենք կազմել մեր «չոբանների խորհուրդը» և իզուր էլ փափախ ենք դնում մեր գլխներին... խաչը չօգնեց, եկեք հիմի էլ սատանաներին դիմենք...

Մթնեց: Գրիգորի պատվերով մենք հավաքել, հետներս բերել էինք ձմեռանոցում եղած բոլոր ձրագները և Աթոյի տան առաջ, խոտի դեզի հետևում սսկվել-կուչ եկել: Համբերությամբ սպասում էինք, որ նա տնից դուրս գա:

Վերջապես դուռը բացվեց և խրճիթի շենքին երևաց Աթոն ճրագը ձեռքին: Ակնածանքով նայեց ծառի վրա թառած խաչքարին, երեսին խաչ հանեց ու գոմը գնաց:

Մենք անձայն մտանք նրա խրճիթը, բոլոր ճրագները վառեցինք ու շարքով կախ տվինք պատերից: Ապա դուրս եկանք, պառկեցինք խոտի դեզի տակ ու գաղտագողի նայում ենք, թե ինչ է լինելու: Դուռը բաց սենյակը մեր դիմացն էր, պատերին շարքերով քսան ճրագ էր վառվում...

Աթոն գոմից դուրս եկավ, հասավ խրճիթի շենքին ու սարսափից քարացավ: Մենք մթնում էինք, նա՝ ճրագների լույսի տակ: Մինչև օրս էլ հիշողությանս մեջ մեխված է նրա աչքերի խելագար արտահայտությունը: Ցած գցեց ձեռքի ճրագը, բազուկներն առաջ մեկնեց, օդում ինչ-որ շարժումներ արավ, որով կարծես իրենից վանում էր աներևույթ ոգիների: Ապա օրորվելով ետ-ետ գնաց՝ կարծես դիմացից հարձակվում էին: Մեկ էլ շուռ եկավ դեպի խաչքարը, սկսեց խաչակնքել ու մրմնջալ:

– Հիսուս–Քրիստոս, դո՛ւ չարը խափանես...

Ապա առանց ետ նայելու մինչև իր քավոր Ավետիքի խրճիթը մի շնչում փախավ:

Հենց նա գնաց, մենք անզուսպ ծիծաղը մեր մեջ խեղդելով՝ ճրագները հավաքեցինք, հանգցրինք ու էլի թաքնվեցինք:

Քիչ անց Աթոն իր քավոր Ավետիքին հետևից գցած եկավ, տեսան խրճիթում ոչ մի ճրագ չկա: Աթոն մնացել էր ապշած. ո՞ր կորան վառված ճրագները...

– Ա՛յ սանահեր, դու հո քաջքերոց չե՛ս եղել: Քեզ ասացի՝ աչքիդ է երևացել,– նախատում էր քավոր Ավետիքը:

Աթոն չպատասխանեց: Նա շաղված աչքերը հառել էր ծառի վրայի խաչքարին ու ձեռքերը վերև տարածած աղոթում էր...

Այդ դեպքից հետո մինչև գարուն Աթոն այլևս իր խրճիթը չմտավ. իր քավոր Ավետիքի մոտ էր ապրում:

– Ճրագները քաջքերն էին վառել իրենց հարսանիքի համար,– պնդում էր նա ու հետն էլ գլուխը շարժելով ինքն իրեն

հարցնում,- բա էլ տեղ չգտան, եկան խաչքարի քրթի տակ հարսանիք արին... Բա էս մեր խաչն ի՞նչ բանի է... Մեղսի քեզ, տեր, բերանս ինչ է գալիս հա՛...

Տարիներ անց, երբ մեր երկրում հաղթանակեց հեղափոխությունը, մենք ուրախ «հորովելով» գույթանները քշեցինք ուղիղ դեպի Աթոյի հողերը:

Աթոն գյուղից դուրս եկավ, հասավ բլրի ծայրը, ձեռքը ձակատին դրեց, նայեց մեր կողմը: Ապա շուռ եկավ ու ցնորվածի նման մինչև ձմեռանոց մի շնչում վազեց: Հասավ իր դռան տանձենու տակ, նրա վրայից ցած գցեց խաչքարն ու սկսեց պատերին խփել, փշրել ու հետն էլ հայհոյել.

- Էդ էր քո զորությունը... Բա որ ուժ չունես ինձ պաշտպանելու, ինչի՞ ես թառել աչքիս առաջ:

Խաչն էլ էր խաբել նրան...

1939

ՊԱԽՐԱՌՐՍ

1

Մի տարի լուր ստացանք, որ Լոռու սարերից մի նախիր եղջերու է անցել Խալափ սարը ու իջել Համզաչիմանի ձմեռանոցի անտառները: Ասածս ձմեռանոցը Դիլիջան գետի ակունքներում է, աշխարհից կտրված մի կորած տեղ:

Ղազախին հայտնի որսկան Շաքարը իր ընկերներին հավաքեց ու գետի ձախ վտակը բռնած՝ շտապեց դեպի Խալափի ծնակները, ուր այդ տարի կաղինը, աճարը շատ-շատ էր, ուրեմն և եղջերուները այդ վայրերում պիտի լինեին:

Ես էլ միացա որսկան Շաքարի խմբին ու գնացինք:

Մեր ունեցածն ինչ է՝ մի-մի հրացան, մի-մի բաշլըղ վիզներս գցած, մեջը հաց, պանիր, հարուստներինը՝ դաուրմա, ինձպեններինը՝ խաշած կարտոֆիլ: Բայց քեֆներս տեղն է, եփվում ենք անհամբերությունից, հանաք բան չի, է՛, պախրա (եղջերու) ենք սպանելու: Ես էլ պախրի մասին միայն գրքերում եմ կարդացել, մեկ էլ նրա ահագին եղջուրներով գլուխը որսկան Շաքարի տան ճակատին խփած եմ տեսել ու զարմանքից բերանս բաց է մնացել:

Իրիկնադեմին հասանք Անագյունեի կոչված ձմեռանոցը, որն էլի ջրի ափին է: Դիլիջանի գետն այդ ձմեռանոցի մոտ բարակում, մի առվի չափ է դառնում (բայց ինչ անսնման կարմրախայտ ունի, ջահել ժամանակս շատ եմ բռնել ու խորովել տեղնուտեղը...):

Շներն աղմուկով դիմավորեցին մեզ: Ահագին փափախով, ձերմակած մազերով, կարմիր երեսով մի ծերունի դուրս եկավ խրձիթից, սաստեց շներին ու մեզ ներս հրավիրեց:

– Չէ՛, ճամփա ունենք գնալու, խնամի Ղուկաս, շնորհակալ ենք,– ասաց Շաքար ամին՝ փափախով քրտինքը սրբելով:

– Ուրեմն ես մարդ չեմ, էլի՛, որ դռնովս անց կենաք ու իմ հացը

կտրեք ոչ,- վիրավորվեց ծերունին:

- Ինչո՞ւ ես էդպես ասում, խնամի Ղուկաս, դե մենք որսի ենք եկել, հո ուտել-խամելու չենք եկել:

- Դատարկ չեք գնա, վախեք ոչ, հանդը լիքը պախրա է: Եկեք դինջացեք, առավոտը լույսը չբացված ամեն մեկիդ մի թամբած ձի կտամ, կնստեք, կես ժամում տեղ կհասնեք:

Ձիու անունը որ լսեցինք, կակղեցինք ու հյուր մնացինք Դավթանց Ղուկասին:

Չոքանները բուխարին թեժացրին, ոչխար մորթեցին ու էնպես սրտալի պատիվ արին, ինչպես հին ադաթն էր պահանջում:

2

Առավոտը դեռ լույսը չբացված, մենք ոտի վրա էինք. նայում ենք՝ «խնամի Ղուկասը» տեղիցը չի շարժվում, ձիերն էլ թամբող չկա:

- Բա ձիերը որտե՞ղ են, Ղուկաս, ախր մենք ուշանում ենք,- հարցրեց Շաքար ամին:

- Ձիերն էս է կրեբեմ,- ասաց ծերունին հանգիստ ու պատրիանից մի շիշ հոնի օղի հանեց, ամեն մեկիս համար մի թեյի բաժակ լցրեց ու ասաց.

- Դե հիմի խմեցեք ու գնացեք, աստված ձեզ հետ:

Խմեցինք, ներսներումս կրակ վառվեց ու մեր ոտներն էնպես թեթևացան, որ ձիուց էլ արագ գնացինք:

Նոր հասկացանք, թե ո՞րն է խնամի Ղուկասի «թամբած ձին»:

Ջուրն ի վեր գնացինք դեպի սարերը, էնքան գնացինք, որ Բլդան գետը բարակեց, առու դառավ: Հիմի իրիկուն է: Մենք էլ էդ առվի ափին ենք, մի անտառոտ ձորում: Ձորի երկու կողմերից դիք լանջեր են բարձրանում: Մի լանջը հյուսիս է նայում, դրա համար էլ խոնավ է ու ծածկված մռայլ անտառով: Արևը մուտք չունի այդ ծմակը, և ընկած հսկաները դանդաղ փտում են ու

ծածկվում սունկերով: Ցերեկն այդ «պնդոցներում»¹ են թաքնված եղջերուներն ու եղնիկները:

Դրա դիմաց, ամվի մյուս ափին արևկող լանջն է, կաղնու նոսր անտառով ու խոտառատ բացատներով: Այստեղ տաք է և կերն առատ: Որսորդները փորձից գիտեն, որ եղջերուներն իրիկնադեմին իջնում են սառը ծմակից, առուն անց են կենում ու մինչև լույս արածում արևկող լանջի բացատներում, ապա լուսադեմին նորից իջնում ջուր են խմում ու թաքնվում պնդոցում:

Շաքար ամին ձեռքով նշան արավ, որ լռենք ու մատով ցույց տվեց մեր ոտքերի տակ. կարծես մի ամբողջ նախիր է անցել ջուրը ու նորից ետ եկել: Կովի, երնջի, արջառի կձղակների չափ հետքեր կան թարմ ցեխի մեջ, իսկ դրանց կողքին՝ այծերի, ուլերի ոտնատեղերի նման հետքեր ու այստեղ-այնտեղ էլ ցրված շեկ ու կլոր կտիտի հատիկներ.– եղջերուներն ու եղնիկներն են ջրի իջել ու ետ գնացել պնդոցը: Արևն արդեն մայր է մտել, հիմա նրանք ուր որ է նորից կգան:

Որսկան Շաքարի կարգադրությամբ մենք շարվեցինք ամվի երկայնքով, իրարից մեկ-երկու հարյուր քայլ հեռու ու ծառերի բների հետևում թաք կացանք: Կարգադրված էր, որ ոչ մի շարժում, ոչ մի շշուկ չհանենք և չծխենք: Այդպիսով մեր շղթան կտրել էր ծմակի առաջը, և ջուրն իջնող ու դեպի արոտ գնացող կենդանին ուզեր-չուզեր մեր առաջով պիտի անցներ:

Սեպտեմբերի տաք ու խաղաղ երեկո էր: Լուսինը դուրս եկավ և լուսավորեց դեղնող անտառն ու մեր դիմացի արեգունի լանջի կանաչ-դեղնավուն ծով խոտը: Նրա թույլ շողերը ծառերի արանքներով տեղ-տեղ ներս թափանցեցին ու ընկան ամվի և նրա կողքով գնացող խոնավ կածանի վրա: Ծմակի մթության մեջ այդ շողերը երերուն ու ձերմակ խալերի էին նման:

Բնությունը հետզհետե թաղվեց քաղցր քնի մեջ, միայն առուն էր խոխոջում, մեկ էլ գիշերային թռչունն էր ողբում հեռվում: Երկար սպասեցինք այդպես լուռ ու անշարժ:

¹ Պնդոց - պինդ, ամուր, թաքուն տեղ (թաքնվելու համար):

Հանկարծ վերև, պնդոցում ցուլի գոռոցի նման մի խուլ ձայն լսվեց.

– Բռնո՛ւ... բռնո՛ւ...

Մենք շունչներս պահեցինք: Ձայնը մոտենում էր, չորացած ձյուղերը ձարձատում էին ցած իջնող անասունի ոտների տակ:

Ինձնից քիչ վերև, մթության մեջ կանգ առավ ու գոռաց խռպոտ ձայնով այնքան մոտ, որ լսվում էր հևոցն ու կոկորդի խզզոցը:

– Բռն... բռն... ըս՛ւ... ըս՛ւ...– լսվեց պատասխանը հեռվից, բարակ ու սպառնական: Երևում էր, որ ջահել արջառ է: Իմ հարևանը պատասխանը լսելուն պես փնչացրեց, խռպոտ ձայնով նորից գոռաց: Ապա վրդովված ցած իջավ ու սկսեց առվի մոտ ահագին եղջյուրներով քանդել հողը:

Ես քարացած նայում եմ այդ ահագին կենդանուն, նրա ձայնի մեջ զգում եմ և՛ ցասում, և՛ կիրք, և՛ վրեժ: Ցասում՝ բոլոր այն արու եղջերուների դեմ, որոնք սպառնում են նրան զրկել իր կյանքի ամենամեծ վայելքից: Այդ է պատճառը, որ նա փնչոցով ջուր խմելուց և սիրտը հովացնելուց հետո կանգնեց առվի մյուս ափին՝ սպառնական դիրքով, չորացած տերևներ, թաց հող ու ձյուղեր եղջյուրների վրա առած և այնպես ուժգին գոռաց, այնպես երկարատև, որ անտառը թնդաց ու նրա հուզմունքը հայտնի դարձավ շրջակա ողջ բնությանը:

Նորից լսվեց պատասխան գոռոցը, ավելի բարակ ու զիլ: Այդ ձայնի մեջ ես զգացի ջահելի խանդը, համարձակությունն ու ինքնավստահությունը: Հակառակորդը մոտենում էր: Նա խավարի մեջ ինձ չնկատեց և մոտովս անցավ, և ես առա արու եղջերվին հատուկ ծանր հոտը, որ արձակում է նա սեսպտեմբերին՝ բեղմնավորման շրջանում: Այդ հոտը երկու հարյուր քայլի վրա էլ կարելի է զգալ: Բայց զարմանալի բան,– ինչքան են կուրացել այդ կենդանիները կրքից ու խանդից, ինչքան են հուզմունքից պղտորվել դրանց աչքերը, որ տասը քայլի վրա ուշադրություն չեն դարձնում, թե ծառն ի վեր կանգնածը մամրդ է, թե՞ կոճղ:

Եղջերուն այդպես իրեն կորցնում է միայն սեռական պայքարի շրջանում:

Ինչ խելացի է բնությունը կարգավորել իր բնակիչների կյանքը և ինչ անսասան օրենքներ է սահմանել նրանց համար: Ինչ կստացվեր, եթե այդ կենդանիները զարնանը սանձարձակ կյանք վարեին: Մեծ աղետ կլիներ այդ վայելքը եղջերուների ցեղի համար. նրանց հորթերը կծնվեին ձմռան սառնամանիքին և կկոտորվեին: Սերունդը պահպանելու բնագործ ստիպում է, որ այդ կենդանիները բեղմնավորվեն աշնանը, ձագ բերեն մայիսի, հունիսի տաք օրերին, փարթամ կանաչի մեջ:

Մինչ ես այդ մտքերով էի տարված, ջահել ախոյանն անցել էր առուն և գնում էր դեպի արևկող լանջը: Անփորձ լինելով, ես չէի համարձակվում առաջինը կրակել, իսկ վարպետ որսորդները հեռու էին: Բացի այդ, ինձ շատ էր հետաքրքրում, թե այս արջառը ինչ սրտի տեր է, որ ամեհի ցուլի վրա կոիվ է գալիս: Անփորձ պատանի էի. տարված, բերանս բաց դրանց էի նայում:

Վերջապես ծառի բնի հետևից լուսնի լույսով ես տեսա նրա գլուխը՝ մի գույգ վեր ցցված սուր եղջյուրներ, առանց ձյուղավորումների:

«Ուրեմն սա է «սնապոզը», որի մասին Շաքար ամին պատմել է», - անցնում է մտքովս, ու ես հետաքրքրությունից եփվում եմ:

Այդ «սնապոզ» ասածս մեկ և կես տարեկան արջառ է: Դեռ փոքր է, եղջյուրները դեռ չեն ձյուղավորվել: Սա առաջին անգամն է մասնակցում «սիրո» պայքարին: Եվ ինչպես արբունքի հասած պատանին, բռնկվում է ու անզուսպ դառնում և ոչ մի վտանգից չի վախենում, այնպես էլ այդ ջահել արջառն է՝ պատանու պես խիզախ, ցնորամիտ և իր սիրուհուն հասնելու համար կյանքը զոհաբերելու պատրաստ: Նա երբեմն իր ճարպկությանը ու իր սուր ու անձյուղ եղջյուրներով հաղթում է վիթխարի ցուլերին ու տիրանում էգին: Մեծ ցուլի բույթ ու ձյուղավորված եղջյուրները մահացու չեն սրա համար: Բայց բավական է, որ ջահելը հաջողեցրեց իր սուր եղջյուրները գցել հակառակորդի

կոնատակը, դաշույնի պես սիրտն է խրում ու շուռ տալիս:

Ու այժմ ես նայում եմ նրանց կովին: Մեծ ցուլը կանգնել է ծառի շվաքում, հետևի ոտքերն առվի մեջ և սպառնական դիրքով սպասում է ջահել ախոյանին: Ծառի խիտ սաղարթների պատռվածքից լուսնի շողերն ընկել են նրա գլխին: Ես տեսնում եմ միայն ճյուղավորված եղջյուրները և կնճռոտ աչքերից մեկը, իսկ մարմինը մթության մեջ է: Մեկ հրացանը մեկնում եմ, որ կրակեմ, մեկ էլ մտածում եմ, որ կվրիպեմ ու կփչացնեմ ավագ ընկերներիս գործը: Դե արի է՛ն ժամանակ որսկան Շաքարին պատասխան տուր:

«Մնապոզը» դեմ առ դեմ մոտ եկավ սպառնական դիրքով, ու երբ մեծ ցուլը վրա ընկավ, որ ոտի տակ տա հանդուգն «հորթին», սա ճարպկությամբ խույս տվեց, թեթև այծի պես ետ թռավ, ծառի շուրջը պտտվեց, և մինչև ծանրաշարժ ցուլը կհաջողեցներ շուռ գալ, արջառը հետևից զույգ եղջյուրները երկաթե եղանի պես խրեց հակառակորդի փորը: Սա ցավից այնպես գոռաց, որ գետինը ժած եկավ: Այդ վայրկյանին ականջիս մոտ հրացանի որոտ լսվեց, և ահագին կենդանին շրմփոցով փռվեց առվի մեջ, իսկ «մնապոզը» եղնիկի պես թեթև վեր թռավ ու անհետացավ անտառում:

Տղերքն ուրախ աղմուկով հավաքվեցին սպանված ցուլի շուրջը:

Իսկույն մի թեժ խարույկ վառեցինք և սկսեցինք մի կողմից մաշկել, մի կողմից էլ որսորդավարի «ձեռաց» խորոված անել:

- Էս գիշեր էլ էս կողմերը պախրա չի գա, դադարգյուն էլանկորան, հանգիստ քնեցեք,- կարգադրեց Շաքար ամին, յափնջին փռեց կրակի մոտ ու թինկը տվեց:

Ես շատ անհանգիստ քնեցի և երագունս լսում էի իր սիրուհուն փնտրող եղջերվի գոռոցը:

3

Սյուս օրը մեր ընկերներից մեկը՝ Արտեմը թե՛

– Շաքար ամի, էս ահագին եզն ինչ ենք անելու, սա մեզ հերիք է, գնանք տուն:

Շաքար ամին խեթ–խեթ մտիկ արավ ու ձեռ առավ.

– Գնա–գնա՛, կնկանդ փեշի տակ մտի ի՛... որսկանիս մտիկ... Բա հինգ հոգով մի մոզի տանե՛նք: Բա որսկան Շաքարն էդ նամուսի տերն է՛...:

Ինարկե, սպանվածը մոզի չէր, մի մեծ ցուլ էր՝ մի եզան չափ բան, բայց մոզու չափ էր թվում նրան, որովմետև ի՛նքը չէր սպանել, և ես գիտեի, որ մինչև ինքը մի բան չսպանի՝ տուն չի գնա:

Շաքար ամին մարդ ուղարկեց Համգաչիմանի գոմերը, էշեր բերին, ցուլի միսը տարան, իսկ մենք ցերեկով մտանք անտառն ու սկսեցինք մոռ ուտել, ի՛նչ մոռ, ողջ անտառը կարմրին էր տալիս: Ու գիտեինք, որ էլ արջ, էլ աղվես, էլ նապաստակ, էլ թռչուն, այդ հանդերում ինչքան շնչավոր կա, բոլորն էլ վրա թափված ուտում են բնության այդ համով–հոտով բարիքը, բայց էլի մոռուտը կարմիր ծովի պես կանգնած է ու չի հատնում, չի պակասում:

Մոռից լավ կշտանալուց նետո, երբ օրը տաքացավ, պառկեցինք անուշահոտ խոտի մեջ ու մի պինդ քնեցինք:

Իրիկնադեմին վեր կացանք, մի մեղրկենի տանձի կար, վեր բարձրացա, թափ տվի, մի պինդ կերանք ու ջուրն ի վեր գնացինք:

– Երեկ, որ էս կողմերումը հրացան է տրաքել, պախրեն էս գիշեր էլ դեսը չի գա,– ասաց Շաքար ամին:

Դրա համար էլ մենք մեր երեկվա տեղից հինգ–վեց կիլոմետր հեռացանք:

Խալափ սարի արևկող լանջին անտառով շրջապատված մի բացատ կար, մի հինգ–վեց կալի չափ տեղ: Այդ բացատում խոտը ծովի պես կանգնած էր: Նայեցինք՝ խոտը տրորած է, թողած

նշաններից երևում է, որ եղջերուների արոտն է: Շաքար ամին կարգադրեց շարվել բացատի վերի պոնկի ծառերի տակ և սուս կենալ: «Պնդոցը» ուղիղ մեր դիմացն էր՝ ձորի մյուս ափին, իսկ բացատը՝ մեր դիմաց: Պարզ էր, որ գիշերը սոված անասունները «պնդոցից» ցած են իջնելու, ջուրն անց են կենալու և արածելու են բացատում:

Էլի աշունքվա մեղմ ու անուշ երեկոն իջավ երկրի վրա, էլի անտառը սվսվալով քուն մտավ: Սարից եկող հովի շնկշնկոցը կտրվեց, ծառերի հետևից լուսինը գլուխը նազանքով դուրս հանեց ու սկսեց կամաց լողալ երկնքում:

Մեր առաջ փռված բացատի դեղնող խոտը մեղմ օրորվում էր, մեկ-մեկ էլ տերև էր ցած ընկնում, մի քնած թռչուն էր տեղահան լինում, ու մենք ամեն ձայնից, ամեն խշրտոցից ականջներս սրում էինք ու շունչներս պանում:

Առուն այս անգամ հեռու էր, և նրա վշվշոցն էր միայն լսվում քաղցր ու շոյող, մանկության օրերի գրավիչ երազի նման: Էլի գիշերային թռչունն անքուն կանչում էր՝ միալար ու մելամաղձոտ:

Բնության այդ խորհրդավոր փսփսոցի, այդ մեղմ ձայների ազդեցության տակ նիրհում են, մեկ էլ կարծես երազում լսեցի ծանոթ գոռոցը՝ դիմացի անտառից.

- Բնի... ու... բնի ու... բնի...- երկար ու զիլ՝ մերթ սպառնագին, մերթ հուսահատ ու թախսանձող:

Մի բարակ բառաչ արձագանքեց նրան՝ երևի էգն էր: Անմիջապես խշրտոցն ընկավ անտառը. որսկանի համար պարզ էր, որ արուններն իրար անցան՝ էգին տիրանալու:

Քիչ անց մի խումբ եղջերուներ ձորից իրար պոզահարելով բարձրացան մեր առջևի բացատն ու սկսեցին տենդի մեջ վազվ-զել: Միայն եղջյուրների շրխկոցից և անասունների տագնապալի փնչոցներից կարելի էր պատկերացնել, թե ինչ է կատարվում: Մենք ծառերի շվաքներում ենք. մեր տեղը մութ է, իսկ մեր առաջ՝ ոնց որ ցերեկ: Միայն բարձր խոտը խանգարում է լավ տեսնելու պայքարը, ալեկոծվող շեկ ծովի մեջ միայն գալարվող ու աղեղի

պես լարված մեջքեր են երևում, մեկ-մեկ էլ վեր բարձրացող ու թափով իջնող եղջյուրներ:

Բացատի եզերքին խոտը ցածր էր ու նոսր: Եղջերուների խումբը այդ նոսր տեղը դուրս եկավ, ու ես պարզ տեսա, թե ինչպես երկու խոշոր ցուլ, մի արջառ և երկու մոզի ընկել են մի ջահել կովի հետևից: Հրացանս մեկնեցի ու խմբի մեջտեղը՝ «տրաք, տրաք»: Չորս հրացան միաժամանակ որոտացին: Շաքար ամին, որն, ինչպես երևում էր, ննջում էր մի մեծ կաղնու տակ, հրացանների ձայնից հանկարծ վեր թռավ ու խուճապահար կանչեց.

– Ադա, էն ո՞վ էր, էն ինչ էր...

Ու երեսը եղջերուներից շուռ տալով, շփոթված կրակեց հակառակ կողմի վրա:

Մենք դուրս թափվեցինք թաքստոցներից և վազեցինք բացատ, ուր երկու անասուն մեկնված պոկոտում էին խոտն ու եղջյուրներով, ոտներով քանդում գետինը:

Հիմի կրակ ենք արել, քեֆներիս քեֆ չի հասնի, ու սկսել ենք: Շաքար ամուն ձեռք առնել:

– Այ տնաշեն, էն չոլի վրա ո՞ւր էիր կրակում,– հարցրեց Արտեմը:

Ծեր որսորդը մոայլ նստել էր ու աչքը չէր հեռացնում կրակից:

– Շաքար ամի, որտեղի՞ն էիր նշան բռնել՝ աչքի՞ն, թե՞ պոչի տակին:

Էլի լուռ է:

Դե մենք հասկանում ենք նրան, անվանի որսորդն այդ անոթալի դեպքից հետո էլ ի՞նչ երեսով գյուղը մտնի, ի՞նչ երեսով երևա կանանց աչքին...

– Դուք իմ փափախը գետնովը տվիք... դեռ ոչ ոք որսկան Շաքարի երեսն էս տեսակ մուր չէր քսել,– դառնությամբ ասաց նա: Ու քիչ անց տնքալով ավելացրեց.

– Բա ես Անանանց Շաքարը ըլեմ ու էգուց փախքոտ Արտեմը գեղամիջումը պարծենա, թե ինքը սպանել է, ես շալակնլ եմ...

Բա էլ ո՞ր եմ ապրում, որ խաղք ու խայտառակ եմ լինելու ժողովրդի առաջ...

Մենք լրջացանք ու սկսեցինք մխիթարել ծեր որսկանին, թե էդպես էլ կպատահի, պատահմունք է, բախտի բան է:

- Է, էլ միք խոսի, էսպես զուլում դեռ իմ գուլխը չէր եկել: Բա ես էնքան քոռանամ, որ նախիրն առաջս՝ ետ դառնամ ծառի վրա կրակեմ...

- Ո՞ր ծառի ռելսը ջարդեցիր,- ծիծաղը հազիվ զսպելով հարցրեց Արտեմը:

- Հրեն, էն փամփոխ կաղնուն տվի,- ասաց Շաքար ամին դառնությամբ ու մատը մեկնեց մի ցածիկ, թմփիկ կաղնի ծառի կողմը: Մենք շուռ եկանք ու էն կողմը նայեցինք:

- Ադա, կարծես ծառի տակ պախրի պոզեր են երևում,- զարմացած հարցրեց Արտեմը ու ոտքի կանգնեց:

- Դե հերիք ձեռ առնեք, է...- լացակումած ասաց Շաքար ամին՝ ավելի դառնացած:

Մենք վազեցինք թմփիկ կաղնու կողմը և ինչ տեսնենք, մի ահագին եղջերվի ցուլ ծառի տակ մեկնված... Ջարմանքից քարացանք: Ետ ենք դառել, հարցական նայում ենք ծեր որսկանին:

Իսկ նա փորը բռնել է ու ո՛նց է փառ-փառ ծիծաղում, ո՛նց է ծիծաղում...

Նոր հասկացանք, որ Շաքար ամին մեզ բոլորիս էլ լավ ձեռ է առել: Այս անգամ էլ նա սկսեց մեզ ծաղրել.

- Այ փսլնքոտ,- դարձավ նա Արտեմին,- բա խելքդ ինչ է կտրում, որսկան Շաքարը որսի տեղը կքնի... Բա որսկան Շաքարը անտեղի գնդակ կգցի... Բա որսկան Շաքարի գնդակը գետնին կընկնի... այ փսլնքոտ ծծկեր...

Մի լավ ծիծաղեցինք, հետո էլ որսի խորովածը կերանք, վրեն հոնի օղի խմեցինք ու ձորերը դարդմբացնելով, խաղով, երգելով ճամփա ընկանք դեպի տուն:

ՄԵՐ ՉԱՄԲԱՐԸ

1

Դրսում կարկուտ էր գալիս, արար աշխարհն իրար էր խառնվել: Հայրս, թրջված ու մրսած, տուն մտավ և փափախը թափ տալով, նստեց բուխարու առաջ: Նրա չուխայի փեշում ինչոր բան շարժվեց, ու թույլ նվվոց լսվեց: Ես նրա փեշից մի շան ձագ հանեցի ու հրձվանքով բացականչեցի.

- Վահ, Չամբար ջան, էս ինչ օրն ես ընկել:

Իսկապես, խղճալի վիճակում էր դեռ կույր այդ ձագը: Թրջված, ոտները ցեխոտ, դունչը սառած՝ նվում էր ու ողջ մարմնով դողդողում: Բուխարու առաջ տաքացրի, մազերը շոյեցի, գոգումս հանգստացավ ու քնեց: Երբ զարթնեց, դնչիկը մոտեցրեց ձեռքիս ու սկսեց ծծել ձկույթս՝ խեղճը քաղցած էր: Մատս կաթի ամանի մեջ դրի, ծայրը բերանն առավ ու սկսեց գառան նման ծծել: Ծծեց, ծծեց, կլորացավ, փոքրիկ տկճոր դառավ ու ծոցումս քնեց:

Ես դարձա փոքրիկ Չամբարի խնամակալը և սրտով կապվեցի որբ ու անօգնական այդ արարածի հետ:

Երբ քիչ մեծացավ, հանդից տուն գալիս ինձ դիմավորում էր գյուղից դուրս, փաթաթվում ոտներին ու բերկրանքից թավալ տալիս:

Ժամանակ անցավ: Մեր Չամբարը մեծացավ, սիրունացավ:

Ջարմանալի ուրախ ու չարաձձի կենդանի էր դա: Ամառը ես սարում հորթեր էի արածացնում, և Չամբարը միշտ ինձ հետ էր թե՛ անձրևին, թե՛ մառախուղին, թե՛ ուրախության և թե՛ ձախորդության պահին:

Գիժ բնություն ունեն մեր լեռները: Պայծառ կեսօրին մեկ էլ տեսար երկինքը մթնեց, փոթորիկը վրանները պոկեց, անասունները գլուխները կորցրած ձորերը թափվեցին: Այդպիսի ձախորդ օրերին Չամբարն ինձ հետ հորթերը հավաքում էր

Արջաքարի մեծ այրը: Մենք թրջված ու մրսած՝ իրար հետ կուչ էինք գալիս քարանձավում, իրար հպվում ու ահով նայում դրսում փայլատակող կայծակներին:

Իսկ արև ու անուշ օրերին վազվզում էինք կանաչ ուրթերում, կոխ էինք բռնում իրար հետ, իրար գզում՝ «քոլոլ» անում, և մեր բերկրանքին չափ չկար:

2

Չամբարը մեծ շուն դարձավ: Զարմանալի խղճով ու բարեսիրտ կենդանի էր նա: Այդ ահագին գայլախեղդը առանձին քնքշությամբ էր վարվում երեխաների, գառների և այլ խեղճ արարածների հետ: Բայց ավազակին ձիուց վայր կբերեր, գողին կպատառոտեր, հրացանավոր մարդու վրա կհարձակվեր վագրի նման: Առյուծի սիրտ և գթառատ մոր քնքշություն ուներ մեր Չամբարը:

Չագեր բերեց Չամբարը և սիրեց նրանց: Ու ձագեր բերելուց հետո էլ ավելի բարի դարձավ փոքր արարածների նկատմամբ:

Գարուն էր, ոչխարների ծինն սկսվել էր: Չամբարն արթուն հսկում էր նոր ծնված գառներին, իսկ եթե մեր աչքից հեռու ոչխար էր ծնում, իսկույն գալիս էր իմաց տալիս, որ օգնության գնանք:

Մի երեկո էլ, երբ հոտը տուն էինք տանում, Չամբարը չերևաց:
- Երևի չհամբերեց, ձագերի համար տուն փախավ,- եզրակացրեց ընկերս:

Գյուղ գնացինք, բայց շունն այնտեղ էլ չէր: Նրա ձագերը կալանջ-կալանջելով ոտներիս փաթաթվեցին. խեղճերը քաղցած էին և կարոտել էին իրենց մորը: Նրանց կաթ տվի, կշտացրի՝ ձայները կտրեցին:

Բայց ո՞ր մնաց Չամբարը: Հաշվեցինք՝ ոչխարներից մեկն էլ է պակասում: Չոմբախս վերցրի, որ սար բարձրանամ, բայց մայրս

չթողեց. ակնակիր ու մռայլ գիշեր էր, հեռվում ամպերն էին որոտում, կայծակը մերթ ընդ մերթ ծվատում էր խավարը: Քիչ հետո սկսվեց փոթորիկը: Ողջ գիշերը մեր գյուղի մոտ անտառը հեծեծում էր...

Հաջորդ օրը պայծառ էր ու արևոտ: Հոտը նախորդ օրվա վայրը տարանք, նայեցինք նոր տերևակալող թփուտները, և այսպիսի մի տեսարան բացվեց մեր առաջ. կորած ոչխարը նստած՝ հանգիստ որոճում է, իսկ նրա կողքին մեկնված է մեր Չամբարը:

Շունը մեզ վաղուց էր նկատել, բայց տեղից վեր չէր կենում, միայն պոչն էր բարեկամաբար շարժում:

Առաջ գնացինք և գաղտնիքը բացվեց, մոր և Չամբարի մեջտեղը նորածին մի գառնուկ անուշ-անուշ քնած է: Ինչ սարսափելի պիտի եղած լիներ այդ արարածի համար աշխարհը, քանի որ ծնվելուն պես նա խավար գիշեր էր տեսել, փոթորիկ, անձրև, կայծակ և լսել էր ահեղագոչ որոտներ... Բնության դաժան տարերքը կոչնչացնել թույլ ու անձար այդ էակին, եթե բարի շունն իր տաք ու փափուկ մուշտակով չփաթաթվեր նրան:

- Վայ, Չամբար ջան,- ուրախության կանչերով փաթաթվեցի նրա վզովը, ապա մի փոս քարի մեջ կաթ լցրի և հյուրասիրեցի: Կշտացավ, նայեց գյուղի կողմն ու սկսեց ծնրալ, անհանգիստ շարժումներ անել. երևի շատ էր կարոտել ձագերին:

- Գնա՛, Չամբար ջան, գնա, բալեքիդ հասիր,- համաձայնություն տվի ես:

Հասկացավ, ուրախությունից վեր-վեր թռավ, դունչը երեսիս հասցրեց ու վազեց դեպի գյուղ:

3

Հաջորդ տարին մի պատահմունքով մեր Չամբարի ձագերը կոտորվեցին. հարևանի գոմեշը հավանոցի կտուրն էր բարձրացել, առաստաղը փուլ էր եկել ու ձագերին տակը թաղել:

Երեք օր անբախտ մայրը տխուր-տրտում թափառում էր հանդերում:

- Չամբար ջան, մի բան կեր, Չամբար...- կսկիծով ասում էր մայրս՝ կաթով լիքն ամանը շան առաջ դնելով:

Չամբարը տխուր շարժում էր պոչն ու մի անկյուն քաշված՝ լուռ լալիս իր վիշտը: Երբորդ օրը, թույլ-թույլ ոտները քարշ տալով ու փշրված սրտով, հետս հանդ եկավ:

Այդ օրը Չամբարն էլ կորավ, մեր Կխտար կովի հորթն էլ:

Հանդերն ընկա, ձայն տվի, ամեն տեղ փնտրեցի, բայց չգտա: Մեծ էր իմ վիշտը, քանի որ մանկությունս նրա հետ էի անցկացրել:

- Խեղճ մեր, յարաբ դր թփի տակ մեռավ իրան բալեքի դարդից,- ասում էր մայրս արցունքն աչքերին:

Իսկ հորթի մասին մտածեցինք, որ գայլերը կերած կլինեն:

Մի օր էլ Ագռավի քար կոչված մեծ ժայռի տակ երկու կենդանի նկատեցինք: Վազեցինք և ինչ. մեր Չամբարը թուլացած ընկած, իսկ Կխտարի հորթը նրա ստինքներից կախված՝ ծծում է: Հորթը ժայռից գլորվել էր, ոտքը փշրվել, և ահա հավատարիմ շունը կողքին նստած՝ և պահպանել էր գայլերից, և իր ստինքներով կերակրել նրան:

Շատերը զարմացան այս արտասովոր դեպքից: Մայրերը լաց էին լինում, իսկ ծերերը հառաչում էին ու մրմնջում:

- Մի Աստծու բաներին մտիկ, է... Տես ինչ սիրտ է տվել էդ անլեզու կենդանուն...

Սայլ տարան, Չամբարին ու հորթին մեջը դրին և ամբոխով շրջապատված գյուղ բերին: Ինչ հուզմունք էր, ինչ ուրախություն...

Իսկույն կաթ բերինք և կաթիլ-կաթիլ լցրինք Չամբարի բերանը: Նա հետզհետե ուշքի եկավ և բարությանը ու վշտով լի աչքերը բաց արեց:

Չամբարը կազդուրվեց, նրա խոցված սիրտն ամոքված էր երևում: Այնուհետև նա իր զավակի պես սիրում էր Կխտարի հորթին, հանդում միշտ նրա հետ էր շրջում և դողում էր նրա

կյանքի համար:

Չամբարի ահից ճվ կմոտենար այդ հորթին:

4

Ժամանակ անցավ, մեր Չամբարը կրկին ձագեր ունեցավ:

Կսկիծով եմ հիշում այն օրը, երբ մեր հարևան Մացակը նրա ճուտերին տարավ գոմի հետևը և կենդանի-կենդանի թաղեց: Ասենք Մացակը մեղավոր չէր, տարին վատ էր, գարու հացը երազում էինք տեսնում, ճր մնաց շանը լակ տային: Ու շան կյանքը փրկելու համար որոշեցին ձագերին գոհել: Այդ ոճիրն, իհարկե, Չամբարից ծածուկ կատարեցին:

Ցավից գոռացի, լաց եղա, բահը վերցրի, որ գնամ քանդեն-հանեն, չթողեցին:

Չամբարին այդ օրը փակել էին գոմում: Գիշերը պատի անց-քը լայնացրել-դուրս էր եկել, գտել իր ձագերի գերեզմանը, թաթերով փորել ու հանել իր անշնչացած բալիկներին...

Լուսադեմին, կարծես երազում, աղիողորմ մի ոռնոց լսեցի: Կիսահագնվել դուրս թռա տնից և տեսա մեր Չամբարին իր ձագերի գերեզմանի վրա անշունչ ընկած...

Չամբար ջան, իմ մանկության ընկեր, կարոտով ու կսկիծով եմ հիշում քեզ, քո մայրական սիրտը...

1939

ԴԵՊԻ ՍԵՎԱՆ

1

Իմ հորթերը փռված արածում են Խալ-խալու լեռան ծաղկոտ լանջին, իսկ ես քրտնաթոր մագլցում եմ վեր, բարձրանում եմ գագաթը, այնտեղից դիտելու արևածագը և փիրուզե Սևանը:

Վաղորդյան հովը զովացնում է քրտնած դեմքս և խաղում է խռիվ մազերիս հետ:

Ահա ես գագաթին եմ՝ Խալ-խալուն շրջապատող բոլոր լեռներից բարձր, այնքան բարձր, որ Սևանը երևում է, ինչպես սպիս մեջ:

Ձորերում դեռ մթնշաղ է, իսկ Փոքր Կովկասի բարձունքները շղարշված են նոսր մառախուղով:

Բայց ահա հսկա Մուրղուզի թիկունքից դուրս ելավ արևը, իսկույն ցրիվ եկան մառախուղները և գմբուխտ բարձունքները ոսկեգօծվեցին:

Բարձր լեռների շրջապատի մեջ շողշողաց Սևանը, հրդեհվեց արևի գույներով:

Ես կյանքումս լիճ կամ ծով չեմ տեսել, և հիմա հեռվում առկայծող ջրերի տեսքից պեկոծված՝ հոգով թռչում եմ դեպի հեքիաթային Սևան:

Մանուկ հասակից մի աներևույթ գորություն միշտ քաշել է ինձ դեպի Սևան: Նրա մասին մեր գյուղացիների զրույցները լսելիս միշտ բորբոքվել է իմ երևակայությունը:

Դեռ վեց տարեկան էի, երբ Սևանի ափից քառաձի սահնակներ նստած և լայն մուշտակներ հագած մարդիկ եկան և **նշան դրին** իմ միակ քրոջը: Ապա նրան սիրուն շորեր հագցրին, մորս ընծաներ տվին, իսկ հորս՝ փող, և քրոջս սահնակ նստեցնելով՝ տարան իրենց հետ:

Ինչպե՞ս էր հոնգուր-հոնգուր արցունք թափում նա... Չէր ու-

զում բաժանվել ինձնից, չէր ուզում թողնել հայրենի տունը, չէր ուզում գնալ օտար տղամարդու հետ...

Բայց ճվ էր նրա կամքը հարցնողը...

Այնպես եմ կարոտել քրոջս... Նրանց գյուղը այն լեռան մյուս փեշին կլինի, Սևանի ափին: Ինչ էլ լինի գնալու եմ նրան տեսություն: Անպայման կգնամ: Ինչպես կուրախանա... Կտեսնեմ և իմ ցնորք-Սևանը, կողանամ նրա ջրերում, որս կանեմ նրա ափերին... Էհ, մնաք բարի, չալ դնչավոր իմ հորթեր...

Երեկոյան իջա գյուղ, ծնողներիս համոզեցի և լուսադեմին ճանապարհ ընկա դեպի իմ պատանեկան ցնորքների աշխարհը, դեպի Սևան:

2

Խճուղին ներքև թողած, գնում եմ լեռնային կածաններով. հարթ ճամփով քայլել չեմ կարող, սովոր չեմ: Ուրիշ է լեռը: Մագլցեցի սարն ի վեր, դուրս եկա նրա բաշը ու հանկարծակի ալեկոծումից շունչս կանգ առավ. բոլորովին մոտիկ, լեռան ստորոտից անծայրածիր կապույտ ջրեր էին տարածվում լեռնաշարքերի երկայնքով մինչև հեռավոր հորիզոն: Պահճ, այսքան էլ մեծ ծով: Կարծես երկնքի կեսը իջել է ցած ու տարածվել-բռնել այս ամբողջ լեռնաշխարհը ու իր տակով արել-հավասարեցրել և սուր-սուր ժայռեր, և՛ ձորեր, և՛ բլուրներ ու ցածրիկ լեռներ:

Հնայված ու տարված նայում էի ես չքնաղ Սևանին ու սիրտս դողում էր նրա մեծության, նրա աննման գեղեցկության առջև:

Վերջապես ուշքի եկա և լեռան ուսով իջա նրա մյուս երեսը, ուր, մի ձորակում, լճից ոչ հեռու, խրճիթներ էին երևում և մի հին եկեղեցու սուր գմբեթը: Հովիվներ պատահեցին, հարցրի՛ Գոմաձորն է, այն գյուղը, ուր հարս է գնացել իմ քույրը:

Ժայռոտ լանջերով ցած վազեցի, կտրեցի-անցա կանաչ լեռնագոգերը և ձորակով իջնող մի շավիղով հասա գյուղ:

Քույրս արցունքն աչքերին դիմավորեց ինձ:

Հավաքվեցին մեր խնամիները, հարցուփորձ արին ծնողներիս մասին, «թանկ ու էժանի» մասին: Պատշգամբում թախտին առողջ-փառք բազմած, մեջքս բարձերին հենած պատասխանում եմ նրանց հարցերին ու հետաքրքրությամբ դիտում իմ խնամոնց գյուղը: Փայտաշեն տուն չկա, իսկ մեր դռներին կիտած վառելափայտի փոխարեն ամեն բակում չոր աթարի մի-մի «ամբրոց» է բարձրանում՝ եգիպտական բուրգի նման: Երեխաները «բասմայի» վրա վեգ են խաղում, իսկ ցանկապատերը քարից են. ծառ չունի այդ գյուղը, և նրա հանդերը մերկ են: Առանց ծառ էլ երկիր կլինի...

Ծուխ բարձրացավ, վառվող աթարի ինձ անծանոթ հոտը լցվեց պատշգամբը. այդ իմ պատվին են «թոնիր» վառում: Թեև փոքր եմ, բայց դե, ինչքան չլինի, խնամի եմ, հո չի կարելի առանց պատվելու թողնել:

Քիչ անց սեղան բաց արին, խմիչքներ ու համեղ խորտիկներ դրին, բայց ես փշերի վրա եմ նստած, իմ ուշքն ու միտքը Սևանի կողմն է: Երբ պիտի վերջանա այս ամբողջը, երբ պիտի ինձ ազատ արձակեն, որ գնամ մոտիկից տեսնեմ իր զմրուխտ ավերի մեջ նիբիող թագուհուն...

Մթնեց: Հիմա բաղերը երամ առ երամ դաշտերից եկան ու տեղավորվեցին գյուղի դիմացի շամբուտում, այնտեղ, ուր Զանգուն դուրս է հոսում լճից և ճահիճներ կազմում հարթության վրա:

Քույրս ինձ համար փափուկ անկողին բացեց: Ես կոշտ կյանքի սովոր մարդ, իսկի կարող եմ հանգիստ քնել այդքան փափուկ անկողնում:

3

Լեռները դեռ վաղորդյան մշուշով էին պատած, երբ ես հագնվեցի և, իմ խնամի Տիգրանի որսորդական հրացանը վերցնելով, գնացի լճափ:

Ջրերը առավոտյան զեփյուռից թեթև ալեկոծված, մեղմ

ձողփում-խփում էին ափերին, և այդ զարկերից թաց ավազը խշշում էր:

Այս ինչքան թռչուն կա այստեղ, այ՛ որսի երկիր...

Ահա ջրի մակերեսը աջ ու ձախ ակոսում են բադի նման, բայց նրանից փոքր փետրավորներ: Չգիտեմ ինչ թռչուններ են, մեր սարերում դրանցից չկան, բայց ինչ էլ որ լինեն, փափլիկ բաներ են, հիմա ես դրանց բմբուլը քամուն կտամ:

Բայց, այ՛ քեզ հրաշք, կրակում եմ ընդամենը քառասուն-հիսուն քայլ հեռավորությունից և ոչ մեկը չի ընկնում: Հրացանի թնդյունը լսվելուն պես բոլորն էլ մի ակնթարթում սուզվում են ջրի տակ, և լճի երեսը թեթև կնճռոտվում է նրանց տագնապալից սուզվելուց: Վառողի ծուխը ցրվելուց հետո նրանք նորից ջրի երեսին են և կարծես ինձ բարկացնելու համար, հենց նույն տեղում անվրդով քորում են իրենց թևերի տակը, քրքրում են լողացող մամուռները և երբեմն էլ թափահարում են իրենց թևերն ու չփչփացնում ջուրը: Ես մեկ էլ եմ նշան բռնում և քաշում ձգանը, նորից ոչինչ չկա ջրի երեսին:

Ա՛յ քեզ հրաշք...

Այդ օրը դատարկեցի փամփշտակալս, բայց ապարդյուն: Դե արի ու դատարկ տուն վերադարձիր: Ա՛յ քեզ խայտառակություն: Առանց փամփուշտի իմաստ չունենր մնալ որսի վայրում, ուզեի-չուզեի պիտի վերադառնայի: Որպեսզի մարդու չհանդիպեմ, պտույտ տվի և գյուղ մտա հետևի կողմից:

Խնամի Տիգրանը, որ մանուկ հասակից զբաղվում է ջրային թռչունների որսով, ծիծաղեց իմ միամտության վրա:

- Բա էդ փամփուշտները անտեղի կփչացնեն: Ախր դա բադ չի, սուզակ է, դրան սպանելը հեշտ չի. աչքը տնկած քո հրացանի փողին՝ հենց որ ծուխ է նկատում, մինչև կոտորակն իրեն հասնելը մտնում է ջրի տակ...

Ա՛յ քեզ հրաշք: Ես ապշած էի այդ բացատրությունից: Այդ ինչպիսի՞ վարժություն, ինչպիսի արագություն է պետք, որ մինչև արձիճը տեղ հասնելը... սատանան տանի, հավատալս չի

գալիս: Որտորդ Տիգրանը հավանաբար սխալվում է, բայց ինչ-որ հանելուկային բան կա այստեղ:

Մյուս օրը հետս վերցրի նաև խնամի Տիգրանի փոքր տրամաչափի հրացանը:

Լիճը խաղաղ էր, բաղերը նրա հարթ մակերեսին դլլլացնում էին, թեթև սահում ետ ու առաջ և քրքրում եղեգների արմատներն ու մերձափնյա տիղմը:

Ջրերն առկայծում էին փիրուզյա հալոցքի պես և հմայում իրենց կախարդական գրավչությամբ:

Ես կուզեկուզ մոտեցա ավին, մտա մի մեծ քարի հետև, հանդարտ նշան բռնեցի ու կրակեցի: Թռչուններն այնպես չքացան, որ լիճը վայրկենապես դատարկվեց: Հեռավոր շամբուտներում սագերն աղմուկով օդը բարձրացան, իսկ վախկոտ ջրահավերը շտապեցին թաքնվել եղեգների մեջ:

Ես գայրացած մի կողմ նետեցի երկփողանին և վերցրի փոքր տրամաչափի հրացանը: Նա ծուխ չի արձակում, փորձենք:

Ձգանը քաշելուն պես սուզակներից մեկը թալտաց ու փռվեց ջրի երեսին, իսկ մյուսներն իրենց ընկերոջ վիճակից սարսափած սուզվեցին: Մի փոքր անց, նորից դուրս եկան և իրենց թափահարեցին արևի տակ ու սկսեցին հարդարել իրենց փետուրե զգեստները:

Նորից կրակեցի և նորից մեկը սկսեց օրհասական թալտոցը, որից լճի հարթ մակերեսի վրա օղակաձև ալիքներ առաջացան և իրար հրելով՝ լայնացող շրջագծերով վազեցին դեպի չորս կողմ: Հնարը գտնված էր:

Բայց ճվ հիասթափություն, թռչուններն այս անգամ բոլորովին չքացան:

Ես համբերությամբ սպասեցի: «Ուզեն-չուզեն դուրս են գալու, առանց օդ հո չեն մնալու», - մտածեցի ես:

Բայց ես սխալվել էի իմ հաշիվների մեջ. պարզվեց, որ ինչքան մարդը հնարներ է գտել այդ անմեղ թևավորներին ոչնչացնելու համար, այնքան նրանք պաշտպանության միջոցներ են գտել

գոյության կռվում:

Եվ ի՞նչ, իրենց ամբողջ ամարմինը թաղում են ջրի տակ և միայն կտուցներն են դուրս հանում՝ շնչելու ճամար: Այդ նկատեցի, երբ նավակով գնում էի սպանված սուզակները վերցնելու: Սպանվածից քիչ հեռու ես դեպի վեր ցցված կտուց նշմարեցի և հիացա այդ թռչունների «հնարագիտության» վրա:

4

Լճի փետրավոր բնակիչները հեռվից կասկածով նայում են ինձ և սիրտ չեն անում ավիին մոտենալ: Կարծես ասում են. «Դե, բարեկամ, էլ քեզ չի հաջողվի մեզ խաբել»:

Բայց մարդու ձեռքից ինչն է ազատվել, որ բաղն ազատվի:

Եվ ես այսպիսի մի հնար մտածեցի. հեռացա ավից և թաքնվեցի քարաբլուրի հետևում: Քիչ անց բաղերը համոզվելով, որ շրջակայքում ոչ ոք չկա, հանդարտ սահեցին դեպի ավի:

Ես իջա արտը, մի ահագին խուրձ ընտրեցի, թուլացրի կապը և մտա մեջը: Այո, ուղղակի խրձի մեջ մտա և սկսեցի քայլել դեպի լիճը: Հեռվից նայողին տեսիլք կարող էր թվալ այդ քայլող խուրձը:

Ցողունների արանքից նկատեցի, որ բաղերը տարակուսանքով իրար մոտեցան ու սկսեցին բաղային քրթմնջոցը: Երևի ուզում էին որոշել իմ ի՞նչ լինելը:

Մինչ նրանք խորհրդակցում էին, խուրձը կանգ առավ ավիին և փայլատակեց հրազենը: Թռչունները սկսեցին թպրտալ ջրում:

Խուրձն անշարժ տնկված մնաց ավիին, մինչև որ բաղերի մի ուրիշ խումբ, գործից անտեղյակ, եկավ հեռավոր վայրերից, աղմուկով իջավ ծանծաղուտում ու իմ խրձի տառուկ հասկերը տեսնելով՝ աճապարեց ավարը վայելելու:

Կարող եք պատկերացնել իմ վայրենի ուրախությունը: Կանաչ ու թավիշի նման փայլուն վզերով «կոնչան» կոչվող բաղերը կտուցներն առաջ մեկնած, օրորվելով ու վարանտո գալիս են

դեպի ինձ, դեպի այն խուրձը, որի մեջ թաքնված են ես: Նրանք ուղղակի առաջս են, սիրտս թայրտում է ուրախությունից: Ես տազնապով կրակում եմ մի փողից: Բաղերը սարսափահար ու մեծ շփոթմունքով անկարգ օդն են բարձրանում, նրանց հետևից շանթում է կոտորակը մյուս փողից, և ես մեծ բերկրանքով լսում եմ թևերի թայրտոցն ու ջրի շրմփոցը:

Խուրձն էլի հանդարտ ու անշարժ տնկված է ափին, իսկ նրա առաջ, ջրի վրա անշնչացած տարուբերվում են սաթի նման սև ու փայլուն փարփարները՝ սպիտակ կատարներով ու ձերմակ փոքր կտուցներով, և «կոնչան» ցեղի խոշոր բաղերը՝ թավիշ փետուրներով:

Բաղերի մի խումբ հեռվից կասկածանքով նայում է ափին, տատանվում է, տարակուսում, բայց գիտեն, որ պիտի գան, չեն կարող չգալ: Պիտի գան, որ իրիկնադեմին տիղմ քրքրեն ափի եղեգնուտների մոտ:

Վերևից օգոստոսյան արևը կրակ է թափում, հասկերի քիստերը վզիս են թափվում ու անախորժություն պատճառում ինձ: Այլևս անհնարին է խրձի մեջ մնալ:

Բայց չէ, պիտի մնալ, ինչ դժվարություն ասես որսորդը չի տանի, մանավանդ որ բաղերն արդեն միամտվել են ու վարանոտ լողում են դեպի ափ, դեպի խորհրդավոր խուրձը...

5

Մեր մարդիկ հիմա նոր հուն են փորել Զանգվի նամար: Նրա լճափնյա մի գառիվայրի տակից խոր թունել են փորել դեպի իմ խնամոնց գյուղը: Զանգու գետն այժմ այդ թունելով է դուրս գալիս մայր լճից և Գոմաձորի մոտ երկրի տակ աշխատեցնում է հզոր մի հիդրոկայան ու այնտեղից էլ, լեռների տակով, ստորերկրյա մութ-մութ ճանապարհներով գնում դուրս է գալիս Չըռ-չըռի մոտ:

Իսկ առաջ, երբ ես հյուր էի մեր խնամիների մոտ, Զանգուն

լձից դուրս էր գալիս Գոմաձորի դիմացից և նրա առաջ խառնի-
ձաղանջ եղեգնուտներ էր կազմում:

Հիմա էլ բախտս այդ եղեգնուտներում պիտի փորձեմ,-
վճռեցի ես և, չնայած քրոջս սրտովը չէր իմ որսորդությունը,
հրացանը ձեռքիս գետափի իջա: Ինչ որս կամ... Դե, որտեղ որսը,
այնտեղ էլ ես:

Իմ թաքստոցից ես կրակեցի, և թռչնային աղմուկ բարձրացավ:
Բաղերը երամներով օդ էլան, իսկ վախկոտ փարփարները
արագ թաքնվեցին եղեգնուտում:

Երբ վառողի ծուխը ցրվեց, ես տեսա, թե ինչպես առափնյա
ձահձի եզրին երեք փոքր թռչուններ են թաքստում:

Նրանք գորշ գույն ունեին, երկար ոտներ, բարակ մարմին և
անսովոր երկար կտուց: Նրանցից մեկը մեծ էր՝ աղավնու չափ,
մյուս երկուսն ավելի փոքր էին ու բաց գույնի. երևում էր, որ նոր
են ազատվել աղվամազից:

Թռչուններից մեկն անվնաս էր մնացել, միայն շշմած էր
հրացանի որոտից: Երբ նրան ձեռք տվի՝ ուշքի եկավ, նայեց ինձ
իր երկյուղած ու պղտոր հայացքով ու թույլ ծվոց արձակեց:

Այդ ծվոցին կարծես որպես պատասխան, օդում թևերի շափ-
շափյուն լսվեց, ինչ-որ բան խփվեց ուսիս, թևի ծայրն այտիս
առավ: Ես անակնկալի եկա, իսկ թռչնակը ցած ընկավ, թաքստաց
և ուշքի գալով, վազեց կանգնեց դիմացի գուղձին ու սկսեց
աղիողորմ ձվձվոց արձակել:

Դա երկար ոտներով, երկար կտուցով, գորշագույն մի
արարած էր՝ հավանաբար սպանված ճուտերի մայրը:

Կենդանի մնացած ճուտը վիզն առաջ մեկնեց և շարունակեց
խղձալի կանչել: Մայրը, լսելով ձագի ձայնը, այնպիսի սրտակտուր
մի երգ սկսեց, որ ես՝ «քարսիրտ որսորդս», տեղումս սառած
մնացի:

Ես ուշքի եկա խոտերի խշշոցից: Ետ նայեցի, դանդաղ քայլե-
րով, փոցխն ուսին, մի գյուղացի է մոտենում:

Կանգ առավ, ականջ դրեց թռչունի ձայնին ու հարցրեց.

- Չլինի՞ թե ճուտերին սպանել ես:

- Ինչից իմացար...

- Միր ձենից... Չե՞ս լսում ո՞նց է մղկտալով բայաթի կանչում:

Նա նստեց ամայացած մրջնաթմբին, թերթից կոշտ մատներով ծխախոտ փաթաթեց և դանդաղ շարունակեց.

- Դա է՛ն մայրերից չի, որ իրեն բալեքին մոռանա, դա ուրիշ սիրտ ունի, ուրի՛շ:

Եվ գյուղացին մի դեպք պատմեց այդ փոքրիկ թռչունի մեծ «սրտի» մասին:

Անցյալ տարի ինքը կնոջ հետ միասին եղեգնուտի ափն է գալիս՝ հնձած խոտը հավաքելու: Հետները գալիս է նաև կատուն: Դե կատու է, էլի՛, ամբողջ օրը եղեգների արանքում կուչ-կուչ անելով ուզում է թռչուն որսալ:

Վերջապես վրա է պրծնում և ճանկում եղեգնուտից անզգուշաբար դուրս եկած աղվամազոտ ձագին: Թռչնիկի մայրը օդից հարձակվում է կատվի վրա, իսկ հայրը ճանկերը գցում է նրա վիզն ու կտցահարում աչքերը: Կատուն գազազում է, թաթով ջարդում թռչնիկի թևը:

Ծնողները սրտակտուր կանչերով շարունակում են կռիվը իրենց ձագին հափշտակողի դեմ, շփոթեցնում են նրան ու գցում ջուրը: Կատուն գնում է ջրի տակ՝ իր մեղքերը քավելու, իսկ թռչունների վիրավոր ճուտը թևերը փռում է ջրի երեսին ու տարուբերվում:

- Մի տեսնեիր, թե ծնողները ինչ զգույշ բռնեցին իրենց վիրավոր բալի թևերից ու եղեգնուտը տարան,- պատմեց գյուղացին:- Մի անգամ էլ,- շարունակեց նա,- էլի էս կողմերում խոտ էինք հնձում: Մեր հարևանի տղան եղեգնուտը մտավ ու էդ թռչունի ճուտերից մեկը բռնեց: Դրա մայրը է՛նպես մի բայաթի սկսեց, է՛նպես էրված-խորովված երգեց, որ հնձվորներին լացացրեց: Մյուս օրն էլի եկանք հնձի: Էլի դա մեզ վառեց իր դարդոտ երգերով: Ոնց էր երգում, ոնց էր մղկտում, իսկական

բալին կորցրած մայր:

Մինչ գյուղացին դանդաղ պատմում էր ու ծխում, անբախտ թռչունը շարունակում էր իր տխուր երգը:

- Հետո՞, - հարցրի ես:

- Հետո, երկու օր, երկու գիշեր երգեց խեղճ մայրն ու արևը մայր մտնելիս իրեն ծովը գցեց մեռավ: Բա՛, տղա ջան, չասես թե՛ փոքր է, դրա սիրտն ինչ պիտի լինի: Փոքր է, բայց սիրտը մեծ է, շատ մեծ... Իմացիր, որ էդ վիշտը նրա սիրտը չի տանի...

Գյուղացու այդ պատմությունը շատ ազդեց ինձ: Արագ հեռացա «սպանության վայրից», բայց իմ հետևից դեռ լսում էի դժբախտ մոր հետզհետե հեռացող տխուր մեղեդին: Նրա վիշտը հետապնդում էր ինձ...

Արևամուտին, որսից վերադառնալիս, ես անցա այդ վայրով: Ինձ հետաքրքրում էր, թե ինչ եղավ վշտոտ մայրը:

Լեռնային լիճը խաղաղ փողփողում էր արեգակի վերջին շողերի տակ, եղեգնուտներում սվսվալով թառում էին վայրի թռչունները: Չայները հետզհետե խաղաղվեցին, և լիճն սկսեց նիրհել լեռնային գեփյուռի շոյանքով:

Միայն սպանված ձագերի մայրն էր խռովում շրջակայքի անդորրը իր սրտաճմլիկ երգով:

Այդ ամայի վայրում, լճի խորհրդավոր հեքի, եղեգների սվսվոցի տակ վշտաբեկ մոր մեղեդին ցնցեց ինձ:

Ես արագ մոտեցա ծանոթ գուղձին, պայուսակիցս հանեցի կենդանի ձագին, դրի մոր դիմաց և արագ հեռացա:

Ետ նայեցի: Դադարել է սրտաճմլիկ երգը, նա փաղաքշում է ձագին, կտուցով հարդարում նրա գզգզված փետուրները:

Լիճն ու եղեգները հետզհետե թաղվեցին իրիկնային խաղաղության մեջ:

1939

ԱՐԱԳԻԼԸ

1

Քույրս իր ընտանիքով տեղափոխվեց Երևան՝ ես էլ հետը:

Առաջին անգամ էի քաղաք տեսնում: Բայց ինչ քաղաք, ծուռունուռ փողոցներով մի խոշոր գյուղ էր դա: Ո՛ր էին այսօրվա հոյակապ շենքերը, վիթխարի գործարանները, ասֆալտապատ փողոցները, գեղեցիկ զբոսարանները: Այսօրվա տրոլեյբուսների փոխարեն էշերն էին երթնեկում՝ կողովներ բարձած, իսկ տրամվայի տեղ՝ ձիաքարշ մի վագոնիկ էր: Տներն իրարից հեռու էին, շրջապատված կավե պարիսպներով, իսկ ներսում մի քանի թթի և դեղձի ծառեր, որոնց տակն ընկած պտուղներն էին կտցահարում բակում վխտացող հավերը:

Շոգ էր ու փոշի, ամիս, ուր մնացին մեր զով սարերը, շնկշնկան հովերը, ծաղկոտ «ուրթերը»...

Միայն Մասսի վեհ տեսքն էր գրավում ու մխիթարում ինձ այդ անհրապույր քաղաքում:

Ես նրան տեսնում էի կամ ձերմակ ամպերի ապարոշը գլխին փաթաթած, կամ պարզ ու կապույտ երկնքում իր ալեհեր գլուխը վեհորեն պահած լուռ մտածելիս...

Մի ուրիշ բան էլ էր գրավում ինձ Երևանում. դրանք երկնասլաց բարդիներն էին և նրանց վրա թառած արագիլի բները: Մեր լեռնոտ երկրում ոչ բարդի կար, ոչ արագիլ: Եվ երբ արագիլները եռանկյունի շարք կազմած մեր սարերի վրայով հյուսիսից չվում էին դեպի հարավ, ես անձկությամբ նայում էի նրանց ու մտածում. «Տեսնես որտեղ են բույն շինում այս թռչունները...»:

Ահա և նրանք՝ իրենց ահագին բներով: Ես հացի փշրանք էի շաղ տալիս բարդու տակ ու հեռվից դիտում էի գաղտագողի: Արագիլները ցած էին իջնում ու հավաքում: Ինչ հանդարտ

թռչուններ են, կարծես ընտանի լինեն: Մարդ բարձրանա ծառն ու նայի սրանց բնի ներսը. երևի ձվերը ուրուրի ձվերից էլ մեծ լինեն: Այն ձվերից, որ իմ ընկեր Ակոփը կաղնու կատարից ուզեց ցած բերել: Այսպես մեղավոր մտքեր էին ծագում իմ գլխում...

Բայց երևանցի իմ նոր ընկերը՝ մեր հարևանի որդի Աշոտը, ինձ զգուշացրեց.

- Արագիլի ձվերը մոքիցդ հանիր: Սրանց այսպես խաղաղ մի տեսնի, ձվերին ձեռք տվիր՝ ահագին կտուցներով գլուխդ կջարդեն, ծառից վեր կգցեն...

Հիշեցի իմ ընկեր Ակոփին, թե ինչպես չդիմացավ մայր ուրուրի հարձակմանը ու ծառի կատարից ցած գլորվեց: Հիշեցի ու հավատացի Աշոտին:

Չէ, դժվար բան է մայր թռչունի հետ գործ ունենալը, այն էլ արագիլի հետ, որ մի քլունգի չափ կտուց ունի...

2

Աշոտի հետ շատ մտերմացանք:

Մենք ձորն էինք իջնում, ուր փրփրում էր Զանգուն, ձուկ էինք որսում, լողանում էինք ու պառկում գետափի սալ քարերին, իսկ երեկոյան հովին վերադառնում էինք տուն ու խաղում նրանց բակում:

Այդտեղ, Զանգվի ափին, ուղղահայաց վեր ելնող ժայռերի գլուխը տափարակ է և ծածկված մրգատու ծառերով: Այգու մի անկյունում այժմ էլ կա այն փոքրիկ քարաշեն տունը, ուր մի ժամանակ ապրում էր Աշոտի հայրը՝ գյուղատնտես Կարապետ Այվազյանը: Այժմ էլ այդ տան առաջ կողք-կողքի կանգնած են երկու բարակիրան ու երկնասլաց բարդիներ՝ երկվորյակ քույրերի նման:

Այդ բարդիներից մեկի վրա ամեն գարնան նորոգում էին իրենց բույնն ու ձագեր հանում երկու արագիլներ:

Նրանք այնքան էին ընտելացել, որ բակում հավերի, շան,

կատվի և երեխաների հետ ման էին գալիս իրենց արտասովոր երկար ոտներով և կտցահարում էին հավերին ու խլում նրանց կերը:

- Ձու դնելուց հետո նրանցից մեկը մնում էր բնում, տաքացնում էր ձվերը, իսկ մյուսը գնում էր կեր գտնելու իր և ամուսնու համար:

Ձագեր հանելուց հետո նույնպես ամուսինները հերթով մնում էին բնում, որպեսզի բազեն կամ օձը փոքրիկներին չտանեն, և կամ չարաձիները բնից վայր չընկնեն:

Անչափ զվարճալի ու հետաքրքրական էր ձագերի թռչել սովորելը: Այդ օրերը մեզ համար տոն էր ու ցնծություն: Մեկ էլ տեսար արևածագի հետ հայր արագիլը կանգնեց մի ոտքի վրա, կոշտ ձայնով «կափ-կափ» արավ, կտուցով հրեց ձագերին, զգաստացրեց և բնից ուղղահայաց մի քանի մետր վեր բարձրացավ: Իր ահագին թևերը շարժելով ու խրախուսական «կափկափոցով» նա դեպի վեր էր հրավիրում ձագերից ամենից ուժեղին:

Հրապուրված ձագը վիզը երկարում էր, ձգվում, թույլ ու նորաբույս թևերը շարժում, բայց ներքևի անդունդը տեսնելով, սիրտ չէր անում թռչելու: Հայր արագիլը իջնում էր բնի վրա, իր թռչնային լեզվով նորից էր քաջալերում զավակին և թռչում էր բնից ուղղահայաց, ոչ շատ բարձր: Ձագը նորից էր թռվում տեղում և ձգտում դեպի վեր:

Մի քանի փորձերից հետո վերջապես նա կտրվում էր բնից, մեկ-երկու ոտնաչափ վեր բարձրանում, օդում արագ-արագ թափահարում թևերն ու հոգնելով, թե՛ վախից, նորից ընկնում բույնը:

Երեխաները ներքևում ուրախության ճիչեր էին արձակում:

- Հայրիկ, ինչո՞ւ արագիլը ձագին միշտ բնի ուղղությամբ է վեր կանչում,- մի անգամ հարցրեց Աշոտը:

Այդ պահին ձագը, որ մի մետրաչափ բարձրացել էր օդում, թալրտաց և նորից ընկավ ցած՝ ուղիղ բնի մեջ:

- Հիմնի հասկացմբ,- հարցրեց հայրը:

Մյուս օրը փորձերը շարունակվեցին: Ձագի թևերը բավական վարժվել էին, նա հինգ-վեց մետր վեր էր բարձրանում և նորից իջնում բնի մեջ:

Այնուհետև հայր արագիլը սկսեց այսպիսի փորձեր անել. այս անգամ հորիզոնական թռիչքով մի քանի մետր հեռացավ և պտույտ գործելով վերադարձավ: Ձագը վիզը բնից դուրս երկարած՝ ահով մեկ հորն էր նայում, մեկ ժայռերի տակ վշվշող Ջանգվին: Հասկացել էր, որ այս անգամ պետք է հորիզոնական թռչի և ցած ընկնելու դեպքում այլևս փրկություն չկա: Տեսնելով, որ ձագը տատանվում է, հայր արագիլը վճռեց խրախուսել նրան: Թռավ, գնաց Ջանգվի ափը և այնտեղից մի չաղլիկ գորտ կտցին վերադարձավ, կանգնեց դիմացի ճյուղին ու սկսեց այդ համեղ պատառով դեպի ինքը գրավել ձագին: Ճուտերը լայն բաց արին իրենց կտուցները և վիզները առաջ մեկնեցին: Եվ ահա ամենից ուժեղը (գուցե և ամենից բկլատը) բնից դուրս թռավ՝ հայացքը գորտին հառած: Ներքևում մենք շունչներս պահեցինք: Ձագը հասավ, հոր կտուցից հափշտակեց գորտը և պտույտ գործելով վերադարձավ բույնը: Քույրերն ու եղբայրները ուրախության ձայներով դիմավորեցին նրան և փորձ արին խլել ավարը, բայց սա իսկույն իր պատառը կուլ տվեց:

Մայրը կտուցով հարդարում էր իր խիզախ ձագի փետուրները, շոյում նրան և մեղմ «կափկափյունով» իր սերն ու մայրական գորովանքը հաղորդում: Ձագի հաջորդ շրջանը ավելի մեծ դուրս եկավ, չորրորդը՝ ավելի մեծ, իսկ հինգերորդին նա մի կալի չափ շրջան գործեց:

Այդ ձևով հայրը թռչել սովորեցրեց նաև մյուս ձագերին, և երբ բոլորն էլ կալի չափ շրջան էին գործում, արագիլ ամուսինները առաջ ընկան, իսկ ձագերը նրանց հետևից շարք կազմեցին ու այդպես թափորով պտույտ գործեցին և վերադարձան իրենց բույնը:

Այնուհետև ամեն առավոտ, արևածագի հետ միասին,

սկսվում էին խմբով թռչելու վարժությունները: Այս անգամ ծնողներն իրենց ձագերին արդեն տանում էին Զանգվի ստորին հոսանքի ճահիճները:

3

Թռչելու վարժությունները գրեթե միշտ էլ հաջողությամբ էին անցնում: Հոգատար ծնողներն իրենց ձագերին թռչելու էին հանում միայն այն դեպքում, երբ համոզված էին լինում, որ նրանց թևերը բավական ամրացել են: Միայն մեկ անգամ, ձագերից մեկը, որ բնականից մի թույլ արարած էր, թռիչքի ժամանակ ցած ընկավ՝ բարեբախտաբար խոտի չոր կույտի վրա: Տանտիրոջ կատուն վրա հասավ, որ հափշտակի անօգնական արարածին, բայց այդ պահին արագիլ ծնողները սլացան դեպի իրենց ձագը, մայրը ճչալով իր թևերը փռեց նրա վրա, իսկ հայրը հուժկու կտուցով բռնեց կատվի վզից, բարձրացրեց մինչև բարդու կատարը և այնտեղից նետեց Զանգվի ձորը... Լավ էր, կատուն զարնվեց ջրին և ուշքի գալով՝ լողաց-անցավ գետը:

Այնուհետև նրա մտքովն անգամ չէր անցնում մոտենալ արագիլի ձագերին:

Մի անգամ էլ այսպիսի դեպք պատահեց:

Բակում աղմուկ էր բարձրացել, շունը հաչելով վազում էր ինչ-որ սև պարանի հետևից, հավերը վզներն առաջ մեկնած՝ կչկչում էին սարսափահար, կատուն թաթով խփում էր և մլավոցով ետ ցատկում: Իսկ «պարանը» գալարվելով, Ֆշոցով առաջ էր շարժվում դեպի բարդին: Վերջապես նա փաթաթվեց ծառին և սկսեց վեր սողալ: Մենք տեսանք, թե ինչպես արագիլի ձագերը գլուխները բնից հանած՝ ճչում են տագնապահար: Աշտոր բահը վերցրեց և առաջ վազեց: Այդ պահին վերևից կարծես երկնաքար ընկավ: Իր ձագերին պաշտպանելու բնազդը այդ խաղաղ թռչունին լեռնային արծվի ուժ և ցատում էր հաղորդել: Վար խոյացավ, կտուցով հարվածեց օձի գլխին, ապա պոչից բռնելով՝

թռավ դեպի ամպերն ու այնտեղից իր թունավոր թշնամուն նետեց Զանգվի սուր-սուր ժայռերի վրա...

Եվ երբ սողունը ջախջախված էր, արագիլը նրա մտով կերակրեց իր ձագին:

4

Ամեն աշնան արագիլները չվում էին տաք երկրներ, և կարծես այգին դատարկվում էր ու թաղվում տխրության մեջ: Թե՛ գյուղատնտեսի երեխաները և թե՛ բակի կենդանիներն այնպես էին ընտելացել արագիլների խաղաղ հարևանությանը, որ նրանց չվելուց հետո թախիծով էին նայում Արաքսի հովտին, դեպի ուր թռչում անհետանում էին իրենց սրտին այնքան մոտ թռչունները, իրենց սիրուն ձագերով:

Եվ ամեն անգամ, երբ բույնը դատարկվում էր հինավուրց բարդենու վրա, և երամն անհետանում էր աշնանային գորշ հորիզոնում, գյուղատնտեսը երկանր-երկար նայում էր դեպի հարավ ու մտածում. «Տեսնեսդո՞ւրե՛ղ են ձմեռում մեր արագիլները... Տեսնես մեզ նման ուրիշ մարդ-բարեկամ էլ ունեն...»: Իր սիրած թռչունների հետ նա հոգով թևածում էր դեպի հարավ, դեպի Բելուջիստանի տաք ձահիճները և էլ ավելի ցած՝ Հնդկական օվկիանոսի որսառատ ափերը, ուր հարյուրամյա փիղը անգամ իր ողջ կյանքում ոչ մի փաթիլ ձյուն չի տեսել, և ուր գետերը լի են կոկորդիլոսներով ու գետաձիերով, եղեգնուտները՝ վագրերով, իսկ անտառը՝ փղերով ու կապիկներով...

Մի անգամ էլ ծեր գյուղատնտեսը մի պղնձյա տուփ պատրաստել տվեց և անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով գրեց հետևյալ երկտողը.

«Հարգելի անծանոթ պարոններ.

Գրաբերս մեր ընտանիքի բարեկամն է: Նրա բույնը գտնվում է իմ տան առաջ, հինավուրց բարդու վրա, Հայաստանի Երևան քաղաքում: Ինձ և իմ ընտանիքին անչափ հեղափոխություն է,

թե որտեղ և ինչպես է անցկացնում իր ձմեռը մեր ընտանիքի բարեկամը: Խնդրում եմ պատասխանել:

Գյուղատնտես՝ ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶՅԱՆ, Երևան քաղաք»:

Նա երկտողը դրեց տուփի մեջ, հանձնեց ինձ ու Աշոտին և պատվիրեց.

– Բռնեցեք մեկին ու այս տուփը կապեցեք ոտքից:

Կուտ գցեցինք, հացի կտորներ թափեցինք ծառի տակ, մեղմությամբ ու փաղաքշանքով մոտեցանք և շատ փորձերից հետո վերջապես հաջողվեց բռնել հայր արագիլին:

Մի քանի օր հետո մեր բարեկամները չվեցին տաք երկրներ:

5

Այդ ձմեռը շատ երկար թվաց ինչպես գյուղատնտես Այվազյանի ընտանիքի, այնպես էլ ինձ համար: Բոլորս էլ անհամբեր սպասում էինք գարնանը:

Արաքսի հովիտը թռչունների համար այն ճանապարհն է, որ Հնդկական տաք օվկիանոսը կապում է հեռավոր հյուսիսի Սառուցյալ օվկիանոսին:

Գարնանամտին, ամեն առավոտ մենք բարձրանում էինք կտուրը և անձկությամբ նայում դեպի հարավ, Արաքսի գորշ հովտին ու մշուշապատ Արարատին:

Մի օր էլ, երբ Զանգվի ձորում գարնան առաջին շունչն էր խաղում, երեխաները ձեռքներն իրար էին զարկում, ոստոստում էին ժայռերի վրա ու երգում.

*Արագիլ, բարով եկար,
Ջան արագիլ, բարով եկար,
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր...*

Ծեր բարդենին նույնպես ուրախությունից դուրս էր հանել իր

մատաղ տերևների ծայրերը փքված բողբոջների միջից. նրան այցի էին եկել իր թանկագին հյուրերն ու սկսել էին կարկատել իրենց հնամենի բույնը:

Կարապետ Այվազյանը նախ գոհունակությամբ փառք տվեց մայր բնությանը, որ իր երկու բարեկամներն էլ ողջ են վերադարձել փորձանքներով լի իրենց ճամփորդությունից, ապա հետևելով նրանց համերաշխ աշխատանքին, շնջաց. «Ինչպես են իրար օգնում այս անլեզու արարածները...»:

Այնուհետև հացի կտորներ գցեց գետնին ու հրավիրեց իր հյուրերին: Նրանք, սկզբում վարանոտ քայլերով, ապա հետզհետե սիրտ առնելով, մոտեցան: Արու արագիլի ոտքին կապված էր ծանոթ տուփը, բայց կանեփի թելը փոխարինված էր կարմիր պղնձալարով...

– Պատասխանը եկել է, – գոչեց գյուղատնտեսը:

Տնեցիք դուրս թափվեցին: Հետաքրքրությունը համակել էր բոլորին էլ: Նրանք անհամբերությամբ հետևում էին ծեր գյուղատնտեսի շարժումներին, իսկ սա աշխատում էր գրավել ու բռնել թռչունին:

Այդ օրը չհաջողվեց արագիլին բռնել և տուփն արձակել, բայց մի բան պարզ էր, որ ինչ-որ երկրում, ինչ-որ մարդիկ ստացել են նամակը և ուղարկել նրա պատասխանը:

Հաջորդ ամբողջ օրը մենք Աշոտի հետ զբաղված էինք արագիլին գրավելով: Բայց իր բացակայության վեց-յոթ ամիսների ընթացքում նա բավական օտարացել էր մեզանից և դարձել զգույշ ու վախկոտ: Վարանոտ քայլերով մոտենում էր, կոցում ու ետ ցատկում:

Շատ հնարքներ բանեցնելուց հետո Աշոտին վերջապես հաջողվեց բռնել արագիլին: Նա լարն արձակեց և տուփը հանձնեց հորը: Տուփի մեջ խնամքով դրված էր հետևյալ անգլերեն երկտողը.

*«Երևան, Հայաստան, գյուղատնտես Կարապետ Այվազյանին:
Մեծարգո պարոն, սրագանք Ձեր նամակը: Անչափ ուրախ*

եւմ Ձեզ հեպ ծանոթանալուս համար: Մի՛ անհանգստանաք ձեր արագիլի վիճակով, նա ամեն ձմեռ հյոր է գալիս մեզ, Հնդկաստանի Կալկաթա քաղաք, հիվանդանոցի բակը, ուր քրեալորված է նաև հայկական կողեջը: Նա ինձ, գյուղաբնակցու կնոջս և դպրոցական երեխայիս նայքան մերերիմ է, որքան և ձեզ: Կինս, օգրվելով Հնդկաստան-Երևան մեր այս օդային հիանալի փոստից, ողարկում է Ձեզ հնդկական ընտրի ու ազնիվ ծխախոտի սերմ: Ցանեցե՛ք. քարածեցեք ձեզ մոտ և ամեն անգամ ծխելիս հիշեցեք մեզ՝ ձեր հեռավոր ծանոթներին:

Ջոն Սրենլի,

Կալկաթայի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ:

Ծեր գյուղատնտեսը շառագունել էր հուզմունքից: Նա պղնձյա տուփից հանեց փղոսկրյա մի շատ փոքրիկ տուփիկ, ազնիվ ծխախոտի սերմով լի:

- Աշոտիկ, ցանիք ջերմոցում և խնամիր, - դարձավ նա որդուն:

Այդ օրը Կարապետ Այվազյանի տանը տոն էր:

6

Այն ժամանակ Հնդկա-Եվրոպական հեռագրական գիծը ձգվում էր Հայաստանի վրայով: Կարապետ Այվազյանը բժիշկ Ջոն Ստենլիի նամակը ձեռքին մտավ փոստ և ուղարկեց հետևյալ հեռագիրը.

«Կալկաթա, Հնդկաստան, քաղաքային հիվանդանոց, միայր Ջոն-Սրենլիին.

Մրացանք Ձեր նամակը, շնորհակալ ենք: Այսօր ցանում ենք ծխախոտի սերմը, շնորհակալություն միսիս Սրենլիին: Մեր բարեկամները ողջ և առողջ վերադարձան և նորոգում են իրենց բոյնը:

Մեղմում եմ Ձեր ձեռքը: Կարապետ Այվազյան»:

Ամառը նա հաղորդեց հետևյալ հեռագիրը.

«Այսօր մեզ մոտ Կոն է, միայր Սյունյի, արագիլներն իրենց ձագերի հետ միասին կատարեցին առաջին փորձնական թռիչքը՝ դեպի ձեզ չվելու վարժություններ են կատարում»:

Երեք օր անց ստացվեց պատասխան հեռագիրը.

«Պարտասպ ենք ընդունելու մեր թանկագին հյուրերին»:

Ծեր գյուղատնտեսի ուրախությանը չափ չկար: Նրա մռայլ ու տաղտկալի կյանքում արագիլները և կապն անծանոթ բժշկի հետ թարմություն էին մտցրել: Ողջ քաղաքում տարածվել էր արտասովոր լուրը: Մարդիկ՝ ծեր ու մանուկ, հարս ու աղջիկ, խմբերով տեսության էին գնում գյուղատնտեսի արագիլներին: Կատակ չէր, դրանք առաջին օդային կապն էին ստեղծել Հնդկաստանի ու Երևանի միջև:

Աշնանը գյուղատնտես Այվազյանը հերթական նամակը դրեց տուփի մեջ, կապեց արագիլի ոտքից ու բաց թողեց:

«Միայր Ջոն Սյունյի, - գրված էր նամակում, - հիանալի աճեց Ձեր փիկնոջ ուղարկած ծխախոտի սերմը: Ծխում և օրհնում ենք ձեզ, սքանչելի ծխախոտ է: Ուղարկում են մեր բարեկամներին իրենց ձագերով: Խնդրում են կերակրեք անհաջող օրերին»:

7

Այդպես, ամեն աշնան հարավ չվելիս արագիլն իր հետ տանում էր Կարապետ Այվազյանի նամակներն ու հաջորդ գարնան բերում բժ. Ստենլիի պատասխանը:

Այդ պատասխաններից Կարապետ Այվազյանը իր պատկերացումն էր կազմել անծանոթ բժշկի մասին: Իր նամակներից մեկում Ստենլին նկարագրում էր հնդիկների կյանքը. «Շատերը հող չունեն, - գրում էր նա, - հողը ռաջաներին է պատկանում: Գյուղացիները վարձով հող են վերցնում ռաջաներից և դառնում նրանց ձորտերը, հարավի կիզիչ արևի տակ վառվելով մշակում են նրանք ընտիր բամբակ՝ Մեծ Բրիտանիայի տեքստիլ գործարանների համար... Քաղաքները լեփ-լեցուն են մեր-

կանդամ, քաղցից ու կարիքից հալածված գյուղացիներով: Չնչին գրոշներով նրանք բարձում ու բեռնաթափում են անգլիական նավերը, աշխատում են նրանց գործարաններում, կամ գործ չգտնելով՝ մուրում են փողոցներում ու գիշերում բացօթյա: Ինչքան քաղցած մարդ կա իր առատաձեռն բնությանը հռչակված այս երկրում...

Եվ քաղցից ու հիվանդությունից կոտորվում են հնդիկները՝ հարյուր հազարներով, միլիոններով... Երևի դուք թերթերում կարդում եք, որ իմ հայրենակիցները Հնդկաստան են եկել ժողովրդին «լուսավորելու» վսեմ նպատակով... Ամոթից կարմրում են այդ կեղծիքի համար: Ինչ լուսավորություն, երբ իմ ազահ հայրենակիցները փղի մի ժանիքի համար պատրաստ են տասը հնդիկի կյանք խավարեցնել... Շատ բան կա կուտակված իմ սրտում, բայց լեզուս փակ է. ճշմարտությունն ասելու համար արդեն մի ծանր հարված ստացել են իմ հայրենիքի «դեմոկրատ» տերերից. ես ցմահ զրկված եմ Մեծ Բրիտանիայում ապրելու իրավունքից...»:

Մի այլ նամակում նա գրում էր.

«Միստր Այվազյան, չեք կարող երևակայել, թե հայկական կուլեջի սաները ինչպիսի անձկությամբ են սպասում արագիլների վերադարձին իրենց հեռավոր հայրենիքից: Ամռան վերջին սպասողական դրություն է տիրում մեզ մոտ. հայ երեխաները մոտենում են ինձ ու քաշվելով հարցնում. «Միստր Այվազյանից հեռագիր չունե՞ք... Արագիլները Երևանից դեռ դուրս չեն եկել...» (խնդրում են, միստր, ամեն անգամ ինձ հեռագրով տեղյակ պահեցե՞ք, թե որ օրն են արագիլները չվում Երևանից, որպեսզի ես կարողանամ բավարարել հայ երեխաների հարցասիրությունը): Իսկ երբ, վերջապես, արագիլները տեղ են հասնում և իրենց երկար ու կարմիր ոտքերը կախած պտույտներ գործում հիվանդանոցի բակի վրա, կուլեջից դուրս են թափվում հայ երեխաներն ու ցնծագին բացականչություններով դիմավորում նրանց... Եվ երբ

թռչունները կանգնում են ծառին հանգստանալու, երեխաները նրանց դիմում են իրենց մայրենի լեզվով. «Երանի ձեր աչքերին, որ տեսել են մեր Մասիսը, մեր լազուր Սևանը, մեր կարոտած Արաքս գետը...»:

Եվ ես թախիծ ու արցունք եմ տեսնում հայրենիքից զուրկ այդ երեխաների վշտոտ աչքերում...

Նայում են հայրենի երկրից եկած թռչուններին և սրտամորմոք երգեր են երգում իրենց լեզվով՝ հայ պանդուխտների երգը.

*Կռունկ, ոսարի կուգաս,
Ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն
Խարրիկ մը չունիս...*

Այդ վշտոտ երեխաներից ես իմացա (և պատմությունից էլ գիտեմ), որ թուրք հրոսակները ավերել են նրանց հայրենի օջախները, հրի են մատնել հայերի խաղաղ գյուղերն ու քաղաքները, և ձեր աշխատասեր ժողովրդի մնացորդների մի խումբ էլ կյանքի ալիքներից քշված հասել է այստեղ՝ հեռավոր Կալկաթա: Եվ հիմա իմ հայրենակից «բարեգործները» իրենց լեզվով և իրենց՝ անգլիական մեթոդով «դաստիարակում են» այդ երեխաներին:

Խեղճ մանուկներ, կոլեջում նրանց ստիպում են սովորել և խոսել միմիայն անգլերեն. մայրենի լեզվով խոսելն արգելված է այդ հիմնարկում: Բայց ես զգում եմ, որ իմ «լուսավոր» հայրենակիցների բռնի միջոցները ավելի են բորբոքում այդ երեխաների մեջ սերը դեպի իրենց մայրենի լեզուն և կարոտն իրենց հեռավոր հայրենիքի... Նրանք գաղտնի կարդում են իրենց ժողովրդի պատմությունը, ագահությամբ լսում են զրույցներ իրենց հայրենիքի մասին, և սեր ու կարոտ միախառնված լեռնանում է նրանց մատաղ սրտերում:

Բայց թողնենք քաղաքականությունը (ինձ արգելված է նրա-

նով զբաղվել): Դառնանք մեր և ձեր ընդհանուր բարեկամներին: Միրելի միստր, դուք մի անհանգստանաք նրանց վիճակով, աշնանից մինչև գարուն ամեն օր կոլեջի հայ երեխաները իրենց ամենահամեղ պատառներն են մատուցում նրանց և փաղաքշական խոսքեր մրմնջում իրենց հայրենիքից եկած այդ թոչուններին:

Ես և կինս նայում ենք երեխաների ու թոչունների այդ անշահախնդիր բարեկամությանը, և ջերմ զգացմունքներով են լցվում մեր հոգիները:

Գարնանամտին, երբ արագիլները պատրաստվում են թռչելու դեպի Արարատյան երկիրը, նախապես վարժություններ են կատարում, փորձում են իրենց թևերի ուժը հիվանդանոցի վրա, գոլորշիներով հագեցած մեր գաղջ երկնքում: Եվ երբ վերջին օրը նրանք օդ են բարձրանում դեպի հյուսիս չվելու, հավաքվում են հայ երեխաները, իրենց թաշկինակները թափահարում են օդում ու կանչում. «Բարի ճանապարհ... Ողջույն տարեք մեր հայրենիքին, մեր եղբայրներին, մեր հարազատ Սևանին...»:

Կարդում էր այս նամակները ծեր գյուղատնտեսը և տրտմությամբ գլուխն օրորում:

8

Հաջորդ գարնանը միայն մայր արագիլը վերադարձավ. արուն չկար: Նրա փետուրներն այլևս առաջվա ողորկությունն ու փայլը չունեին, իսկ ինքը փոքրացել էր, նիհարել և կուչ եկել: Նա մեկ ոտքի վրա կանգնում էր բնում անոթի ու լուռ և օրերով այդպես մնում անշարժ: Ապա երբեմն սթափվում էր ու տխուր «կափկափյունով» ողբում էր իր վիշտը: Պարզ էր, որ գրկվել է ամուսնուց: Արդյոք ընկերը որսորդի գնդակից էր ընկել, թե լաչին¹ էր հոշոտել չուի ճամփին: Գուցե կարկուտն էր շմեցրել-ցած գցել ամպերից կամ թուլացած թևերն էին դավաճանել, թե՛ հարավի ժանտախտն էր տարել, դժվար էր որոշել:

¹ Լաչին – արծվացեղ խոշոր գիշատիչ է:

Ծեր գյուղատնտեսը վշտահար շտապեց հեռագրատուն:

- Կովի պատճառով Հնդկա-եվրոպական գիծն ընդհատված է,- պատասխանեցին նրան հեռագրատանը:

Նա նամակ գրեց, որի մեջ նկարագրեց այրի արագիլի ապրումներն ու խնդրեց միստր Ջոն Ստենլիին հայտնել, թե ուր է նրա կյանքի ընկերը:

Ժամանակները խառն էին, նամակն ուշ տեղ հասավ: Ամռան վերջերին ստացվեց հետևյալ պատասխանը.

«Մեծարգո պարոն Կարապետ Այվազյան.

Ձեզ հետ բաժանում ենք այն վիշտը, որ ապրում է Ձեր ընտանիքը և խեղճ այրին: Մեր սիրելի արագիլն ընկավ ոստիկանության գնդակից: Նա նկատի էր առնված որպես «վտանգավոր թռչունի»: Ինքս «բոլշևիկյան Ռուսաստանի հետ օդային կապ ստեղծելու համար» երկու ամիս բանտ նստեցի: Իմ հայրենակից անգլիացիները տեղական իշխանությունից պահանջեցին գնդակահարել «բոլշևիկյան Հայաստանից» նամակներ բերող թևավորներին: Ոստիկանությունը տատանվում էր, գիտեր, որ անմեղ թռչունների սպանության լուրը հուզում է առաջ բերելու տեղի հայերի, մանավանդ Հայկական կոլեջի սաների մեջ: Այն ժամանակ հիվանդանոցի բակ մտավ անգլիացի կապիտանը և, ատրճանակը հանելով, կրակ բաց արավ իրենց բնի մեջ խաղաղ նիրհող թռչունների վրա: Հայր արագիլը ցած ընկավ ծառից, և ծաղկանոցը կարմիր ներկեց իր արյունով... Ամենից ցավալին այն էր, թե ինչպես ընդունեց ամուսնու սպանությունն իր ընկերուհին: Նա սրտաճմլիկ կանչերով ընկնում էր ամուսնու դիակի վրա, գուրգուրում էր նրա սառած գլուխը, ողբում նրա մահը...

Սպանվածի աճյունը թաղեցինք հիվանդանոցի բակում, բարդենու տակ: Խեղճ այրի... Ասում եք այս տարի նա ձագ չի հանում... Եվ երբեք էլ չի հանի, արագիլներն ամուսնու մահից հետո երկրորդ անգամ ընտանիք չեն կազմում: Ձեզ, անշուշտ, հետաքրքրում է, թե հայ երեխաները ինչպես ընդունեցին այդ

զագրելի սպանությունը: Զայրույթով և վշտով. չէ՞ որ դրանով կտրվում էր վերջին կապը հեռավոր հայրենիքի հետ: Նրանք լուռ շրջապատել էին թռչունի դիակը, և ես լճացած արցունք էի տեսնում նրանց աչքերի մեջ ու արդար ցասում իմ «քաղաքակիրթ» հայրենակիցների նկատմամբ: Շատ բան ունեմ ասելու, բայց լավ է լռեմ...

Բարեկամաբար սեղմում եմ Ձեր ձեռքը և առիթից օգտվում եմ շնորհավորելու Ձեր հայրենիքի ազատության և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ:

Ձեր անձնվեր բարեկամ բժիշկ Ջոն Ստենլի:

Կալկաթա, 14-ին հուլիսի, 1921 թ.»:

9

Օրեր անցան: Այրի արագիլը հյուծվում էր մեկ ոտքի վրա կանգնած: Ոչ Աշոտի տված ընտիր ուտելիքները, ոչ Արարատյան դաշտի պայծառ ու գեղածիծաղ աշունը սփոփանք չբերին նրան: Քանի՛-քանի սիրահարներ ծեր բարդու շուրջը պտույտներ գործեցին, համեղ ուտելիքներ բերին, փորձեցին թևերով հավել-սիրաշահել մենավոր արագիլին, բայց սգավոր այրին միշտ էլ ետ էր վանում նրանց ու կտրուկ կերպով մերժում նոր ընտանիք կազմելու լուռ ակնարկները:

Հարևան ծառի վրա ուրիշ արագիլներ ձագեր հանեցին, և այրին թախծոտ հայացքով նայում էր, թե ինչպիսի հրճվանքով են խաղում նրանք իրենց ձագերի հետ: Իսկ ինքը, հին բնի վրա մնաց մեկ ոտքի վրա՝ միշտ սգավոր ու տխուր, և աշնանը իր զգզված թևերը թափահարելով թռավ չվող երամաների հետևից՝ դեպի Կալկաթա, իր ընկերոջ գերեզմանին վերջին անգամ այցելելու...

Նա այլևս չվերադարձավ:

Միայն երկու տարի անց փոստատարը մի հեռագիր ձեռքին

մտավ Կարապետ Այվազյանի այգին: Ծեր գյուղատնտեսը վա-
ռեց հնդկական ազնիվ ծխախոտով լի ծխամորձը, դողդոջուն
ձեռքերով բացեց հեռագրի ծալքը և կարդաց հետևյալը.

*«Երևան, Հայաստան, գյուղատնտես պարոն Կարապետ Այ-
վազյանին.*

*Ձեր և մեր ընդհանուր բարեկամը մեռավ հիվանդանոցի բակում՝
ճանր վշտից, 1923 թվականի փետրվարի 18-ին: Նրան թաղեցինք
բակի բարդենու տակ՝ իր կյանքի ընկերոջ աճյունի մոտ:*

Ջոն Սյունյի»:

1939

ՏԻԳՐԻՄԻ ՁՈՐՈՒՄ

1

Արագածի հարավային լանջի գյուղերում ճվ չէր ճանաչում Դավոթին, կաղնի կոճղի նման ամուր կազմվածքով, արծվի պես սրատես, ծեր առյուծի նման լանջն ու գլուխը հաղթ այդ քուրդ որսորդին:

Կես դար առաջ նա փախել էր Տաճկաստանի Արտոս լեռան լանջերից, ճեղքել-անցել Հայկական Պար լեռնաշղթայում ամրացած սահմանապան կազակների շղթան և բնակություն հաստատել Արագածի լանջին, մի քարափի տակ ծվարած փոքրիկ գյուղում:

Հնուց ադաթ է մնացել, որ այդ կողմերը որսի գնացողը պետք է մտնի Դավոթի տունը, նրա հացը կտրի ու հարցնի՝ թե որ կողմը գնա, ինչ հնարք բանեցնի, որ որսից դատարկ չվերադառնա: Իսկ որսից հետո, ադաթի համաձայն, պետք է հյուր գնալ Դավոթին, գիշերել նրա հարկի տակ ու լսել նրա հին-հին զրույցները: Անվանի որսորդի հռչակը մեր հեռավոր Ղազախն էլ էր հասել, և ես շատ էի փափագում տեսնել ու լսել նրան:

Մի օր, երբ ես ու ընկերս իջնում էինք Ղարաբուրուն կայարանը՝ գնացք նստելու, քամի բարձրացավ, երկինք-գետինք իրար խառնեց, ձյունը լցրեց ճանապարհները, և գայլերը դուրս եկան իրենց որջերից՝ մեզ նման մոլորված ճամփորդներ որոնելու:

Սաստիկ բքից հալածված, մենք ընկանք ժայռերի տակ պատսպարված գյուղն ու ծեծեցինք առաջին իսկ պատահած դուռը: Տանտերը մեզ ներս հրավիրեց, բայց դեռ շենքում նկատելով կողքիցս կախված նապաստակը՝ կանգ առավ ու հարցրեց.

- Որսորդ եք, - ու պատասխանի չսպասելով՝ կարգադրեց.
- Ետ դառեք:

Նա մեզ առաջնորդեց դեպի գյուղի վերին ծայրը, ուր մեն-

մենակ մի հին տուն էր կանգնած: Սրահից գամփռները շատ անբարյացակամ դիմավորեցին մեզ, մենք հրացաններով սկսեցինք պաշտպանվել գայլախեղդներից: Այդ պահին տան դուռը բացվեց և շենքում երևաց արևկեզ դեմքով, խիտ ու ճերմակած հոնքերով, լայն լանջով, կարճ ոտներով մի ծերունի: Նա սաստեց շներին և մեզ ներս հրավիրեց:

Ընդարձակ հին գլխատան մեջտեղը դրված էր պապենական քուրսին և նրա շուրջը նստոտել ու ոտները գոլ թոնիրն էին կախել մի պառավ կին, երկու հարս, երեք երեխա, բոլորն էլ քրդական տարազով: Նրանց լանջերին, թևքերին, ոմանց էլ ճակատներին կախված էին ուլունքներ, արծաթե դրամներ ու բոժոժներ:

- Քեռի՛, դոնաղներ եմ բերել,- ասաց մեր ուղեկիցը տուն մտնելուն պես:

Մեզ տեսնելով, կանայք իսկույն վեր կացան և ակնածո-թյամբ խոնարհեցին իրենց գլուխները:

- Այ հազար բարով, իմ գլխու վրան, իմ աչքի վրա եք եկել, իմ տուն ձեզ փեշքեշ, իմ մալ ու մուլք ձեր ոտքի տակ,- սրտալի ասաց ծերունին, արևելյան ձևով խոնարհվեց, ձեռքը դրեց կրծքին և հրավիրեց նստել քուրսու շուրջը: Հարսները մի անկյուն քաշվեցին ու սպասում էին սկեսրոջ հրամանների:

Ինչ կա աշխարհում ավելի հաճելի բան, քան քուրսու տակ կախվելը հունվարին, որսից գալուց հետո, երբ շենքում բուքն է ոռնում, և քամին ձյուն է փչում երդիկից ու դռան ճեղքերից:

Տաքացանք, տրամադրություններս բացվեց և էլ ավելի զվարթացանք, երբ հարսներից մեկը սուփրեն փռեց քուրսու վրա ու մեջտեղ եկան ոչխարի ղավուրման, թթուն, հորած պանիրը, դայմախը և մրսած մարդու միակ փրկությունը՝ թթի հայտնի օղին:

- Է՞ծը է՞ծի համար լավ է, քան մի սուրու ոչխարը,- ասաց ծերունին՝ ամենալավ պատահներն ու ամենամեծ բաժակները իմ ու ընկերոջս առաջ դնելով:

- Ախր ինքն էլ է որսկան, որսկան Դավոթն է, լսած կլինեք,

դրա համար է կողմնապահություն անում,- ծերունու վարմունքը բացատրեց մեզ առաջնորդող մարդը:

- Չլինի՞ իմ իմացած քուրդ Դավոթն է,- բացականչեցի ես՝ հանկարծակի ուրախացած:

Ծերունու մարած աչքերը մի ակնթարթ առկայծեցին ու նորից հանգան:

- Դավոթն է, բամ... լսած կլինեք...

Ես ամբողջ երեկոն շատախոսում էի և ստիպում ծերունուն պատմել իր որսորդական արկածներից: Շատ խրատական բան ասաց նա, շատ հուզիչ պատմություններ արավ Տաճկաստանի քրդերի կյանքից, բայց մեկը ցնցեց ինձ իր հուզականությամբ: Ես խոստացա նրա այդ պատմությունը գրել ու հրատարակել, և ահա կատարում եմ քուրդ ծերունուն տվածս խոստումը:

2

- Ամառը ես ոչխարի առաջն ընկած Ալագյազ եմ բարձրանում,- սկսեց իր պատմությունը որսորդ Դավոթը,- բարձրանում եմ էն սիրուն սարերը, էն քչքչան աղբյուրների մոտ թիկն եմ տալիս ու կարոտով մտիկ անում Մասիսին, դարդերս իրար են գալիս, հոգիս պղտորվում է: Մասիս սարի քամակին շատ թանկ բաներ եմ թողել հիսուն տարի առաջ, չինար նշանածս է աչքիս առաջը գալի, որ Յուսուֆ բեգը խլեց իր տղայի համար, ես էլ տղին սպանեցի մի մութ գիշեր ու փախա էս աշխարհքը: Միտս են գալիս Արտոս սարի ալ ու ալվան ծաղկունքն ու էդ ծաղկունքի պես ալ ու ալվան հագած հարսները, աղջկերքը, որ Դիարբեքիից ամառանոց էին գալիս ու էն ծեր Արտոսին կյանք տալիս, զվարթացնում, ջահելացնում...

Շատ բան եմ հիշում էդ երկրից ու մորմոքվում, բայց այդ հինհին օրերից կպատմեմ ձեզ սգավոր մայր արջի, Թոփալ Բրդոտի մասին, դուք էլ աշխարհքին պատմեք, որ մարդիկ իմանան, թե որսորդն էլ սիրտ ունի, հոգի ունի, թեկուզ միշտ արին է թափում,

և թող մարդիկ իմանան, որ անլեզու անասունն էլ սիրտ ունի, հոգի ունի ու հազար անգամ շատ ունի էն մարդկանցից, ովքեր խլեցին որսկան Դավոթի սիրածին ու իրեն էլ դադարգյուն արին իր սիրուն երկրից...

Ծերունին այստեղ այն քաշեց, պղտորված աչքերը լցվեցին, հին-հին հուշերը հուզում էին նրան: Ինձ հասկանալի է քրդի սերը, և ես արդեն կարեկցում էի նրան դեռ բուն պատմությունը չլսած: Նա դանդաղ լցրեց իր ծխամորձը, հավաքեց մտքերը, կենտրոնացավ և կես դար ետ գնալով շարունակեց.

- Դուք քաղաքի մարդ եք, ինձ դժվար կհասկանաք: Մենք, քրդերս, որ մեր կյանքն անասունների հետ ենք անցկացնում, սրտով կապվում ենք նրանց հետ, ու սիրած շան, սիրած դոչի, սիրած եզան մահը, մարդի մահի չափ ցավեցնում է մեզ: Այսր մենք անձրևի, կարկուտի տակ ծնեցնում ենք նրանց, աշխարհք ենք բերում, ծոցներումս տաքացնում, մեծացնում ենք երեխի պես ու սրտով կապվում հետները: Դրա նամար եմ էսպես դարդոտ խոսում Թոփալ Բրդոտի մասին, որին ես էի պահել, մեծացրել: Էն ինչ գուլում էր, որ եկավ նրա գլխին...

Ասված է՝ բանը որ էն գլխից չասես, չի հասկացվիլ:

Ես որսկան էի Արտոս սարում: Էդ սարի դիմաց Սիփան սարն է, իսկ մեջտեղը Վանա սիրուն ծովը: Էնքան եմ նստել Արտոսի քարափներին ու հմայված, ինձ մոռացած, մտիկ արել նորահարսի պես շորորան, նազանք անող Վանա ծովին, լեռան մեջքով արծաթե գոտու պես փաթաթված ու շողշողացող Շամիրամա ջրանցքին... Ու երբ արևը կախվել է սարերի վրա, ուշքի եմ եկել իմ ցնորքներից, չախմախավոր հրացանս ձեռքիս Արտոսի քարափները մտել՝ արջ որսալու:

Էդ քարափներում ես արջ շատ եմ սպանել, պատահել է, որ արջն է ինձ ջարդել, շպրտել քարից, մի կերպ պրծել եմ նրա ճանկերից: Դրանց սովորությունը գիտեմ, ոնց որ իմ ոչխարներինն ու շներինը: Ու գիտեմ, որ արջը ջիգյարով անասուն է. մայր արջը իր ձագի համար կրակը կզցի իրեն ու առանց աչքը ձպելու գնդա-

կի առաջ կգնա: Բայց մի օր մի շատ անխիղճ մոր պատահեցի: Ասենք անխիղճը ես էի, որ քարափում իր համար հանգիստ քնած կենդանու վրա կրակեցի: Դա վեր թռավ, քնահարամ ու գազազած գոռգոռաց, թքոտեց ու բան չգտնելով, ներսիցը իրեն ձուտին քարափի խոռոչից ուղիղ երեսիս շարտեց: Ես ուշքի եկա ու կրակեցի կատաղած գազանի ճակատին, հանգստացավ:

Քոթոթը ոտներիս առաջ թավալվում էր ու ծմրկոտում ցավից: Դրան չուխիս փեշի մեջ փաթաթած տուն տարա: Կաթ տվինք՝ չկերավ, հաց տվինք՝ չկերավ, վերջը ընկերացրինք մեր շանը, սա տակը գցեց, ծծեցրեց ու իր ձագերի հետ մեծացրեց:

Երեխեքի քեֆին քեֆ չէր հասնիլ, ամբողջ օրը բակում քոթոթ, երեխա, շուն իրար խառնված խաղում էին, մեկ-մեկ էլ երեխաները ընկույզի ծառն էին բարձրանում, քոթոթն էլ հետևներիցը: Շատ բրդոտ քոթոթ էր, երեխաներն անունը Բրդոտ էին դրել:

Օգոստոսին, որ միրգը հասավ, Բրդոտն էլ ծառերից վեր չէր գալիս, մեյմունի պես ամբողջ օրը ձղներից կախված միրգ էր ուտում:

Մի օր էլ, որ շատ համը հանեց՝ բարկացա, ծառի ճյուղը թափ տվի (ձեռքս կոտրվեք...), էդ խեղճ անասունը ծառի կատարից վեր ընկավ քարերի վրա, ու ոտքը ջարդվեց: Մուգը տունն ընկավ ու տեսա, թե մերոնք ինչքան են կապված էդ որբ կենդանուն: Իմ սիրտն էլ, ճիշտն ասած, շատ ցավեց:

Ոտը կապեցի, դարման արի-լավացրի ու սիրեցի էդ քոթոթին: Բրդոտը կաղ մնաց, դրա համար էլ տանեցիք Թովալ Բրդոտ էին կանչում:

Ձմեռնամուտին Բրդոտը մի ավանակի չափ բան էր դառել: Իր մերացու շանը, որի կաթը կերել էր, ուրախ ժամանակ շարտում, ուսն էր գցում խուրջինի նման ու արջավարի լնգլնգալեն գնում, իր խելքով հանաք էր անում:

Աշնանից Բրդոտին հետս որսի էի տանում, նա շնիցն էլ, ջորուցն էլ ձեռնտու էր ինձ համար. ուտելիքս խուրջինն էի լցնում, պնդացնում նրա մեջքին ու գնում էինք: Դե, որսկան մարդիկ եք,

գիտեք, թե սպանած կենդանին տուն բերելն ինչ տանջանք է ամբողջ օրը ջարդված, չարչարված որսկանի համար: Բրդոտը փրկում էր ինձ. սպանածս վայրի այծ, ոչխար, կխտար, ինչ պատահեր, չվանով կապում էի մեջքին, լնգլնգալեն, խելոք գալիս էր հետևիցս:

Մի զարմանալի հասկացող կենդանի էր Բրդոտը: Մենք մինչև գարուն իրար հետ որսի գնացինք, և նա այնքան վարժվեց որսորդական կյանքին, որ մարդու պես օգնում էր ինձ: Օրինակ, հենց տեսնում էր չոր տերևներ ու մանր ճյուղեր հավաքած չոքել ու չախմախով կեծքարին եմ խփում, որ կրակ անեմ՝ իսկույն գնում էր փայտեր հավաքում, մարդու պես գրկած բերում: Կրակը որ մի քիչ թեժանում էր, մեկ էլ տեսար Բրդոտը կաղալով գնաց մի ահագին կոճղ գրկեց, չարչարվեց, արմատահան արավ ու տնքտնքալով բերեց դրեց կրակի վրա:

Հետը հատուկ լեզվով էի խոսում ու նա սովոր էր այդ լեզվին: Երբ ասում էի «բուհ»-նշանակում էր՝ կրակում եմ, հեռու կանգ-նիր: Ու նա գնում կուչ էր գալիս մի ծառի կամ քարի տակ ու թաթերով ականջները բռնում էր: Երբ ասում էի «գեչ»- գնում էր, ասում էի՝ «հոճ»- կանգնում էր, ասում էի՝ «հայ-հավար», օգնության էր հասնում ու շներից փրկում:

Երբ որսի տեղն էինք հասնում՝ հենց տեսնում էր, որ ես կուչ եկա ու ձեռքս բերանիս դրի և զգուշանալու նշան արի, ինքն էլ էր կուչ գալիս, գետնին կաչում, շունչը պահում:

Ոչ մի բանից ահ չուներ Բրդոտը, բացի իմ հրացանից: Փորձից տեսել էր, չոմբախի նման էդ բանը ծուխ ու կրակ է արձակում, ականջ խլացնող գոռոց է հանում ու դրանից հետո միշտ արյուն է թափվում, կամ քոշն է քարից ցած գլորվում, կամ պախտան է գետնովը դիպչում ու հողը քանդում:

Մի օր էլ, երբ ես ծառի տակ հանգիստ նստած հաց էի ուտում, մեկ էլ տեսա Բրդոտը հրացանս իջեցրեց ծառի ճյուղից, ինձ մեկնեց ու նայեց ձորի կողմը: Էդ դեպքից իմացա, որ Բրդոտը հասկանում է հրացանի ինչ լինելը, գիտի, որ դրանով են

ուրիշ կենդանու գետին գցում, մաշկում ու միսը կտրատում:

Էս բանը լավ միտնեղո պահեցեք, որ պատմությանս վերջին դեպքը ձեզ հերքիաթ չթվա:

3

Էդպես երկու տարի անց կացավ: Բրդոտը մեծ արջ էր դառել ու ավելի խելոքացել: Էս անգամ արդեն էնպես էի վարժեցրել, որ հանդ գնալիս վրեն նստում էի, տանում էր իմ ուզած կածաններով: Գյուղի աչքն իմ Բրդոտի վրա էր: Նրա անունն ավելի մեծացավ, երբ ամառը սար տարա ու միասին սկսեցինք ոչխարն արածացնել: Մի քանի անգամ գայլերը փորձեցին հոտի մեջն ընկնել՝ Բրդոտը շատ ծանր դաս տվեց նրանց, մի գայլի քամակից բռնեց, էնպես խփեց քարին, որ տեղնուտեղը հոգին ավանդեց: Դրանից հետո հոտի կողքից գայլը, գողը, հարամին ղալմթ էր արել, որ անց կենար:

Բրդոտի անունը մինչև Վան հասավ: Շատ վաճառականներ բռով ոսկի առաջարկեցին, շատ անասնատերեր երեսուն-քառասուն ոչխար առաջարկեցին՝ չտվի: Դե Բրդոտն ինձ համար համ տասը շուն էր, համ երկու էջ, համ օգնական՝ որսի գնալիս, համ զինված ախպեր վտանգի ժամանակ, համ ընկեր: Ասենք թե որ հարստությանը խաբվեի-տայի էլ՝ չէր գնա, թե որ զոռով էլ տանեին՝ կփախչեր, ետ կգար:

Մի անգամ էսպես բան պատանեց: Միջագետքից Տիգրիսի ափերով գալիս մեր սարերն են հասնում արանի քրդերն իրենց անհաշիվ ոչխարներով: Յուսուֆ բեգն էլ եկավ էդ ամառ, Արտոսի թիկունքի փափուկ ուրթերից մեկում չոքեցրեց իր զարդարված ուղտերին, գյուլի-խանումներիին ցած իջեցրեց ու խփեց իր փառավոր աղայական վրանը:

Սիրոս ահ ընկավ, ապի էս հարամու ձեռքից ես չեմ պրծնի, սա իմ Բրդոտը կլալի: Քոչեցի մի ուրիշ տեղ գնացի, բայց դե Յուսուֆ բեգի ձեռքից ձր պիտի փախչեմ: Նա իմ արջի խաբարն

առել էր, զինված մարդիկ ուղարկեց, որ ծախսն իրեն, և եթե չհամաձայնեի՝ գոռով տանեն:

Արին-արցունք թափեցի՝ չլսեցին, իմ ձեռքով Բրդոտիս դունչն ու ոտները կապել տվին, դրին ջորու վրա ու տարան:

Մեր տունը սուգ ընկավ, եղբորս երեխաները աղի արցունք թափելով ճամփու դրին իրենց սիրելի Բրդոտին մինչև գյուղի դիմացի բլուրը, իսկ ես կսկիծից չոլերն ընկա, քարափներից մեկի մի խուլ ծերպում նստեցի, մտիկ արի իմ սիրած Վանա ծովին ու բայաթի ասացի:

Էդտեղ էլ թմրած քնեցի: Գիշերվա մի ժամին զգացի, որ երեսիս մի տաք բան քսվեց: Վեր թռա տեսնեմ մի արջ երեսս լի-գում է: Գլխի չընկա, ձեռքս տարա հրացանիս, բայց էդ անասունն առաջս խելոք պառկեց:

Իմ Բրդոտն էր: Գլուխը գրկեցի ու ճնց եմ էն թաց դունչը պաշում, ճնց եմ մղկտում. էդպես էլ փաթաթված քնեցինք:

Լույսը որ բացվեց, տեսա որ էդ խեղճ կենդանու ոտի փափուկ մսից արյուն է ծորել ու սառել մազերի վրա: Վերքը տնտղեցի՝ բերդանի գնդակի տեղ էր: Էդտեղ հասկացա, որ բան է պատահել Յուսուֆ բեգի բինայում: Մի կտոր շոր վառեցի, մրձեղը դրի վերքի վրա, քոլոզիս ապրշումե փաթաթանը քանդեցի ու դրանով վերքը կապեցի:

Սյուս օրը չոբաններից իմացա, որ հարայն ընկել է Արտոսի բոլոր բինաները, թե Դավոթի արջը իրեն հսկող մարդկանցից մեկի ոսկորները փշրել ու փախել է Յուսուֆ բեգի բինայից: Զինված մարդիկ սարերն ընկան, որ մեզ գտնեն, ես արջիս հետ էնպիսի տեղերով փախա, որ սատանեն էլ չէր կարող գտնել մեզ: Փախա Շատախի սարերը, էնտեղից էլ Մասուն:

Օգոստոսին քոչվորները ցած իջան ու գետի հետ գնացին արան՝ Տիգրանակերտի կողմերը, Միջագետք: Ես արջիս հետ մեր գյուղն եկա: Մի տեսնեիք ինչ ուրախություն էր... Ամբողջ գյուղը դուրս թափվեց մեզ դիմավորելու: Երեխաներն էլ ուրախությունից՝ որը արջի վզին նստեց, որը մեջքին, որը պոչից

կախվեց, իսկ սա համբերությամբ տանում էր չարաձճիների արարքները և ուրախությունից բրթ-բրթացնում էր:

Շատ սրտաշարժ էր մեր Բրդոտի հանդիպումն իր մերացուի՝ Բողարի հետ, որին երկու ամիս էր չէր տեսել և, ինչպես երևում էր, շատ էր կարոտել: Նա իր ուրախությունն արջավարի արտահայտեց, հետևի ոտների վրա կանգնեց, Բողարին երկու թաթով բարձրացրեց ու շարտեց տան կտուրը: Խեղճ շունը մնաց կտերը, պտտվում էր և իջնելու տեղ չէր գտնում:

Աշունը եկավ, Բրդոտը ազատ օրերին միրգ էր ուտում ծառերի տակ, իսկ մնացած ժամանակ ինձ հետ որսի էր գնում:

4

Մյուս գարնան վերջերին Բրդոտի մեջ ինչ-որ փոփոխություն նկատեցիսք. նա դարձել էր ջղային: Այլևս ոչ իր մայր Բողարը, ոչ երեխաները չէին կարող կատակ անել հետը: Հանդ տանելիս սիրտը կոտրած էր տուն գալիս, ուշքը շարունակ Արտուսի ձորերումն էր: Տխուր բվվացնում էր ու նայում քարափներին, ուր ապրում էին իր ցեղակիցները: Իրիկնապահին նա առանձնապես շատ էր մոայլվում: Արևի վերջին շողերի հետ դուրս էր գալիս գյուղից, կանգնում էր բլրի գլխին, դունչը մեկնում Տիգրիս գետի կողմը, հոտոտում էր օդը և առնում իր ցեղակիցների հոտն ու տխուր բվվացնում:

Բնությունն իր գործն էր տեսել. Բրդոտի մեջ հասունացել էր սիրելու, սիրվելու և մայր դառնալու բնական պահանջը: Եվ նա, պղտորված արյունով, շրջում էր անհանգիստ և իր կույս հոգով ձգտում դեպի հեռուները, դեպի այն անծանոթ կենդանիները, որոնց չէր տեսել, չէր հիշում, բայց սրտով, բնագոյով կապված էր հետները:

Մի անգամ էլ, իրիկնամուտին, Տիգրիսի ձորից դուրս գալիս, հետևիցս արջի գոռոց լսեցի: Ետ նայեցի: Քարայրի առաջ երկու արջ մեր կողմն էին նայում ու հոտ քաշում: Բրդոտն առանց իմ

«գէշ» ասելու գնաց նրանց կողմը, «Հո՛ղշ, Բրդոտ, հո՛ղշ Բրդոտ», – կանչեցի ես նրա հետևից: Կանգ առավ, ետ նայեց, տատանվեց, երևում էր, որ իր ներսում կռիվ է գնում, բայց էլի բնական պահանջը հաղթեց: Ես գիտեի, որ մարդ արարածն ուժ չունի այդ պահանջի դեմ կռվելու, և այլևս չկանչեցի: Մանավանդ, որ հունիսը մոտենում էր ու ահը պատում էր ինձ. Յուսուֆ բեգը սար էր բարձրանալու ու համ Բրդոտին էր տանելու, համ էլ նրա պատճառով ինձ էր քերթելու: Դրա համար էլ որոշեցի ազատություն տալ Բրդոտին:

Նա դեռ կանգնած կռիվ էր անում ինքն իր հետ: Ես շուռ եկա որ գնամ՝ հետևիցս ոտնաձայն լսեցի: Բրդոտն էր: Ետ եկավ, ձեռքերս լիզեց, տխուր բվվացրեց: Հասկացա, որ ինձ հետ շատ է կապված, չի ուզում խաթրս կոտրել զոռով գնալ, և ինձնից իրավունք է խնդրում: Այն ժամանակ ես շոյեցի նրա գլուխը, մատով ցույց տվի արջերի կողմն ու ասացի՝ «Բրդո՛տ, գէ՛շ»:

Նա գնաց իր ցեղակիցների մոտ նոր կյանք սկսելու, իսկ ես մենակ ու տխուր վերադարձա գյուղ...

5

Ժամանակ անցավ: Մենք քիչ-քիչ մոռացանք Բրդոտին: Ես էլի որս էի անում, բայց ուրիշ կողմերում, սիրտս չէր տալիս Տիգրիսի ձորը գնալ, չէի ուզում պատահել Բրդոտին:

Արտոսի հարավ նայող դռը ամառը մերկ է բուսականություն-նից: Էդտեղ տկլոր քարափներ են, խիճ է և աղքատ թփեր ու փշեր: Դեռ հունիսից չորանում է նոր դուրս եկած խոտը և սարի դռը մոխրի գույն է դառնում: Միայն ձորում, առունների ավերին՝ կյանք ու կանաչ կա:

Այդպիսի տկլոր դռներից մեկի վրա մի հին կաղնի ծառ կա, որ ձյուղերը լայն փռած շվաք է անում շոգից նեղվող ճամփորդ-ներին ու ոչխարներին: Հեռվից էլ երևում է, որ ծառից ցած մի մուգ կանաչ շերտ կա, ու հեռվից էլ ճամփորդը հասկանում է, որ

կաղնու տակից աղբյուր է դուրս գալիս, մի քանի քայլ հոսում է, ապա ծծվում լեռան կրծքում ու կյանք տալիս կանաչին:

Մի օր հարևան գյուղն էի գնում: Նստեցի էդ աղբյուրի մոտ, բաշլըղս ետ արի, հաց կերա ու թինկը տվի ծառին, որ մի քիչ հանգստանամ: Ոնց է լինում, քունս տանում է (դե բեզարած ձամփորդ, էն էլ հով շվաք, պարզ է, որ կքնի):

Շատ եմ քնում, թե քիչ, շատն ու քիչը ավլահը գիտի, մեկ էլ աչքս բաց արի՝ տեսնեմ արևը կախվել է սարերի վրա: Ձեռս մեկնեցի, որ հրացանս վերցնեմ՝ չկա: Դես հրացան, դեն հրացան՝ չկա ու չկա: Միտերքումդ մարդ էլ չկա: Միտք եմ անում, թե տանողը ղաչաղ է, բա ինձ ինչո՞ւ է թողել, կամ թե ինչո՞ւ չի թալանել: Թե ղաչաղ չի՞, բա ո՞վ տարավ... Մնացի մոլորված: Էս ի՞նչ հանելուկ է, հո երկինք չթռավ անտերը, թե՛ սատանաները տարան:

Էդ մտքի վրա էի, մեկ էլ հետևիցս թմթմիոց լսեցի: Մտիկ անեմ՝ ի՞նչ տեսնեմ, մի ահագին արջ ուղիղ գալիս է դեպի ինձ: Թուքումուքս ցամաքեց... հսյ գիտի ասլան չախնախլու, ձեռիս չի, որ գլուխը ջարդեմ, խանչալով ի՞նչ կդառնա: Խանչալս հանեցի, արես փաթաթեցի ձախ թևիս, դալխանի՛ պես դեմ արի ու սպասում եմ: Էդ անիրավն էլ առանց ահի ուղիղ գալիս է վրաս, ասես թե դիմացը մարդ չլինի: Ահը պատել է ինձ, ասում եմ՝ էս է, վերջս է. մտածում եմ ծառը բարձրանամ՝ գիտեմ, որ նա ինձնից ուստա է էդ գործում:

Հենց էդ մոլորվածս ժամանակ նկատեցի, որ արջը ետի աջ ոտից կաղում է, ու սիրտս թնդաց ուրախությունից. «Վայ, Բրդոտ ջան, վայ Թոփալ ջան...», - ասացի ու թևերս բաց արած առաջ գնացի, գլուխը գրկեցի: Արջը բարեկամաբար մոթմոթաց, իր հին սովորության համաձայն լեզուն երեսիս քսեց, ապա առաջս պզգեց ու նայում է ինձ էնպես տխուր, էնպես դարդոտ: Ասում եմ. «Ինչի՞ ես տխուր, Բրդոտ ջան, ինչի՞ ես մենակ, բա ես քեզ բարեկամներիդ մոտ դրկեցի, որ տխրե՞ս: Ո՞ւր է մարդդ, ո՞ւր են երեխեքդ...»: Իսկ նա սգվոր կնկա նման գլուխը կախ գցել ու լուռ

1 Ղալխան - վահան:

տնքում է: Հետո վեր կացավ ու գնաց: Գնաց մի քարի տակից հրացանս հանեց ու մարդի պես գրկած երկու ոտքով առաջ եկավ: Այն քեզ հրաշք... Ինչի՞ է պահել հրացանս, մտածեցի ես: Ալլահի բաներին մտիկ է, գիտի, որ դրանով են արին թափում, երևի վախեցել է, որ զարթնեմ՝ քնակոլով իրեն չձանաչեմ ու խփեմ: Դե Բրդոտն էդ բաները լավ գիտեր:

Ձեռքս մեկնեցի, որ հրացանս վերցնեմ՝ չտվեց: Ետ դառավ ու գնում է դեպի վերևի քարափները:

Գնաց, գնաց ու ետ մտիկ արավ, մեկ էլ գնաց, մեկ էլ ետ մտիկ արավ: Հիմի մեկ ինձ է մտիկ անում՝ մեկ դիմացի քարափին, կարծես հասկացնում է, որ էնտեղ բան կա, հետևիցը գնամ: Արմանքից-զարմանքից սառած գնում եմ արջի հետևից, ոտներս ոնց որ իմը չլինեն: Էս ինչ է կատարվում, չեմ հասկանում: Աղոթած եմ, սատաներո՞ց եմ եղել, թե՛ մարգարեի կամքն է, որ հրացանս արջը վերցնի, իսկ ես դատարկ ձեռքով հետևիցը գնամ:

Էդպես գնացինք մինչև քարափի գլուխը: Մյուս երեսը գիտեմ, որ խոր ձոր է: Արջը որ քարափի գլուխը հասավ (ես քիչ ցած էի), կպավ գետնին, փորսող-փորսող առաջ գնաց ու քարափի մյուս դոշով ներքև նայեց: Ներքև նայեց ու էլի փորսող ետ եկավ, ներքև իջավ ու հրացանը տվեց ինձ: Հիմի հրացանս ինձ է տվել ու մեկ ինձ է մտիկ անում, մեկ էն տեղին, որտեղից ինքը թաքուն ներքև մտիկ արավ: Հասկացա, որ էնտեղ բան կա:

Չոքեցի, ալլահի անունը տվի ու թվանքի կիսից բռնած կուզեկուզ առաջ գնացի: Երբ քարափի պռնկին հասա՝ պառկեցի փորիս վրա ու ետ նայեցի, արջը փորսող տալով, շունչը պահած, գալիս էր հետևիցս: Եկավ, ոտներինս մոտ գետնիցը կպավ: Ես քիչ էլ առաջ սողացի ու ցած նայեցի: Քարափը պատի պես գիրթ իջնում էր ցած: Նկատեցի, որ նրա տակը ներս է գնում, այր կա: Կռացա ցած. այրի առաջ մի ամեհի բան տեսա ու սիրտս վեր թռավ: Մի ահագին բան էր մեկնված-քնած, մի կովի չափ կատու, գոլ-գոլ սիրուն մորթով: Արևը մայր մտնելուց առաջ մի երկու խուրձ շողք էր գցել վրեն ու էդ շողքերի տակ էդ գազանի մորթին

հուրհրատին էր տալիս, ոնց որ շահնշահի խաս-ապրշումե տեղաշորը: Էդ արնախումը, որի մասին հերս շատ էր պատմել, մեկնվել էր արևի տակ ու ապահով քուն մտել, միայն մեկ-մեկ կատվի պես թաթով երեսին էր տալիս, ճանձերին քշում:

Երբ դողս անցկացավ ու հանդարտվեցի՝ հրացանս քարի ճակատովը ցած մեկնեցի. չի հարմարվում, պատը շատ է դիք, վագրն էլ խորքումն է պառկել, հրացանի հատիկի առաջ մենակ չալ կողն է երևում:

Մի թգաչափ էլ առաջ սողացի, ցած կախվեցի, հրացանս ներքև մեկնեցի ու ոտը քաշեցի: Դերդոցը ձորերն ընկավ, առաջս ծուլը պատեց: Արջը տրաքոցից ծուլ էլավ ու ետ փախավ, ես էլ հետևից:

Ներքևում մի փոս կար, էդ փոսի վրա մամխի ու մսարի թփեր էին կախվել: Արջն իրեն գցեց էդ փոսը, թփերի տակ կուչ եկավ: Նրա էդ հեռոցը, էդ մարդի խելքը, էդ տենդը շշկլացրել էր ինձ, ոնց որ երագում լինեի: «Էս ի՞նչ է կատարվում, Մուհամմեդ փեղամբար»,– կանչում եմ մտքումս ու աղոթում, որ էդ տեսիլքից ազատի ինձ:

Երբ որ հանդարտվեցինք ու տեսանք վագրը չի գալիս, թփերի տակից դուրս եկանք, կուզեկուզ վեր բարձրացանք: Քարափի գլխից թաքուն ներքև ստիկ արի ու սիրտս թեթևացավ. այրի առաջ վագրն էնպես էլ մեկնված էր մնացել. ուրեմն գնդակս որտեղ աչքել էի՝ էնտեղ էլ մեխվել էր՝ ուղիղ գլխին:

Արջն էլ երբ հանդավեց, որ թշնամին սպանված է, նայեց ինձ ու նրա դարդոտ աչքերի մեջ մի փոքր հանգստություն նկատեցի, ոնց որ թե վառվող սրտին մահիլամ դրած լինեին: Նա ձեռքերս լիզեց, մոթմոթաց ու քարափի մյուս երեսով ցած իջավ: Մենք հասանք քարափի տակը, պտույտ տվինք և կանգնեցինք այրի առաջ՝ վագրի գլխավերևը:

Ուրախությունից գոռգոռոցս գցեցի ձորը: Ո՛նց չուրախանայի, մեր Արտոսի կողմերում, Շատախի ու Սասունի կողմերում մենակ մի մարդ էր վագր սպանել՝ հայ որսկան Ակոն, էն էլ էդ դեպքից

քսան տարի առաջ էր: Հիշում եմ՝ ես էլ երեխա էի, որ ամբողջ գյուղով գնացի՞նք թամաշի: Վերջը մորթին գայմագամին՝ փեշքեշ էին դրկել, որ իրենց մի քիչ քաղցր աչքով մտիկ անի: Ես էլ մի կողմից մաշկում եմ գազանին, մի կողմից էլ մտածում, որ մորթին Յուսուֆ բեգին փեշքեշ կտանեն, համ կմեղմանա Բրդոտի արարմունքի համար, համ էլ մի բան ինքը փեշքեշ կտա:

Մեկ էլ մտածեցի՝ ինչ բեգ, ինչ սուլթան, Սլոյի աղջկանը՝ Մաթեին կառնեն, էն սիրուն Մաթեին, ու մորթին փեշքեշ կտամ նրան, էն Մաթեին, որի համար ես հետո արյուն թափեցի ու փախա Ռուսաստան: Մաթեին էսօր իմաց կտամ, որ իր դարդից եմ վագրի բերանը գնացել, սիրտը կտաքանա վրես: Սլոն էլ կգովի իգիթությունս, ամբողջ գյուղը կգովի չոբան Դավոթին, ու Մաթեին առնելը գլուխ կգա:

Էս միտքն էնքան ուրախացրեց ինձ, որ երեսս սկսեց վառվել, սրտիս զարկն արագացավ, արյունս եռաց ու ջահելությունս շարժվեց ներսումս: Իմ սիրած երգը, որ կապել էի Մաթեիս վրա, վառված սրտով վեր քաշեցի ու ձորերը զմբզմբացրի.

*Սաթան փելըթ նըղանման չմամ,
Համեժ կոլան, համեժ խաման, համեժ դարդան,
Դարդո մչըգո, մարագո մըչգո,
Ազե հայրանա ջեյրանն խոմա:
(Ինձ պատում են, չգիտեմ ինչու, խոցեր,
Միշտ դարդեր, միշտ վշտեր, միշտ հոգսեր...
Այս ես ինչ ասի, վախ ես ինչ անեմ,
Իմ լավ ջեյրանին ես դուրբան լինեմ):*

Ես տարված էի իմ ուրախությամբ, մեկ էլ խոնլ բվկոց լսեցի: Նայեցի Բրդոտի կողմը, նա շարժվեց մի ուղղությամբ, և ես հետևեցի նրան:

Էն ինչ որ տեսա՝ գնդակի նման շանթեց սիրտս... Այրի մեջ նոր

1 Գայմագամ – գավառապետ:

կրծած ոսկորներ կային ցրված՝ երկու փոքրիկ գլուխներ, փոքրիկ մազոտ թաթիկներ... Բրդոտը կուզեկուզ տխուր բվվացնելով հավաքում էր ոսկորները ու կույտ կազմում... Նոր միայն հասկացա, թե ինչ մեծ գուլում էր պատահել Բրդոտին... Վագրն էր հռչոտել խեղճի քոթոթներին, իսկ ինքն ուժ չէր ունեցել ոչ պաշտպանելու իր բալիկներին, ոչ նրանց վրեժը լուծելու:

Ես քարացած հետևում էի անբախտ մորը: Նա բոլոր ոսկորները հավաքեց, կույտ արավ, առաջը նստեց, սկսեց հոտոտել, լիզել իր բալեքի մնացորդները ու դարդոտ տնքալ, խուլ մռնչալ: Էդ անասունն էնպես խորքից էր տնքում, որ ասում էի՝ հիմի սիրտը պոկ կգա ու բերանից դուրս կգա:

Հեյ գիտի մեր, քո սիրտը էս մեր Ալագյազիցն էլ է բարձր, Արտոսից էլ ու Տիգրիսի ձորից էլ խորն է ու անտակ... Մորմոքված, սառած մտիկ եմ անում անբախտ մորը, իսկ նրա աչքերից թափվում են արցունքները, մոր անարատ արցունքները, ու նրա սիրտը տխմր բայաթի է ասում կորած քոթոթների վրա, նրանց սուգն է անում:

Փշրված սրտով մաշկեցի գազանին ու մորթին շալակս գցեցի: Որ մորթին շալակս գցեցի, Բրդոտն ուշքի եկավ, մի տխուր տնքոց հանեց ու վեր կացավ: Վերջին մնաս բարևն էր, իմ սիրտն էլ էր լաց լինում էդ անլեզու անասունի հետ: Նա թաթերով հող հավաքեց լցրեց ոսկորների կույտի վրա, ապա չորացած տերևների, ծառի ճյուղերի, քարերի տակ թաղեց իր զավակների աձյունը, գլուխը դրեց նրանց գերեզմանին, թրջեց արցունքներով ու մոլորված քայլելով հետևեց ինձ:

Արևը մայր մտնելիս մենք հասանք մեր գյուղի դիմացի բլրին: Շների հաչոց լավեց՝ արջը կանգ առավ: Ես կռացա համբուրեցի նրա ճակատը, աչքերը ու ես էլ՝ էն քարափի պես պինդ սիրտ ունեցող որսորդս, լաց եղա երեխի պես, լաց եղա մեր բաժանման համար, լաց եղա նրա քոթոթների համար, նրա մեծ դարդի համար...

Ու աչքերս չուխիս փեշերովը սրբելով՝ գնացի գյուղ: Արևը մեր էր մտնում, արջը կանգնած էր բլրի վրա կարմրավուն շողերով ողողված ու աչքերով ճամփու էր դնում ինձ: Երբ գյուղ մտա՝ նա ետ դառավ ու օրորվելով գնաց դեպի Տիգրիսի ձորը...

Դրանից հետո ես Բրդոտին էլ չտեսա: Նույն ամառը Յուսուֆ բեգը սար եկավ, հալածեց ինձ Բրդոտի համար, մարդ ուղարկեց, իմ սիրած աղջկան ուժով տարավ՝ իր տղայի համար հարձ շինեց: Աշխարհը մթնեց գլխիս, Յուսուֆ բեգի բինեն մտա, տղին սպանեցի ու փախա էդ անարդար երկրից, էդ գուլումի երկրից...

Էդ օրից հիսուն գարունք, հիսուն աշունք անցկացավ, իմ ուժը պակասեց, մազերս ճերմակեցին, հետս պատահած անհաշիվ փորձանքները կուլ գնացին մտքիս ծովի մեջ, բայց երկու բան մորմոք թողեցին սրտումս, մեկ՝ էն ջեյրանի պես աղջիկը, մեկ էլ անբախտ Բրդոտը...

1939

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ–ԲՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ	
ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆԻ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՊԱՏՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ	3
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՄ ՍԻՐՈՒՄ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ	
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՈՐՍՈՐԴ ԴԱՐՁԱ	9
ԱՌԱՋԻՆ ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԸ	13
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՅԱՆՔԸ ՄԵՋ ՍՏԻՊԵՑ ԶԵՆՔԻ ՏԱԿ ՄՏՆԵԼ	15
ԱՐՋԻ ԶԱՆԿԵՐՈՒՄ	19
ՄԱՅՐ ԱՐՋԸ	24
ԾԱՆՐ ԶՄԵՌ	41
ԽՂՃԱԼԻ ՀԱՅԱՑՔ	56
ԱՆԴՈՒՆԴԻ ՊՈՒԿԻՆ	58
ԴԵՊՔ ԵՂԵԳՆՈՒՏՈՒՄ	61
ԱՆՏԱՌԻՆ ԱՆՍՈՎՈՐ ՄԱՐԴԸ	67
ՀԱՎԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐՍ	75
ՈՒՐՈՒՐԻ ԲՈՒՅՆԸ	80
ՎԱՅՐԻ ՄԵՂԻՆ ՈՐՍՈՐԴԸ	85
ՄԻ ԶԱՐԱՃՃԻ ԿԵՆԴԱՆՈՒ ՄԱՍԻՆ	97
ԵՂՆԻԿԻ ԶԱԳԸ	103
ՈՐՍԸ ԼՈՒՍՆԻ ԼՈՒՅՍՈՎ	109
ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՐ ՏՎԻՆ	112
ՓԱԽՍՏԱԿԱՆԸ	114
ՄԱՅՐ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ	117
ՀԵՏԱԽՈՒՅՋ ԱՂԱՎՆԻՆ	119
ԲՈՂԱՐԻ, ԶԱԼԱՆԿԻ ՈՒ «ԱՍԵՂ ՄԱՇԿՈՂ» ԵՂՈՅԻ ՄԱՍԻՆ	122
ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ	127
ՈՐՄԿԱՆ ԱՎԱԳԸ	128
ԹՈՐՈՍԵՆՑ ԱԹՈՆ	132
ՎՐԵԺ	142
ՊԱԽՐԱՈՐՍ	149
ՄԵՐ ԶԱՄԲԱՐԸ	159
ԴԵՊԻ ՍԵՎԱՆ	164
ԱՐԱԳԻԼԸ	174
ՏԻԳՐԻՍԻ ԶՈՐՈՒՄ	190



ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Խմբագիր՝
Չևավորումը՝
Շապիկը՝

Աշոտ Գաբրիելյան
Հեղինե Փիլոյանի
Արաբո Սարգսյանի

*Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84 1/16:
Տպագրական 13 մամուլ:*

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyans str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am